ՊՐՈՖ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Բ ՀԱՏՈՐ

9(47.925)
Ա-52

31 AUG 2007

ՀԱՅ ԼՈՒՍԱԲՈՂԿՈՄԻՏԵՏ 2011-09

ՊՐՈՖ. ԴՐ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

9(47.925)
Մ-52 կր.

ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՓԱՂՎԱԾՔՆԵՐ ՎՐԱՑԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ.
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՅԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ

40524
1926

ՀԱՏՈՐ Բ.
(ԺԳ—ԺԸ ԴԱՐ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՃՈՆԴԻ
ՅԵՐԵՎԱՆ, ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1936

2 7 JUN 2013

Գիտ. տպարան
Գլավլիտ № 299
Պատվեր № 1
Տիրաժ 1200

▽

ԱՌԱՋԱԲԱՆ

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատության ներկա՝ յերկրորդ, հատորում մենք ամփոփել ենք համապատասխան նյութեր վրաց գրականության զարգացման այսպես կոչված «վոսկեդարյան» և «վերածնության» շրջանների յերկասիրություններից, վորոնք ընդհանրապես պատմա-ժամանակագրական բնույթ են կրում և վորոնց ամփոփ տեսությունը, մի քանիսի բացառությամբ, տրված է պրոֆ. Ի վ. Ջ ա վ ա խ իշ վ ի լ ու հայտնի աշխատության՝ «Հին վրացական պատմական գրականությունը (V—XVIII դ. դ.)» (վրացերեն լեզվով) առաջին հրատարակության մեջ, Տփղիս 1916, եջ 165—283: Դա XIII-րորդ և հետագա դարերի մեծ մասամբ անանուն պատմիչների ու ժամանակագիրների յերկասիրություններն են, վորի շարքը մենք տանում հասցնում ենք մինչ XVIII դարու սկզբները, այսինքն մինչ հայտնի պատմաբան-աշխարհագիր՝ արքայազն Վախուշտի, նրա ժամանակակիցների ու նրա դպրոցի գործունեությունը:

Այս հատորում զետեղած նյութն առաջ է բերած ընդամենը 24 յերկասիրություններից կամ դոկումենտից, վորոնք մեծ մասամբ անանուն պատմիչներին են պատկանում*, բայց և այնպես հետաքրքիր են իրրև՝ վորոշ բացառությամբ՝ ժամանակակիցների գրչից յելած տեսություններ համապատասխան անցքերի (XIII

* Վորպեսզի ընթերցողի համար պարզ լինի, թե վորքան մեր անվանացուցակն այս հատորում տարբերվում է Ի վ. Ջավախիշվիլու ներկայացրածից, առաջ ենք բերում վերջինիս մենագրության համապատասխան գլուխների ցանկը. «Թամար թագուհու պատմիչը» (165—190), «Աբուսերիձե Տբեթցի» (190—191), «Վաշա-Գեորգի ժամանակվա անծանոթ վրաց մատենագիրը» (191—193), «Ժամանակագիրը» (193—213), «Հուշարձանն իշխանաց» (213—218), «Բագրատ[ի] թագավորության պատմությունը» (218—220), «Մեսխական սաղմոսի մատյանը (քրոնիկան)» (221—231), «Գելաթի քրոնիկոնը» (231—234), «Փարսադան Գորգիջանիձե» (234—251), «Բարթլիս-Ցխորեբա» (251—273), «Բարթլիս-Ցխորեբայի շարունակությունը» (273—283):

դարուց սկսած մինչ XVIII-ի սկիզբը), յերբեմն տենդենցիոզ լուսաբանութեամբ և նոյնիսկ հայատեացութեամբ դրոշմված պամֆլետային յեղուկներով լի, վորը, ի հարկե, արտացոլումն է համապատասխան դասակարգային իդեոլոգիայի։ Յեվ այս տենդենցիոզութիւնն առանձնապես աչքի յե ընկնում «Թագակիրների պատմականն ու գովասանքն» յերկի (ա. գլուխ) այն հատվածում, ուր շան և նշխարի մասին է պատմվում (եջ 16—20), վորն, ինքնըստինքեան հասկանալի յե, հայ և վրաց տիրող դասերի միջև դեռևս XII—XIII դ. դ. գոյութիւն ունեցող պայքարի արտացոլումն եր։

Ի վերջո, անհրաժեշտ ենք գտնում մատնանշել, վոր այս հատորի մշակման և այն տպագրութեան հանձնելու ժամանակ դեռ լույս չեր տեսած ակադ. Ն. Մառի հիմնական աշխատութիւնը՝ նվիրված Անիին (յետմահու հրատարակութեամբ). այդ պատճառով, դժբախտաբար, հնարավորութիւն չունեցանք վորևէ կերպ ոգտագործել այն։

Լ. Մ.-Բ.

Յերևան. 29. V. 1935.

Ա.

ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

«ԹԱԳԱԿԻՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆՆ ՈՒ ԳՈՎԱՍԱՆՔԸ»

Քարթլիս-կախեթեթայի Մարիամ թագուհու վարիանտում անանուն հեղինակի «Դավիթ արքայից-արքայի պատմութեան»-ն ու Սմբատ՝ վորդվո Դավթի «Բագրատունյաց պատմութեան»-ն անմիջապես հետևում է մի ընդարձակ յերկասիրութիւն անանուն հեղինակի, հետևյալ վերնագրով՝ «Թագակիրների պատմականն ու գովասանքը»։ Այս յերկասիրութիւնը գրված ունի Ե. Թաղ՝ աշվիլու հրատարակութեան մեջ (Քարթլիս ցխովրեբա. Մարիամ թագուհու վարիանտը, վրացերեն, Տփղիս 1906) 362—535 եջերը, իսկ Մ. Բրոսեյի հրատարակութեամբ (Քարթլիս ցխովրեբա, մատն առաջին, Ս. Պ. Բ. 1849) 264—338 եջերը. նույնի ֆրանսերեն թարգմանութեամբ (M. Brosset, Histoire de la Géorgie, I, 2) 383—480 եջերը։

Այս յերկասիրութիւնը նվիրված է Գեորգ (Գիորգի) III (1156—1184) և նրա դուստր՝ Թամարի (1184—1213) թագավորութեանց ժամանակագրջանների՝ սկսած XII դարու կեսից մինչև XIII-ի սկզբները։ Յերկասիրութեան վերնագիրը՝ «Թագակիրների պատմականն ու գովասանքը» (վրացերեն՝ «իստորիանի դա ազմանի շարավանդեդթանի») պրոֆ. Իվ. Ջավախիշվիլին (ibid., 166) մեկնում է այսպես. „«Իստորիա» հունարեն բառ է և նշանակում է տեղեկանք, լուր, պատմութիւն. ուշագրավ է, վոր վրաց պատմական գրականութեան մեջ այս տերմինը, ինչպես յերևում է, առաջին անգամ գործածել է Թամար թագուհու կյանքի նկարագրողը։ «Ազմանի» արաբերեն բառ է, «իստորիա»-յի նման, սա յեվս հոգնակի թվում է գործածվում և համապատասխանում է արաբերեն «ազմանուն»-ին, վորի յեզակին հնչվում է «զեմանուն» և նշանակում է «ժամանակ», «պահ»։ Այս յերկու՝ հունարեն-արաբերեն բառերը փայլուն կերպով պատկերացնում են մեր պատմչի

մտածելակերպի ու կրթության յերկկերպ բնույթը։ Նա յուրացրած ուներ յերկու կուլտուրա՝ հունական, բյուզանդական-հելլենական, քրիստոնեականը, և արաբական-պարսկական, մահմեդականը"։ Իննադատության յենթարկելով պրոֆ. Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ու այս տեսակետը՝ պրոֆ. Կ. Կ ե կ ե լ ի ձ ե ն (Մեր պատմական գրականության մի քանի՝ դեռ չմեկնած տերմիններըը, վրացերեն,—„Bulletin de l'Université de Tiflis", V, 1925, եջ 309—310) այն կարծիքն է հայտնում, որ «ա ղ մ ա ն ի հոգնակի թիվ է ա ղ մ ա բառից. իսկ ա ղ մ ա՛ն վոչ թե արաբերեն է, այլ հունարեն asma., որը նշանակում է յերգ, գովասանք, ներբող»։

Համաձայն Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ու հետազոտության (ibid., 170—171), անանուն հեղինակի յերկասիրությունը «կարելի յե յերկու գլխավոր մասի բաժանել», որոնցից «առաջինը հեղինակը վերջացրել է Թամար Թագուհու [գահակալության] 11—12-րդ ինդիկտիոնին*, իսկ մյուսը սրանից բոլորովին ուշ է գրված»։ Միաժամանակ նույն Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ին ապացուցում է, որ «պատմության առաջին մասը գրված է «ժամ առ ժամ», այսինքն հետզհետե. «նախ, ինչպես յերևում է, Ռուիվնադզինի պարտությունից հետո», և «այս ժամանակ նա պիտի նկարագրեր Կարսի և շրջակա յերկրի առումն և Ռուիվնադզինի դեմ կատարած հաղթական արշավանքը»։

Ինչ վերաբերում է հեղինակի ով լինելուն, այս առթիվ Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ին կարողացել է պարզել այսքանը։ Նա թեև «արքունիքի աստիճանավոր չի յեղել», բայց և այնպես «մեծամեծներին» թվին պիտի պատկաներ (եջ 172)։ Միաժամանակ՝ նրա «դատողությունը, կրթությունը, զարգացումն ու մտածելակերպը դժվար ուսումնասիրելի յե», և նա «ավելի քան բարդ բնավորության տեր անձնավորություն պիտի լիներ. միևնույն ժամանակ նա յուրացրած ուներ թե՛ հեթանոսական և թե՛ քրիստոնեական գրականությունն ու մտածելակերպն այնպես, որ հետազոտողն ի վիճակի չե իմանալ, թե նա ինչ արհեստի և ինչ գործի տեր մարդ է։ Շատ անգամ նա այնպես է խոսում, որ մարդ յերկմտում է, մի գուցե նա հոգևորական է յեղել» (եջ 176)։

Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ին (ibid.) միանգամայն իրավացի յե, յերբ ընդգծում է, որ վրաց-հայկական [յեկեղեցական] պայքարին վերաբերյալ հեղինակի ամբողջ պատմվածքը վերին աստիճանի նեղ

* Այսինքն 1195—1196 թ. թ.։

դավանաբանական բնույթ է կրում, վորի ժամանակ [վրաց] Հովհան կաթողիկոսն ուղղափառությունը քննելու և վորոշելու համար նրանից ել լավ բան չէնարեց, վոր նշխարը քաղցած շանը նետեր և, վոր դավանության նշխարն ել շունն ուտեր, այն դավանությունը թյուր ճանաչվեր»։ Յեվ «այսպիսի անմիտ դատաստանի հնարագետ քահանայապետին,—ասում է Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ին,—թամարի պատմության հորինողը փառաբանում է» (եջ 176)։ Այս հիման վրա բազմաշխատ վրացագետը յենթադրում է, վոր հեղինակն ավելի «մարտնչող հոգևորական անձն» պիտի լիներ, քան թե աշխարհական։

«Վոր Թամար Թագուհու պատմիչն յեկեղեցական գրականությանը հմուտ եր, սա՝ այն ժամանակվա վրաց ժառանգրի հանդեպ զարմանալի չե։ Բայց ուշադրության արժանին այն է, վոր նա հեթանոսական շրջանի հելլենական գրականությանն յեվս հմուտ է յեղել» (եջ 178)։ Յեվ իրոք, «Թամար Թագուհու պատմությունը խայտաբղետում է հունական և պարսկական գրականությունից ու պատմությունից քաղած անուններով և ավյալներով» (ib.), վորոնց քննության վրա առանձնապես կանգ է առնում Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ին (եջ 178—183)։

Վրացերեն բնագրի թարգմանությունը մենք կատարել ենք հաշվի առնելով այն ուղղումներն և «վերականգնումները», վորը տեղ-տեղ կարելի յե գտնել նույն Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ու «Վրաց ժողովրդի պատմության» մեջ (վրացերեն, գ. II, Տփղիս 1914, եջ 552—639)։

[ԳԵՈՐԳ III-Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

...[Գեորգ Թագավորը՝] կենտրոնանալով և ամրանալով կաղզվան* քաղաքում՝ ավերեց ժայռոտ բոլոր ձորերն ու քաղաքներն Աշոռնիքի[1], [վորոնք] հայոց (սոմեխների) Թագավոր կոչված Շահհայրմենի (Շահերմենի)[2] [ձեռք] եյին։

Սրանից հետո՝ նորից ժողովելով իր զորքը՝ [նույն Գեորգը] դիմեց դեպի հռչակավոր և մեծ քաղաք [Դվինը], վորը գտնվում է Արարատի փեշին՝ Հայքի (Սոմխեթի) և Աղրբեջանի** սահմանում, վոր է հայրենիք Տրդատ (Թրդատ) դյուցազնի, վորը յերբեմն խո-

* Var. Կաթիրևան։

** Բնագրում՝ Ադարբեդաջանի։

ղի վերածվեց Գրիգոր Պարթևի պատճառով ... և իր զորքով գրաւեց այն քաղաքը՝ [հետո վերցնելով] գերիների և գանձերի այնպիսի բազմութիւն, վորը ծածկեց դաշտերի ու լեռների յերեսը, և նուիրիսկ արքայանիստ քաղաք Տփղիսն էլ լցվեց ավարով ...

Ապա [Գեորգ Թագավորն] կամեցավ զորք ժողովել և արշավել մեծ քաղաք Անիի վրա, վորը յերբեմն հունաց (բերձենների) թագավորի տունն ու աթոռանիստն եր, և ուր մինչ այսոր հազար ու մի յեկեղեցի կա[3]. իսկ հույներից (բերձեններից) անցնելով՝ ժամանակի ընթացքում մեծազգի վոճն Շաղաձյանց կողմից նշանակված վարիչների ձեռոք եր [այն]: Սրա վրա հանկարծակի հարձակվելով՝ [Գեորգ Թագավորն] առաջ բերեց բազում պատերազմներ և ձիանների կոտորած յերեք որվա ընթացքում: Խոսքով և գործով ի վերջո, կայծակի ճայթյունի նման, [վրացիք] չարդեցին Շաղաձյաններին*, վորոնք կայծակի արագութիւնով փախուստի դիմեցին, և [Գեորգ Թագավորը] համաձայն իր կամքի իր ձեռքը դցեց քաղաքը, և չհեռացավ այնտեղից մինչև վոր չբարեկարգեց նրա կառավարութիւնն և հաստատապես չտիրեց նրան իր գահի պահպանութեան ու ամրացման նպատակով: Յեվ թողեց այնտեղ մանդատուրթուխուցես և ամիրսպասալար Հովհան (Իվանե) Որբելուն, Սարգիս Մխարգրձելուն և այլ գավառների (թեմերի) մեծամեծ աշնվականներին (ազնաուրներին)՝ տալով նրանց խնամակալութիւն ([մո]ուրավ[ութիւն]). ապա [տուն] վերադառնալով՝ դիմեց վորսի, խաղի և զվարճութեան:

Այս հանգամանքը վրդովմունք առաջացրեց գոռոզացյալ հպարտացինների և իմայելացվոց մեջ, և ահա Շահիարմենը, վորն իրեն սուլթան եր կոչում, կանչեց ամբողջ Ասորիքը (Շամը), Միջագետքն (Ջազիրքն) և Դիարբեքիրը (Դիարբագը)՝ Գարմ[ի]անի թուրքերով հանդերձ. [և] Արդոխի վորդի Սալդուխ Սելջուկյանը, վորը սուլթանների տոհմիցն եր, Պարսից բազում տերերով և վաղիշահներով հանդերձ, գաղանների նման ատամները սրելով՝ մեծ և անհամար զորքով յեկավ ու մոտեցավ Անիին ...

Գեորգ (Գիորգի) Թագավորը, վորն այդ պահին գնացել եր ժամանակ անցկացնելու Նաճարմագև, հենց վոր լսեց սրա մասին ... լեռներով անցավ դեպի Շիրակ[4]՝ ուղեկցութեամբ Հովհան (Իվանե) դպրապետի և Սմբատ-Սիմեոնի ...

[Փախուստի մատնելով թշնամուն՝ վրացիք պատերազմի դաշտում] տեսան բազմութիւն [գերի վերցրած] թագավորների և մեծամեծների, աշնվականների և ստրուկների, բազմութիւն վրանների և տաղավարների, հարստութիւն ականց և գոհարների, վոսկվո և վոսկեկուռ իրերի, ուղտերի, ձիանների և ջորիների և աշխարհիս ամեն տեսակ գանձերի և հարստութիւնների, վորը դժվար եր մի առ մի թվել ...

Յեվ այսպիսով՝ զենքով և պաշարով լեցուն, գերի վերցնելով թագավորներին և մեծամեծ աշնվականներին, յերեք որ մնաց Անիի դռան [Գեորգ Թագավորը], վորն ապա՝ հոգալով քաղաքի մասին և նշանակելով այնտեղ ամիրա և զորաբանակ՝ շարժվեց տեղից և վերադարձավ [Տփղիս][5] ...

Իսկ Ասորիքի (Շամի) և Միջագետքի (Ջազիրքի), Հայոց (Սոմխիթի) և Արզրումի զորքերի, թագավորների և մեծամեծների բնաջնջման լուրը հասավ Խորասանի (Խվարասանի) և Իրաղ'ի սուլթանին և խալիֆային, տիրողին ([Ինքնա]կալին) մեծն Բաբելոնի և արաբացվոց (սարակինոզների) կեղծ որենսդրին, և Յելտկուզ*՝ Պարսից աթաբակին, [վորոնք]՝ ... հավաքվելով Ռանում**՝ դիմեցին դեպի Հայոց (Սոմխիթի) յերկիրը, և մոտեցան Գագի բերդին, վորը գրավեցին, և ավերեցին նրա ամբողջ սահմանները:

Հենց վոր հռչակավոր և անհաղթ զորավար ու անզուգական յերիտասարդ Գեորգ Թագավորն իմացավ այս, իսկույն և յեթ ժողովեց իր յոթը թագավորութիւնները՝ հայկուհյա և հայկուհյա***, կանչեց նաև ոսերին և շատ ուրիշ ժողովրդներին (յերկիրները), և յելավ սուլթանի դեմ ... իսկ Գագում գտնվող [սուլթանական] զորքերը հանվեցին տեղից ու հեռացան, [սակայն] Յեկեղյաց**** գետն անցնելուց հետո նրանց հանկարծակի վրա հասավ [վրաց] զորքը, վորը նրանց բնաջնջման յենթարկեց[6]:

... Ապա սուլթանն ու աթաբակն իրենց ամբողջ զորքով և ուժով բարձրացան դեպի Գեղարքունիք (Գելաքուն), վորտեղից [արդեն] մոտեցան Անիին, նաև վերո[հիշյալ] Շահիարմենն ու աբաբացվոց բոլոր իշխանավորները:

Այդ պահին Անիում հաստատված եր մեծ և հռչակավոր զորավար Թորոսեին՝ շրջակա յերկրները քարուքանդ անողն ու ավերողը, վորը [սկսեց] պատրաստել պատերազմական մեքենաներ:

---

* Բնագրում՝ Շանշե Դաղիան:

* Բնագրում՝ Վարազ || Վարազգ:
** Var. Իրանում:
*** Var. + վերինք և ստորինք:
**** Var. Ելիա կացի (sic):

Հենց վոր լուրը սրա մասին հասավ այս յերկիրը և Թագավորին, վորը սակավաթիվ զորքով՝ վորսորդությամբ զվարճանալով՝ կանգնած եր Լոռվա և Դմանիսի լեռների միջև, սրա մոտ յեկավ սուլթանի դեսպանը[7]...

Ապա [Գեորգ Թագավորը] շնորհեց Անին նրա տիրոջը, վորին և պատվեց իրրև իրեն հպատակին, և Յելտկուզ (Ելդիգուզ) աթաբակն ել յեղավ միջնորդ սուլթանի և վրաց միջև, խնդրելով հաշտություն[8]...

[Ապա Գեորգ Թագավորը] հրամայեց տայեցիներին, կղարջայ և շավշեցիներին Ուղթյաց (Ոլթիսի) և Բանայի ավերումն, իսկ մեսխերին և Թորեցիներին՝ Կարսի (Կարնիի) և Աշոռանիի, և ամիրսպասալարին և սոմխիթեցիներին (սոմխիթարնի)՝ Կուրի հայկուսյա [կողմի] մինչև Գանձա[կ]... [ապա] ավերեց Բասենը (Բասիանը)[9]...

[Սուլն Գեորգն] իր զորքը՝ սպասալարներով հանդերձ՝ ուղարկում եր յերբեմն մինչ Նախիջևանի (Նախճևանի) դուռն, և յերբեմն մինչ Մասիս ու Գեղամ (Ղաղվ?)[10]...

Ապա [Գեորգ Թագավորը]՝ զորք ժողովելով Տփղիս քաղաքում՝ ուղևորվեց դեպի Սոմխիթի լեռները, ուր սաստիկ հարվածեց ու փախուստի յենթարկեց Դեմետրին և նրա կուսակիցներին, վորոնք ապաստան գտան Լոռի քաղաքում ու բերդում, և գրավեց բոլոր ամրոցներն ու բերդերը*։ Ապա Դեմետրից հեռացան Սարգիս Մխարգրձելն իր վորդով և յեղբորվորդով հանդերձ..., վորին Թագավորը քաղցր սիրեց և վստահելություն շնորհեց համաձայն նրա վսեմության։ Ապա՝ ավերելով Տաշիրն ու Լոռին մինչև Կարս՝ [Գեորգ Թագավորը] բնակություն հաստատեց Ագարա[կ]ում։ Իսկ Դեմետրը, վորը գտնվում եր Լոռվա բերդում, զորք ուղարկեց նրանցից, վորոնք հավատարիմ եյին մնացել իրեն, և այլ և այլ կողմերից՝ մեսխերին, վրացիներին (քարթվելներին), սոմխիթեցվոց (սոմխիթարնի) և իր դաստիարակած ախոռապետ (ամիլախոր) Ճիաբերիին...

Ապա [Գեորգ] Թագավորը, վորը Ագարա[կ]ումն եր գտնվում, շարժվեց տեղից և յելավ վեր՝ մոտենալով Լոռվի քաղաքին ու բերդին։ Այս պահին Պարսկաստան ուղարկվեցին Քարթլիի իշխան Լիպարիտ՝ Սմբատի վորդին, ախոռապետ Քավթար՝ Հովհաննի (Իվանեյի) վորդին, վորոնք նույն Գեորգի կողմից եյին կարգված իշխանության, և Անանիա Դվինեցին, վոմանք Շահիարմենից, վոմանք Յելտկուզից (Ելդագուզից) ոգնություն խնդրելու համար...

* Var. + վորոնց բռնի կերպով տիրապետել եր նա (Դեմետրը)։

... Մինչ այս ուժասպառ յեղան Լոռվի բերդում գտնվողները. իսկ Դեմետրը՝ տեսնելով վոր անոգնական վիճակի մեջ է գտնվում, պարանով կապելով իրեն, իջավ բերդից և դիմեց իր հորյեղբորը (Գեորգ Թագավորին). իսկ ամիրսպասալարին և բոլոր նրանց, վորոնք մնացին բերդում, անվթար հանեցին բերդից և բերին Թագավորի մոտ... [և այսպես] նա գրավեց Լոռին[11]...

[ԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... [Նշանակելով Ղ'ուբասարին] ամիրսպասալար և մանդատուրթուխուցես՝ [Թամար Թագուհին] վոչ մի թիզ չպակասցրեց Լոռվին, [վորն] իշխանությունից զատ [նրան եր շնորհված]։...

[Թամար Թագուհին] բանտարկեց գանձարանապետ Ղ'ութլուսրսանին, վորը պատրաստվել եր ինքնիշխանաբար [գրավելու] ամիրսպասալար[ություն] ու նստելու հայոց (սոմեխների) թագավորի տեղը Լոռիում։...

[Ապա Թամար Թագուհին] ամիրսպասալար նշանակեց Սարգիս Մխարգրձելին, վորը բարեծնունդ եր և արշավանքների ու քաջագործության մեջ անված, և շնորհեց նրան Լոռին՝ ի իշխանություն և ի տիրապետություն Սոմխիթի. և շնորհատվություն արավ նրա վորդի Զաքարեային ևս. և այս Զաքարիա և Հովհաննես (Իվանեն)՝ Մխարգրձելիի վորդիք՝ հավատարիմ եյին թագավորներին և փորձված արշավանքների մեջ[12], մարդիկ անվանի, թեև կրոնով հայեր (սոմեխներ) եյին[13]. իսկ Հովհաննն (Իոանե) հույժ տեղյակ եր գրականությանը, վորի պատճառով ել զգաց իր[ենց] կրոնի թյուրությունը, [վրացադավան][14] մկրտվեց, և դարձավ ճշմարիտ քրիստոնյա։...

[Յեվ շնորհեց Թամար Թագուհին] ախոռապետություն (ամիլախոռություն) Թորեցի Գամբեկելին, վորը Սարգիս Մխարգրձելից հետո դարձավ ամիրսպասալար[15]։...

Սրանից հետո [վրացիք] սկսեցին արշավանքներ կատարել և դուրս յելան Տփղիսից... նախ և առաջ արշավեցին Կարուց յերկիրն ու Կարնիփոր (Կարնիփոլ), և ավերեցին [բոլոր վայրերն] մինչ Բասեն (Բասիան) և հաղթող ու ամեն ինչով լի վերադարձան...

Իսկ մինչ այդ Ռանի և Գեղարքունյաց (Գելաքունիի) թուր-

քերի արշավախմբերն յեկան և ավերեցին Պաղակացիի (Պալակացիոսի)[16] յերկիրը՝ Շնաձոր կոչվածը. սրանց ընդդիմադրեց Դամբեկել՝ կախայի վորդին, [վորն և]... փախուստի յենթարկեց ու կոտորեց նրանց...

Յեվ այս պահին յեկան Կարնո-քաղաքացիք, ասորիք (շամեցիք) և Թուրք-գարմնացիք,... [վորոնց նույնպես] փախուստի յենթարկեցին ու կոտորեցին...

Սրանից հետո Մխարգրձեվները՝ Սաղիրի* և Վահրամի վորդիք, վորոնք լավ հպատակներ եյին և արշավանքներում փորձված, ավագ Զաքարիան և [մյուս] Զաքարիան՝ որհնություն ստանալով, և Հովհաննն (Իվանեն) և Սարգիսն՝ չորհնված[17], գնացին և արշավեցին Դվինի յերկրի վրա. և հաղթող ու ավարով լի վերադարձողներին հետամուտ յեղան Դվինեցոց ու Սուրմարեցոց** արշավախմբերը, վորոնց հետ տեղի ունեցավ կատաղի պատերազմ, վորը նույն Մխարգրձեվների հաղթությամբ վերջացավ...

Ապա [Թամարի ամուսին՝ ռուս Գեորգ] թագավորը զորք ժողովեց իր շուրջն և Թամարի հրամանի համաձայն ուղևորվեց Դվին ու պաշարեց Պարթևաց յերկիրը. գրավեց քաղաքներ, վորտեղից մեծ քանակությամբ գանձեր հանեց և բաղում եվ գերիներ, ապա վերադարձավ Թամարի մոտ...

Սրանից հետո [նույն Գեորգ ռուսը] մեծ զորք ժողովեց ու դիմեց Գեղարքունիք (Գելաքուն), վորը դժվար եր գրավել Թուրք-մեններին՝ այնտեղ ծովի ավազի պես շատ լինելու պատճառով. հարձակվեցին, կոտորեցին և վերցրին մեծ քանակությամբ գերիներ ու ավար. իսկ յերբ [Գեորգի զորքերը] հաղթող վերադառնում եյին, նրանց յետևից ընկավ ամբողջ Թուրքմենստանը Գեղարքունիքում (Գելաքունում)... [սրա հանդեպ] դուրս յեկան Թամարի զորքերը, այնպես, վոր ծերն յերիտասարդի առաջն եր առնում և յերիտասարդը ծերին, տերը ծառային և ծառան տիրոջը, վորոնք փախուստի յենթարկեցին, կոտորեցին և բնաջինջ արին [նրանց]. ապա վերադարձան իրենց թագավորությունը՝ Թագավորի ու Թագուհու մոտ...

Սրանից հետո... [վրացիք] արշավեցին... Արաքսի (Ախսի) յեղերքը մինչ Մասիս,... և Վարդան Դադյանը (Դադիանը) ... ու չորեքյան Մխարգրձեվներն ու այլ մեծամեծներն և ազնվականները

* Var. Սարգսի:
** Բնագրում՝ Դվինեցիք և Սուրմանեցիք:

(ազնաուրները) մեծ նեղությունների պատերազմ ունեցան. ապա՝ փախուստի յենթարկելով [Թուրքմեններին]՝ հաղթող և ուրախությամբ լի վերադարձան այնտեղից[18]...

... Յեվ այսպիսի սիրո, պատվի և պարզևաբաշխության մեջ անցկացրեց [Թամար Թագուհին] ձմրան շրջանը Սոմխեթում և Տփղիսում...

Սրանից հետո լուր տարածվեց, իբր այն ռուսը [՝Թամարի առաջին ամուսին Գեորգը, վորն աքսորված եր Կոստանդնուպոլիս՝] յեկել և Կոստանդնուպոլսից ու հասել Յերզնկայի և Կարնո-քաղաքի յերկրները... [Յեվ այդ պահին] Վարդան Դադյանն (Դադիանն) եր Որբեթի և Կայենի տերը...

Ապա Թամարը, վորը Տփղիս քաղաքում եր գտնվում, ...հրամայեց ժողովել իրեն հավատարիմ յեղող բոլորին՝ զինվորականներին* և մեծամեծներին Հերքից (Հերեթից), Կախքից (Կախեթից), Քարթլիից, Սոմխիթից [և] Սամցխեից...

... Ասլտամբները մտադրվեցին գրավել Ջավախքը (Ջավախեթը), Թմոգվին ու Ախալքալաքը, նաև Թռեղքն (Թրխալեթն) ու Սոմխիթը. և ամբողջ Սոմխիթը Բուրդ-վաճառի [ձորից] այն կողմը խաոորել եր. [և ապստամբների թվում եյին՝] Հովհան (Իվանե) Վարդանի վորդին՝ Դագի տերը, Մաղ՝ա**՝ Կայծոնի տերը. Կայենը նույն Վարդանինն եր. և նույն յերկրի ազնվականներն (ազնաուրները) ու ազնվականների վորդիք, բացի Զաքարիա Վարդանի վորդուց՝... սրանք բոլորը մտադրվեցին ժողովել Ագարա[կ]ում...

[Իշխելով ապստամբներին] Սոմխիթից՝ [Թամարին հավատարիմ մնացած զորքը] կանգ առավ Ագարա[կ]ի պուրակում վորսորդությամբ զբաղվելով և ուրախ[ությամբ լի]...

Վաղորմած լինելով հավատարիմների և յուրայինների հանդեպ՝ [Թամար Թագուհին] վաղորմածությամբ շնորհեց Վարդանի վորդի Զաքարիային Դագը Բուրդ-վաճառի [ձոր]ով հանդերձ, մինչ Գանձա[կ], բաղում ... քաղաքներով, բերդերով և ավաններով. և շնորհեց Սարգսի վորդի Հովհաննին (Իվանեյին) առաջնորդություն և գործակալի (մսախուրթուխուցեսի) պաշտոնը[19] և՝ ի պատիվ՝ Կայենն ու Կայծոնը, Գեղարքունիքով (Գելաքունիով) և այլ բաղում հարկատու քաղաքներով, բերդերով ու յերկրներով...

... [Յերը] վախճանվեց Դամբեկել ամիրսպասալարը[20],... ապա

* Var. սպասալարներին:
** Var. Մասղ:

ամիրսպասալարությունը շնորհվեց Մխարգրձել Զաքարիային՝ Սարգիս ամիրսպասալարի վորդուն, վորը նստած եր հայոց (սո-մեխների) թագավորի տեղում [և] Լոռիի տերն եր, վորին կցեցին նաև Ռուսթավ քաղաքը, [քանի վոր] նա հպատակ եր՝ արժանի սպասպետությանը[21]։...

... Յեվ վողորմածություն ցույց տվեց [Թամարը] բոլորին իրենց կարգով, վոմանց նորից շնորհելով և վոմանց ավելացնելով. և այսպես [շնորհալի յեղան] վրացիք (քարթվելները), սոմխիթ-ցիք, Թորեցիք, մեսխերն ու տայեցիք։...

... [Ապա վրացիք] դիմեցին Պարտավ (Բարդավ)՝ հինավուրց մեծ քաղաքը, և կործանեցին Առանը և սաստիկ պատերազմներով նվաճեցին... Հայկի (Հաոսի) յեղբայր* Բարդոսի յերկիրը**...

Յեվ՝ վերադառնալով այնտեղից՝ [վրացիք] նուվնիսկ մի ամիս ել չհանգստացան, շտապ գնացին և արշավեցին Արզրումի վրա, վոր ե դուռն Կարնո-քաղաքի. և այնտեղ եր բազմություն պատերազմների... ուր [վրացոց] ոգնական եյին [դրսից՝] սուրմարեցիք***, կարսեցիք, սպերցիք, և ներքուստ՝ Սուլդուխի վորդի Նասրադինը։

... [Ապա վրաց] միացյալ ուժերն յեղան Գեղարքունիք (Գեղաքուն) և՝ անցնելով Խաչենն (Խաչէանն)՝ իջան Կարկար (Ղ՝արղ՝արի****) յերկիրը[22]. հանդելով Բայլական (Բալղ՝ուն*****)՝ ավերեցին ամբողջ Առանը... իսկ Կարկարից (Ղ՝արղ՝արից******) վեց որ ման յեկան մինչ Շամքոր (Շանքոր)...

[Յեվ] նորից գնացին Լոռիից Սարգսի վորդիք՝ յերկու յեղբայրներ՝ Զաքարիա ամիրսպասալարն ու Հովհան (Իվանե) գործակալն (մսախուրթուխուցեան)՝ ավերելու Արաքսի (Ռախսի) յեղերքը. և այնտեղ եր, վոր քարավանները հանկելու և կողոպտելու յեկել եյին դվինեցիք, բջնեցիք և ամբերդեցիք, վորոնց հետ նրանք կես ճանապարհին հանդիպեցին և կռվի կպան իրար հետ. և մեծ պատերազմ ու քաջարի պայքարը գովելի յեր. [և վրաց զորքն] ամեն ինչով լի և անվանի վերադարձավ [Թամար Թագուհու ու նրա ամուսին Դավիթ Թագավորի մոտ]...

---

* Բնագրում՝ վորդի։
** Բնագրում՝ հայրենիքը։
*** Բնագրում՝ սուրմանեցիք։
**** Var. Ղ՝ուարղ՝ուաբ։
***** Var. Բլաղ՝ուն։
****** Var. Ղ՝ուարղ՝ուար։

Սրանից հետո կայենի տեր Հովհան (Իվանե) գործակալը (մսախուրթուխուցեսը) դրդեց Դավիթ [Թագավոր]ին վճռական, անվանի և մեծ ուժով արշավանք ձեռնարկել ավերելու մեծ Գեղարքունիքը (Գելաքունը), Պարսից-բազարն ու Գորլաքունը* [,վորը դարձյալ վրաց հաղթությամբ վերջացավ]։...

... [Յեվ] ամիր-[Ա]բուբաքրի ձեռք եր Ատրպատականը (Ադրբադագանը) մինչ Հայք (Սոմխիթ)...

... Ապա ամիր-Միհրան՝ Փալավանդի վորդին, և Աղսարթան շիրվանշահը (շարվաշե) ամբողջ Առանի մեծամեծներով հանդերձ յեկան... [և] կանգ առին... Ագարա[կ]ի պուրակում...

... [Յեվ արքայական տոնախմբությանն] Թամար և Դավիթ [Թագավոր]ին ու նրանց վորդի Գեորգին... Տփղիս քաղաքից դուրս նախ և առաջ վողջունեցին ոսերն ու ղփչախները՝ հներն ու նորերը, ապա՝ հերացիք և կախք, ապա՝ վրացիք (քարթվելները), վորից հետո Թորեցիք, շավշ-կղարջ-տայեցիք, ապա՝ սոմխիթցիք (սոմխիթարնի), վորից հետո՝ ափխազներն և սվան-մեգրել-գուբիացիք...

... [Ապա] աթաբակին ծանուցին, վոր պարսիկները՝ ժողովելով Նախիջևանում (Նախճևանում)՝ յեկել են Առան...

... [Յեվ] բոլորը ժողովեցան Սոմխիթում, ուր գնաց և Թամարն, ու տեսավ, վոր այնտեղ եր շիրվանշահը (շարվաշե) և ամիր-Միհրանը, նաև Ղփչախի Թագավորի յեղբայրը մեծ զորքով, ուր նրանք մի քանի որ մնացին պողթելու համար...

... Յեվ կանգ առան [վրաց զորքերը] Յեկեղյաց (Ելեկեցիք**) գետի վրա և՝ հանվելով այնտեղից՝ գնացին Շամքոր (Շանքոր***)...

... Ապա զինված նստեց Թագավորը քուրանի վրա, վորը՝ իբրև հռչակ ստացած՝ նա գնել եր վախտանգ Խաչենցուց (Խաչինեցուց), հատուցանելով վերջինիս բերդով և ավանով, վոր են Գարզմանք**** [23]...

... [Յեվ փախուստի դիմելով՝ պարսից զորքի] մի մասն ապաստան գտավ Գեղարքունյաց (Գելաքունի) լեռներում...

... Աբուբաքր (Բուբուքար) նախկին աթաբակը՝ Նախիջևան

---

* Var. Գորլաուքը.
** Var. Ելկեցիք։
*** Var. + ... հազար հազարաց և բյուր բյուրոց, թվով մեծագույն, իբրև մորեխներ և ավազը ծովի, Շամքորից (Շանքորից) մինչ լյառն Շոթի և Վարդանաշատի (Վարդանաշաի), մինչ դուռն Գանձա[կ]ի...
**** Բնագրում՝ Ճարմանք։

(Նախձևան) գաղթածը՝ թունավորեց... ամիր Միհրանին (ամիր-Միրանին)[24]...

... Հովհան (Իվանե) Մխարգրձելը, վորը քաջամարտիկ եր պատերազմում՝ փոքր արշավախմբով անցավ Գեղարքունիք (Գեղաքուն)... [Այդ ժամանակ թշնամու զորքը] գալիս եր Դանձա[կ]ից՝ դիմելով դեպի Սուրմարի (Սուրմանի) յերկիրն և [Նոր]-Վիրապի վանքը*[25]... [ուր գտնվում եր] Դվինի և Հայքի (Սոմխիթի) տեր՝ Յելտկուզ** աթաբակի մնած առյուծ դյուցազնը՝ Սուրմարեցու (Սուրմանեցու) յեղբայրը...

... [Ապա] Թամարն իջավ մինչև Դվին... և վերադարձին կանգ առավ Ագարա[կ]ում՝ լի փառոք և յերջանկութեամբ[26]... [Իսկ] Հովհան (Իվանե) գործակալը (մսախուրթուխուցեսը)՝ մեծ զորքով [արշավելով] և անթիվ ավար ուղարկելով՝ Խաչենեցի (Խաչինեցի) մեծամեծներին բերեց Թագավորի մոտ...

... [Ապա վրաց զորքը՝] ամեն ինչ ավերելով՝ հասավ Բասեն (Բասիան)[27]:...

* * *

... Ապա Թագավորի մոտ յեկան ծառայելու յերկու յեղբայրներ՝ Սարգիս ամիրսպասալարի վորդիք, վորոնք այն ժամանակ հույժ մեծարյալ եյին Թագավորի կողմից՝ Զաքարիա ամիրսպասալարն և Հովհան (Իվանե***) գործակալը (մսախուրթուխուցեսը)[28]. և Վրաստանի բոլոր մեծամեծները Թագավորի մոտ եյին. և Հովհան (Իոանե) կաթողիկոսն՝ հրեշտականմանն**** և աստվածային հոգովով լի, և այլ յեպիսկոպոսներն ել նվազ չափով ժողովել եյին Թագավորի մոտ: Մի որ պատարագում եր Հովհան (Իոանե) կաթողիկոսն, և յերբ [սուրբ] խորհուրդը վերջացավ... բոլոր արժանավորները հաղորդվեցին նշխարով. նշխար վերցնել ցանկացավ նաև Զաքարիա ամիրսպասալարը. սակայն քահանաներն այն չտվին նրան, քանի վոր նա կրոնով հայ եր՝ նզովյալներից, և ամոթխած ուղեց վերցնել նշխար և հաղորդվել (ուտել): Այս եր պատճառը, վոր [կաթողիկոսն] իրրև բոց գրգռվեց և սկսեց սաստիկ մերկացնել նրան, ասելով՝ «ուղղափառներից վոչոք թույլ չի տա քահա-

* Բնագրում՝ «միմավանի քուեղ՝անասա դա վանիսա Սուրմանս միսիսք գուիրաքիսա»:

** Բնագրում՝ «երիթ Գուզ» (sic):

*** Var.՝ Իոանե:

**** Բնագրում՝ հավասարն հրեշտակաց:

նայագործության [ժամանակ] տալ նշխար ձեզ, յոթն անգամ նզովյալ հայերին. իսկ շունը վոր գտնի, լայեզ ել չի անի ձեռնից փախցնի»: Այս պատճառով Զաքարիան ամոթխած գնաց իր վրանը: Յեվ յերբ Զաքարիա ամիրսպասալարին հրավիրեցին դահլիճ ընթրիքի, նա համառոտ ճառով դիմեց անհավատներին, քանի վոր խոսքով կշտամբում եր մեր (վրաց) դավանութիւնը: Ապա հոգովով սրբով լի կաթողիկոսը պատասխանում եր և բացատրում: Իսկ Զաքարիան՝ չկարողանալով ընդդիմադրել՝ ասում եր. «Յես՝ արշավանքներում աննվածս՝ ի վիճակի (բարեկիրթ) չեմ քեզ պատասխանելու, և կդիմեմ մեր դավանութեան (հավատքի) վարդապետներին, վորոնք իմ փոխարեն կամաչացնեն* քեզ»: Իսկ Հովհան (Իոանե) կաթողիկոսը պատասխանեց՝. «Թող լինի Քրիստոսի և միշտկույս աստվածածին Մարիամի կամքը, վորը կամաչացնի նրանց ժխտողներին»:

Լսելով այս՝ Զաքարիան մարդիկ ուղարկեց իրենց (հայոց) կաթողիկոսի, նաև յեպիսկոպոսների, վարդապետների ու գիտունների մոտ: Իսկ Հովհանը (Իոանեն) ընդդիմադրում եր սրան՝ ասելով. «Հրաժարվիր այդ անելուց, քանի վոր պետք է իմանաք, վոր ճշմարիտ դավանութիւնն (հավատն) այս է»: Բայց Զաքարիան նրան չլսեց: Ապա յեկավ կաթողիկոսն Վանի, և բոլոր յեպիսկոպոսներն ու վարդապետները, և սկսվեց քննութիւնը: Յեվ նստեց Թագուհին՝ հուսով առ սուրբն Թագուհին, և Դավիթ Թագավորն և բոլոր մեծամեծները Վրաստանի (Սաքարթվելոյի). մի կողմը [նստացրին] Մխարգրձելներ Զաքարիա և Հովհանին (Իվանեյին), [և] մյուս կողմը հրավիրեցին [Հովհան] կաթողիկոսին, [վորը] մոտավ՝ ասելով հետևյալ սաղմոսը. «դատ արա ինձ, աստված, ևն»: Յեվ յերբ նա մոտավ, Թագավորները վոտքի յելան և պատվով նստացրին, նաև հայոց (սոմեխների) վարդապետներին, վորոնց նույնպես հարգանք ընծայեցին՝ ըստ կարգի:

Յերբ հարցուփորձը վերջացավ՝ բոլորը լռեցին. ապա հայոց (սոմեխների) դավանութեան (հավատի) մասին սկսեցին խոսել, ճառել և յերկարաբանել. և բարեհիշատակ [Հովհան] կաթողիկոսը, աստվածային ներշնչմամբ ի վերուստ, խելացի բացատրում եր և իմաստնորեն պատասխանում՝ հերքելով նրանց (հայերի) ասածները: Իսկ նրանք (հայերը) վեճի մեջ ելի իրենցն եյին պնդում (հաստատում): Յեվ շարունակվեց բանավեճը մինչ հակուճն:

* Var. կպատասխանեն:

1010/4 2 2 6 4

Յերկյուղ կրելով, վոր պատմութիւնս [կարող ե] յերկար լինել*, բավականանում եմ ասելով [այսքանը]. ինչպես գիտեք, հայերը մեծ վախասուն բարձրացրին... և [Հովհան կաթողիկոսը] դիմեց նրանց՝ ասելով. «Թորգոմյան (Թարգամոսյան) տան [զավակները], վոր համախմբվել եք ճշմարիտ հավատի դեմ, գիտեք, վոր մարդկութիյանը տիրել և սատանան...» ևլն...

...Իսկ հայերը դիմեցին նրան՝ ասելով. «Այսպես ե...»: Հովհան կաթողիկոսն ասաց. «Այժմ գիտեք, յեթե ձեր հավատը մեր[ից լաչի ե, հացը ձեզանով տիրոջ մարմնի կվերածվի. իսկ յեթե մեր հավատն ե ձերից լավ, մեր մատուցածը (քահանայագործածը) տիրոջ մարմնի կվերածվի»: Իսկ հայերն ասացին. «Այսպես լինի», կաթողիկոսը լսողութիյան համար սոսկալի բան ասաց. «Գործով հրապարակենք և վոչ խոսքով»: Նրանք ասացին. «Ինչ վոր կանես, կանենք»: կաթողիկոսն ասաց. «Յես ձեզ մի շուն կտամ և յերեք որ ժամանակ, վորպեսզի թափորով և աղոթելով լուսացնեք, և [այդ] յերեք որը նրան (շանը) անոթի պահեք. և մի շուն ել դուք ինձ տվեք, և յերեք որ անոթի պահեմ, և թափորով ու աղոթելով լուսացնեմ, ապա կերևա ճշմարիտ դավանութիյունը (հավատը)։ Յերրորդ որն յես կկատարեմ անարյուն զոհ[աբերութիյուն]ը և ձեռովս կվերցնեմ նշխարն և, թեև անվայել և, վնեատեմ շան առաջ, վորը դուք ունիք: Նույնպես և դուք բերեք ձեր նշխարը և նետեք շան առաջ, վորն յես ունիմ. և վոր նշխարն ել ուտվի, այն դավանութիյունն ե վատ. յեթե ձերն ուտվի, դուք ամաչեցեք, և յեթե մերն ուտվի, մենք ամաչենք»:... Թեև հայերը չկամեցան, սակայն յերկուսն ել տվին իրենց շները և գնացին դեպի իրեց վրաններըը:...

Ուրբաթ որն եր. սկսեցին թափորը: Մի կողմը գնում եյին թագավորն ու կաթողիկոսն և ամբողջ քահանայական դասը, և քիչ եյին այնտեղ յեպիսկոպոսները, քանի վոր թագավորը ժողովի չեր կանչել: Յեվ մյուս կողմը գնում եյին հայերն և Մխարգրբեձենները՝ Զաքարիան ու Հովհանը (Իոանեն): Յեվ դիշերը յերկոքյան կողմերն ել լուսացրին: Յեվ շաբաթ որը կրկին սկսեցին թափորը, և հակումով ել լուսացրին միաշաբաթը. ապա արևն յեկավ, և բոլորը դիմեցին յեկեղեցի՝ արտասվալից աղոթելով աստծուն: Պատրաստեցին սուրբ սեղանը: Յերկու կողմումն ել տեղի ունեը լացը: Անարյուն զոհաբերութիյունը վերջացավ թե վոչ...

* Var. վոր [բանավեճը] կարող ե մինչ դիշեր շարունակվել

կաթողիկոսը գնաց դեպի ժողովականները՝ ճանապարհին յերգելով. «սուրբ, սուրբ, սուրբ, տեր զորութիյանց ևլն», ապա դիմեց բոլորին՝ յեպիսկոպոսներին ու Մխարգրձենլներին, և նրանց (հայերի) դավանակիցներին ասավ. «Լսեք այժմ, Թորգոմյան (Թարգամոսյան) տան [զավակները]... յեթե ձեր հավատը ճշմարիտ ե, այս սուրբ հացը Քրիստոսի մարմին կդառնա, իսկ յեթե մեր հավատն ե հաճո աստծուն, մեր որինածը տիրոջ մարմին կդառնա: Յեվ թեև անվայել ե, բերեք այն շունը, վորը յես ձեզ տվի, և այս սուրբ հացը նրա առաջը կդնեմ: Յեթե շունը մոտենա նրան և վերցնի, վոչինչ ե մեր (վրաց) հավատը: Ապա ձեր տված շունը բերեք, և ձեր որինած հացը դնենք նրա առաջ, և տեսեք թե ինչ կլինի, և նրանով կբացահայտվի, թե ում հավատն ե հաճո Քրիստոսին»: Իսկ հայերը՝ թեև չկամեցան, բայց արդարացի պատասխան չունեյին, [և] հարկադրված ասացին կաթողիկոսին. «Քո նշած այս գործը քեզ ե վայել կատարելու»:... Յեվ կանգնած եր կաթողիկոսն իբրև կոթող (աշտարակ) աննկուն (անդրդվելի)՝ յերեսը պճնազարդ: Ապա պատվիրեց բերել յերեք որ անոթի մնացած շունը... իսկ հայերը տկարացած շվարել եյին, և զարմանում եյին:

Ապա կաթողիկոսը խնդրեց թագավորից, վոր հրամայի ժողովրդին լռել. և լռությունը հաստատվեց թե վոչ, լուսափայլ բանով դիմեց Հայոց (Սոմխեթի) վարդապետներին* և Մխարգրձենլներին... Յերբ քահանաները շարվեցին, բերին այն շունը, վորը կաթողիկոսի մոտն եր, և նետեցին նրան (հայոց) նշխարը (զոհը): Իսկույն յետ վերցրեց: Ապա վրացիք սկսեցին փառաբանել աստծուն... իսկ հայերն՝ ինչպես գորդերը (դոդոշները) լճից դուրկ՝ կանգնած եյին լուռ ու մունջ:... իսկ թե վրացիներին ինչպիսի ուրախություն, հույս և աստվածային փառք վիճակվեց, անկարելի յե պատմել:

Յեվ ներս մտան թե վոչ, թագավորն և կաթողիկոսը մեծ ընթրիք պատրաստեցին: Իսկ ամոթխած հայերը գնացին Մխարգրձենների վրանը: Հովհան (Իոանե) գործակալը (մսախուրթուխուցեան) ասում եր իր յեղբայր Զաքարիա ամիրսպասալարին. «Չուզեցի ընդդիմախոսել վրացիներին, քանի վոր ճշմարիտ հավատի տեր են: Այժմ ինչը պետք ե ինձ լինի խոչընդոտ (կանգնեցնի), վոր յես չընդունեմ ճշմարիտ հավատն և չմկրտվեմ վրաց

* Բնագրում՝ «մարդասանթա» || «մրխասանթթա» (sic). պետք ե լինի՝ «մոձվարթա»:

կաթողիկոսից»։ Իսկ նա (Զաքարիան) պատասխանում եր. «Հասկացա, յեղբայր, վոր ճշմարիտ հավատը վրացիներինն է. սակայն [վերջին] դատաստանի որը Թող նրանց հարցնեն, ով առաջինները ցանկացան հերձվածող լինել. յես չեմ միանա վրացիներին»։ Լսելով այս՝ Հովհանը (Իվանեն) պատասխանեց նրան. «Զարմանում եմ քո իմաստությունից, վոր հասկացար և լավագույնը չես ընտրում. իսկ յես չեմ հպատակվում քո դիտավորությանը, այլ մկրտվում եմ՝ [ընդունելով] վրաց հավատը»։ Յեվ իսկույն և յեթ յեկավ ու մկրտվեց մեր (վրաց) հավատով Հովհան (Իոանե) կաթողիկոսից. և հայերից շատ շատերն էլ յեկան մկրտվելու, և յեղավ ուրախություն ու խնդություն։ Իսկ Զաքարիան նույն անհավատության մեջ մնաց[39]։...

***

...Մինչ այժմ կարսը (Կարին) Թուրքերի ձեռին եր. [Թամարը] զորք ուղարկեց պաշարելու այն. Թուրքերը՝ լսելով այս՝ Թողին Կարսը (Կարին) և փախան։ Իսկ Թագավորը գրավեց Կարսը (Կարին) և Կարսի (Կարիի) հսկող Թողեց Հովհան (Իվանե) Ախալցխեցուն և նշանակեց նրան կուսակալ՝ տալով աթաբակություն և ամիրաց-ամիրայություն... և խլեց Թուրքերից շրջակա յերկրները... և [նույն] Հովհանին (Իվանեյին) շնորհեց Կարսի ու նրա մերձակա յերկրները[30]...

...Հունաստանի (Բերձենստանի) ծայրագույն սուլթանը՝ Զաբասլանի վորդի Ռուքնադդին (Նուքրադին*) կոչեցյալը, վորը գերիշխում եր բոլոր այլ սուլթաններին և տիրում եր մեծն Հունաստանին (Բերձենստանին) Ասիայում և Կապադովկիայում մինչ Պոնտոսի ծովը, դիմեց իր բազում զինվորականներին և ժողովեց ուրախություն բյուր, վոր և չորսհարյուր հազար** (sic) ***[31]...

...Յեվ վարձիի աստվածածնի առաջ արտասվալից աղոթեցին Դավիթ-Սոսլանն ու նրա զորքը... և արշավախումբ ուղարկեց

---

* Var. Նուքարդին։

** Var. ութ հազար (sic)։

*** Var. ավելացնում է. «... վորոնց ուղարկեց Միջագետք, Կալոներո, Գաղատիա, Գանգրա, Անկյուրիա, Իսավրիա, Կապադովկիա, Մեծ Հայքը, Բիթինիա և Պաֆլագոնիայի կողմերը,... ապա միացրեց Յերզնկայեցվոց (Եղինկայեցվոց), Խարբերդցվոց (Խալխերդցվոց) և Կարնո-քաղաքացվոց... և Սալդուխը վորդու փոխարեն իր յեղբորը նշանակեց Կարնո-քաղաքում»...

վարձիից*... Յեվ առաջապահ [գնդումն] եյին Զաքարիա Մխարգրձել ամիրսպասալարը և Ախալցխեցի յերկու յեղբայրները Շալվա և Հովհանը (Իվանեն), վորոնցից Շալվան մանդատուրթուխուցես եր, [և] ձիաբերը, և այլ Թորեցիք. և դիմեցին Բասենի (Բասիանի) կողմերը:... Իսկ Դավիթ Թագավորը [զորքով]... դիմեց, Բոլոստիկե**[32] կոչված տեղը Բասենում (Բասիանում), և յեկան սուլթանի բնակատեղը:...

Այսպես որեցոր բարգավաճման և մեծարման մեջ եր բոլոր գահակալներից (գայիսոն ունեցողներից) պայծառագույն Թամարը՝ առավելապես աստվածպաշտությամբ, յեկեղեցիներ և վանքեր հիմնելով ու կառուցելով, վորբերին և վորբևայրիներին սփոփելով ու արդարադատությունը տարածելով։ Սրա որոք ուրախության և խնդության մեջն եր նրա Թագավորությունը (Թագավորությունները)։ Յերբեմն [Թամարն ու Դավիթն] անցնում եյին [հայկուհյա Լիխի] և վարում այնտեղի գործերը, նաև վորսում Գեղութ և Ալամեթում. ապա անցնում եյին [հայկուհյա Լիխի՝] Քարթլի, Հայք (Սոմխիթ), և կանգ առնում Դվինում***[33], ուր նրանց մոտ գալիս եյին հարկեր (խարաջա) [տալու] Գանձ[ակ]եցիք և վերին քաղաքացիները։ Գարնանը բարձրանում եյին Հայք (Սոմխիթ), ստանալով հարկեր (խարաջա) Նախիջևանեցուց (Նախճավանեցուց), և [ապա] գնում Կողա (Կոլա)՝ Արտահանի (Արտանի) գլուխը, ստանալով և այնտեղից հարկ (խարաջա), նաև Կարնո-քաղաքից, Յերզնկայից (Եղինկայից) և այլ շրջակա քաղաքներից****...

...Յեվ ամենուրեք խաղաղություն եր, և Թագավորը գանվում

---

* Var. + վորին ինքը Թամարն եր առաջնորդում բոլիկ վոտներով ... և առաջնորդեց Բասենի (Բասիանի) կողմերը, և մոտեցան Կարսին (Կարինին) [ու] կանգ առան։

** Var. Բոլոսիտեկ || Բոլոտեկե։

*** Var. Դուրում։

**** Var. + Նրա (Թամարի) գահակալության քսաննվերեքերորդ թե քսաներորդ տարին[34] հարց յեղավ Կարսի (Կարինի) [գրավման] մասին, քանի վոր վաղուց արդեն Սարգսիս Թմոգվեցին, Շալվա Ախալցխեցին և մեսխները պայքարում եյին, բայց ի վիճակի չեյին գրավելու այն... Ապա Դավիթ [Սոսլանը]... հրամայեց Զաքարիա և Հովհաննին (Իվանեյին) գնան և սաստիկ պատերազմեն... Յեվ յերկարատև յեղավ այս գործը, իսկ ինքը Թամարը կանգ առավ Ջավախքում (Ջավախեթում), ուր և սպասում եր նրանցից լուր ստանալուն... [Յերբ Կարսը պաշարեցին և անշուր միացած քաղաքացիներից շատերը կոտորվեցին]՝ միացածները խնդրեցին Դավթից, վոր Թամարն ինքը հասնի նրանց մոտ, վոր-

եր Գեգուքում, քանի վոր սուրբ պատն եր, և յերկու Մխարգրձեվներն էլ թագավորի մոտն էյին։ Տեղեկություն ունենալով սրա մասին՝ Արտավիւի (Արդավելի) սուլթանը թշնամություն սկսեց քրիստոնյաների հետ։ Կանչելով իր զորքը՝ շարժվեց դեպի Անի, և ավերեց այն, քանի վոր լսել եր Մխարգրձեվների բացակայությունը տանից. և բարձրանալով Արաքսի (Ախախ) յեզերքով՝ անզգալիորեն յեկավ Անի. ճանապարհին վոչոքի չվնասեց և ավազ շարաթ յերեկոյան յեկավ Անի-քաղաք. և հենց վոր սկսեց լուսանալ (լուսադեմը մոտեցավ)՝ զարկեցին դերանին, և քաղաքի դռները բացվեցին... [Սուլթանի զորքերը] մտան քաղաք և սկսեցին կոտորել և գերել [բնակիչներին]. ժողովրդի մեծ մասն յեկեղեցիների մեջն եր՝ համաձայն քրիստոնեական կրոնի. վոմանք փախան դարպասներն ու այնտեղ ամրացան և վոմանք փախան այրերը, վորոնց «քարտուն» էյին կոչում։ Անմատչելի մնացին [միմիայն] նրանք, վորոնք բերդի կամ քարտունների[35] մեջն էյին, վորոնց մեջ [թշնամին] չմտավ, քանի վոր յերեք կողմից քարափ եր, ժայռոտ և քարայրներով լի։ [Սակայն] գրավելով ամբողջ քաղաքը՝ մի բյուր և յերկու հազար մարդ յեկեղեցիների մեջ կոտորեցին [նրանց] վոչխարներին, բացի նրանցից, վորոնք հրապարակներում և փողոցներումն էյին։ [Յեվ] այսպես վայրագաբար ավերեցին Անին, և բռնակիր ու անհամար ավարով լի տուն վերադարձան[36]։

Յեվ Անիի ավերման մասին համբավաբերները լուր հասցրին Գեգուք նոր-կյուրակեյի (ախար-կիրակի) որը։ Ամիրսպասալար Զաքարեհան և գործակալ Հովհանը (Իվանեն)՝ լսելով այս՝ շատ տրտմեցին... Ապա Մխարգրձեվները դիմեցին թագավորին. «...Դու, արքա, ծանուցիր քո զորքին, վոր պատրաստ լինի գնալու Արտավիւի (Արդավելի) սուլթանի գեմ. նախ գնանք Անի...»։ Հավանելով նրանց (Մխարգրձեվների) ասածը՝ թագավորը հրամայեց իր զորքին, վոր պատրաստ լինի. և յեկան Մխարգրձեվներն Անի, և սկսեցին կազմակերպվել. ապա մոտեցավ նրանց (հայոց) պիղծ կրոնի պասը. մարդ ուղարկեցին թագավորի մոտ՝ զորք խնդրելով Արտավիւի (Արդավելի) սուլթանի դեմ։ Ապա թագավորը հրամայեց մեսխերին, թորեցիներին, թմոգվեցիներին, հեր-կախերին [և] սոմխեթցիներին [յեկել],... վորոնք ժողովեցան Անիում և գնացին Արտավիւ (Արդավել). անցան Գեղարքունիքը (Գելաքունը) և՝ անցնելով Սիսականը*՝ դիմեցին դեպի Արտավիւ (Արդավիլ)... [վորն և] պաշարեցին... Իսկ Արտավիւի (Արդավիլի) սուլթանին և նրա կանանց ու զավակներին գերի վերցրին ու տատն և յերկու հազար ընտրյալ մարդիկ սպանեցին մզկիթի մեջ [ճիշտ] այնպես, ինչպես նրանք նուհյին արին Անիի յեկեղեցիներում**... և հաղթող վերադարձան Անի ու հույժ մխիթարվեցին։... Այս ժամանակ թագավորը գտնվում եր Կողայում (Կոլայում) [և] նրա ամբողջ թագավորությունը լցվեց անթիվ հարստությամբ, վոսկով, արծաթով ու այլ ամենայն հարստությամբ, վոր բերեցին Զաքարիա և Հովհանը (Իվանեն), [և] վորի պատճառով մեծապես շնորհապարտ թագավորը նրանց շնորհեց շատ բերդեր և քաղաքներ ու յերկըրներ։ Յեվ այսպես՝ աստծուն փառաբանող, ուրախությամբ լի ապրում էյին նրանք (Մխարգրձեվները), վորոնք շրջակայում գտնըվողներից ստանում էյին հարկ[եր] (խարաջա) և անհամար ընծաներ։...

Ապա թագավորի մոտ յեկան Մխարգրձել Զաքարիա ամիրսպասալարն և Հովհան (Իվանե) գործակալը (մսախուրթուխուցեան), և վահրամ (վարամ) Գագեցին, և զեկուցին. «...Այժմ հրամայեցեք վրաստանի զորքին, վորպեսզի պատրաստ լինի արշավելու Խորասան (Խվարասան)...»։ Լսելով Մխարգրձեվների այս խոսքերը՝ թագավորը դիմեց իր թագավորության հայկուսյա և հայնկուսյա [գտնվող] բոլոր յերևելիներին, և հաղորդեց նրանց (Մխարգրձեվների) ասածի մասին։ Յեվ բոլորը՝ լսելով Մխարգրձեվների կոչն արշավանքի յելնելու մասին՝ հավանեցին այս, և վորոշեցին արշավել։... Աղոթելով Վարձիի աստվածածնի առաջ՝ [թագավորն] որհնեց դրոշակն ու արշավազորքը, և ուղարկեց Պարսկաստան։ Տվեց դրոշակը Զաքարիա ամիրսպասալարին, և նրանք (զորքերը) գնացին Պարսկաստան։ Իջնելով Նախիջևանի (Նախճևանի) կողմերը՝ [վրաց զորքն] անցավ Ջուղա և Արաքսի (Ախախ)

պետի անձնատուր լինեն նրան... Իսկ յերբ [Թամարը] հասավ՝ [բերդի] բանալիները հանձնեցին նրա վորդի Գեորգին (Գիորգիին), ապա Թամարին՝ խնդրելով խաղաղություն [հաստատի], և յերդվեցին, վոր վոչոքի չհանձնի Կարսը (Կարբ), ինչպես Անին (Անիսը) և Դվինը, այլ իր թագավորությանը կցի։ [Թամարն] այս առթիվ հաստատ խոսք տվեց և հրամայեց իր վորդի Գեորգին (Գիորգիին)՝ չվոր մտնի և առնիա քաղաքն ու բերդը։ Յեվ յեղավ այսպես. այս մի քաղաքն ու բերդը [Թամարն] իրեն վերապահեց բոլոր նրանցից, վոր գրավեց՝ Զորակերտից մինչ Արաքս (Ախախ), Գագից մինչ Գանձա[կ] և Ջավախքից (Ջավախեթից) մինչ Սպեր...

* Բնագրում Սիսական։ Var. Իսպհան։

** Var. յեկեղեցում։

յեզերքը, ապա մտավ Դարադուզի նեղ ձորը, վորտեղից վեր յելավ դեպի Մարանդա... [Ապա՝ հաղթելով Արտավիլի սուլթանին՝ վրաց զորքն] անցավ Արաքսը (Ռախսը) և Նախիջևանի (Նախճավանի) կողմերը, և յեկավ Տփղիս՝ թագավորի մոտ[37]:...

Ապա առաջ յեկավ մեծ տրամուբյուն, քանի վոր վախճանվեց Զաքարիա ամիրսպասալարը՝ Սարգիս ամիրսպասալարի վորդին՝ վորը հույժ մեծարեցավ և լի յեր ամենայն բարիքներով, հաղթող, քաջ և հույժ մաքառող... Սրան (Զաքարիային) վողբացին թագավորն [և] Վրաստանի ամեն մի մարդ, քանի վոր այս ժամանակներին իշխանների միջև նրանից ավելի քաջարի վոչոք չեր յերևացել, ինչպես նաև տոհմական ծագումով:—Նա Արտաքսես Ցերկայնաբազուկի տոհմիցն եր, և դավանությամբ հայ եր, [և] ոժտված եր աստվածային և մարդկային բոլոր բարիքներով: [Ցեվ] այս քաջարի հայրը մի վորդի թողեց, վորը Շ[ահ]ին[շ]ա[հ]* եր կոչվում[38]: Ապա [թագավորը] կանչեց Զաքարիայի յեղբայր Հովհան (Իվանե) գործակալին (մսախուրթուխուցեսին), և կամեցավ շնորհել նրան նրա յեղբոր պատիվը, ու տվեց նրան ամիրսպասալարություն: Իսկ Հովհանը (Իվանեն)՝ զարմանալով այս առթիվ՝ ասաց թագավորին. «Այն պատիվը, վոր դու ինձ շնորհեցիր, շատ և շատ մեծ ե. բայց յես արժանի չեմ իմ յեղբոր անունով կոչվել ու չեմ ուզում ամաչել՝ գրավելով նրա տեղը. ուստի և շնորհիր ինձ աթաբակությունը, քանի վոր Վրաստանում դուք՝ թագավորներդ՝ տակավին սահմանած չունիք աթաբակություն: Սրանով դու կզորացնես քո շնորհն առ ինձ, քանի վոր կարժանացնես բարձրագույն նոր պատվի, և աթաբակությունը կշնորհես ինձ, ինչպես ընդունված է սուլթանների մոտ, քանի վոր սուլթանների որենքով աթաբակը թագավորների և սուլթանների հայր և դաստիարակ է [համարվում, և այդ պատճառով էլ] կոչվում է «աթաբակ»: Սրանով կզորացնես քո շնորհը նախ և առաջ առ ինձ»: Լսելով այս՝ թագավորը շնորհեց նրան աթաբակությունը, վոր մինչ այն Վրաստանի արքունիքում (թագավորների առաջ) վոչոքի չեր տրվել, և գործակալություն (մսախուրթուխուցեսոբա) շնորհեց [թագավորը] Զաքարիա Գագեցու վորդի Վահրամին (Վարամին), վորը պատվական մարդ եր և արշավանքներում հաղթող: Ցեվ այսպես նրանք միշտ Թամար թագուհու (թագավորի) մոտ եյին:

* Բնագրում՝ Շինա (sic). Var. Շալվա:

Իսկ Թամար թագուհին (թագավորը) ձմեռը Դվինում* եր լինում և ամառը Կողայում (Կոլայում) ու Ցելի լճի [մոտ], յերբեմն անցնում եր Ախխազք (Ախխազեթ), Դեգութ և Ցխում**:...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Աշոունի»-ն նույն Աշոունիք կամ Աշարունիքն է (Ցերասխաձորը). «Ի գաւառն Աշորնիս... ի գիւղն, որ ասի Կաղեզուան»՝ այսպես է այն հիշատակում Մ. Ուռհայեցին (Ժամանակագրութիւն, Բ. տպ., Վաղ. 1898, եջ 268—269): Հմմ. M. Brosset, Historie de la Géorgie, I, 2, p. 384, n. 4.

2 Հմմ. Վարդանի (Վնե. 1862, եջ 123—124) տեղեկությունը. «Շահի-Արմէնն... տիրեալ երկոտասան քաղաքաց, կոչեցաւ թագաւոր Հայոց, որ է Շահի Արմէն՝ ըստ իւրեանց լեզուին»:

3 Անտարակույս, «Հազար ու մի գիշերի» ազդեցությամբ է ասված:

4 Հմմ. Ստ. Որբելյանի (Տփղիս 1911, եջ 382) վկայությունը. «Գէորգի էառ զԱնի քաղաք ի 610 (=1161) թուականին և զամենայն տունն Շիրակայ»:

5 Անիի առումը Գեորգի կողմից, համաձայն վերոհիշյալ հայ պատմիչների, տեղի պիտի ունենար 1161 թվին: Այս առթիվ Մ. Ուռհայեցին (op. cit., 426) գրում է. «Ի թուականութեան Հայոց Ոժ (=1161) թագաւորն Վրաց Գորգի որդի Դեմետրէ՝ որդւոյ Դաւթի, եկն ի վերայ թագաւորաքնակ մեծի քաղաքին Անւոյ յաւուրս ամարայնոյ, յաւուր երկուշաբաթի և... ի վաղիւն առեալ զքաղաքն բռնութեամբ... Եւ եղեալ պահապանս քաղաքին արս ընտիրս երկու հազար, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ և գնաց ի թագաւորութիւնն իւր. իսկ Տէր Ալաթայ, որ Շահի-Արմէնն կոչէն, ժողով արարեալ արս ութսուն հազար, եկն պաշարեաց զքաղաքն Անի. զայն լուեալ թագաւորն Վրաց՝ եկն ի վերայ նոցա և կոտորեաց զնոսա, և արար զնոսա փախստական ...և առին [վիրք] ծառայս երկու հազար և հինգ հարիւր, գլխաւորս՝ որք էին հարիւր յիսուն ի նոցանէ. ամբարյալ մեծամեծք. և ձիս և ջորիս և ուղտս անհամար, և վրան և ջոչան, և այլ ալեհ որ ոչ գոյ թիւ, և ոչխար բազում. և լցաւ քաղաքն Անի ամենայն հարստութեամբ, զոր յառման վրացւոյն էին կորուսեալ՝ կրկնապատիկ շահեցան, մինչև զընտիր ջոչանն երկու դանկ ծախէին: Եւ զկնի բազում աւուրց գնացին մարդիկ քաղաքին Անւոյ ի տեղի պատերազմին և գտանէին զրահս բազումս ի մէջ խոտին և բերէին: Եւ թա-

* Var. Դերում:

** Թվելով ապա մի առ մի միահեծան Թամարի «ազգագուտ» և «ժողովրդասեր» գործերը, վարիանտը (Վախտանգյան խմբագրությամբ) նշում է. «Սրան վկա յեն Շարվանշահների (Շարվանշեթի) և Դերբենացվոց (Դարուբանդեցվոց), Խունձախների (Ղունձերի), Ոսերի, Կասպացների (Քաշագների), Կարնո-քաղաքացվոց և Տրապիզոնեցվոց յերկիրները (տները), վորոնք սրա (Թամարի) շնորհիվ ազատ կյանք եյին վայելում և միանգամայն ապահով եյին թշնամիներից...»:

գաւորն զայս բարութիւնս արար քաղաքին Անւոյ, զի յորժամ էառ զնա՝ երեսս քառասուն հազար դահեկան և գնեաց ի հեծելէն զգերեալ ծառայն Անւոյ՝ քրիստոնեայ և զայլազգի։ Այս եղև ի պահն սուրբ Գրիգորի, որ ի միջինքն ամառան աղուհացիցն՝ յորժամ առաւ Անի, և ամենեցուն օգոստոսի կոտորեցին զամիր Միրայն, որ էր Շահի-Արմէն»։

Ինչ վերաբերում է Դվինին, նրա առումը նույն Մ. Ուռհայեցին *(էջ 429)* այսպես է նկարագրում. «Ցայսմ ամի (ՈԺԱ = 1162) առաւ մեծանուն քաղաքն Դուին ի թագաւորէն Վրաց Գորգէ. բռնութեամբ ի ներքս մտեալ զկնի փախստական զօրաց այլազգեացն, որք ելեալ էին ի քաղաքէն ընդդեմ նորա պատերազմել, և նա ի փախուստ դարձուցեալ կոտորեաց զնոսա. և զմնացեալքն դէմս ի քաղաքն արարեալ, միաբան մտեալ ընդ դուռն քաղաքին կոտորեցին զամենեսին յանխնայ, գերեցին և այրեցին զբնակութիւնս նոցա, և ինքեանք դարձան մեծաւ աւարաւ և գերութեամբ յաշխարհն իւրեանց»։

Նույն Դվինի առման մասին Վարդանը *(127)* գրում է. «Իսկ թագաւորն Վրաց [Գէորգի] կուռէ առ ինքն զկովկասային զօրսն, և գայ առնու զԴուին՝ խստագոյն խայտառակեալ զնոսա ի սուր և ի հուր, բաց ի քրիստոնէիցն որ անդ»։

6 *Համմ.* Վարդանի *(էջ 127)* հետևյալ խոսքերը. «Ելակուզն գայ յայրեցեալն և ի քանդեալն Դուին, և խոցոտեալ սրտիւ և մրմռեալ իբր զգազան կատաղի՝ գայ ի Մրեն և այրէ անդ զամբոցն... և դառնայ ի դաշտն Դագայ... Եւ զկնի ի թագաւորէն Վրաց անաբեկեալ փախչի, թողով զկարասին և զգերիսն անդէն» էլն։ Uս. Որբելյանն էլ *(էջ 382)* գրում է. «Թագաւորն Գէորգի... մի անգամ փախոյց զմեծ աթաբէկն Ելակուզ ի դաշտին Գագայ, որ եկեալ էր 100.000-աւ ի վերայ Գէորգիի. և կամէր կոտորել զամենայն վիրս, և ըմբռնել զթագաւորն. զոր մեծաւ հնարիւք և արիական քաջութեամբ այնքան ի նեղ էարկ Իվանէ, զի ի զիշերի թողին զվրանս և զզէնս և զանհուն կարասիս իւրեանց և զբեռնակիրս. և փախեան մազապուր»։

7 *Այս տեղեկությունները, զուգադիպելով* Իբն-Ալ-Աթիրի *տվյալներին, վերաբերում են 1162 թվին (Համմ.* Իվ. Ջավախիշվիլի, *Վրաց ժողովրդի պատմությունը,* II, *1914, էջ 562—563)։*

8 *Այս առթիվ* Վարդանը *(էջ 127)* նկատում է. «Սակայն [Գէորգի թագաւորն] զրգռէ զծուլիդ սուլտանն, զորդին Մահմուդի զԱսլան և աճէ յԱնի, և զամս չորս պահէ ի տառապանս անվար և անհանգիստ. մինչ թագաւորն Վրաց Գէորգի ողորմելով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն և տայ ի նա զԱնի. զի չէր ձեռնհաս պահել ի բազմութենէ անօրինացն»։ Ինչի վոր Մահմուդի վորդի Ասլանն ամբողջ 4 տարվա ընթացքում Անիին հանգիստ չէր տալիս, ուրեմն պետք է ենթադրել, վոր Գեորգ թագավորը շնորհած պիտի լինի Անին նույն Ասլանին $1161 + 4 = 1165$ թվին *(Համմ.* M. Brosset, op. cit., p. 395, n. 1. Իվ. Ջավախիշվիլի, *Վրաց ժողովրդի պատմությունը,* II, *564)։*

9 Իբն-Ալ-Աթիրի համաձայն, այս դեպքերը տեղի պիտի ունենային *1165—1166 թ. թ. (Համմ.* M. Brosset, op. cit., p. 396, n. 1, Իվ. Ջավախիշվիլի, op. cit., 565*)։*

10 *Վրաց. «Ղազի»-ն անհասկանալի յե. ուստի և Մ. Բրոսեն այն ուղղում է «Գեղամ»-ի.* Le lac de Gégham, ou Goghtcha (M. Brosset, op. cit., p. 397, n. 6)։

11 *Գեորգ թագավորի՝ Ղրբեյանների դեմ մղած պայքարի մասին հայ պատմիչներից մանրամասն խոսում են* Վարդանն *(էջ 130)* ու Uս. Որբելյանը *(էջ 383—389)։ Ըստ* Վարդանի, «յայնմ ժամանակի յայտնեաց Իւանէ զչարութիւնն իւր, զեղբօրորդի թագաւորին իւրեանց զԴեմետէն և զյոլով յաղաւաց յինքն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զթագաւորն, մինչ կայր ի Սախատէ *(տպ. Սախատա. sic. Լ. Մ.-Բ.)* յանհոգս. զոր իմացեալ յառնէ միջէ՝ փախեաւ ի Տփղիս, զի սակաւամարդ էր. և անդ հաւաքեցան առ նա բազումք՝ թողլով զչար խորհուրդն։ Եւ յորժամ զօրացաւ կողմն թագաւորին, և կամէր գնալ ի վերայ ապստամբացն՝ որք ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, և ապա մին ի Լօռէ, բացի Լիպարտէն՝ որ չոգաւ ի Պարսից կողմն երկու որդովք. և էառ թագաւորն զամենայն գանձ Օրբէլեանց, և ամենեքեան անկան յոտս թագաւորին, եղբօրորդին և ընդ նմա այլքն, մինչև ինքն իսկ Իւանէ. զորոյ զայն կուրացոյց, և զկրտսեր որդի նորա զԲաւքար և զինէն, զորդի Լիպարտին սպան, և յոչինչ եղեն չար խորհուրդքն ամենայն, ի վեցհարիւր քան և վեց թուին»։ Համեմատաբար ավելի մանրամասն խոսում է Որբելյանների ապստամբության մասին Uս. Որբելյանը, վորն իր տեսությունը սկսում է հետևյալ խոսքերով. «Իսկ ի թուականին Հայոց 626 եղև աղմուկ շփոթի ի մէջ թագաւորութեանն Վրաց. և քնաջինջ կործանեցաւ տունն Օրբէլեանց», և այլն։ Uս. Որբելյանի տեղ-տեղ տված սխալ լուսաբանությունների քննադատությունը տես. Իվ. Ջավախիշվիլի, op. cit., *571, ծանոթ.։*

12 *Մխարգրձելների կամ «Ցերկայնաբազուկների» մասին տես.* M. Brosset, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, Add. XVII, p. p. 266—279 (Notice et détails historiques sur la famille des Mkhargrdzélidze), Ղ. Ալիշան, *Շիրակ, 175.* Ե. Լալայեան, *Բոլչալուի գաւառ,—«Ազգագրական Հանդէս», գ. VII—VIII, Տփղ. 1901, էջ 319—329.* Ասլան Շանշաազարեան, *Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դեպի Զորագետ և նախորդները,—«Շողակաթ», I, էջմ. 1915, էջ 66—83.* Ն. Մառի *քննադատականը վերջինիս մասին՝* Отчет о состоянии и деятельности С.-Петербургского Университета за 1908 г., Спб. 1909, отд. II, стр. 73—77. Ս. Լիսիցյանի *քննադատականը՝ Տեղեկագիր Թիֆլիզու Վանից աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն յանձնաժողովի 1908 տպրիլ 5—1910 տպրիլ 5, Տփղ. 1910, էջ 11—18, նախորդ քննադատության արտատպությամբ հանդերձ՝ էջ 19—24. «Վաղրենավորը»,* Ս. Կակաբաձեի *խմբագրությամբ, վրացերեն, բ. տպ., Տփղ. 1927, էջ* XCIV։ *Համմ. նաև՝* Լ. Մելիքսեթ-Բեկ, *Հայերը վրաց հին գրականության մէջ,—«Գեղարուեստ», VII, Տփղ. 1921, էջ 40 և ծանոթ. 1.* Նույնը, *«Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», վրացերեն, Տփղ. 1928, էջ 36—41 (մանրամասն բիբլիոգրաֆիայով).* Գարեգին ա. Ե. Հովսեփյան, *Ծաղրակյանք կամ Պոռչյանք Հայոց պատմության մէջ. Պատմա-հնագիտական ուսումնասիրություն. Վաղարշապատ 1928, էջ 1—26։*

13 *Ասել է՝ հակաքաղկեդոնիկները (մխալճակները)։*

14 *Ասել է՝ քաղկեդոնիկ (երկաբնակ)։*

15 *Վրաց պալատական պաշտոնեության մասին մանրամասն տես.* Իվ. Ջավախիշվիլի, *Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, գ. II, հատված I, Տփղ. 1928։—Սարգիս Մխարգրձելը, հոմանյան Սանահնի արձանագրության, վախճանվել է 1187 թ. (*Կ. Կոստանեանց, *Վիմական տարեգիրը, ՍՊԲ 1911, էջ*

36)։ Հետևապես, Իվ. Ջավախիշվիլու կարծիքով (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 590—591), Դամբեկելն ամիրսպասալարը կարող էր դառնալ նույն 1187 թվին։

16 *Այժմյան Ջլուղը-դյուլը կամ Ջուղը լիճը։*

17 *«Որհնությունն ստացած» և «չորհնված» ենք մենք թարգմանում վրաց. «դալոցվիլնի» և «դաուլոցավլնի», որ ֆրանսերեն Մ. Բրոսեն (M. Brosset, Hist. de la Géorgie, I, 2, p. 414, n. 3) թարգմանել է՝ proclamé և non proclamé.*

18 *Ըստ Մ. Բրոսեյի (op. cit., p. 416, n. 2) 1187—1192 թ. թ. միջոցին։*

19 *Տես 15 ծանոթությունը։*

20 *Ըստ Իվ. Ջավախիշվիլու (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 596—597) 1190—1191 թ. թ.։*

21 *Ըստ Իվ. Ջավախիշվիլու (ibid., 597) 1191 թ., քանի որ Սանահնի նույն՝ 1191 թ. արձանագրության մեջ (Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, 37), Զաքարիան արդեն «ամիրսպասալար» է կոչված։ Ընդ սմին, նույն դիտանկանին տարորինակ է թվում, որ Հոռոմայրի 1187 թ. արձանագրության մեջ (Կ. Կոստանեանց, 36) Զաքարիան «ամիրսպասալար» է կոչվում, մինչդեռ նույն Սանահնի 1187 թ. արձանագրության մեջ (ibid.) նրա «ամիրսպասալարության» մասին խոսք չկա. Իվ. Ջավախիշվիլի (ibid., էջ 597, ծանոթ.*)։

22 *Այսինքն՝ «Գարգարացվոց» յերկիրը։*

23 *«Գարդման» ենք մենք վերականգնում համաձայն Մ. Բրոսեյի (op. cit., p. 441, n. 6) միանգամայն իրավացի լուսաբանության. „Dcharmani doit être le Gardman des Arméniens“։*

24 *Հմմտ.* M. Brosset, op. cit., p. 447, n. 2։

25 *Հմմտ.* ibid., p. 448, n. 2 (p. 447)։

26 *Ըստ Վարդանի (էջ 138), վրացիք «ի վեցհարիւր յիսուն և երկու թուին առին զԴուին», այսինքն 1203 թվին։ Մնացած պատմիչները Դվինի առման տարին չեն ցույց տալիս։ Հմմտ. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 609։*

27 *Հմմտ.* Us. Որբելյանի *(էջ 391) խոսքերը. «[Զաքարէ և Իվանէ] բազում չանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցներքին Բասեն և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ»։ Հմմտ. Իվ. Ջավախիշվիլի,* op. cit., II, 610.

28 *Մխարգրձելների մասին տես 12 ծանոթությունը։*

29 *Հովհան (Իվանե) Մխարգրձելու «դավանափոխության» մասին հայ պատմիչներից խոսում են, ինչպես հայտնի է, Վարդանն ու Կիրակոս Գանձակեցին։ Վարդանը (Վենետիկ 1862, էջ 138) գրում է. «Իւանէ խաբեալ ի թագուհւոյն Թամարայ՝ տիւրացաւ ի հաւատսն, և անյայտողեալ նմա ըմբռնեցաւ զերի ի Խլաթ... Իսկ Զաքարէ եղբայրն Իւանէի միաց ի սեհիական հաւատն. սակայն կամեցաւ զսոն Տիրամօրն և զխաչին ի պատկեր աւուրն ծօնել, և զճարագալոյցսն չլուծանել, և կրօնաւորաց միս չուտել, և կենդանւոյն պատարագ մատուցանել. և վրանով պատարագել ի բացեայ՝ զկրօք և սարկաւագօք»։ Կիրակոսը (Տփղիս 1909, էջ 157) գրում է. «Իւանէ խոտորեցաւ յայսմանէն ջաղկեդոնի, յոր կործանեալ էին Վիրք. զի սիրեաց նա զփառսն մարդկանց առաւել քան զփառսն Աստուծոյ, հրապուրեալ նա ի թագուհւոյն՝ որ Թամարն կոչէր, ի դասերէն Դէորգեայ։ Իսկ Զաքարէ յուղղափառութեանն եկաց, զոր դաւանէն Հայք. վասն այսորիկ առաւել մեծարելին զՎիրս»։*

Վրաց պատմչի ակնարկած «գեպքը», որքան էլ այն, իրոք, առասպելական դծերով է նկարագրած, ստանում է իր ուրույ գնահատումը քաղկեդոնականների (յերկրընակների) և հակաքաղկեդոնականների (միաբնակների) միջև Թամարի որոք ծագած վեճերին վերաբերյալ ամբողջ գրականության քննությամբ. իսկ այս վեճերը, ինչպես և նախորդ դարերի ընդդիմախոսությունները, ինչպես հայտնի է, արգասիք և այն հակասությունների, որ տեղի ուներ ավատական միջնադարում, այս դեպքում՝ միահեծանության (աբսոլուտիզմի) հաստած Վրաստանում, որի եքսպանսիան տարածվել էր Սև ծովից մինչև Կասպից ծով, և Կովկասյան լեռնաշղթայից մինչև Առաջավոր Ասիա։

Ինչպես հաղորդում է ասորի պատմիչ Գրիգոր Բարհեբրեյ կամ Աբուլիարաջը (ապրում էր 1226—1286 թ. թ.), հայ-վրացական մի ընդհարում տեղի է ունեցել 1197 թվին «ծռազատկի» առիթով, հավանական է, Տփղիս քաղաքում (Gregorii Barhebraei Chronicon ecclesiasticum, edid. J. B. Abbeloos et Th. J. Lamy, t. II, 1874, p. p. 599—604. Bibliotheca Orientalis, ed. Assemani, t. II, p. 369), *Հմմտ. Մ. Զամչեան, Պատմութիւն Հայոց, III, էջ 161—162, նաև* Л. Меликсет-Беков, О международусобице в Тифлисе в 1197 г. по поводу Кривой пасхи,—„Изв. Кавк. Ист.-Арх. Инст.“, т. II, 1925, стр. 49—60։ *Իսկ Մխիթար Գոշի «Դէպագրութիւն... յաղագս Վրաց» կոչված գրությունը ուշագրավ ապացույցն է այն հանգամանքի, որ այսպիսի ընդհարումները ու վեճերը հայոց և վրաց, ուղիղ հասած հայ (հակաքաղկեդոնիկ) և վրաց (քաղկեդոնիկ) հոգևորականության միջև քանիցս է տեղի ունեցել Թամարի թագավորության որոք, վորն և դրդել է Մխիթարին համապատասխան դիմում անել Զաքարիա և Հովհան (Իվանե) Մխարգրձելներին։ Այս գրությունը սկսվում է հետևյալ «ձոն»-ով. «Զայս գծագրութիւն [ի]սակաւուք հարկաւոր կարծեաւք եղաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ ընդ մեզ վարին, քան զՅոյնս, աշակերտելով նոցա։ Եւ արդ, զի նախ առ ձեզ է նախադրութիւն բանիս, ով աստուածասէր և բարեպաշտ իշխանք իշխանաց Զաքարէ և Իւանէ, ծնունդք սիրոյ աստուծոյ ի բարեզարդ ծնողաց. զի ես յամենայնի նուաստ Մխիթար ի բանս և ի գործս սպասաւորաց բանին, որ յաւուրս մեր՝ տեսանելով և լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի [ի] հոգի, մանաւանդ զի հաւանելի թուէին ձեզ ասացեալքն առ ի նոցանէ, յայսոսիկ եկի [ի] միտս՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ, և զոր ամբաստանիմք, թէ ոչ միաբանին ընդ Յոյնս և ընդ Վիրս ցուցանել փութացաք զանհնարութիւնս...» (ձեռագիր Ըզմիածնի մատենադարանի № 631, էջ 17 r = «Արարատ» ամսագիր 1900 թ., էջ 497 = Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», վրացերեն, Տփղ. 1928, էջ 240)։ Վոչ պակաս հետաքրքիր է և նույն գրության վերջաբանը, ուր, ի միջի այլոց, կարդում ենք հետևյալը. «Եւ արդ թէպէտ բարեպաշտ թագաւորք[ն] մեր չեն բաւական՝ Թամար և Դաւիթ՝ սիեզերական ժողով առնել ամենայն ազգաց, վասն հետաւորութեան Ցունաց և Հռոմայեցւոց և այլոց ազգաց, այլ աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց և զՎրաց թշնամութիւնն բառնալ, որ զԿրիստոսն չհայհոյեն. զի այն Կրիստոսի է աւելութիւն [և թշնամութիւն], որ զխաչ և խատ և զեկեղեցի մխիանց հայհոյեն և նախատեն։ Եւ որպէս ցուցաք յառաջագոյն՝ այն էր աստուծոյ հաճոյ և Կրիստոսի կամք, զի*

36)։ Հետևապես, Իվ. Ջավախիշվիլու կարծիքով (Վրաց ժողովրդի պատմություն, II, 590—591), Գամրեկելն ամիրսպասալար կարող եր դառնալ նույն 1187 թվին։

16 Այժմյան Ջլղըր-դյոլը կամ Ջլղըր լիճը։

17 «Որհնություն սուցած» և «չորհնված» ենք մենք թարգմանում վրաց. «դալոցվիլնի» և «դաուլոցալնի», որ ֆրանսերեն Մ. Բրոսեն (M. Brosset, Hist. de la Géorgie, I, 2, p. 414, n. 3) թարգմանել է՝ proclamé և non proclamé.

18 Ըստ Մ. Բրոսեյի (op. cit., p. 416, n. 2) 1187—1192 թ. թ. միջոցին։

19 Տես 15 ծանոթությունը։

20 Ըստ Իվ. Ջավախիշվիլու (Վրաց ժողովրդի պատմություն, II, 596—597) 1190—1191 թ. թ.։

21 Ըստ Իվ. Ջավախիշվիլու (ibid., 597) 1191 թ., քանի որ Սանահնի նույն՝ 1191 թ. արձանագրության մեջ (Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, 37), Զաքարիան արդեն «ամիրսպասալար» է կոչված։ Ընդ սմին, նույն գիտնականին տարորինակ է թվում, որ Հոռոմայրի 1187 թ. արձանագրության մեջ (Կ. Կոստանեանց, 36) Զաքարիան «ամիրսպասալար» է կոչվում, մինչդեռ նույն Սանահնի 1187 թ. արձանագրության մեջ (ibid.) նրա «ամիրսպասալարության» մասին խոսք չկա. Իվ. Ջավախիշվիլի (ibid., եջ 597, ծանոթ.*)։

22 Այսինքն՝ «Գարգարացվոց» յերկիրը։

23 «Գարդման» ենք մենք վերականգնում համաձայն Մ. Բրոսեյի (op. cit., p. 441, n. 6) միանգամայն իրավացի լուսաբանության. „Dcharmani doit être le Gardman des Arméniens“։

24 Հմմ. M. Brosset, op. cit., p. 447, n. 2։

25 Հմմ. ibid., p. 448, n. 2 (p. 447)։

26 Ըստ Վարդանի (եջ 138), վրացիք «ի վեցհարիւր յիսուն և երկու թուին առին զԴուին», այսինքն 1203 թվին։ Մնացած պատմիչները Դվինի առման տարին չեն ցույց տալիս։ Հմմ. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, II, 609։

27 Հմմ. Ստ. Որբելյանի (եջ 391) խոսքերը. «[Զաքարէ և Իվանէ] բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև գներքին Բասեն և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ»։ Հմմ. Իվ. Ջավախիշվիլի, op. cit., II, 610.

28 Մխարգրձելների մասին տես 12 ծանոթությունը։

29 Հովհան (Իվանե) Մխարգրձելու «դավանափոխության» մասին հայ պատմիչներից խոսում են, ինչպես հայտնի է, Վարդանն ու Կիրակոս Գանձակեցին։ Վարդանը (Վենետիկ 1862, եջ 138) գրում է. «Իւանէ խաբեալ ի թագուհւոյն Թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն, և անյաջողեալ նմա ըմբռնեցաւ գերի ի Խլաթ... Իսկ Զաքարէ եղբայրն Իւանէի ետուն ի սեպհական հաւատն. սակայն կամեցաւ զոօն Տիրամօրն և զխաչին ի պատկեր աւուրն ծնանել, և զճրագալոյցան չլուծանել, և կրօնաւորաց միս չուտել և կենդանւոյն պատարագ մատուցանել. և վրանով պատարագել ի բացեայ՝ զկրօք և սարկաւագօք»։ Կիրակոսը (Տփղիս 1909, եջ 157) գրում է. «Իւանէ խոտորեցաւ յոյանդն Քաղկեդոնի, յոր կոչծանեալ էին Վիրք. զի սիրեաց նա զփառան մարդկանց առաւել քան զփառան Աստուծոյ, հրապուրեալ նա ի թագուհւոյն՝ որ Թամարն կոչէը, ի դատերէն Գէորգեայ։ Իսկ Զաքարէ յուղղափառութեանն եկաց, զոր դաւանէն Հայք. վասն այսորիկ առաւել մեծարէին զՎիրս»։

Վրաց պատմչի ակնարկած «դեպքը», վորքան էլ այն, իրոք, առասպելական դծերով է նկարագրած, ստանում է իր ռեալ գնահատումը քաղկեդոնականների (յերկրընակների) և հակաքաղկեդոնականների (միաբնակների) միջև Թամարի որոք ծագած վեճերին վերաբերյալ ամբողջ գրականության քննությամբ. իսկ այս վեճերը, ինչպես և նախորդ դարերի ընդդիմախոսությունները, ինչպես հայտնի յե, արգասիք և այն հակասությունների, վոր տեղի ունեը ավատական մթնոլորտում, այս դեպքում՝ միահեծանության (աբսոլուտիզմի) հասած վրաստանում, վորի եքսպանսիան տարածվել եր Սև ծովից մինչև Կասպից ծովը, և Կովկասյան լեռնաշղթայից մինչ Առաջավոր Ասիա։

Ինչպես հաղորդում է ասորի պատմիչ Գրիգոր Բարհեբրեյ կամ Աբուլֆարաջը (ապրում եր 1226—1286 թ. թ.), հայ-վրացական մի ընդհարում տեղի յե ունեցել 1197 թվին «ծռապատկի» առթիվ, հավանական է, Տփղիս քաղաքում (Gregorii Barhebraei Chronicon ecclesiasticum, edid. J. B. Abbeloos et Th. J. Lamy, t. II, 1874, p. p. 599—604. Bibliotheca Orientalis, ed. Assemani, t. II, p. 369), Հմմ. Մ. Զամչեան, Պատմութիւն Հայոց, III, եջ 161—162, նաև Л. Меликсет-Беков, О междоусобице в Тифлисе в 1197 г. по поводу Кривой пасхи,—„Изв. Кавк. Ист.-Арх. Инст.“, т. II, 1925, стр. 49—60։ Իսկ Մխիթար Գոշ «Գծագրութիւն... յաղագս Վրաց» կոչված գրությունը լավագույն ապացույցն է այն հանգամանքի, վոր այսպիսի ընդհարումներ ու վեճեր հայոց և վրաց, ուղիղ հասած հայ (հակաքաղկեդոնիկ) և վրաց (քաղկեդոնիկ) հոգևորականության միջև քանիցս է տեղի ունեցել Թամարի թագավորության որոք, վորն և դրդել է Մխիթարին համապատասխան դիմում անել Զաքարիա և Հովհան (Իվանե) Մխարգրձելներին։ Այս գրությունը սկսվում է հետևյալ «ձոն»-ով. «Զայս գծագրութիւն [նակաւուք հարկաւոր կարծեաւք եղաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ ընդ մեզ վարին, քան զՅոյնս, աշակերտելով նոցա։ Եւ արդ, զի նախ առ ձեզ է նախագրութիւն բանիս, ով աստուածասէր և բարեպաշտ իշխանք իշխանաց Զաքարէ և Իւանէ, ով աստուածային ծնունդք սիրոյ աստուծոյ ի բարեզարդ ծնողաց. զի ես յամենայնի նուաստ Մխիթար ի բանս և ի գործս սպասաւորաց բանին, որ յաւուրս մեր՝ տեսանելով և լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի [ի] հոգի, մանաւանդ զի հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ, յայսոսիկ եկի [ի] միտս՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ, և զոր ամբաստանիմք, թէ ոչ միաբանին ընդ Ցոյնս և ընդ Վիրս ցուցանել փութացաք զանհնարութիւնս...» (ձեռագիր ՆԶ-միածնի մատենադարանի № 631, եջ 17 r = «Արարատ» ամսագիր 1900 թ., եջ 497 = Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», վրացերեն, Տփղ. 1928, եջ 240)։ Վոչ պակաս հետաքրքիր է և նույն գրության վերջաբանը, ուր, ի միջի այլոց, կարդում ենք հետևյալը. «Եւ արդ թէպէտ բարեպաշտ թագաւորք[ն] մեր չեն բաւական՝ Թամար և Դաւիթ՝ տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց, վասն հետաւորութեան Ցունաց և Հռոմայեցւոց և այլոց ազգաց, այլ աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց և զՎրաց թշնամութիւնն բառնալ, որ զԲրիստոս չհայհոյեն. զի այն Քրիստոսի է առելութիւն [և թշնամութիւն], որ զխաչ և խառ և զեկեղեցի միմեանց հայհոյեն և նախատեն։ Եւ որպէս ցուցաք յառաջագոյն՝ այն էր աստուծոյ հաճոյ և Քրիստոսի կամք, զի

ամենայն ազգ քրիստոնէից միակրաւն էին լեալ, բայց չէ հնար [var. արժան է], որպէս գրեցաք, այլ զկարելին չէ հնար խափանել: Զի դուք իշխան էք Հայոց և Վրաց կամաւքն աստուծոյ, և թէ կամիք՝ ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ պնեն, որ ոչ զեկեղեցի աստուծոյ [var. Հայոց] չքակէն և զխաչ այրեն, և այսմ ժամանակաւ իշխանութեամբ և յաւիտենական թագաւորութիւնն առնուն ընդ բարեպաշտ թագաւորացն ընդ Կոստանդիանոսին, ընդ Թէոդոսի և ընդ Տրդատայ և ընդ նախնի թագաւորացն ինքեանց, աստուածասիրացն Բագրատունեաց, և պսակին ի Քրիստոսէ՝ ի ճշմարիտ թագաւորաց թագաւորէն, և հաստատուն ունիցեն զթագաւորութիւնն ինքեանց, բարի շառաւեղաւն, գեղեցիկ աթոռակալաւն, ի խաղաղական կենաւք և յաղթութեամբ պատերազմաց և բարեպաշտութեամբ կեալ յաշխարհի. հանդերձ քրիստոսասէր իշխանաւքդ՝ քաղցր կամաւք և իրաւամբ դատաստանի, և առողջութեամբ հոգոյ և մարմնոյ, և բարի անուամբ Քրիստոսի հաճոյանալ և ժառանգել զարքայութիւնն աստուծոյ...» (Նույն ձեռագիրը, էջ 45 r—45 v = «Արարատ» 1901 թ., էջ 126—127 = Լ. Մելիքսեթ-Բեկ, op. cit., 240—241):

Զաքարիայի ձեռներեցութեամբ վրաց արքունիքը հրավիրված հայ յեկեղեցականների մասին խոսելիս՝ վրաց պատմիչը նշում է, որ «հավատո քննութեյանը» ներկա գտնվեցին «կաթողիկոսն Վանի և բոլոր յեպիսկոպոսներն ու վարդապետները»: Վանի կամ Վանա կաթողիկոսի հիշատակությունը Մ. Բրոսեն (Hist. de la Géorgie, I, 2, p. 451, n. 1) կասկածի տակ է դնում. «Je ne sais ce que peut signifier cette phrase, puisque alors les catholicos arméniens résidaint dans la forteresse de Hromcla, sur l'Euphrate. S'il s'agit, an contraire, d'un des catholicos d'Aghthamar, l'il de ce nom est en effet au milieu du lac de Van, mais nous ne possédons aucune liste des titulaire, de ce siége, dont la fondation remonte à l'année 1144»: Այստեղ իրոք Աղթամարի կաթողիկոսն է հիշված, որի անունը, սակայն, բաց է թողնված (տմմ. Մեսրոպ վ. Մաքսուդեանց, Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց [Աղթամարայ], էջմիածին 1916. Նեռես վ. Ակինեան, Գաւազանապիրք կաթողիկոսաց Աղթամարայ. Պատմական ուսումնասիրություն [«Ազգային Մատենադարան», 22], Վիեննա 1920. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», էջ 65, ծան. 1): Ինչ վերաբերում է «բոլոր յեպիսկոպոսների ու վարդապետների» մասնակցությանը նույն «հավատո քննութեյանը», սրանց մասին անուղղակի տվյալներ կարելի չէ գտնել Կիրակոս Գանձակեցու մոտ (Տիպիս 1909, էջ 161) Լոռվա ժողովի (1204—1205 թ. թ.) առնչությամբ, որի մասին ասված է. «... յարքայէն Լևոնէ և ի կաթուղիկոսէն Դավիթ եկին դեսպանք և հրամանաթերք: Ընդ որ յոյժ ուրախացեալ Զաքարիայ, ժողով հրամայեաց առնել ի Լօռէ քաղաք զեպիսկոպոսն Հաղբատայ՝ զԴրիդորէս, զիւրեանց ազգական, և զեպիսկոպոսն Անւոյ, և զեպոսկոպոսն Բջնոյ, և զԴվնայ, և զԿարուց, և զայլս որք դիպեցան: Նոյնպես և զվարդապետս և զաւագնորդս վանորէից հանդերձ քահանայիւք և այլ աշխարհական ամբոխիւ, կամել կանգնել զվրանն և պատարագ մատուցանել»: Համեմատաբար ավելի գնահատելի չէ մեզ համար Լոռվա ժողովի ժամանակակից հռչակավոր վարդապետների անունները, որ մի առ մի թվում է նույն Կիրակոսը (ibid., 161—162). «Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք, որ Դուշն կոչիւր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն և հեզ, և վարդապետն ուսմամբ հռչակեալ Իգնատիոսն, և Վարդան, և Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս հայր Սանահնին, որ զկնի մահուան Գրիգորոյ, որ Տուտայ որդին կոչէին, սնուցող նոցուն իշխանացն, Գրիգոր՝ որ Մոնոնիկն կոչէին, ի կեչառուաց, Տուրքիկն ի Թեղինեաց, որ բարւոք կարգաւորեաց զվանքն, զամենայն ինչ հաստարակաց լինել և առանձին ինչ ոչ ստանալ եղիալ ի հաւուց Թառոյ, այն՝ որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցունց ընդ մի բերան հնչել, եթէ բարձր և թէ ցած. և ոչ հարստահարել ընկերք զընկեր. Գրիգոր Դիջացին. Սարգիս միակեացն ի Սևանայ. այսոքիկ արք երևելիք և այլք բազումք. Գրիգորիս եպիսկոպոս Հաղբատայ, Վրքանէս Բջնոյ և Դվնայ, Սարգիս աթոռակալ Անւոյ, Յովհաննէս Կարուց, և այլք յոլովք աստի և անտի, հանդերձ երևելի քահանայիւք վանաց և քաղաքաց և գիւղից»: Հետևապես, պետք է յենթադրել, որ «հավատո քննութեյանը» ներկա գտնվող հայ «բոլոր յեպիսկոպոսներն ու վարդապետները» Կիրակոսի հիշատակածներից պիտի լինեին՝ Մխիթար Գոշի (մանրամասն տես. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետք հայոց գլխավորությամբ

մանրամասն պատմում է Կիրակոսը (եջ 244—246) հետևյալ վերնագրի տակ՝ «Վասն քաղաքին Անւոյ, թէ որպէս մատնեաց տէր ի ձեռս նորա»։

37 Արտավիլի արշավանքի մասին Վարդանը (եջ 139) գրում է. «Ի վեցհարիւր չիսուն և ինն թուին մոբեխն աւերեաց զքազում գաւառս, յորում ժամանակի մեծն Զաքարէ աւերէր զտունն Պարսից մինչև ցԱրտաւիլ քաղաք, առնելով ի նոցանէ զվըէժ արեան քրիստոնէից, ըստ որում և զաղօթատուն նոցա լցեալ արամբ՝ այրել հրամայէր, զոհ լինել իշխանացն՝ որք ի Նախջուանու եկեղեցիսն, և կուռայքն և մուղրիքն՝ սուրբ քահանայիցն, վոր ի Բագուան զենեցան, և արեամբ նոցա ներկաւ պարիսպ եկեղեցւոյն»։ Կիրակոսը (եջ 175) գրում է. «Յետ բազում քաջութեանց յաղթութեանց՝ զոր արարին մեծամեծ իշխանքն Զաքարէ և Իւանէ, չոգաւ զօրօք բազմօք ի քաղաքն Մարանդ, և առին զնա և աւերեցին զգաւառն՝ վոր շուրջ զնոքօք. և ապա գնացին յԱրտաւիլ քաղաք, նմանապէս առին զնա, և աւերեցին զգաւառն՝ որ շուրջ զնոքօք. և բազումք ի նոցանէ հանդերձ աղօթիկօքն իւրեանց՝ զոր Մուրշի անուանեն, ապաստանեալք էին յաղօթարանն իւրեանց. հրամայեաց Զաքարեայ բերել խոտ և ցօղուն, և արկեալ զնովաւ ձէթ և նաւթ, և բորբոքեալ հրով, այնպէս, այրեաց զնոսա, և ասէ. «Իշխանքն և աշխարհակալքն՝ փոխանակ իշխանացն Հայոց, զոր այրեցին ի Նախջաւանի Տաճիկք, և կուռայքն՝ փոխանակ Հայոցն քահանայից Բագուանայ՝ զոր մորթեցին, և զաբլուն արկին զպարսպով եկեղեցւոյն, որ մինչև ցայսօր սևացեալ երևի տեղին»։ Եւ ինքն դարձաւ յաշխարհն իւր»։

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր «վրաց պատմագիրը յերկու արշավանք և նշանակում դեպի Պարսկաստան, և յերկրորդ անգամ Զաքարիային հաւցնում է մինչև Խորասան և Վրկանաց աշխարհը», Գարեգին ա. ե. Հովսեփյանը (Ղազարյանք կամ Ղուկյանք Հայոց պատմության մեջ, եջ 11, ծան.+) գտնում է, վոր այս «չափազանցություն է և չի ստուգվում հայ աղբյուրներով». մինչդեռ Իվ. Ջավախիշվիլին (op. cit., 629—630) այն կարծիքի է, վոր հայ պատմիչների՝ Վարդանի ու Կիրակոսի, ինչպես և Իբն-Խալիկանի վկայությունները մեկը մյուսի հետ շփոթած ունին յերկու արշավանք, վորոնցից «մեկը տեղի պիտի ունենար 1207—8 թվին, իսկ մյուսը 1210 թվին»։

38 Զաքարիայի (Զաքարեյի) մասին հայ պատմիչներից տեղեկությունները են տալիս Վարդանն ու Us. Որբելյանը։ Վարդանը (եջ 140) գրում է. «Եւ դարձեալ յայնը կոտորուածէ՝ կատարի [Զաքարէ] ի տէր ուղղափառ և ամբիծ հաւատով, և թաղի ի սուրբ ուխտն Սանահնին, ի վեցհարիւր վաթսուն և մի թուին, թողով տաղ մի հնգամեայ Շահնշահ անուն»։ Us. Որբելյանը (եջ 398) գրում է. «Իսկ մեծ սպասալարն Զաքարէ մեռանի ի 661 թուին... Եւ զսպասալարութիւնն Զաքարէի առեալ էր որդին իւր Շահնշահ»։ Ուրեմն, Զաքարեյի մահը տեղի չի ունեցել 1212 թվին, վոր մասամբ ստուգվում է Սանահնի արձանագրություններով, ուր 1211 թվի արձանագրություններում նա կենդանի չի երևում, մինչդեռ 1213 թվի արձանագրություններում արդեն մեռած է (Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, եջ 51—55), նմմ. Իվ. Ջավախիշվիլի, op. cit., 630—631։

Բ.

ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

«ԹԱՄԱՐ ԹԱԳՈՒՀՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Վրաց պատմագրության այս ուշագրավ հուշարձանը յերևան հանեց պրոֆ. Իվ. Ջավախիշվիլին 1923 թվին, յերբ հրատարակեց և իր նախնական հաղորդագրությունը սրա մասին հետևյալ ընդարձակ վերնագրով. «Նոր հայտնաբերած Քարթլիս-ցխովրեբան ու Թամար թագուհու ցարդ անծանոթ պատմչի յերկասիրությունը», վրացերեն („Bulletin de l'Université de Tiflis", III, 1923, եջ 186—216)։ Այս յերկասիրության անանուն հեղինակին, վորը մասամբ կրկնում է և մասամբ էլ լրացնում նախորդ գլխից մեզ ծանոթ վրաց անանուն այլ պատմչի հորինվածքը, Իվ. Ջավախիշվիլին պայմանապես «Թամար թագուհու յերկրորդ պատմիչ» է կոչում, քանի վոր ընդհանուր առմամբ յերկուսն էլ նպատակ ունին ներբողել Թամարին։

Համեմատաբար «Թագակիրների պատմականն ու գովասանքը» գրվածքի հետ այս՝ Թամարի յերկրորդ պատմչի յերկասիրությունն ավելի լուրջ պատմագրական գործ է ներկայացնում իրենից, միանգամայն հեռու լինելով այն ֆանատիկոսությունից, վորով առաջինն գրվածքն է ոժտված, յերբ պամփլետային բնույթ է տալիս հայ-վրացական կրոնական պայքարին Թամարի որով։ Յեվ հենց այս պատճառով, թվում է մեզ, գուցե այս՝ յերկրորդ յերկասիրությունը լինի հիմնական գործ Թամարի պատմության վերաբերյալ, վորն ապագայում ամբողջապես ոգտագործած լիներ «Թագակիրների պատմականն ու գովասանքը» յերկի հեղինակը։

Այս յերկասիրությունից, վորը դեռ հրատարակված չե և վորը նույն Իվ. Ջավախիշվիլին պատրաստած ունի տպագրության, քաղվածքները մենք անմիջապես կատարել ենք վրացա-

նի պետական թանգարանի համապատասխան ձեռագրի (№ 207 Q) հիման վրա՝ հիշյալ թանգարանի վարչության անձամբ Ի վ. Զ ա ք ա ր յ ա ն ի սիրալիր թույլտվությամբ։

[ԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Բերեցին Մխարգրձել Սարգիս ամիրսպասալարի յերկու վորդոց՝ Զաքարիա և Հովհաննին (Իվանեյին), վորոնք շատ փորձված եյին պատերազմներում և ազգովին հավատարիմ թագավորներին։ Այս պատճառով սրանք հույժ սիրված եյին Թամարի նախնիների (պապերի և հայրերի) կողմից։ Թամարն էլ սրանց հանդեպ ուշադիր յեղավ, աստծուն հանձնեց և վոդորմած եր։ Յեվ շնորհեց [Թամարն] Զաքարիային՝ ամիրսպասալարություն, և կըրտսեր [յեղբորը] (կրտսերին որոք) Հովհաննին (Իվանեյին)՝ գործակալություն (մսախուրթուխուցեսորա)։ Սրանք արժանի մարդիկ եյին, թեև կրոնով հայեր (սոմեխներ), բայց ուղղափառությամբ միանգամայն լի։ Իսկ Հովհաննը (Իվանեն) հույժ տեղյակ եր գրականությանը, վորի պատճառով զգաց հայոց (սոմեխների) կրոնի թյուրությունը, [վրացադավան] մկրտվեց, և դարձավ ճըշմարիտ քրիստոնյա...

... Ներքին [մասում] առաջին կուսակալությունն Գագումն եր, վորը Վահրամի հոր՝ Զաքարիա Մխարգրձելիի ձեռքն եր. և սրանք [եյին, վոր] կուսակալություն եյին անում, քաջարի մարդիկ և պատերազմներում միանգամայն փորձված ու հաղթող, և յերկյուղածությամբ աստծո և հավատարմությամբ առ պատրոնն հույժ գովելի։ [Սրանից] վերևն եր Զորակերտն ու Տաշիրը, ուր Զաքարիան ու Հովհաննն (Իվանեն) առաջին անգամ սկսեցին իրըև առյուծ պայքարել՝ վերև ու ներքև և ամեն տեղ։ Յեվ վերևն եր Ջավախքը (Ջավախեթը), ուր կուսակալներ եյին Սարգիս Մխարգըրձել Թմոգվեցին և Շալվա Թորեցին, կից՝ Արտահանը (Արտանին), ուր կուսակալ եյին մեսխերը... [Յեվ] Շավշք-Սպերի (Շավշեթ-Սպերի) կողմից Բանասկերտն եր...

... Յեվ նրանց եր տալիս [Թամարն] Անին, ինչպես վկայում և հայոց (սոմեխների) թագավորների մեծ և հռչակավոր անունը, վորը պարսից շահնշահությունից (շանշահոբա) եր վերցրած, ... և Պարսից տան անվանի Դվինը...

... [Աշխարածնները՝] մոնելով Սոմխիթ՝ վորսի եյին դիմում...

... Մինչ այս կարսը (կարի) թուրքերի ձեռին եր. [Թամարը]

զորք ուղարկեց այն պաշարելու. իսկ թուրքերը՝ լսելով այս՝ իսկույն և յեթ թողին կարսը (կարի) ու փախան։ Իսկ թագավորը գրավեց կարսը (կարին) և կարսի (կարիի) հակող թողեց Հովհան (Իվանե) Ախալցիխեցուն և նշանակեց կուսակալ՝ տալով աթաբակությունն և ամիրաց-ամիրայությունն... և խլեց թուրքերից շրջակա յերկրները... և նույն Հովհաննին (Իվանեյին) շնորհեց կարսի (կարուվի) և նրա մերձակա յերկրները...

... [Ռուքնադդինը զինվորներ] ուղարկեց իր [պետության] բոլոր սահմանները՝ Միջագետք, Գաղատիա, Գանգրա, Անկյուրիա, Իսավրիա, Կապադովկիա, Մեծ Հայք, Բիթինիա և Պաֆլագոնիայի կողմերը... ապա միացրեց Յերզնկայեցվոց (Եզինկայեցվոց), Խարբերդցվոց (Խալփերդցվոց) և Կարնո-քաղաքացվոց... և Սալդուխի վորդու փոխարեն իր յեղբորը նշանակեց Կարնո-քաղաքում...

... Ապա [Տփղիս] բերին Ռուքնադդինի (Նուքարդինի) դրոշակը, և նախ մոցրին Յերզնկայեցուն (Եզինկայեցուն) և ապա այլ յերևելիներին ... Յեվ Յերզնկայեցուն (Եզինկայեցուն) [Թամարը] պահեց Տփղիսում իբրև բանտարկյալի...

Այսպես որեցոր բարգավաճման և մեծարման մեջ եր բոլոր զահակալներից (գայիսոն ունեցողներից) պայծառագույնը՝ Թամարն՝ առավելապես աստվածապաշտությամբ, յեկեղեցիներ ու վանքեր հիմնելով և կառուցելով, վորբերին ու վորբևայրիներին սփոփելով և արդարադատությունը տարածելով։ Սրա որոք ուրախության և խնդության մեջ եր նրա թագավորությունը (թագավորությունները)։ Յերբեմն [Թամարն ու Դավիթն] անցնում եյին [հայկուլա Լիխի] և վարում այնտեղի գործերը, նաև վորսում Գեգութ և Ալամեթում. ապա անցնում եյին [հայկուլա Լիխի՝] Քարթլի, Հայք (Սոմխիթ) և կանգ առնում Դվինում, ուր նրանց մոտ գալիս եյին հարկեր (խարաջա) [տալու] Գանձ[ակ]եցիք և վերին քաղաքացիները։ Գարնանը բարձրանում եյին Հայք (Սոմխիթ), ստանալով հարկեր (խարաջա) Նախիջևանեցուց (Նախճավանեցուց), և [ապա] գնում Կողա (Կոլա)՝ Արտահանի (Արտանի) գլուխը, ստանալով և այնտեղից հարկ (խարաջա), նաև Կարնո-քաղաքից, Յերզնկայից (Եզինկայից) և այլ շրջակա քաղաքներից...

... Նրա (Թամարի) գահակալության քսանյերեքերորդ թե քսաներսներորդ թվին հարց յեղավ Կարսի (Կարիի) [գրավման] մասին, քանի վոր [վաղուց արդեն Սարգիս Թմոգվեցին, Շալվա Թորեցին և մեսխերը պայքարում եյին, բայց ի վիճակի չեյին

գրավելու այն... Ապա Դավիթ [Սոսլանը]... հրամայեց Զաքարիա և Հովհաննին (Իվանեային) գնան և սաստիկ պատերազմին... Ցեվ յերկարաւև յեղավ այս գործը, իսկ ինքը Թամարը կանգ առավ Ջավախքում (Ջավախեթում), ուր և սպասում եր նրանցից լուր ստանալուն... [Յերբ կարսը պաշարեցին և անչուր ճնացած քաղաքացիներից շատերը կոտորվեցին՝] ճնացածները խնդրեցին Դավթից, վոր Թամարն ինքը հասնի նրանց մոտ, վորպեսզի անձնատուր լինեն նրան... իսկ յերբ [Թամարը] հասավ՝ [բերդի] բանալիները հանձնեցին նրա վորդի Գեորգին (Գիորգիին), ապա Թամարին՝ խնդրելով խաղաղություն [հաստատել], և յերդվեցին, վոր վոչոքի չհանձնի Կարսը (Կարի), ինչպես Անին (Անիսը) և Դվինը, այլ իր թագավորությանը կցի։ [Թամարն] այս առթիվ հաստատ խոսք տվեց և հրամայեց իր վորդի Գեորգին (Գիորգիին), վոր մտնի և ստանա քաղաքն ու բերդը։ Ցեվ յեղավ այսպես. այս մի քաղաքն ու բերդը [Թամարն] իրեն վերապահեց բոլոր նրանցից, վոր գրավեց՝ Զորակերտից մինչ Արաքս (Ռախս), Գագից մինչ Դանձա[կ] և Ջավախքից (Ջավախեթից) մինչ Սպեր...

(Շարունակությունը միանգամայն զուգադիպում է «Թագակիրների պատմականն ու գովաբանքը» յերկի տվյալների հետ, վոր մենք տվելորդ ենք համարում այստեղ կրկնել)։

Գ.

ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

«ՀԱՄԱՌՈՏ ՎՐԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

«Համառոտ Վրաց պատմություն»՝ այսպես ենք կոչում մենք պատմագրական այն փոքրիկ գրվածքը, վորին պրոֆ. Ե. Թաղ՝այշվիլին («Վաղեմի Վրաստան», II, Տփղիս 1911—1913, էջ 54) անվանում է «Համառոտ տեղեկություններ Վրաստանի պատմության», և վորը հետագա դարերում ծառայել է իբրև աղբյուր թե այսպես կոչված «Քարթլիս-ցխորեբա»-յին և թե վախուշտ արքայազնի պատմության։ «Պատմությունը» սկսվում է Վրաց դարձից և հասնում մինչ խաչակրաց արշավանքներն ու Ցերուսաղեմի գրավումը (1213 թ.)։ Տեկստը հրատարակել է նույն Ե. Թաղ՝այշվիլին (ibid., 59—66)։

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ IV—XIII Դ. Դ.]

Քարթլին դարձավ [ի քրիստոնեություն] Նունեյի (Նինոյի) քարոզչությամբ՝ Քրիստոսի համբարձումից յերեք հարյուր յերեսուն և ութ թվին, արարչության հինգ հազար ութ հարյուր յերեսուն և ութին, և ինաց Նունեն (Նինոն) Քարթլիում յերեսուն չորս [տարի]. և նրա որոք եր մեծն Կոստանդին հունաց (բերձենների) թագավորը, և Տրդատ (Թրդատ) հայոց թագավորը դարձավ սուրբ Գրիգորի ձեռքով[1]։...

...Քրոնիկոնի յերեք հարյուր յերեսուն յոթին [Դավիթ] Շինողը մահմեդականներից (թաթարներից) խլեց Լոռվա բերդը[2]։...

...Քրոնիկոնի յերեք հարյուր քառասուն յերեքին[3] նույն [Դավիթ] Շինողն Անի քաղաքը խլեց Արփասլանից և կոտորեց նրանց, վորոնք Անվո մեծ կաթողիկեն մզկիթի եյին վերածել և քրիստոնյաների արյամբ նույն կաթողիկեն ու քաղաքը վաղողել. աստվածատեր Դավիթ Շինողն [արժանին] հատուցեց նրանց, և ահա

նա մոլլանների և դարիմանների արյամբ վողողեց այն, նորից ոծեց այն կաթողիկեն, վոր կառուցել եր հունաց (բերձենների) [թագավորի] դուստր Կատրամիդե (Կատրոնիտե) թագուհին՝ նուխտաեղ թաղվածը: Ապա թագավորն և կաթողիկոսը, եպիսկոպոսներն ու միացյալ զորքն յեկան թագուհու գերեզմանի մոտ, նորից այն որհնեցին, և ինքը թագավորն յերեք անգամ ձայն տվեց գերեզմանին. «Ուրախացիր, թագուհի, քանի վոր աստված ազատեց քո կաթողիկեն անորենների ձեռներից»: Ի պատասխան սրա հանգուցյալը գերեզմանից ձայն հանեց և գոհացավ աստծուն: Թագավորն ու միացյալ ժողովուրդը զարմացան[4]: Մի քանի ժամանակ անցավ, [և] Դավիթ Շինողը վախճանվեց:

Յեվ նրանից հետո թագավոր նստեց նրա (Դավթի) վորդի Զուրաբը[5], և Դեմետրը (Դեմետրեն) գրավեց ամբողջ թագավորությունը: Նույն քրոնիկոնին՝ յերեք հարյուր քառասուն հինգին[6] [նա] գրավեց Դմանիսի բերդը և կոտորեց Կարսում Ուղուղիանին: Այս պահին Սալդուխ-ղ՝աենն յեկավ Անի քաղաք. Դեմետր թագավորն ել այստեղից գնաց այնտեղ, կռվեցին: Կամոքն աստծո թագավորը հաղթեց, կոտորեց և բնաջինջ արավ նրանց (ուղուղիաններին)[7]:...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այս տվյալներն, ըստ Ե. Թաղ՝ալվիլու (*«Վաղեմի Վրաստան», վրացերեն, հատոր II, Տփղիս 1911—1913, յերրորդ բաժ., եջ 59, ծան. 6*), «համաձայն են Վրաց Դարձի և Վրաց տարեգրության հետ»:

2 Քրոնիկոնի 337 թ.=1117 թ., մինչդեռ վրաց տարեգրության համաձայն (Քարթլիս ցխովրեբա, հրատ. Մ. Բրոսեյի, եջ 246=M. Brosset, Histoire de la Géorgie, I, 360), Լոռու առումը Դավթի կողմից տեղի յե ունեցել 1118 թվին:

3 Այսինքն 343+780 թ.=1123 թ.:

4 Դավիթ Շինողի կողմից Անիի գրավումը Մատթեոս Ուռհայեցին դնում է ՇՀԹ—1124 թ. ներքո, տալով հետևյալ տեղեկությունները, վորոնցից մի փոքր հեռու յե վրացական այս աղբյուրի հաղորդածը. Մ. Ուռհայեցին գրում է. «Ցայսմ թուականութեանս Դավիթ Վրաց թագաւորն արար դարձեալ սաստիկ կոտորածս զզօրսն պարսից իբրև բիւրս երկու. և էառ զքաղաքն Հայոց զԱնի և զորդին Մանուչէի հանեալ ի յԱնւոյ և տարաւ ի Տփղիս. և ազատեցաւ ի ծառայութենէ թագաւորաբնակ քաղաքն Անի, որ կացեալ էր ի ծառայութիւն գամս վաթսուն. և զերաշափառ և զմեծ եկեղեցին Անւոյ զսուրբ կաթուղիկէն, զոր մսքիթ էին արարեալ, ժողովեաց զեպիսկոպոսունսն և զքահանայս և զկրօնաւորս Հայոց աշխարհին, և օրհնեաց զսուրբ կաթուղիկէն մեծաւ հանդիսիւ. և եղև ուրախութիւն ամենայն տանն Հայոց, զի տեսին ազատեալ զսուրբ կաթուղիկէն ի ծառայութենէ» (Մատթէոս Ուռհայեցի. ժամանակագրութիւն. բ. տպ., Վաղարշապատ 1898, եջ 359):

5 Ինչպես Ե. Թաղ՝այզվիլին (op. cit., եջ 63, ծան. 2) իրավացի նկատում է, «Զուրաբին վրաց աղբյուրները չեն ճանաչում»: Այլուր բոլորովին չի հիշատակվում:

6 Այսինքն 345+780 թ.=1125 թ.:

7 Այս տվյալները, ինչպես նկատած ունի Թաղ՝այզվիլին (ibid., եջ 63, ծան. 3), «բացակայում են Բրոսեյի հրատարակած Քարթլիս-ցխովրեբայում, ինչպես և Մարիամ թագուհու վարքանուում, սակայն կա Վախտանգյան խմբագրության Քարթլիս-ցխովրեբայի մի հին ձեռագրում, վոր Մ. Ջանաշվիլին հանձնեց գրագիտության [տարածող] ընկերությանը, № 4730. այս տվյալները կան և Վախուշտի պատմության մեջ». ուրեմն, «պետք է յենթադրենք,— շարունակում է նույն գիտնականը,— վոր այս տվյալները մեր տեսակի որինակից են մուծած ինչպես Քարթլիս-ցխովրեբայի Վախտանգյան խմբագրության, նույնպես և Վախուշտի պատմության մեջ»: Սրա մասին տես նաև մեր այս աշխատության III հատորում:

Դ.

ԱԲՈՒՍԵՐԻՋԵ ՏԲԵԹՑԻ (XIII Դ.)

«ՄԵԾԱՎԿԱ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Աբուսերիձե Տբեթցին (Աբուսերիձե Տբելին) XIII *դարու հեղինակ է, Զալալադդինի արշավանքների ժամանակակից, որի գրչին պատկանում է մի քանի մանր գրվածքներ յեկեղեցական բովանդակությամբ և սրանց թվում «Մեծավկա սուրբ Գեորգի հրաշագործությունները», որ հրատարակել է Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաները»-ի* II *մասում (վրացերեն), Տփղիս 1897, եջ 111—122։ Նույն Թ. Ժորդանիան (*ibid., *122—123) վերոհիշյալ գրվածքին կցած ունի մի ծննդաբանական տախտակ, ուր ներկայացրած է Աբուսերիձենների ճյուղագրությունը 950—1233 Թ. Թ։ Կ. Կեկելիձեյի (Վրաց գրականության պատմություն,* I, *347—349) խոսքով, «Աբուսերիձե Տբեթցին (Աբուսերիձե Տբելին) ազնվազարմ տոհմից է յեղել, Խիխթա-Աճարայի իշխանացի-իշխան Հովհանի (Իվանեյի) վորդին և Վարդան ու Աբուսերի յեղբայրը։ Մականունը Տբեթցի (Տբելի) հիմք է տալիս կարծելու, վոր նա Մտբեվարի, այսինքն Տբեթի յեպիսկոպոս է յեղել։*

Թ. Ժորդանիան Աբուսերիձեյի գործին պատմական գրվածք է կոչում. մինչդեռ, ըստ Ի վ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական գրականությունը, ա. հրատ., 190—191), այն «պատմական յերկասիրությանը նման չէ, թեև, այնուամենայնիվ, ուշագրավ պատմական աղբյուր պիտի համարվի, քանի վոր մեծ տաղանդով հորինված՝ հրաշագործության նկարագրության մեջ այն ժամանակվա ներքին նիստուկացն ունի պատկերացրած և այս տեսակետից շատ նոր և ավելի քան ուշագրավ տեղեկություններ է պարունակում»։

Ստորև բերած փոքրիկ հատվածի թարգմանությունը կատարված է համաձայն Թ. Ժորդանիայի հրատարակության։

[ԲԱՐՍԵՂ ՔԱՐԱԿՈՓԸ ՍՈՄԽԻԹՈՒՄ]

... Յեվ Բարսեղը (Բասիլը) քարակոփ եր, վոր [նաև] կալատող է կոչվում, և գնաց Սոմխիթյան յերկիրը՝ Տփղիսին կից...։

ե.

ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

«ԴԵՄԵՏՐ, ԳԵՈՐԳ, ԹԱՄԱՐ ՅԵՎ ԼԱՇԱ-ԳԵՈՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Քարթլիս-ցխորեբայի Աննա թագուհու ձեռագրում, որը պրոֆ. Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու անձնական գրադարանին է պատկանում, «այնտեղ, ուր Դավիթ Շինողի պատմությունն է վերջանում, Դեմետր I, Դավիթ III, Գեորգ III, Թամարի և Լաշա-Գեորգի թագավորության պատմագրական տեսությունն է ներկայացրած» (Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ի, Հին վրացական պատմական գրականության, ա. տպ., 191—192)։ «Այս տեսությունն, —ըստ Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու (ibid., 192),—տարեգրության և չորս մասի չե բաժանված, որոնցից յուրաքանչյուր մասն իր՝ կարմիր թանաքով գրած՝ վերնագիրն ունի։ Առաջին մասն է՝ «Դեմետր թագավորի պատմությունը», երկրորդը՝ «[Գեորգ] թագավորի պատմությունը», երրորդը՝ «Մեծն արքայից-արքա Թամարի պատմությունը» և չորրորդը՝ «Թամարի վորդի Գեորգ թագավորի պատմությունը»։ Ապա սկսվում է Ռուսուդանի թագավորության տեսությունը, որը հենց սկզբում ընդհատվում է վոչ թե այն պատճառով, վոր նա թերի չե, այլ միմիայն այն պատճառով, վոր ինքը մատենագիրը սրանից ավելի վոչինչ չի գրել»։

Ինչպես Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ին (ibid., 192) պարզած ունի, այս չերկասիրությունը գրված պիտի լինի անանուն հեղինակի կողմից, որին նա «Լաշա-Գեորգի ժամանակակից մատենագիր» և կոչում, «Ռուսուդան թագուհու գահակալության առաջին ինդիկտիոնին կամ տարին, այն է 1222—3 թ.»։ «Լաշա-Գեորգի (Գիորգիի) ժամանակակից մատենագրի» անունով հրատարակված և այն նույն Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու կողմից առանձին գրքույկով՝ Chronicon anonymum tempore regis Las'a-Georgii scriptum edidit Joannes

Djavachis'vili [Monumenta Georgica. III. Historici. № 2, Sumptibus Universitatis Tphilisiensis], *վրացերեն, Տփղիս* 1927, *եջ* 1—23. *վորն և ոգտագործել ենք ստորև։*

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XII—XIII Դ. Դ.]

... Յերբ մեծն Դավիթ Տփղիսը գրավեց, Հերքն (Հերեթին) ու Կախքն (Կախեթին) ել կցեց նրան. բերդերից ու քաղաքներից և վոչ մեկում մարդ չկար։ Հերքը (Հերեթը), Սոմխիթը, Տաշիրը, Զավախքը (Ջավախեթը), Ներքին Արտահանն և [վերին] Արտահանը սրա (Դավթի) թագավորության որոք շենացան, ինչպես և Տայքի (Տաոյի) ծայրա[գավառները]։...

[Գեորգը] գրավեց Անին, [վորը] վաղուց առել եյին Թուրքերը, քրոնիկոնի յերեք հարյուր ութսունին, ձերբակալեց Սալտուխին [և] բնաջինջ արավ նրա ամբողջ զորքը։...

Մխարգրձել Զաքարիան՝ մանդատուրթուխուցեսն ու սպասալարը, [և] նրա յեղբայր Հովհան (Իվանե) աթաբակը գրավեցին Դվինը [Թամարի] թագավորության իններորդ տարին, [յերբ] քրոնիկոնի [չորս] հարյուր տասնյերեքն եր[3]։*

Հենց նրանք գրավեցին [և] Գեղարքունիքը (Գելաքունին), Բջնին (Բիջնախ), Ամբերդն[3] ու Բարկուշատը, Անիի վերին [մասը] (sic), *մինչ Ախու[դ]ափրիդի կամուրջը. վոչոք չի լսել և վոչ ել յեղել է թագավորի ծառա [այնպես], ինչպես սրանք (Մխարգրձեցիները) անձնվեր ծառայությամբ բարեհաջող և հաղթող [եյին]։*

Յեկավ Ռուքնադդինը, վորը հետո ուներ Դիմուշկից և հայոց Ալաբից [ժողոված] զորք՝ այս [Թամարի] թագավորությունը կործանելու համար։ [Մխարգրձեցիները] դուրս յելան նրանց հանդեպ Բասեն (Բասիան) յերկրում, փախուստի յենթարկեցին, կոտորեցին և բնաջինջ արին նրանց, վայր գցեցին սուլթաններին և գերեցին Յերվնկայի, Շամի և Բյուրիտյան ամիրաներին։...

Սրանից հետո [Մխարգրձեցիները] գրավեցին կարսը (Կարի) և բերդերը Կարնիփորի ու Վանանդի, և Արաքսի (Ռախի) ափին [գտնվող] բերդերը...

[Թամարը] թագավորեց քսան և յերեք տարի և վերհամբարձավ առ աստված, ուր բնակվում են մարգարեները, հայրապետները ու արքաները, հունվար ամսվա տասն և յերկուսին, չորեք-

* *Բնագրում՝ [չորս] հարյուր յերեսուն յերեքը* (sic)։

շաբթի որը, Սոմխիթի Ագարա[կ]ում քրոնիկոնի չորս հարյուր քսան և յոթին, [և] թագեցին Գեւլաթի նոր[ակառույց]վանքում[4]։...

Յեվ եր նրա (Թամարի վորդի՝ Գեորգ-Լաշայի) թագավորությունը մեծ խաղաղության մեջ, և նրա բոլոր գործերի վարիչ և խորհրդական էյին, [դեռևս] նրա ծնողից սկսած, Մխարգրձել[ները] Զաքարիա մանդատուրթուխուցես և ամիրսպասալարն ու Հովհան (Իվանե) աթաբակը։ Առաջինին նրա* ծնող՝ մեծն Թամար արքայից-արքան՝ արշավանքի ուղարկեց, ուր [Զաքարիայի] բազդը բանեց, և նա գրավեց Կարսը (Կարի)· ապա՝ շարունակելով արշավանքը՝ գնաց և մտավ մեծ Պարսկաստանը, կոտորեց Արտավիլը (Արդաբիլը), տակնուվրա արավ բերդաքաղաքներն և ավարով լցրեց արքունիքը։

Սրանից հետո [Զաքարիան] այրեց ու ավերեց Ալաթի յերկիրը, սարսեց Ալաթեցուն (Ալաթի սուլթանին) [խոնարհվել], և հաղթությամբ զարդարված առաջարկեց վերջինին հաշտության հիմունքները... Նմանապես Կարնո-քաղաքացին (Կարնո սուլթանը) խնդրեց խնամություն և անձնվեր յեղավ նրան. [Զաքարիան] մտավ Բասեն (Բասիան), և այնտեղ նրանք զվարճացան ու հանգըստացան։...

Թագավորը գրավեց Որոտը (Որոտո) և նրա բերդերն ու շըրջակայքը մինչ Նախիջևան (Նախճևան) և Գանձա[կ]ի գուռն, [նաև] գրավեց Շամքորը (Շանքորը)[5]։

Ապա ներս խուժեցին Սոմխիթ ու Հերեթն այլազգիները... վոտքի յելավ (ժողովեց) նրա թագավորությունը, վորին միացավ և Կարնո-քաղաքի զորքը...

Այսպիսի հաջողության և յերջանկության մեջ [եր վրաստանը, յերբ] նրա (Գեորգի) քույրը Ռուսուդանին խնդրեց** Ալաթ բերել մեծ սուլթան Մելիքը, վորը տիրում եր Պարսից յերկրին Յեզիպտոսից սկսած մինչ Ալաթ...

Սրանից հետո մեծ աղերսով խնդրեց [նույն Ռուսուդանին և] Շարվանշահը... [ապա] Գեորգ թագավորը գնաց Բագավան[6]... [և] մեռավ Գեորգ թագավորը Բագավանում հունվարի տասնևութին, չորեքշաբթի որը, [յերբ] քրոնիկոնի չորս հարյուր քառասուն և յերկուսն եր[7]...

---

* Բնագրում՝ նրանց։

** Բնագրում՝ խնդրեցին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 380+780=1160 թ.։

2 Այն է 1184+9 կամ 413+780=1193 թ.։

3 Մանրամասնորեն Ամբերդի գրավման մասին տես. Աճառեան Հրաչեայ, Արագածը պատմության մեջ, Յերեվան 1935, էջ 25—26 et pass.։

4 Այս հաղինակի ժամանակագրության Թամարը վախճանվել է 1184+23 կամ 427+780=1207 թ., մինչդեռ ավանդական ժամանակագրությամբ նույն Թամարի մահվան թվականը 1213-ի ներքո յե հայտնի. թեյև այս հարցի շուրջը կան և այլ տվյալներ՝ հոգուստ 1206, 1208 և 1210 թ. թ.։ Հարցին վերաբերյալ մանրամասն գրականությունը տես. Թ. Ժորդանիա, Քրոնիկաները (վրացերեն), I, Տփղ. 1892, էջ 294—302. Ս. Կակաբաձե, Ցե՞րբ վախճանվեց Թամար Թագուհին,—«Թեմի» (վրացերեն) Թերթը, 1912 թ. № 56 (այս առթիվ հմմ. А. Шанидзе, Библиография отд. изданий и статей на грузинском языке, появившихся в 1911 и 1912 г. г.,—„Христ. Восток“, т. II, 1913, стр. 256). С. Какабадзе, Год смерти грузинской царицы Тамары Великой,—„Известия Тифлисских Высших Женских Курсов“, кн. I, в. 1, Тифл. 1914, стр. 163—168. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը (վրացերեն), II, Տփղ. 1914, էջ 618—619, 632—635. Ս. Կակաբաձեյի գրախոսականն Իվ. Ջավախիշվիլու աշխատության մասին՝ «Նոր հայտնաբերած Քարթլիս-ցխովրեբան ու Թամար Թագուհու ցարդ անծանոթ պատմչի յերկասիրությունը», վրացերեն—„Bulletin Historique“, 1924 թ., գ. I, էջ 289. Նույնի գրախոսականը Իվ. Ջավախիշվիլու աշխատության մասին «Լաշա-Գեորգի ժամանակիվա մատենագրիը», վրացերեն,—«Պատմ. ժողովածու», գ. II, Տփղ. 1928, էջ 110 և ծան. 1 նույնտեղ. Գարեգին ա. ե. Հովսեփյան, Ձաղրակյանք կամ Պոշյանք Հայոց պատմության մեջ, I, էջ 11 և ծան. **, ևլն։—Ի դեպ, հետաքրքիր ե, որ Հայաստանում գտնվող հուշարձաններից և վոչ մեկը չի վկայում հոգուստ ավանդական՝ 1213 թվականի։ Յեվ, իրոք, Հաղբատի 1210 թ. արձանագրության մեջ կարդացվում ե. «... Ցամս աւծելոյ աստուծոյ թագաւորաց թագաւորին Գէորգէ որդւոյ մեծ թագաւորին Թամարին... որ թիւ Հայոց է ոծթ», ևլն։ (Ի. Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի, Վաղարշապատ 1886, էջ 27—28. Հմմ. Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, էջ 50—51)։ Ապա վերին աստիճանի հետաքրքիր ե Հոռոմայրի արձանագրությունը, վոր մենք անձամբ ստուգած ունինք տեղնուտեղը, հետևյալ բովանդակությամբ. «Ի թու[ին] ռծե, ի թագաւորութեանն Լաշայի եւ յամիրսպասալարութեանն Զաքարէի և որ|դւոյ իւրոյ Շանշային եւ եղբաւր իւրոյ Իւանէի, ես հայր Սամուէլ եւ այլ մի|աբանքս շինեցաք զեկեղեցիս վանս յերկար կենդանութեան պատրոնաց մերոց, | ի յիշատակ հոգւոց մերոց եւ ծնողաց մերոց. որք երկրպագէք, սուրբ գյաղաւթս (sic) [յ]իշեցէք» (Հմմ. նաև Ս. վ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, I, 101. Ղ. Ալիշան, Այրարատ, 62. Կ. Կոստանեանց, op. cit., 47, վորոնցից Ղ. Ալիշանն և նրա հետևողությամբ Կ. Կոստանյանցն այս արձանագրությունը «Մարմեռի» արձանագրություն են կոչում, իսկ Կոստանյանցին սխալմամբ հետևում են և վրաց արդի պատմաբաններ Իվ. Ջավախիշվիլին ու Ս. Կակաբաձեն)։ Ըստ Իվ. Ջավախիշվիլու (op. cit., 634) թա-

ժաբի մահվան թվականը 1213—1214 պիտի ընդունել. իսկ ինչ վերաբերում է միւսացած թվականներին, նրանք բոլորը կամ Թամարի զուգակից Դավիթ Սոսլանի մահվան թվականը պիտի համարել, կամ յենթադրել վոր Գեորգ (Գիորգի) Լաշան թագավոր է ոծվել դեռևս իր մոր կենդանութեան որոք, վորի պատճառով էլ հիշատակվում է իբրև «թագավոր»: «Ըստ յերևույթին,—ասում է այս առթիվ վրաց պատմաբանը,—նրանից հետո, ինչ Լաշա-Գեորգուն (Գիորգիին) Թամարի աթոռակից դարձրին, վերջինս իր մոր՝ Թամարի որոքն էլ թագավոր էր կոչվում, այնպես վոր յերբեմն արձանագրութիւնների մէջ Թամարն այլևս չի հիշատակվում»: Իսկ Լաշա-Գեորգուն աթոռակից հռչակելը, անպայման, պիտի կապել Դավիթ Սոսլանի մահվան հետ, վորից հետո Թամարն այլևս չի ամուսնացել:

5 Բասենի և այլ տեղերի գրավման մասին մանրամասն հաղորդում է և Us. Որբելյանը (էջ 391—392) հետևյալ կերպով. «[Զաքարէ և Իւանէ] բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցներքին Բասէն և ի Բարկուշատայ մինչև ի Մժնկերտ: Առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԴառնի, զԴվին մայրաքաղաք, զԴարմանդ, զԴանձակ, զՋարեթ, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զՋարաբերդ: Առին ի 660 թուին զՍիւնիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղնի, զԲարկուշատ»: Նույնը հմմ. ըստ Վարդանի (էջ 140—141). «Ի վեցհարիւր վաթսուն և ութ թուին առնու [մեծն Իւանէ] զՈրոտն և զմերձակայ դղեակն, թէպէտ ոչ զբովանդակ»: Ուրեմն, այս առումները տեղի պիտի ունենային 1211—1219 թ. թ.:

6 Այս դեպքի առնչութեամբ կարևոր է հիշատակել Բագավանի մի արձանագրութիւնը, վորն, ըստ Հ. Որբելու (И. Орбели, Багаванский храм и его надписи,—„Христ. Восток“, т. V, 1916, стр. 141) կարդացվում է այսպես. «Ի թագաւորութեանն Ալաշայ | յուսով բարերարին աստուծոյ ես Զաքարէ ա|միրսպասալարս եկի ի Ծլաթայ ի սուրբ | ուխտս Բագուանու եւ տեսի զայս հրաշս|փառ եկեղեցիս. բայց զիմ զանձ եւ գնեցի զխոշպուտա|կիս իւրեանց հողո[վ] ու տովի (sic) [յ] այս եկեղեցոյս յ[իշատակ]...»: Բագավանի մասին առհասարակ տես. Ղ. Ալիշան, Այրարատ, 527—535. И. Орбели, Багаванская надпись 639 г. etc.,—„Христ. Восток“, т. II, 1913, стр. 105—130. Նույնը՝ Багаванский храм и его надписи,—„Хр. Восток“, т. V, стр. 128—143: —«Ալաշա» ‖ «Լաշա» հորջորջման մասին հատկապես տես. Н. Марр, К определению племенного происхождения Георгия, сына Тамары,—„Известия Академии Наук“ 1926 г., стр. 473—478:

7 Այսինքն 442 + 780 = 1222 թ.:

Զ.

ԱՆԱՆՈՒՆ (XIII Դ.)

«ԹԱԳԱՎՈՐԻ ՈԾՄԱՆ ԿԱՐԳԸ»

Անհայտ հեղինակի կազմած «Թագավորի ոծման կարգն», Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ու ասելով (Վրաց իրավունքի պատմութիւնը, վրացերեն, գ. I, Տփղիս 1928, էջ 70), «վոչ թէ յեկեղեցական ոծման կարգն է ներկայացնում, այլ նրա պետական սահմանադրութիւնը»: Այս դոկումենտը, համաձայն Ն. Բ ե ր ձ ե ն ի շ վ ի լ ու հետազոտութեան (Արևմտյան Վրաստանի յեկեղեցական կազմակերպութիւնը, վրացերեն,—«Մ իմոմխիլվելի», I, Տփղ. 1926, էջ 105—106, ծան. 1), վորին միանգամայն համամիտ է և Ի վ. Զ ա վ ա խ ի շ վ ի լ ի ն (op. cit., 69—70), գրի պիտի լինի առնված վոչ առաջ քան XIII դարու 40-ական թվականները: Վրացերեն բնագիրը հրատարակել է ըստ վրաց մէջ գրագիտութիւն տարածող նախկին ընկերութեան հաւաքածուի № 352 ձեռագրի (XVII դարու), Ս. Կ ա կ ա բ ա ձ ե ն առանձին գրքուկով՝ «Թագավորի ոծման կարգը, XIII-երորդ դարու սկզբում կազմված» (վրացերեն), Տփղիս 1913, էջ 1—8, ուր այս դոկումենտը սխալմամբ 1204—1205 թ. թ. է. վերագրվում: Այս դոկումենտի ռուսերեն թարգմանութիւնը, համաձայն նույն № 352 և վրաց նախկին յեկեղեցական թանգարանի № 450 ձեռագրի (XVI դ.), տրված է Կ. Կ ե կ ե լ ի ձ ե յ ի մագիստրական շարադրութեան մէջ (Корн. Кекелидзе, Литургические грузинские памятники в отечественных книгохранилищах и их научное значение, Тифл. 1908, стр. 174—176, 128—131; տեկստի անալիզը՝ 467):

[ԻՇԽԱՆԻ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԳԱՎՈՐԻ ՈՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ]

... Յեվ յերբ ավագ սարկավագն ասի քարող և կարդան ավետարանը, դուրս գա [խորանից] Ափխազքի (Աբխազեթի) կաթողիկոսն ու յպիսկոպոսապետան. իսկ յեթե Ափխազքի (Աբխազեթի) կաթողիկոսը չլինի, Իշխանցին[1]։ Յեվ Իշխանցին ու յեպիսկոպոսապետն ձեռները դնեն [թագավորի գլխին] մեկն աջից և մյուսը ձախից՝ յերիցապետական կարգի համաձայն, և բազմեցնեն յեկեղեցու միջում ամբիոնի վրա...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1 *Այսինքն Իշխանի քաղկեդոնիկ յեպիսկոպոսը, վորը վրաց յեկեղեցական նվիրապետության մեջ՝ «Թագավորական ոծման ծիսակարգության» համաձայն՝ մի վարիանտով 10-րդ, մյուսով 8-երորդ և յերրորդով 11-երորդ տեղն ուներ գրաված (տես սույն հատորի Թ. գլուխը)։*

է.

ԱՆԱՆՈՒՆ (XIV Դ.)

«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Ֆարթլոս-ցխորեբայի Մարիամ Թագուհու վարիանտում անանուն հեղինակի յերկասիրության «Թագակիրների պատմականն ու գովասանքն» անմիջապես հետևում է մի այլ՝ բավականին ընդարձակ յերկասիրություն, վորի հեղինակին՝ Իվ. Ջավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., 197) անանուն «ժամանակագիր» է անվանում, քանի վոր վերջինս պատմության ու պատմագրության «ժամանակագրություն» է կոչում, ճիշտ այնպես, ինչպես «Թագակիրների պատմականն ու գովասանք»-ի հեղինակը նույն իմաստով «իստորիա» բառն է գործածում։

Այս յերկասիրությունը, վորին մենք, ըստ այսմ, «Ժամանակագրություն» ենք կոչում, գրաված ունի Ե. Թաղ՝այշվիլու հրատարակության 536—785 եջերը, իսկ ըստ Մ. Բրոսեյի՝ 339—447 եջերը. նույնի ֆրանսերեն թարգմանությամբ (Histoire de la Géorgie I$_2$) 481—643 եջերը։ «Ժամանակագրության» մեջ նկարագրված են պատմական զանազան անցքեր սկսած Լաշա-Գեորգի (Գիորգիի) թագավորությունից (1213—1223) մինչ Գեորգ (Գիորգի) Պայծառի թագավորությունը (1318—1346), մոտավորապես մի ամբողջ դարու սահմաններում։

Այս «Ժամանակագրությունն», ի միջի այլոց, հետաքրքիր է այն տեսակետից, վոր այստեղ, ինչպես իրավացի Իվ. Ջավախիշվիլին էլ մատնանշած ունի (op. cit., 196), առաջին անգամն է հիշվում «Ղարաբաղ» տեղանունը։ «Ըստ յերևույթին,— ասում է նույն գիտնականը,— իբրև աշխարհագրական անուն Ղարաբաղ-ը նոր էր մուտք գործել [վրաց] գրականության մեջ և XIII-րդ դարում այս վայրն ուրիշ անունով է յեղել հայտնի։ Յեվ իրոք, «Ղարաբաղ»-ն իբրև Ռանի անուն XIV-րդ դարումն է ծնունդ

առնում և պարսկական գրականության մեջ այս աշխարհագրական անունն առաջին անգամ կարծեմ Համդալահ Ղազվինին (վախճ. 1349 թ.) ե հիշում իր աշխարհագրության մեջ (В. Бартольд. Историко-географический обзор Ирана, 152)»:

Անանունի «ժամանակագրությունը» մենք բաժանած ունինք հետևյալ մասերի. 1. Գեորգ-Լաշայի թագավորությունը (1213—1223), 2. Ռուսուդանի թագավորությունը (1223—1247), 3. Դավիթ՝ Լաշա-Գեորգու վորդու, և Դավիթ՝ Ռուսուդանի վորդու թագավորությունը (1243—1259, 1243—1269), 4. Դեմետրի թագավորությունը (1273—1289), 5. Դեմետրի վորդվոց՝ Դավթի և Գեորգի թագավորությունը (1292—1310, 1299—1301), 6. Վախտանգ՝ Դեմետրի վորդու թագավորությունը (1301—1307), և 7. Գեորգ-Պայծառի թագավորությունը (1318—1346):

[ԳԵՈՐԳ-ԼԱՇԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

[Գեորգ (Գիորգի) Լաշային] հնազանդ եյին բոլոր հակառակորդները [ճիշտ այնպես], ինչպես բարեհիշատակ և աստվածասեր նրա մոր [Թամարին հնազանդվեցին]... Գանձա[կ]եցիք և նրանց հարևան Նախիջևանցիք (Նախճևանցիք) և Կարնո-քաղաքացիք և շատ ուրիշները, վորոնք ընծաներով և հարկերով (խարաջով) գալիս եյին նրա մոտ...

...[Ձերը Գանձակեցիք դադարեցին հարկ (խարկ) տալ թագավորին], Լաշան դիմեց Վրաստանի հայսկուլա և հայնկուլա [գըտնվող] զորքերին, [նաև] Մխարգրձել Հովհաննին (Իվանեյին), վորը նրա մայր Թամարից ստանձնած ուներ աթաբակության պատիվը, քանի վոր աթաբակությունը բոլոր իշխաններից (երիսթաֆներից) առավել գերազանց եր և նա արքունիքի վազիրն (վեզիրն) եր[1]...*

...[Գանձակեցիների հետ սկսած պատերազմում] թագավորն ուներ մոտ չորս հազար մարդ, վորոնց թվում առավելապես մեսխերն եյին, քանի վոր մի կողմը Մխարգրձելներն եյին կանգնած, մյուս կողմը՝ հեր-կախերն ու սոմխիթցիք, վրացիք և թորեցիք, և յերրորդն՝ ափխազները, դադյան-բեդյանները և Լիխի հայնկուլա բնակվողները...

...[Լաշան իր անբարոյական կենցաղով և հարբեցողությամբ իր դեմ հարուցեց] Վրաստանի իշխաններին (թավադներին)[2]... և առավելապես Հովհան (Իվանե) աթաբակին և Զաքարիայի վորդի Վահրամ (Վարամ) Գագեցուն[3]...

...[Լաշան յերբեմն] անցնում եր Ալամեթ և վորսորդում եր Ցխումում և Ափխազքում (Ափխազեթում),... աշնանը իջնում եր Տփղիս, իսկ ձմեռը լինում եր Հայքի (Սոմխիթի) Դվինում և այնտեղից կռվում եր Գանձա[կ]եցիների հետ. ամառը բարձրանում եր Կուբի վերին մասը՝ Ծալով Կողայում (Կոլայում), ուր նրա մոտ գալիս եյին ընծաներով նրա հարկատուները Ալթիից և Հունաստանից (Բերձենստանից):...*

*...[Զալալադդինի զորքերը] մոտեցան Վրաստանի սահմաններին [և] սկսեցին ավերել Գագի յերկիրը: Լսելով այս՝ Վահրամ (Վարամ) Գագեցին և Հովհան (Իվանե) աթաբակը դիմեցին Լաշա թագավորին [և] հաղորդեցին այլևս այլազգիների գալու և Հայքի (Սոմխիթի) ավերման մասին: Իսկ թագավորը դիմեց իր հայնկուա և հայսկուա [գտնվող] զորքերին, և՝ ժողովելով ինչսուն հազար հեծելազորք՝ գնաց թաթարների դեմ, վորոնք Գագի ծայրին եյին կանգնած. այնտեղ նրան (թագավորին) միացան Հովհան (Իվանե) աթաբակն և սրա յեղբորորդի՝ Զաքարիա ամիրսպասալարի վորդի Շահնշահը (Շանշեն), նաև Վահրամ (Վարամ) Գագեցի զորածակալն (մսախուրթուխուցեան) իրենց զորքերով, և գնացին [պատերազմելու]՝ կանգ առնելով Բերդուջ գետի վրա, վորն այժմ Սագիմ և կոչվում[4]... [Վրաց զորքը՝ պարտություն կրելով՝ վերադարձավ Տփղիս. սրանց] հետամուտ յեղան թաթարները, վորոնք հասան մինչ Սամշվիլդե և ապա վերադարձան**...*

---

* Var. *Իռանեյին:*

* Var. *Դերում* (sic):

** Var. + *...«Գեորգ-Լաշայի քույրը Ռուսուդանին է կնություն խնդրեց Ալթիում բազմեցնելու մեծ Մելիք սուլթանը, վորը պիրում եր Ցեգիպատոսից մինչ Պարսկաստան, սակայն աստվածային շնորհը սրան արգելք հարուցեց... Գեորգ թագավորը Բագավան գնաց, վորպեսզի իր քրոջն ամուսնացնե, և տասն որ եր մնացել մինչ նրա (Ռուսուդանի) ուղեվորումը, սակայն աստված այստեղ էլ խափանեց... Լաշա թագավորը Բագավանում յեղած ժամանակ զգաց մահվան մոտեցումը... Ցեղ վախճանվեց Լաշա-Գեորգը (Գիորգին) Բագավանում գանվելու պահին հունվար սկսվա 18-ին, չորեքշաբթի որը[5]:...*

[ՌՈՒՍՈՒԴԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

...[Թաթարները] հարյուր քառասուն հազար հոգուց բաղկացած՝ մոտեցան Աղբրբադագանին (Ադրբեջանին), ապա մոտեցան Մխարգրձեների յերկրին։ Դվինը Հովհան (Իվանե) աթաբակի ձեռին եր, իսկ Անին տրված եր Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեսին։ Ավարազմացիք յեկան Լաշա-Գեորգի (Գիորգիի) մահվան յերրորդ տարին գերելու և ավերելու Դվինի և նրա մերձակա յերկրները։ Լսելով այս՝ Հովհան (Իվանե) աթաբակն և Վահրամ (Վաբամ) գագեցին գնացին Ռուսուդանի մոտ և զեկուցին խավարազմեցվոց ու մեծն սուլթան Ջալալադդինի գալու մասին... [Այդ ժամանակ] Հովհան (Իվանե) աթաբակը ծերացած եր, և վոչ բացահայտ, այլ գաղտնի կերպով կուսակրոնություն եր ընդունել... Այս Հովհան (Իվանե) աթաբակին Ռուսուդան թագուհին (թագավորը) զորքերի գլուխ նշանակեց՝ տալով դրոշակ, և ուղարկեց սուլթան Ջալալադդինի դեմ կռվելու։ Սրանք մոտեցան Դվինին և Ամբերդին. իսկ խավարազմեցիք կանգ եյին առել Գառնի գյուղում... Առաջընթաց զորքում [աթաբակը] նշանակեց Թորեցվոց և Ախալցխեցի յերկու յեղբայր Շալվա և Հովհաննին (Իվանեյին)... [Վրացական զորքը պարտություն կրելուց հետո] փախուստի դիմեց. Շալվան կալանավորվեց... իսկ [վերջինիս] յեղբայր Հովհաննը (Իվանեն), վորն ապաստան եր գտել Գառնիի այրերում, քարով սպանվեց։ Ապա Շալվային ներկայացրին Ջալալադդին սուլթանին, և նրան ճանաչեցին Նախիջևանցիք (Նախճևանցիք) և Աղբրբադագանցիք (Ադրբեջագանցիք)...

Ապա Հովհան (Իվանե) աթաբակը վերադարձավ Բջնի, իսկ սուլթանն՝ Աղրբադագան) և Նախիջևան (Նախճևան)... Յեվ յերկու տարուց հետո վախճանվեց Հովհան (Իվանե) աթաբակը, և [զորա]գլուխ նշանակեցին Ավագին (Ավաքին)՝ շնորհելով նրան ամիրսպասալարություն...

[Ապա սուլթանն] յեկավ և ավերեց ամբողջ Դվինի յերկիրը, Անին և ամբողջ Անվո յերկիրը, Սոմխիթը, Դագը մինչ Գանձա[կ]. իսկ մինչ այս Շամքորը (Շանքորը) Վահրամ (Վաբամ) Գագեցու ձեռին եր, վորը խելամիտ և պատերազմներում անուն հանած մարդ եր...

...Լսելով, վոր Ավագ (Ավաք) աթաբակն ու ամիրսպասալարը Բջնիումն ե գտնվում, Ջալալադդին սուլթանը կամեցավ նրա հետ

տեսնվել։ Դեսպան ուղարկեց նրա մոտ ասելու. «Դու՝ թագաւորի վազիրապետ (վազիրթուխուցես)՝... [արի]. մի-մի մարդ հետներս վերցնելով, ժողովենք, քանի վոր խոսք ունիմ քեզ ասելու»։ Ավագին այս դուր յեկավ և տեսակցության... գնաց զինված։ Իսկ հայնկույս, Բջնիի ձորում, [յերևաց]՝ հետն մի մարդ ունենալով՝ սուլթանը, վորը նույնպես զինված եր, և մեկը մյուսին մոտեցան։ Ապա սուլթանն ասաց. «Յես չեմ յեկել Վրաստանն ավերելու, այլ հաշտություն և խաղաղություն կնքելու»...։ ...Լսելով սուլթանի այս խոսքերն՝ Ավագն (Ավաքն) վոչինչ չպատասխանեց, այլ միմիայն ասաց. «Յես կզեկուցեմ թագավորին և նրա վազիրներին»։... Ռուսուդան թագուհուն (թագավորին) այս տարորինակ թվաց և պատվիրեցին Ավագին (Ավաքին) չլսել այսպիսի գործերի մասին, այլ միանգամայն մերժել։ Յեվ Ավագն (Ավաքն) այս հայտնեց սուլթանին։ Իսկ վերջինս՝ լսելով այս՝ իր ամբողջ զորքով տեղից շարժվեց և դիմեց դեպի Տփղիս քաղաքը... [Ապա] սուլթանը յեկավ Սոմխիթ և ավերեց ամբողջ Սոմխիթը, [հրի և] սրի յենթարկելով նրա բնակիչներին, այնպես վոր [այնտեղ] ել տղամարդ չմնաց։ Ապա նա անցավ Տփղիսի կողմը։...

...Ավերելով Տփղիսը՝ [խավարազմացիք] սկսեցին կրկին ավերել, գերել և բնաջինջ անել Սոմխիթն ու Կամբեչիանն իրի յերդքին, Քարթլին ու Թուղքը (Թրելեթն*)[6], Ջավախքն (Ջավախեթն) ու Արտահանը (Արտանը), [նաև] վոմանք Սամցխեն ու Տայքը (Տաոն), և Կարնիփորի ու Անվո մերձակա յերկրները։...

[Ռուսուդանի վորդի Դավթի գահակալության պահին Վրաց] թագավորությունն ապահով եր խավարազմացիներից, քանի վոր Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեսն Անիումն եր, Ավագ (Ավաք) ամիրսպասալարը Բջնիում, նմանապես և Վահրամ (Վաբամ) Գագեցին, հերացիք (հերք), կախք, սոմխիթցիք, վրացիք, թորեցիք, շավշ-կղարջեցիք և տայեցիք իրենց ամրոցների մեջ՝ հնազանդ լինելով Ռուսուդան թագուհուն (թագավորին)...

[Ապա Ջալալադդին սուլթանն] յերկրորդ անգամ դիմեց դեպի Տփղիս։ Լսելով այս՝ Ռուսուդանը հրամայեց իր ամբողջ՝ հայնկույս և հայկույս [գտնվող] զորքին, Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեսին և Ավագ ամիրսպասալարին, նաև գործակալ (մսախուրթուխուցես) Վահրամ (Վաբամ) Գագեցուն, հերաց, կախերին, սոմխիթցվոց, ջավախներին, մեսխերին, տայեցիներին,

* Var. Թրիալեթ։

Յոտնա Դաւդյանին, ... ափխազներին, Չիքերին և ամբողջ թագա-
վորությանը... ժողովել: ... Իսկ սուլթանը մուտք եր գործել Սոմ-
խիթ՝ Բողնովոր (Բոլնիսի ձորը)..., ապա մտավ Տփղիս:...

... Ապա չորեք Նոյհնները՝ Զարմաղանը, Զաղատան, Իոսուբն
ու Բիչոն... անցան Արաքսն (Ռախան) և յեկան Գանձա[կ]...

... Լսելով այս՝ Զալալադդին սուլթանը շտապ տեղահան յա-
ղավ իր գերդաստանով հանդերձ և գնաց Հունաստան (Բերձեն-
ստան). իսկ թաթարները հետամուտ յեղան և հասան Բասեն (Բա-
սիան)...

... Ինարազմացիներին փախուստի մատնելով՝ թաթարները
գնացին և ավերեցին Ալաթի և Ալաշկերտի (Վալաշկերտի) յեր-
կրները, և Ալաթի սուլթանը չկարողացավ ընդդիմադրել... ապա
անցան Պարտավ (Բարդավ), Գանձա[կ] և Մուղան, և այնտեղից
սկսեցին ավերել Վրաստանը, Դարուբանդի ստորև Շիրվանի յեր-
կիրը, Կապաղակը (Ղ՝աբալը), Հերքը (Հերեթը), Կախքը (Կախե-
թը), Սոմխիթն և Աբշականյաց յերկիրը՝ Դվինն ու Անին...

Իսկ վերև հիշված Նոյհնները (Զարմաղան, Զաղատա, Իոսուբ
և Բիչոն) մտան Բարթլի, Թռեղք (Թրխալեթ), Սոմխիթ, Զավախք
(Զավախեթ), Սամցխե, Շավշք (Շավշեթ), Կղարջք (Կլարջեթ),
Կողա (Կոլա), Արտահան (Արտան), Անի*, և մորեխի պես տարած-
վեցին այնտեղ՝ ավերելու և կոտորելու [յերկիրը]... Շահնշահ
(Շանշե) մանդատուրթուխուցեսն ապաստան գտավ Աճարական
(Աճարա) յերկրում, Ավագ (Ավաք) ամիրսպասալարը մտավ Կա-
յենի բերդն և Վահրամ (Վարամ) Գագեցին գնաց Քութայիս (Քու-
թաթիս). նմանապես և հերք, կախք, սոմխիթցիք, վրացիք, մես-
խերը, տայեցիք, Թորեցիք-արտահանցի (արտանցի)-Կողայեցիք՝
բոլորը մտան բերդերը, սարերն ու անտառները և կովկասցիների
ու լեռնականների բոլոր ամրոցները...

Տեսնելով Նոյհնների չարագործությունները՝ Հովհան (Իվանե)
աթաբակի վորդի՝ Ավագ ամիրսպասալարը դեսպաններ ուղարկեց
Պարտավ (Բարդավ), ուր վերոհիշյալ իշխանները կանգ եյին ա-
ռել, քանի վոր ձմեռը նրանք այդտեղ եյին անցկացնում, իսկ
ամառը՝ Գեղարքունյաց (Գելաքունիի) և Արարատյան լեռներում:
Յեվ այդ ժամանակ եր Զարմաղանը* գրավել Անին: Սրանց մոտ
ուղարկեց Ավագը դեսպան՝ հաշտություն խնդրելու... Նրանք ու-
բախությամբ ընդունեցին Ավագի դեսպանին և հաստատ յերդու-

* Var. + և Դվին:
** Ինագրում՝ Զորմաղոնը:

մով կատարեցին խնդիրը... Հենց վոր Ավագի դեսպանները վերա-
դարձան և հաղորդեցին սրա մասին, Ավագը... գնաց Զարմաղա-
նի*, Զաղատայի, Բիչոյի և Իոսուբի մոտ, վորոնք պատվեցին և
սիրեցին նրան՝ նշանակելով պահապաններ նրա քաղաքներում և
յերկրներում:...

Յերբ յերկիրը խաղաղվեց և Շահնշահ (Շանշե) մանդատուր-
թուխուցեսը տեղեկացավ թաթարների և Ավագի միջև կնքված
հաշտության և յերկիրն անվնաս պահելու մասին..., ինքն՝ Շահն-
շահը (Շանշեն) յեվս գնաց թաթարների տեսության, վորոնք նրան
(Շահնշահին) շատ պատվեցին և վերադարձրին իրենց նվաճած
Անին շրջակա յերկրով:... Տեղեկանալով սրա մասին՝ Վահրամ
(Վարամ) Գագեցին՝ Զաքարիայի վորդին՝ յեվս կնքեց հաշտու-
թյուն, և սրանով յերկիրը խաղաղվեց:

Իսկ Հերքը (Հերեթը), Կախքը (Կախեթը), Սոմխիթն ու Քար-
ելին և վերևում [գտնվող] ամբողջ յերկիրը մինչ Կարնո-քաղաք
գերության և ավերման եր յենթարկված... և ձմեռը [թաթարները]
կանգ առան Պարտավում (Բարդավում), կուբի յեզերքին, Իորի
յեզերքին** և վերևում՝ մինչ Գագ...

... Յերբ հայսկուայս [գտնվող] յերկիրն (արևելյան Վրաստանը)
թաթարները գրավեցին, Ռուսուդան թագուհին վորոշեց իր վորդի
Դավթին ուղարկել թաթարների մոտ՝ յերկիրը չվնասելու մասին
պայման կապելու համար, և ուղարկեցին դեսպաններ թաթարների
մոտ Շահնշահին (Շանշեյին), Ավագին, Վահրամին (Վարամին) և
[Հ]երքի ([Հ]երեթի) իշխան Շոթային, վորին մանիի աղանդին հա-
րելու պատճառով կուպր եյին կոչում... [Յեվ] Բայի-Նոյհնն իր
հետն տարավ Վրաստանի մեծն իշխանավորներին, [և] յերբ նրանք
մոտեցան Սեբաստիա և Յերզնկայի (Եղինկի) յերկրներին, [թա-
թարները նորից] սկսեցին ավերել...

... [Ապա] թաթարները... գնացին դեպի Ալաթ. իսկ Ալաթի
սուլթանն ընդառաջ գնաց նրանց... [Յեվ թաթարները] հեռացան
իրենց ամառնային բնակավայրը՝ Գեղարքունյաց (Գելաքունիի)
և Արարատյան լեռները, և դեսպան ուղարկեցին Ռուսուդան թա-
գուհու (թագավորի) մոտ հաշտություն կնքելու համար...

...Յեվ ինքը թագուհին (թագավորը) յեկավ հայսկուայս, ուղար-
կելով իր վորդի Դավթին յեվս, վորոնց ընդառաջ գնացին Շահն-
շահը (Շանշեն), Ավագը, վորին թաթարները մեծ պատիվներով

* Ինագրում՝ Զորմաղոնի:
** Var. Իորի յեզերքին abs.:

բավարարեցին,... Շոթա Կուպար*՝ Թորեցին՝, Վահրամ (Վարամ) Քարթլիի իշխանը...

... Ավագը, վորին Ռուսուդան թագուհին (թագավորն) ամիրսպասալարության փոխարեն աթաբակ եր նշանակել, ուղարկվեց Զաղատ-Նոյինի մոտ... Ցեվ Ալաթի սուլթանն էլ տարորինակ ճանապարհով գնաց... [Ցեվ] Ավագն ու Ալաթի սուլթանն... առաջինները էյին, վոր ուղարկվեցին թաթարների մոտ...

[Ռուսուդանի մահից հետո] Շահնշահին (Շանշեյին) հանձնեցին նրա և Ավագի կալվածքը, Վահրամ (Վարամ) Գագեցուն հանձնեցին ամբողջ Սոմխիթն... և Թորեցի Գամրեկելիին... Ջավախքը (Ջավախեթը), Սամցխեն և վերին յերկիրը մինչ Կարնո-քաղաք...

[Ցեվ Եգարսլանի հպատակության ներքո էյին] մեծ և պատվական Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեան և Վահրամ (Վարամ) Գագեցին և բոլոր այլ իշխանավորները:...

... Աորիքում (Շամում) գտնվող թուրքերը՝ լսելով վրաց անտերության (անթագավորության) և վրաց զորքի Ալմութ** գնալու մասին թաթարների մոտ՝... ժողովեցին բազմություն մարդկանց, մոտ վաթսուն հազար, վորոնց ղեկավարն (տերն ու տնօրենն) եր հռչակավոր Ղարախանը, Վրաստանն ավերելու համար, և յեկան Ալաշկերտի (Վալաշկերտի) յերկիրը, վորն այն պահին Շահնշահն (Շանշեն) ուներ գրաված, և սկսեց[ին] ավերել Վրաստանն ու Ալաշկերտն (Վալաշկերտն) և Արաքսի (Ռախսի) հարկուցա [գտնվող] յերկիրը մինչ Սուրմար (Սուրման), վորը նմանապես [նույն] Շահնշահ (Շանշե) մանդատուրթուխուցեան ուներ գրաված: Վերջինս՝ տեսնելով [այս յերկրների] ավերումը՝ հրամայեց իր և Ավագ աթաբակի զորքին ժողովել, և՝ յերեսուն հազար ընտիր հեծյալներով անցնելով Արաքսը (Ռախսը)՝ հասավ Ալաշկերտ (Վալաշկերտ), ուր կանգ եր առել Ղարախանը... Տեղի ունեցավ սոսկալի պատերազմ, ուր անթիվ բազմություն կոտորվեց [թուրքերից]. իսկ Շահնշահի (Շանշեյի) զորքը փրկվեց բարեխոսությամբ կենարար խաչին (ճշմարիտ փայտին)... Ղարախանն ու նրա զորքը պարտվեց, վորոնք փախուստի դիմեցին. իսկ [Շահնշահի զորքը] հետամուտ յեղավ նրանց մինչ Ալաթ... ապա հաղթող վերադարձավ Անի, վորը [Շահնշահի] տունն ու աթոռանիստն եր:

Քանի վոր լուրը Վրաստանի անտերության (անթագավորության) մասին ամենուրեք տարածվել եր, բոլոր ազգերը գլուխ

* Var. Կուպրի:
** Var. Արմութ:

էյին բարձրացրել վրացոց ավերելու նպատակով. ապա վոտքի յելան Հունաստանում (Բերձենստանում) գտնվող թուրքմեններն ու Յերզնկայի (Եղնկի) սուլթանն և ուրիշ քաղաքներում գտնվող ամիրաները. և ժողովեցավ անթիվ բազմություն [զորաց], վորը դիմեց Վրաստան: Լսելով այս՝ տայեցիք և շավշ-կղարջք և կողարտա[հա]ն-կարնիփորեցիք հուզվեցին և մարդ ուղարկեցին Սամցխե՝ Ղ՝վարղ՝վարե ցիխիսջվարեցի Զաղ՝ելու մոտ, վորպեսզի ոգնի նրանց... իսկ թուրքմեններն յեկել էյին Բանա, վորն և պատել էյին, քանի վոր Ուղթիքն (Ուլթիսն) և Բաղաթուրն (Բալթաղ՝ուրն)* արդեն գրաված ունեյին, և ավերում էյին Տայքը (Տարոն)... [Ապա տեղի ունեցավ պատերազմ], ուր հուդներն (բերձենները) ու թուրքմենները պարտվեցին, վորոնք և սկսեցին փախչել... [Ապա վրաց զորքը] պատերազմ ունեցավ Ուղթիքում (Ուլթիսում), վորն և գրավեց, նաև՝ Բաղաթուրի** բերդը, և հույժ հաղթող... խաղաղ տուն վերադարձավ...

... Այս խառնակության պահին Վրաստանի հայկույս և հայկույս գտնվող բոլոր իշխանավորները ժողովեցան Կոխտայի ծայրին՝. [Շահնշահը (Շանշեն)], Եգարսլանը, Ցոտնե Դադյանը, Վահրամ (Վարամ) Գագեցին, Ղ՝վարղ՝վարեն, Շոթա Կուպրին..., Թորեցի Գամրեկելը, Սարգիս Թմոգվեցին...՝ [սրանք բոլորը] վորոշեցին պատերազմ սկսել [թաթարների դեմ]... Իսկ թաթարները՝ լսելով վրաց [իշխանավորների] ի մի ժողովելու մասին՝... յեկան Կոխտայի ծայրը... և կալանավորեցին ու քշեցին նրանց Անիի յերկիրը՝ Շիրակավան կոչված տեղը... [Ապա] Ցոտնե Դադյանը [,վորը գնացել եր զորք ժողովելու], իր զորքով հանդերձ յեկավ Րկինիսջվարի կոչված տեղը, վորը Սամցխեյի և Ղաղոյի միջև ե գտնվում: Լսելով Վրաստանի բոլոր իշխանավորների Անի քշելը՝... սա յերկու մարդու [ուղեկցությամբ] գնաց Անի... Անցավ Սամցխեն, Ջավախքը (Ջավախեթն) և հասավ Անի:

Այս ժամանակ վերոհիշյալ Նոյինները (Բիչու և Անգուրգը) մտել էյին քաղաք, իսկ [վրաց] իշխանավորները, վորոնք կալանավորված էյին և կապանքներով կապած, մերկացյալ նստած էյին հրապարակի վրա...

... Ցեվ Ուլո-ղ՝անի որոք... չորս Նոյինները կառավարում էյին ամբողջ նրա տերությունը. նախ ... Խորասանն, Իրաղն, Ատրպա-

* Var. Բուղաթաղ՝ուրը:
** Var. Բուղաթաղ՝ուրի:

տականը (Աղաբրաղագանը), Մովականը, Պարտավը (Բարդավը), Շիրվանը (Շարվանը), Վրաստանն, ամբողջ Ալանին և մեծն Հուննաստանը (Բերձենստանը) մինչ Ասիա...

[ԴԱՎԻԹ՝ ԼԱՇԱ-ԳԵՈՐԳՈՒ ՎՈՐԴՈՒ, ՅԵՎ ԴԱՎԻԹ՝ ՌՈՒՍՈՒԴԱՆԻ ՎՈՐԴՈՒ ՔԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Յերբ Ռուսուդանի վորդի Դավիթն Ալտաղումն եր Ուլոյի մոտ, նրան ձերբակալեցին և ուղարկեցին Ամրան [բնակա]տեղն՝ Պարտավ (Բարդավ). հասնելով Նախիչևան (Նախճևան)՝ Ռուսուդանի վորդին յերկու մարդով ուղևորվեց դեպի Ախլսազք (Ախլսազեթ)...

... Յեվ յերբ Նարին-Դավիթը մոտեցավ Ավագ աթաբակի յերկրին, ...նրան նկատեց վորսի գնացած Սմբատ (Սումբատ) Որբելը։ [Գեորգ] թագավորի կողմից Որբելների դեմ սկսած հալածանքի (բնաջնջման) պատճառով Նախիչևան (Նախճևան) եր փախել Լիպարիտ կոչվածը։ Վերջինս յեկավ Ելիկումի յերկիրը։ Ելիկումը՝ տեսնելով Լիպարիտ Որբելուն՝ իրրև փեսա ընդունեց և իր դստեր հետ ամուսնացրեց, վորից ծնվեցին յերկու տղաներ, վորոնց կոչեցին՝ մեկին Ելիկում և մյուսին՝ Սմբատ (Սումբատ). և [այս] Սմբատին Ելիկումն իրրև վորդի ընդունեց. և այս Սմբատի թոռն Սմբատի հետ հանդիպեց Դավիթ [թագավոր]ը, վորն և տարավ նրան իր յերկիրը։ Յեվ Դավիթն աղաչում եր Սմբատին չհայտնագործել իր մասին...

... [Դավիթ թագավորը] շրջեց Հովհան (Իվանե) աթաբակի վորդու՝ Ավագ աթաբակի յերկիրը. և այդ ժամանակ վախճանվել եր Ավագը, վորը չեր թողել տղա, այլ միմիայն աղջիկ՝ Խվաշագ անունով։ Յեվ թագավորը գնաց Բջնի (Բիջնիս)[8] վողբալու, և տեսավ Ավագի կնոջը, վորը Ռահի իշխանների՝ կախաբերների դուստրն եր՝ Գվանցա անունով, հուժկու գեղեցիկ։ Սիրահարվելով վերջինիս վրա՝ [Դավիթը] մի քանի ժամանակից հետո իր հետ տարավ նրան իրրև կին և թագուհի, և բերեց իր յերկիրը։ Իսկ Ավագի դստեր թողեց հայրենյաց հողում՝ խնդրելով Սադուն Մանկաբերդեցուն, վորն իմաստուն և խելոք մարդ եր, բարեմիտ, հաջող, բարձրահասակ և գեղեցկադեմ, ուժեղ և մրցող, [հովանավորել նրան]...

... Յեվ Գվանցա թագուհին ու նրանից [ծնված] վորդի Դեմետրին (Դիմիտրին) [Դավիթը] թողեց Ավագի տանը՝ Բջնիում (Բիջնիսում)...

... Ուլո-ղ՝աենը... գնաց Ամրան բնակատեղը, վորն այժմ Ղաբաբաղ[9] և Մուղան ե կոչվում...

... Արղուն-[խանը][10] քսան հազար հեծելազորքով յեկավ և պատեց Գանձա[կ]ն ու Սոմխիթին, ապա մոտեցավ Տփղիսին...

... [Յերբ Արղունը] մտավ Տփղիս, նրան ընդառաջ գնացին Վրաստանի բոլոր իշխանավորներն ու իշխաններն և վոճն բազում* [11], վորը հայ եր ծագումով...

... [Յեվ] բերին Սադունին իրրև թարգմանիչ, վորին Ուլոն շատ եր սիրում և պատվում, քանի վոր նա խելոք մարդ եր և քաղցրալեզու... [Յեվ այս] Սադուն Մանկաբերդցին քաղցր ճառում եր...

... [Յեվ Ուլո-ղ՝աենը] Սարգիս Զա՝ղելուն չնորհեց կարնո-քաղաքն ու շրջակա յերկիրն, իրաղ՝ով հանդերձ... Յեվ գնաց [Դավիթ թագավորն] Ելգոն-Նոինի մոտ՝ ասելով. «Յեթե ղ՝աենը Սարգսին կտա կարնո-քաղաքը, թող թագավորությունն էլ նրան տա»։... Յեվ չավին [Սարգսին] այլևս կարնո-քաղաքը։...

... Այս պահին Ուլո-ղ՝աենն դավաճանեց Շահնշահի (Շանշեյի) վորդի Զաքարիա ամիրսպասալարը...

... Յեվ սպանեցին Գվանցա թագուհուն, վորը Ավագի նախկին կինն եր, ինչպես ասում են, նրա դստեր՝ Խվաշագի ձեռքով, վորը Սեվիփարդավի Հոջա-Շամշադինի կինն եր, վերջինիս դրդմամբ...

... Ապա թաթարներն անցան Ջավախքն (Ջավախեթին) ու Թռեղքն (Թրիալեթին) և Ռուսթավում անցան կուրը, և շատ տեղերին մոտեցան թաթարներն ու Սոմխիթի զորքերը...

... Գարնանը [Ուլո]-ղ՝աենը յեկավ Սաքո և նրա վորդի [Թան]-քուշն յեկավ Գեղարքունիք (Գելաքուն), քանի վոր Գեղարքունիքն (Գելաքունին) նրա ամառվա բնակավայրն եր... [Ապա Թանքուշն] յեկավ Տփղիս և կարգավորեց Վրաց (Քարթլիի) և Հայոց (Սոմխիթի) գործերը...

... Աբաղա-ղ՝աենը... զորք կանգնացրեց [այնտեղ], ուր կուրն և Արաքսը (Ռախսը) միանում են, և այնտեղից մինչ Մցխեթա...

... Այս պահին Սադուն Մանկաբերդցին սկսեց ուժեղանալ. սրան նախ Ուլո-[ղ՝աենն] յեղավ հովանավոր... ապա Աբաղա-ղ՝աենն ել պատվեց, ինչպես և Ս[ահ]իբ-դիվանը, քանի վոր նրա կնոջ՝

* Var. Շադին։

Ասվադի դուստր Խվաշագի (Խվաշաքի)՝ շնորհիվ սենեկապանի (հեջիբի) պաշտոն ստացավ...

...Աբաղե[-ղ՝աենը թաթարներին] տրամադրեց՝ իբրև ամառվա բնակատեղ՝ [ամբողջ լեռնաստանը] մինչ Արարատյան լեռները, իսկ իբրև ձմրան բնակատեղ՝ Արաքսի (Ռախսի) յեզերքն ու Նախիջևանը (Նախճևանը)։...

...[Ապա Թեգուբաբը] շարժվեց և ուղղվեց դեպի Ղադոյի, Կարցխալի և Կարսի լեռները, վորոնք Շավշեթի (Շավշեթի) և Աճարայի միջև են գտնվում...

Այս պահին Սադունն Մանկաբերդցին ուժեղացավ առավել քան ժամանակակից բոլոր այլ իշխանավորները, քանի վոր նրան Աբաղա-ղ՝աենը սիրաշահեց, և նա խնամակալ դարձավ Վրաստանի գործերին։ ...Յեվ Խվաշագն սենեկապետություն (հեջիբություն) տվեց նրան։...

[Յերբ Դեմետրին] նստացրին հայրենյաց գահի վրա, ...ներկա եյին բոլոր իշխանավորները Վրաստանի, Հերքի (Հերեթի), Կախքի (Կախեթի), Սոմխիթի, Քարթլիի, Ջավախքի (Ջավախեթի) և Տայքի (Տաոյի)...

[ԴԵՄԵՏՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

...[Յեվ] հույժ մեծարեցավ Սադունը ղ՝աենի կողմից, և ի խնամակալություն ստացավ Թելավին ու Բելաքանն և բազում յերկրներ. և Սադունը բարվոք վարում եր Վրաստանի գործերը...

...Յեվ Ավագ աթաբակի մեծ Ս[ահ]իբ-դիվանը սրա (Դեմետրի) մոտ եր, և նրա դուստր Խվաշագին (Խվաշաքին) բերել եր ի կնություն։ Այսպես մեծարեցավ Ուլո-ղ՝աենի կողմից, և Սադունն էլ նրանից եր մեծարյալ. և ղ՝աենի ամբողջ պետությունը սրա ձեռք եր և սրա հրամաններին եր հնազանդ։ Յեվ սա գնեց բազում յերկրներ, և արքաներն էլ նրան նվիրեցին կարսը. և նա նստեց Կարսում ու նրա հարևան յերկիրն էլ նենգաբար խլեց Ախալցխեցվոց ձեռից. [և] Ախալցխեցվո դուստրն էլ ի կնություն բերեց... և վրաց, և սոմխիթցի, և հեր-կախեթցի իշխանազուներ թագավորի կից եյին...

Այս պահին ուժեղացավ Սամցխեյի սպասալարն և գանձապետ Սարգիս Ջաղ՝ելին ու նրա վորդի Բեքան, վորոնք տիրում եյին Սամցխեյին։... [Յեվ] Բեքան գրավեց յերկիրը Տասիս-կարից սկսած մինչ Կարնո-քաղաքը, Սամցխեն, Աճարան, Շավշքը (Շավշեթը), Կղարջքն (Կլարջեթն) և Տայքի (Տաոյի) մեծագույն մասը, Վաշլովանը, Նիգալի-ձորն, Արտանուջն, յերկոտասան ամրապատները, Կողան (Կոլան), Կարնիփորան և յերկու Արտահանները (Արտանը), նաև Ջավախքի (Ջավախեթի) բազում գյուղերը...

...Արղունն ուղևորվեց Սամցխե՝ Սարգիս Ջա՝ղելու տեսություն,..., անցնելով Սոմխիթը, Տփղիսն ու Քարթլին... Վերադառնալով Սամցխեյից՝ [Արղունն] յեկավ Սոմխիթ...

[ԴԱՎԹԻ ՅԵՎ ԳԵՈՐԳԻ՝ ԴԵՄԵՏՐԻ ՎՈՐԴՈՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

...Յեվ գնաց Դավիթ [թագավորը] Թուքալ-[ղ՝աենի] մոտ, վորը կանգ եր առել Արարատյան լեռներում..., քանի վոր Արարատյան լեռներն եր յեկած։

...Ապա Թուքալը՝ լսելով Բայդու-ղ՝աենի մահն՝ անցավ Սամցըխե Բեքայի մոտ, վորը տիրում եր Տասիս-կարից մինչ Կարնո-քաղաք...

[Նավրոզի ուղարկած մարդը՝ կամենալով ավերել Վրաստանը]՝ նախ և առաջ յեկավ Նախիջևան (Նախճևան)...

...Ղ՝ազան[-ղ՝աեն]ն անթիվ զորքով ուղարկեց Խուտլու-շա[հ] զորապետին, [վորն] յեկավ Սոմխիթ... [Թաթարներն] ավերեցին Սոմխիթը, Քարթլին, Թխանեթը, Երծոն...

[Ապա Ղազանն] ուղարկեց Ղուրումշին և վոմն Աղինջին... և Շահնշահ (Շանշե) Մխարգրձելին...

...[Յեվ] ուժեղացավ Բեքան, վորը գրավել եր Տասիս-կարից սկսած մինչ Սպեր և մինչ Ծովը, Սամցխեն, Աճարան, Շավշքը (Շավշեթը), Կղարջքը (Կլարջեթը), Նիգալի-ձորը... [իսկ Կոմնենոս Միքայել թագավորինն եր] Տայքի (Տաոյի) մեծ մասն, Արտահանը (Արտանը), Կողան (Կոլան), Կարնիփորան (Կարնիփոլան), Կարսը (Կարի)...

[Խուտլու-շահի Տփղիս գալուն պես] այնտեղ դիմեցին բոլոր թաթարներն, և վրացիք, և Սամցխեյի տեր Բեքայի վորդի Սարգիս սպասալարը, թորեցիք, թմոգվեցիք և սոմխիթցիք, քանի վոր Շահնշահ (Շանշեն) արդեն այնտեղ եր։

[ՎԱԽՏԱՆԳ՝ ԴԵՄԵՏՐԻ ՎՐԴՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Յեվ հաստատուն յեղավ Վախտանգի թագավորութ֊յունը, քանի վոր Ղազանը նրան հանձնեց [Վրաց] թագավորութ֊յունն, և նա գրավեց Տփղիսն ու ամբողջ Սոմխիթը, Դմանիսն և Սամշվիլ֊դեն...*

... [Թուրքերն Ազատ֊Մովսեսի ղեկավարութ֊յամբ կամեցան] ավերել բովանդակ Վրաստանը. և նա (Ազատ֊Մովսեսը) մտավ Բասեն (Բասիան) և Տայք (Տաո), և սկսեց այն նենգորեն ավե֊րել... Իսկ Բեքան՝ լսելով թուրքերի գալու մասին՝ կոչեց իր բո֊լոր հպատակներին սկսած Տասիս֊կարից մինչ Բասեն (Բասիան)՝ մեսխերին, շավշերին, կղարջերին, կղզա֊արտահան֊կարնիփորեց֊վոց և տայեցոց մեծամասնութ֊յանը..., նաև թմոգվեցվոց և թո֊րթեցվոց..., [վորոնք] և զնացին թուրքերի դեմ:... [Իսկ] թուրքերն յեկել եյին Բեքայի յերկիրը՝ Սամցխե, Քարթլի և Սոմխիթ...

... Լսելով թուրքերի վախուստը Վաշլովանից՝ Բեքան հույժ ուրախացավ և շտապ֊շտապ դիմեց դեպի Սպեր և Բաբերդ, ուր կանգ եյին առել թուրքերը...

*... Յեվ թուրքերի հնչին մասն ապաստան եր գտել Սպեր քա֊ղաքում ու բերդում և վոմանք Նոր֊քաղաքում**...*

... [Թաթարական արշավանքներին մասնակցող Վախտանգի զորքի հետ] մասնակցում եյին սոմխիթցիք, վորքան եյ նրանց մեջ կային ձիավորներ...

*... Յեվ վերադարձին Վախտանգը մտավ Նախիջևան (Նախ֊ճևան***)...*

---

* Var. + *Սամցխեյի յերկրում:*

** Var. + *Բեքան շրջապատեց Սպեր քաղաքն,... իսկ Սարգիսն... ավերեց Նոր֊քաղաքը... Դանձելով անթիվ հարստութ֊յուններ Սպեր և Բաբերդում՝ [Բե֊քան] հաղթող վերադարձավ տուն. և [ճանապարհին] վողջունեցին Կարնո֊քա֊ղաքի տերերը, և մատուցին նրան ընծաներ և ավար. և սրանց վոչնչով չձլա֊սեց ...*

*** Var. + *Նույն Նախիջևանում (Նախճևանում) նա (Վախտանգը) հի֊վանդացավ փորացավով և մեռավ՝ արքայական թագով պսակյալ. և [նրա ա֊ճյունը] բերին և թաղեցին Դմանիսում: Յեվ թողեց նա յերկու վորդի՝ Դեմետրը (Դիմիտրի) և Գեորգ (Գիորգի). Դեմետրը (Դիմիտրին) իշխում եր Դմանիսում, իսկ Գեորգը (Գիորգին) Սամշվիլդեյում...*

... [Ապա] անհամար զորքով յեկավ Զոփան,... [վորը] նախ մտավ Կողա (Կոլա) և Աբտահան (Աբտան),... ապա անցավ և իջավ Սոմխիթ...

[ԳԵՈՐԳ ՊԱՅԾԱՌԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ]

... Ուլջաթ սուլթանը [հրամայեց]... ամբողջ Վրաստանը միա֊վորել Գեորգու (Գիորգիի) թագավորութ֊յան ներքո՝ նշանակելով նրա մոտ Շահնշահ (Շանշե) Մխարգրձելուն և Ավագի դուստր Խվաշագից ծնված Զաքարիային...*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Աթաբակութ֊յան» մասին տես. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմութ֊յունը (վրացերեն), գ. II, մ. I, Տփղիս 1928, եջ 179—182:

2 Վրաց արքունիքի և կեղեքիչ «բարձր դասի» անվայել բարքի մասին, ինչպես հայտնի յե, կցկտուր տեղեկութ֊յուններ կան նաև հայ պատմիչ֊վար֊պետների մոտ: Որինակ, Մաղաքիա աբեղան (Պատմութ֊իւն վանն ազգին նահողաց, ի լոյս ընծայեաց Ք. Պ[ատկանեան], ՍՊՔ. 1870, եջ 20) գրում է. «Իսկ բարեսէր և գեղեցիկ թագաւորն Վրաց Դաւիթ հանապազ իւր ամենայն թագաւորութ֊եամբն կայր ի մեծ ուրախութ֊եան և ի գինարբուս յիւր թագաւո֊րանիստ քաղաքն Տփղիս. և յաւուր միում էր մեծ ճաշ և ուրախութ֊իւն առաջի թագաւորին. և սովորութ֊իւն է վրաց հանապազ ամբարտաւանել և մեծամեծ բանս խօսել: Նոյն իմաստով խոսում է մի այլ դեպքի առնչութ֊յամբ և Թով֊մա Մեծոփեցին (Պատմութ֊իւն Լանկ֊Թամուրայ և յաջորդաց իւրոց, ի լոյս ընծայեաց Կարապետ Վ. Շահնազարեան, Պարիս 1860, եջ 122—123):

3 Ըստ Մ. Բրոսեյի (Histoire de la Géorgie, I, 2, p. 92, n. 2) 1220 թ.:

4 Սագիմ Քերևս այժմյան Ջեգամ գետն է: Համենայն դեպս, Լեոնտիոս Ռուխեցվո (XI դ.) խոսքերը, թե Վրաստանի սահմանն արևելքից հերդուջ գետն եր, պիտի մեկնել այն իմաստով, վոր վերջինս նույն Սագիմ կամ Ջե֊գամն է և վոչ թե Դեբեդն (Դեբեդա֊չայն), ինչպես մինչ այժմ կարծում եյին, հմմ. Լ. Մելիխեթ֊Բեկ, «Վարդապետութ֊իւն Հայոց հիւսիսային կողմանց» etc.

---

* Var. + *... Այս Պայծառ Գեորգը (Գիորգին) տիրեց Վրաստանին, Սոմ֊խիթին, Հեր֊կախերին, Քարթլիին, Մեսխերին, Տայոց, Շավշ֊կղարջներին՝ մինչ Սպեր և Ծովը...*

... Նոյիններից մեկը տիրեց Աղբրաղագանին (Աղբրաղագանին), և սկսեց գրավել Սոմխիթը, Իանն ու Մովսականը...

... Սակայն ապագայում [Գեորգ Թագավորն] առավել ևս հնազանդեցրեց Իանը, Մովսականն ու Սոմխիթը...

վրացերեն, Տփղ. 1928, եջ 7—8, ծան. 2։ Նաև Ս. Կակաբաձեյի գրախոսականն Իվ. Ջավախիշվիլու խմբագրությամբ հրատարակած Վրաստանի պատմական քարտեզի մասին, վրացերեն,— «Bulletin Historique» 1924, գ. I, եջ 294—295։

5 Համմ. ե. գլխի 6 ծանոթությունը։

6 «Թբելեթ» ձևը՝ սովորական «Թրիալեթ»-ի փոխարեն՝ ինչպես Մ. Բրոսեն յա (op. cit., p. 507, n. 1) մատնանշեց, հիշեցնում է հայկական «Թռեղք»-ը։

7 Ինչպես այս՝ «Կուպար», resp. «Կուպրի», նույնպես և վերևում հիշված «Կուպր» մականունը, համաձայն պրոֆ. Ցուսիի Աբուլաձեյի հետազոտության (տես նրա հրատարակած «Վագրենավորը». հատկապես նորագույն հոդվածը՝ «Ինչպես պետք է հասկանանք Շոթա Կուպրի», վրացերեն,—«Կոմմունիստ» որաթերթ, 1935 թ. 12. IV № 87) նույն իրանական-արաբական «քուֆրի»-ն է, որ նշանակում է անհավատ, անաստված, անորեն, քանի որ Շոթա Ռուսթավելու յերկում պարզապես արաբական-մահմեդական աշխարհն է ներկայացրած։ Համմ. նաև Պ. Ինգորոկվա, Rusthveliana, վրացերեն, I, Տփղիս 1926, եջ 199—215, ուր Շոթան մանիքեյացի յե հռչակված, ապա՝ Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմության, վրացերեն, II, Տփղիս 1924, եջ 98—99 և այլուր։— ընդ սմին հետաքրքիր է մատնանշել, որ Պ. Ինգորոկվայի (Rusthveliana, եջ 205—242, մանավանդ 213—215) կարծիքով, Շոթա Ռուսթավեցին (Ռուսթավելին) ծագումով վրաց Բագրատունյաց տոհմից պիտի լիներ։ «Շոթա» անվան առնչության մասին «Աշոտ»-ի հետ տես. **А. Хаханов,** Очерки по истории грузинской словесности, в. II, Москва 1897, стр. 244. **Н. Марр,** Грузинская поэма „Витязь в барсовой шкуре“ Шоты из Рустава и новая культурно-историческая проблема,—„Изв. Акад. Наук“ 1917 г., стр. 446. Համմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականության մեջ,—«Գեղարուեստ» № 7, Տփղիս 1921, եջ 35—37։

8 Կիրակոս Գանձակեցին (Ղուկասեան Մատենադարանի հրատ. III, Տփղիս 1910, եջ 305), խոսելով «վասն կոտորածին՝ զոր արար զօրն Թաթար յաշխարհին Վրաց», 1249 թվականի ներքո հաղորդում է հետևյալը. «ի ՈՂՀ թուականին Հայոց ... մեռաւ իշխանաց իշխանն Աւագ. և թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ Իւանէի։ Վարդանը (Վենետիկ 1862, եջ 148) դնում է այս դեպքը 1250 թվի ներքո, յերբ գրում է. «Ի վեցհարիւր իննսուն և ինն թուին մեռաւ Աւագն՝ որդին Իւանէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն ընդ հօր իւրում, այր անագահ և պատերազմասէր և աղօթական»։ Ըստ իս, պետք է ընդունել, որ Բշնիի Պղնձահանքումն է և ոչ միայն Ավագի, այլև Հովհաննի (Իվանեյի) գերեզմանը։ Ցեվ, անշուշտ, այդ իմաստով պետք է հասկանալ նույն Կիրակոսի խոսքերը Հովհաննի (Իվանեյի) մասին (եջ 210)։ «Վախճանեցաւ... Իվանէ, եղբայր Զաքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շինեաց ինքն, առեալ ի Հայոց՝ զվրացի վասն արար. և մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր անուանց՝ Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին։ Սա խնդրեաց յԱւագէն, յորդւոյն Իւանէի, զվանքն Գեղարդ, իւր տեղի գերեզմանի. և վասն յոյժ սիրելոյ ընդ նմա. զնեաց գիւղ մի ի նմանէ, Վաշխէ անուն, մերձ յԱղստև, ետ զայն ի վանքն, և այլ բազում արդիւնս, գրեանս և խաչս և անասունս»։ Ապա Կիրակոսը խոսում է Հաղարծնի մասին։ Մի այլ տեղ՝ խոսելով «Վասն աւերածոյ Հայոց աշխարհիս և վրաց [և Թաթարէն]», նույն Կիրակոսը. (եջ 224) գրում է. «Յառաջ զքան զսակաւ ժամանակս մեռեալ էր Իվանէ, տարան թաղեցին զնա ի Պղնձահանքն՝ զոր իւր շինեալ էր վանս (վասն. sic) վրաց, առեալ ի Հայոց»։

Ընդամենը այն հանգամանքին՝ որ Կիրակոսն ու Վարդանը վորոշակի պատմում են, վոր Ավագը թաղվել է նույնտեղ, ուր և վերջինիս հայր Հովհաննը (Իվանեն), կապելով յերկուսի ևս գերեզմանն Աղստևի շրջանի և մասամբ Գեոտիկի ու Հազարծնի մոտերքում գտնվող Պղնձահանքի հետ, վորը նույն թուրքերեն «Միսխանա»-ն է (այստեղից է, ի միջի այլոց, «Միսխանա» կոչված լեռնաշղթայի անունը), հայ և ոտարազգի բանասերներն այդ Պղնձահանքը վորոնում են Լոռի-Տաշիրում, իսկ վոմանք նույնիսկ նույնացնում են այժմյան Ախտալայի հետ։ Այսպես, որինակ, Վենետիկում 1862 թվին հրատարակված «Հայաբումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ»-ի համապատասխան ծանոթության մեջ (եջ 148) կարդում ենք. «Պղնձահանքդ են ի Լալվար լերինս Սօմխէթու, ընդ մէջ Տաշրաց և Ծոբոփորայ, ուր եկեղեցի և վանս կանգնեալ էր յաւուրս իշխանութեան Զաքարեայ և Իւանէի»։ Ա. Յերիցյանը 1872 թվին (**А. Ерицов,** Монастырь Ахтала,—„Кавказская Старина“ № 1, стр. 21)՝ մեկնելով հայ պատմիչների տվյալները Պղնձահանքի մասին՝ նշում էր, վոր «ныне он известен под именем Ахтала»։ Դ. Բահրամեն 1875 թվին (**Д. Бакрадзе,** Кавказ в древних памятниках христианства,—«Записки О-ва Любителей Кавказской Археологии», I, стр. 34), մի կողմից, համաձայնվում է Ա. Յերիցյանի հետ, վոր «очень может быть, что Ахтала есть армянский Пгндзаханк», մյուս կողմից, անհրաժեշտ է գտնում անել և այսպիսի մի նկատողություն. «При всем том, пока Ахтальский храм и окружающие его церкви не будут обстоятельно исследованы в археологическом отношении, мы не можем считать себя в праве высказать по этому вопросу решительное слово»։ Ապա 1901 թվին Ե. Թաքայշվիլին (**Е. Такайшвили,** Грузинские надписи Ахталы,—«Сборник материалов для опис. м. и п. Кавказа», в. XXIX, отд. I, стр. 30) գրում էր. «Местность Ахтала, где всегда добывалась медная руда, могла называться **Пгндзаханком»:** Ըստ յերևույթին, այս տեսակետի ազդեցությամբ է, վոր Ցե. Լալայանն ևս նույն 1901 թվին (Բորչալուի գաւառ,—«Ազգագրական Հանդէս», VII—VIII, եջ 429) գրում է. «Ախտալի պղնձահանքում հին ժամանակից, V դարից (sic. Լ. Մ.-Բ.) կանգնած է եղել եկեղեցի, որի մօտ հետզհետէ շինուել են մինւս եկեղեցիները, և ի վերջոյ ս. Աստուածածին մայր եկեղեցին, հաւանականօրէն Իւանէի ժամանակ և սրա ջանքով (sic. Լ. Մ.-Բ.)». ապա և Լեոն (Սահմանավէճեր, Տփղիս 1919, եջ 65). «Իւանէն... թաղուած է Ախտալայի վանքում, որ ինքն էր շինել և որ այսպիսով ներկայացնում էր միակ (sic. Լ. Մ.-Բ.)* հայ-քաղկեդոնիկ եկեղեցին Լոռու սահմաններում»։

Համեմատաբար ավելի զգույշ վերաբերմունք են ցույց տալիս դեպի Պղնձահանքի ուր գտնվելու հարցը Մ. Զամէյանը, Հ. Շահխաթունյանը, Ղ. Ալիշանն ու Հ. Տաշյանը։ Մ. վ. Զամէյանը (Պատմութիւն Հայոց, III, 1786, եջ 179, համմ. 204, 225) նշում է. «Պղնձահանք [է] աւան և վանք ի Տաշիրս»։ Հ. յեպ. Շահ-

* Լոռի-Տաշիրի քաղկեդոնիկ մենաստանների մասին տես. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետաք Հայոց հիւսիսային կողմանց, եջ 57—59։

խաքունյանը *(Սաորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի II, 1842, էջ 200—201)* գրում է. «Հեռի յեկեղեցեացն կեչարուաց ընդ արևմտեան հիւսիս աւելի քան զմի ժամ՝ հանդէպ Թայչարուա գեղջ ի հարաւակողմն գետակին ի հիւսիսային լանջի անդ անտառախիտ առապարին ի տափարակ դիրս է եկեղեցի բարձրաքամար և անսիւն օրոցաձև կառուցեալ՝ միջակ մեծութեամբ. ուր հետախոյզ եղեալ մեր չգտաք զարժանաւոր գրուած ինչ հայացի, այլ ի բարձրութեան անդ եկեղեցւոյն արտաքուստ յատորև քան զքուէսն տանեաց տեսանէր միակարգ գրուած շրջապատեալ զեկեղեցւոյն վրացի տառիւք. ունէր տաճարն շուրջ զիւրև սենեկաց թաղեալ ի մացառուտս և ի թուխս, ուստի և եղեալ է յառաջագոյն մենաստան՝ թերևս յիշխանութեան Վրաց ի ժամանակս Զաքարիա մեծանուն սպասալարի հայազգւոյ։ Աստի ի վեր անդր ի ձորամիջի՝ ուր փոքր ինչ հեռի յարևմուտս, է Պղնձահանքն՝ որ այժմ կայ անգործ, և առ նովաւ աւերակք շինուածոց՝ թերևս գործատեղեաց նորին։ Ի ձորամիջի աստ ընթանայ ջուր փոքր և մինչև ցՌնտամալ գիւղ Վարաժնունեաց աճի բաւականաչափ և է առաջին ճիւղ սկզբնաւորող զՀրազդան գետ»։ Գրեթե նույնը կրկնում է և Ղ. Ալիշանը *(Այրարատ, 1890, էջ 258—259)*. «Որպէս յարեւմտակողմն Բջնոյ լերին յայտնեցան կապարահանք, նոյնպէս և ի հիւսիսային արեւելակողման ճանապին Պղնձահանք անգործք, և աւերակ բնակութեանց առ նոքօք՝ թերևս գործատեղեաց նորին, ի ձորամիջի. ընդ որ վտակ մի խաղացեալ յարեւելս կոյս՝ վարարէ զՀրազդան գետ, հանդէպ Ռնտամալ գեղջ Վարաժնունեաց, և համարի մի յաղբերաց նորին։ Սակաւուք ի ստորեւ ի Հր. Ել. Պղնձահանիցն և ի հարաւոյ գետակին՝ յառապար լանջակողման լերին՝ կայ հին և լքեալ մենաստան, օրոցաձեւ անսիւն բարձրակամար եկեղեցեաւ, չափաւոր մեծութեամբ, զորոյ ստորոտս քուոց տանեացն շուրջ առեալ պատէ մեծատառ արձանագիր վրացի. իսկ ի ստորեւ զեկեղեցեաւն ածեալ կայ պարիսպ քառակուսի, և սենեակք բնակութեան, այլ ծածկեալ վայրենամոլ թփովք և մացառօք։ Նման իմն է տեղիս հռչակաւոր Պղնձահանիցն Տաշրաց, սեփականութեան և գերեզմանի Իւանէի Աթաբէկի»։ Խոսելով վրաց վանքի մասին, «որուն անունն էր Պղնձահանք», Հ. վ. Տաշյանը *(Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հետազոտութիւնք և բնագիրք, մ. I [Ազգ. Մատ. ԺԶ], Վիեննա 1895, էջ 30)*՝ հենվելով Ալիշանի վրա՝ նշում է. «Այս անուամբ տեղ մը եւ նաեւ աւերակ հին մենաստան կայ նաեւ Բջնոյ հիւսիս-արեւելեան կողմը»։ Վերջապես, Տաշիր-Ծորուխրուման և ցույց տալիս Պղնձահանքը H. Hübschmann-ը (Die altarmenischen Ortsnamen, Strasbourg 1904, s. v.)։

Պղնձահանքի մասին տարբեր կարծիքների գոյութիւնը բացատրվում է նրանով, որ, իրոք, հնում յերկու կամ, գուցե, ել ավելի Պղնձահանքեր եյին հայտնի, մեկը Բջնիի, իսկ մյուսը Ձորագետի (Բորչալուի), որոնցից առաջինը կոչվում եր նաև «Միխանա» ‖ «Միխանե», իսկ յերկրորդն ինչպես «Միխանա», նույնպես և «Միշան» (Հմմ. П. Бутков, Материалы для новой истории Кавказа, I, Спб. 1869, стр. 337)։ Իսկ վրաց աշխարհագիր Վախուշտը XVIII դարում վերջինիս մասին գրում է (Description géographique de la Géorgie, par. M. Brosset, p. 148). «Այստեղ, Միխանայում արդյունահանվում է պղնձի շատ հանքեր, նաև արդյունահանվում է հողից կարմիր և շատ ամուր, փայլուն և մաքուր քար»։

Հարցիս բազմակողմանի լուսաբանության համար, մեր կարծիքով, պիտի

ոգտագործել վոչ միայն հայ պատմիչների ցուցմունքները Պղնձահանքի մասին, այլև ձեռագրաց հիշատակարանների և արձանագրությունների ցուցմունքներն այս առթիվ։ Ստեփանոս Որբելյանը *(Տփղիս 1911, էջ 355—357)* հիշատակում է Պղնձահանքն, ուղիղ ասած՝ Պղնձահանքի վանահորն և Բջնիի յեպիսկոպոսին այն անձանց շարքում, որոնք Հովհան (Իվանե) աթաբակի կողմից հրավիրվել եյին Դվին քննելու այն վեճը, որ ծագել եր «վասն սուրբ Աչէին»*։

ԸՍՏ Ս. ՈՐԲԵԼՅԱՆԻ

զԲուբակն և զմարծուանն, զԻվան զըպէչն և զմեծիուշաղէչն, զմեծ ճղունդիուէչն, որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրամ ծղաւրն Պղնձահանիցն և զմեծ մամբավարն Դարշտէուցն, զԴագեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում դէդեպուլք ևս և զղատին Տփղեաց և զղատին Անւոյ և զղատին Դվնայ և զանուանի շէնն Սուրմարուոյ. ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բջնոյ և զեպիսկոպոսն Հախբատայ»։

ՎԵՐԱԿԱՆԳՆԱԾ

զԴիդեբուլք և զՄարզպանն, զԻվան Տբելին և զՄեծիա Ջաղ՝էն, զմեծ ճղ՝ունդիդէն, որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրամծղվարն Վարձէոյ և զծիրամծղվարն Պղնձահանիցն և զմեծ մամբավարն Դարեջէյցն, զԴագեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում դիդեբուլք ևս, և զղատին Տփղեաց և զղատին Անւոյ և զղատին Դվնայ և զանուանի շէյն Սուրմարուոյ, ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բջնոյ և զեպիսկոպոսն Հախբատայ»։

Պրոկղի Դիադոխոսի «Շաղկապք աստուածբանականք»-ի հայերեն թարգմանության հիշատակարանում *(Ց. վ. Տաճեան, op. cit., 29)* ասված է. «Թարգմանեցաւ գիրքս Պրոկղի Դիադոխոսի պղատոնական իմաստասիրի ձեռամբ Սիմէօնի անալիտան քահանայի և կրօնաւորի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս յերկիրս Հայոց, ի Վանս Վրաց, որ կոչի Պղնձահանիք, ի յաւիտենից թուականին ՋՀՄԶ (=6756 կամ 1248 Ց. Ք.)» *(հմմ. նաև ձեռագիր ԵՋմիածնի մատենադարանի հին հավաքածուի № 3016, էջ 143 ա, նոր հավաքածուի № 1532, էջ 247 v)*։

Գրիգոր Նյուսացվո «Ծողովողին Մեկնութիւն» կոչված գրության հայերեն թարգմանության հիշատակարանում կրկնվում է գրեթե նույնը (տես ձեռ. ԵՋմիածնի մատենադարանի հին հավաքածուի № 1013, էջ 241 v). «Գրեցաւ և աւարտեցաւ գիրքս Գրիգոր Նիւսացոյ եպիսկոպոսի յ[ը]նդիր և լաւ աւրինակաց հնոց, որ թարգմանչացն գրած էր, ձեռամբ մեղապարտ և անարժան կրաւնաւորի Սիմէոնի, յերկիրս հայոց, մերձ ի Լաւուէ ի վանքն, որ կոչի Սպղենձահան**, ընդ հովանե[աւ] սուրբ աստուածածնին, յիշխանութիւն Իվանէ աթապակին շինողի վանիցս, զոր յերկար ժամանակ արասցէ տէր որդովքն իւրով հանդերձ. արդ աղաչեմ, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշման արժանի արարէք և որք յիշէք, յիշեալ լիցիք ի տէր»։

«Պղնձահանք»-ը հիշվում է նաև հայերեն արձանագրությունների մեջ՝ յերկու անգամ։ Սրանից մեկն է այսպես կոչված Ջուխտակ վանքի 1247 թ. արձանագրությունը (Մակար վ. Բարխուդարեան, Արցախ, էջ 363 = Կ. Կոս-

* Հմմ. Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, 654—655. նույնը, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, II, 2, Տփղիս 1929, էջ 480։

** Ավելի մոտ վրացական ձևին՝ սպլենձի պղինձ բառից։

տաճեան, Վիմական տարեգիր, 92) հետևյալ բովանդակությամբ. «Կամաւն աստուծոյ [ես] տէր Յորդանան շինեցի զեկեղեցիս ի թվին ՈՂՋ. իշխանութեան Աւագին, ողորմութեամբ և տրաւք Պղնձահանացն Աստուածածնի և առաջնորդութեամբ Պետրէի և Համազասպայ... ես Պետրէ եւ Համազասպ համարեցաք զծովքն, եղաք սահման ժողովուրդ աստուածածնին...»:

Ախտալա կայարանից դեպի համանուն վանքը տանող կես ճանապարհից դեպի աջ, Այր կոչված տեղում, խաչքարի վրա կարդացվում է հետևյալ արձանագրությունը 1188 թ. (Լ. Մելիքսեթ-Բեկ, Բոլերն ու նրա հայերեն և վրացերեն արձանագրությունները,—«Bulletin de l'Université de Tiflis», VII, 1926, եջ 67—68, ծանոթ. 3). «Ես, Մարիամ, դուստր Կիւրիկէի, կանգնեցի զՊղնձահանացս Հողհատի սուրբ աստուածածինս. որք երկրպագէք զմեզ, յաղաւթս յիշեցեք. թու[ին] ՈՂՀ. է»:

Սակայն Պղնձահանքին վերաբերյալ հարցը բարդանում է շնորհիվ այն հանգամանքի ևս, վոր ինչպես Բջնիում, նույնպես և Զորագետում մենք գտնում ենք քաղկեդոնիկ դավանության վանքեր վրացերեն արձանագրություններով հանդերձ, իսկ Զորագետինը, բացի դրանից, նաև քաղկեդոնիկ-հայերի թողած հայերեն արձանագրություններով:

Բջնիի Պղնձահանքի վրացերեն արձանագրությունների այն լուսանկարները, վոր մեր տրամադրության տակ են, տալիս են մեզ վորոշ հիմք արտահայտվելու, վոր այն վոչ միայն քաղկեդոնիկ վանք է յեղել այլև, իրոք, Զաքարիայի և Ավագի շրջանի կառուցվածք: Այս վանքն է, վորի բավականին մանրամասն նկարագրությունը տալիս է մեզ, ինչպես վերև տեսանք, Ղ. Ալիշանը՝ Բջնոյ Պղնձահանք անվան ներքո: Անտարակույս, նույն վանքի մասին է խոսքն, յերբ նույն Ղ. Ալիշանը մի այլ տեղ (Այրարատ, եջ 279—280) Ըննամալ անվան ներքո գրում է. «Մերձ ի խառնուրդն առ Ջանկեաւ՝ յահեկէ, որ է յելից կուսէ, մեծ աւանագեօղն Հայոց Ռնեատամալ իբր 120 տամբք, և ս. Կարապետ եկեղեցեաւ— Առ սովաւ Ջոյ կիսաւեր եկեղեցին՝ Կիւրեղ Գիլիսէ (Վրաց եկեղեցի) կոչեցեալ յայլազգեաց». նաև տալիս է (եջ 278—279) 2 պատկեր. նույն վանքի հարավային տեսարանն (110 Ռնեատամալ. Կիւրեղ Գիլիսէ) ու հատակագիծը (111. Ցատականեւ եկեղեցւոյն ի Ռնեատամալ):

Տալով Նոր-Բայազետի նախկին գավառի Թայչարուխ գյուղի նկարագրությունը, Ցե. Լալայանը (Նոր-Բայազէտի գաւառ,— «Ազգագրական Հանդէս», XX թյունը, 1910, եջ 45) նշում է. «Թայչարուխ գիւղից դէպի հարաւ — հազիւ 2 կիլոմետր հեռու—մի անտառապատ բլրի տափարակի գագաթին բարձրանում է մի հին՝ վրացական վանք»: Ապա «Թայչարուխ վանքը» խորագրի տակ նույն Ցե. Լալայանը («Ազգ. Հանդէս» XXIV, 1913, եջ 60) տալիս է նույն հուշարձանի հետևյալ մանրամասն նկարագրությունը.

«Դարաչիչակի Թայչարուխ գիւղից դէպի հարաւ, հազիւ 2 կիլոմետր հեռու, մի անտառապատ բլրի տափարակ գագաթին բարձրանում է մի հին, վրացական տաճար՝ սև, տաշած քարից շինած: Տաճարը օրօրոցաձև է, անդմբեթ, և ունի հարաւային և արևմտեան կողմերում մի-մի գաւիթ, իսկ հիւսիսայինում մի մատուռ, որ բացւում է տաճարի մեջ:

«Տաճարի երկարութիւնն է 13,60 մետր, լայնութիւնը 7,65 մետր, և բարձրութիւնը՝ 11 մետր: Արևելեան ճակատին կայ մի երկար և նեղ պատուհան, որի վերև երկու բարձրաքանդակ աղաւնի, կողքերին մի մի ռոզետ: Փոքր ինչ ներքև վրաց խուցուրի տառերով մի եղծուած արձանագրութիւն:

«Տաճարը ներքուստ անսիւն է, պատերին կից բարձրանում են չորսակաև, հասարակ, քառանկիւնի որմասիւներ, որոնց վրայ բոլորում են ռոմանական կամարներ (sic. Լ. Մ.-Բ.): Զեղունը ներքուստ բոլորակաձև է, արտաքուստ եռանկիւնի: Սեղանը բոլորակաձև է, շատ ցածր, առանց խորանների: Երկու կողքերին ունին քառանկիւնի փոքրիկ բացուածքներ, որոնք բացւում են գաղտնի պահարանների մեջ:

«Տաճարի հիւսիսային պատին կից, կարծես յետոյ, շինուած է մի մատուռ, որ թերևս իբր խորան է ծառայել: Սա մի փոքրիկ, կամարակապ շէնք է, երկու նեղ պատուհաններով արևելեան և արևմտեան պատերին և մի դռնով, որ բացւում է տաճարի մեջ: Արևելեան կողմում կայ մի ցածրադիր սեղան:

«Հարաւային կողմի գաւիթը մի հասարակ շէնք է, միայն միակ դռան վերև կայ մի բարձրաքանդակ աղաւնի, աջ կողքին արևի մի ժամացոյց:

«Տաճարի մեջ կան մի քանի գերեզմանաքարեր, որոնցից երկուսի վրայ կան վրաց խուցուրի տառերով տապանագիրներ:

«Տաճարի հանդէպ կայ մի մացառուտ, որի ծառերն այնպես կարգին դասաւորուած են, որ իսկոյն նկատում է երբեմն ծառուղի կազմելը»:

Այս նկարագրությանը Ցե. Լալայանը (եջ 60, ծանոթ.) կցում է այսպիսի մի ծանոթություն. «Իմ այս վանքը այցելած միջոցին սաստիկ մշուշը թոյլ չը տուեց լաւ լուսանկարելու»:

Նկարագրությանը, դժբախտաբար, վոչ մի լուսանկար կցված չե:

Բայց և այնպես, այս մանրամասն նկարագրությունն էլ, բոլոր վերևում ասածի հետ, միանգամայն բավական է, վորպեսզի Թայչարուխի (ըստ Ալիշանի՝ Ռնեատամալի) յեկեղեցին մենք քաղկեդոնիկ դավանության հուշարձան ընդունենք, վորը հնարավորություն է տալիս Մխարգրձեկներ Հովհաննի (Իվանեյի) և նրա վորդի Ավագի անվան հետ կապել ինչպես Զորագետի Պղնձահանքն, այսինքն այժմյան Ախտալան, նույնպես և Բջնիի Պղնձահանքն, այսինքն այժմյան Թայչարուխի (Ռնեատամալի) յեկեղեցիները: Հարցը միմիայն այն է, թե յերկուսից վերն է իսկապես Հովհաննի (Իվանեյի) և Ավագի գերեզմանների տեղը: Թայչարուխի վրացերեն արձանագրությունները դեռևս կարող են ուսումնասիրվել, վոր մենք մտադիր ենք անհապաղ ի կատար ածել, ապա և արձանագրությունները հրապարակել մեր աշխատության մեջ՝ «Վրացերեն արձանագրությունները Հայաստանում»: Իսկ Ախտալայի վրացերեն արձանագրություններից մեկը, վորը գտնվում է բլրի փոքր յեկեղեցու ճակատին, հիշում է միմիայն Պետրոս վանահոր (Պետրե ծինամձղվարի) կառուցած «պատրոն Ավագ աթաբակի աղոթարանի» շինությունն առանց թվահամարի:

Այս հարցին մենք ելի կանդրադառնանք հիշյալ աշխատության մեջ:

9 Այս դեպքում և հետագայում ամեն տեղ Ղարաբաղի՝ իբրև ձմերոցի՝ մասին խոսելիս պատմիչներն ընդհանրապես և վրաց հեղինակները մասնավորապես ի նկատի ունեն վոչ թե ներկա, այսինքն լեռնային Ղարաբաղը, այլ դաշտային Ղարաբաղը կամ Արցախը (Աղվանքը): Համմ. Թովմա Մեծոփեցու (Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Պարիս 1860, եջ 20) խոսքերը. «Եկն սա (Թագաւորն Վրաց Բագարատ) բազում ընծայիւք ի հնազանդութիւն պիղծ Թագաւորին (Լանկ-Թամուրայ) և նա լցեալ չարութեամբ սատանայի ուրացոյց զնա, և առեալ գնաց ի Ղարաբաղ՝ ի ձմերոցն առաջին Թագաւորաց մերոց»: Սրա մասին խոսում ենք և մեր հատուկ աշխատության

մեջ «Հայկական աղբյուրները Վրաստանի մասին. Թովմա Մեծոփեցի» (վրացերեն), վոր հանձնված է տպագրության Տփղիսի պետ. համալսարանի հրատարակչության։

10 Ի դեպ, անհրաժեշտ ենք գտնում մատնանշել, վոր այս Արղուն-խանն է, վորն Ավանի 1285 թվի մի արձանագրության Հով. յեպ. Շահխաթունյանի (Сводъ надписей Карапетовскаго Музея, II եջ 160) սխալ ընթերցման հետևանքով «Աղրութեան»-ի է վերածվել թե նույն Շահխաթունյանի և թե նրա հետևորդների՝ Ղ. Ալիշանի (Այրարատ, 293) և Կ. Կոստանյանի (Վիմական տարեգիր, 127) մոտ։ Ինչպես Ավանի, նույնպես և Արուճի 1285 թ. արձանագրությունների մեջ պարզորոշ կերպով կարդացվում է «Արղուն-խան». Ավանի մի արձանագրության մեջ՝ «[Ծաշխ]արհակալութեան արքայից արքային | Ա[րղունին] ես ամբողջաստասալար Մուքլու Բուղայ | որ[դի սպա]սալար Սադունին» etc., մյուսում՝ «Ի թվիս ՉԼԴ յաշխարհակալութեան արքայից արքային Արղունին, ի թագաւորութեան Վրաց և Հայոց Դէմէտրի, ես Դաւիթ որ|դի Դէմէտրէ թագաւորին» etc.։ Արուճի արձանագրության մեջ՝ «+Ի թուիս Հայոց ՉԼԴ, ի փառս[հութեանն | Աղղո[ւ]ն խանին, ի թագաւորութեան Դէմ|էտրէի, ի պարոնութեանն ողջաստալար Մարկըծ|եալին եղբաւրն Իվանէի որդւոցն մեծին Շա|հնշահի» etc.։

11 Հետաքրքիր է պարզել, ունի՞ արդյոք այս անունը վորևե կապ «Բուդ», resp. «Բուտ» անվան հետ, վորը VII դարուց սկսած ծանոթ է հայերեն արձանագրությունների մեջ. տես. **Н. Марр,** Имя Бут или Буд в армянской надписи VII в. по р. Хр.—«Зап. Вост. Отд. Рус. Арх. О-ва», т. VII, 1893, стр. 322—326. **И. Орбели,** Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII века,—«Христ. Восток», т. II, 1913, стр. 126—130. Арх. **Гарегин Овсепян,** Потомство Тарсаич'а Орбеляна и Минахатуны,—«Христ. Восток», т. II, стр. 241, ևլն։

Ը.

ԱՆԱՆՈՒՆ (XVI Դ.)

«ԿԱՐԳԱԴՐՈՒՄՆ ԱՐՔՈՒՆԻ ԴՐԱՆ»

«Կարգադրումն արքունի դրան»՝ այսպես ենք մենք կոչում այն պատմա-իրավաբանական վավերագիրը, վորը հայտնի է վրացերեն «խելմծիփիս կարիս գարիգեբա» անվամբ։ Վավերագիրն յերևան հանեց և ապա հրատարակեց Ե. Թաղ'այշվիլին՝ Institution des cours royales [Monumenta Georgica. IV. Leges. № 1, Publicatio Universitatis Tphilisiensis], վրացերեն, Տփղիս 1920, եջ XXXVIII + 32։

Այս վավերագիրն, ըստ նույն Ե. Թաղ'այշվիլու հետազոտության (ibid., III—IX, հատկապես VIII), կազմված պիտի լինի 1295—1469 թ. թ. միջոցին, ավելի ուղիղ՝ Դեորգ (Գիորգի) Պայծառի թագավորության որոք՝ 1318—1346 թ. թ.։ Հեղինակն անհայտ անձնավորություն է, վորը, համենայն դեպս, մոտ պիտի լիներ կանգնած վրաց արքունիքին, հավանական է նրա աստիճանավորներից մեկը (Ե. Թաղ'այշվիլի, op. cit., XIV—XVI; հմմ. Ի վ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, I, Տփղիս 1928, եջ 62—68)։

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՐՔԱՆԵՐԻ ՏԵՂԸ ՎՐԱՑ ԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ]

... Տրապիզոնի [արքա]ներն և Շարվան-շահն ու հայոց (սմբեանների) արքան[1] [յերը գալիս են Վրաց արքունիքը], չորեքյան հավասար չեն նստում... Զե՞ վոր ոսաց (ոսերի) յերկու արքաները, և կախից (կախերի) արքան, և աղվանից (ալվանների) արքան, ծանարաց արքան, [և] տայոց յերեք արքաները, և հայոց

(սոմեխների) արքան[2], և տրապիզոնցիք և Շարվան-շահն * յերը գալիս են Նաճարմագև, տասներկուսն ել տեղ են գտնում նստելու, հապա չորեքյան ինչո՞ւ չպիտի տեղավորվեն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 «Հայոց (սոմեխների) արքայի» հիշատակությունն այստեղ, անկասկած, անաքրոնիզմ է, քանի վոր XIII—XV դարերում հայ Բագրատունյաց կամ Կոբիկյանց «արքաների» մասին խոսք չի կարող լինել, իսկ Ռուբինյանները դժվար թե գալիս լինեյին Վրաց արքունիքը։

2 Նույնը։

* Բնագրում՝ Շարվան-շահենները։

Թ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ (XV Դ.)

«ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՈԾՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ». «ՍԱՄՑԽԵ-ՍԱԱԹԱԲԱԳՈՅԻ ԹԵՄԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ».

XV դարում, համենայն դեպս նույն XV դարուց վոչ առաջ պիտի լինին սահմանված այն յերկու վավերագրերը, վորոնց մեջ ներկայացրած են վրաց թեմերի ցուցակները։ Այդ վավերագրերից մեկն է «Թագավորական ոծման ծիսակարգությունը» (վրացերեն՝ «գանգեբա դաբրազոբիսա», այսինքն սահմանադրության պալատական ցերեմոնիալի), իսկ մյուսը՝ Սամցխե-Սաաթաբագոյին յեպիսկոպոսական թեմերի ցուցակը։ Յերկուսն ել մեզ համար հետաքրքիր են այն առիթով, վորքան ել պարունակում են իրենց մեջ վրաց յեկեղեցուն յեպիսկոպոսական քաղկեդոնիկ թեմերի անունները թե Վրաստանում և թե Վրաստանից դուրս, մասամբ Հայաստանում։

Առաջին վավերագիրը՝ «Թագավորական ոծման ծիսակարգությունը»՝ հայտնի յե մի քանի վարիանտով, վորոնցից մեկը հրատարակել է Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաները»-ի I հատորում, Տփղիս 1892, եջ 45—46, մյուսը՝ Ա. Ցագարելին՝ А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, Спб. 1894, стр. 294—295, նաև XXXVI, յերրորդն ու չորրորդն Ե. Թաղ՝այշվիլին՝ Հնագիտական ուղեվորություններ և ծանոթագրություններ, վրացերեն, գ. I, Ցփղիս 1907, եջ 78—80, 83—85։

Յերկրորդ վավերագիրը՝ Սամցխե-Սաաթաբագոյին յեպիսկոպոսական թեմերի ցուցակը՝ հայտնի յե յերկու վարիանտով, վոր հրատարակել են, նախ Դ. Բաքրաձեն՝ Д. Бакрадзе, Археологическое путешествие по Гурии и Адчаре, Спб. 1878, стр. 81—82, ապա վերահրչյալ Ե. Թաղ՝այշվիլին՝ Հնագիտական ուղեվորություններ ևլն, եջ 76—77։ Ռուսերեն թարգմանությունը տես՝ Н. Марр, Исторический очерк грузин-

ской церкви с древнейших времен,—«Церковные Ведомости», 1907, стр. 137—138, прил.։

Ստորև մենք առաջ ենք բերում յերկուսից կատարած այն քաղվածքները, վորոնք հայ-քաղկեդոնիկ թեմերին են վերաբերում։

[ՔԱՂԿԵԴՈՆԻԿ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ՀԱՅՔՈՒՄ]

I

Յերբ ոծվում և ու գահ բարձրանում թագավորը, յեպիսկոպոսները պիտի նստեն հետևյալ կարգով.

1. Հրամայե Վրաց (Քարթլիի) կաթողիկոսը, և նստի թագավորի աջ կողմը բազմոցով ու բարձով...

3. Ներս մտնի Մեծ Հայքի (Սոմխիթի) մետրապոլիտն և նստի կաթողիկոսից ցած բազմոցով ու բարձով...*

10 ‖ 8 ‖ 11 Իշխանացին...
15 Արտահանի (Երուշնելի)...
25 ‖ 23 ‖ 26 Ալաշկերտցին (Վաղարշակերտցին)...
— 26 ‖ 27,29 Անեցին...
27 ‖ 25 ‖ 28 Կարուցն (Կարեցին)...

II

3. Իշխանցու հոտը՝ Գուրջի-Բողազից սկսած այս կողմը (հյուսիս), ամբողջ Թորթումը, Տասիս-կարիի ներքև, Արտանուջի՝ Սակրուլավի կոչվածից այս կողմը, Որղոխի լերան լանջի այն կողմը, Սակավկասիձոն ամբողջ, Իսպիր-Տրապիզոնի լերան այս կողմը։

8. Արտահանեցու (Երուշնելի) հոտը՝ Տալաշոյի վերին մասը, Արտահանը մինչև Կողայի (Կոլայի) սահմանը։

9. Ալաշկերտցու (Վաղարշակերտցու) հոտը՝ Կաղզվանի վերին մասը, Ալաշկերտի (Վաղարշակերտի) այս կողմը, Խնուսն և Դևաբոյնի այս կողմը։

10. Անեցվո հոտն՝ ամբողջ Զարիշատը (Զարիշտիանին) և Շիրակավանն (Շիրակոնի) և Մաղասբերդը (Մաղասբերեթի)։

11. Կարսեցվո հոտն՝ ամբողջ Կարսն և Կողայի (Կոլայի) ու Ուղթյաց (Ոլթիի) սահմաններից այս կողմը գտնվող Գգչեվանքն (?) ու Կաղզվանը։

13. ...

Բոլոր այս յեպիսկոպոսները ձեռնադրվում են Վրաց (Քարթլիի) կաթողիկոսից, վորը սրանց տերն է, իսկ նրանք սրա ստորադրյալներն...

* *Ք. վարիանտում՝ «Մեծ Հայքի մետրապոլիտ»-ի փոխարեն՝ «յեպիսկոպոսապետը (Սամթավրոյի)»։*

ժ.

ԱՆԱՆՈՒՆ (XV Դ.)

«ՀՈՒՇԱՐՁԱՆՆ ԻՇԽԱՆԱՑ»

«Հուշարձանն իշխանաց» (ձեռքի երիսթավթա)՝ այսպես է կոչվում անանուն հեղինակի այն յերկասիրությունը, վորն՝ իբրև յուրատեսակ պատմագրական գրվածք՝ առաձնահատուկ տեղ ունի գրաված վրաց գրականության մեջ։ Գրվածքը հրատարակել է Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաները»-ի II մասում (վրացերեն), Տփղիս 1897, եջ 1—19։ Իսկ համեմատաբար ավելի վաղ Մ. Բրոսեն հրատարակեց նրա ֆրանսերեն թարգմանությունը՝ M. Brosset, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, SPB, 1851, p. p. 372—384 (Addition XXI. De l'origine des éristhaws du Ksan)։ *Մանրամասն ուսումնասիրությունը տես՝ Ի վ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականությունը (վրացերեն), ա. տպ., եջ 213—218։*

Այս յերկասիրությունը, վորը Քսանի իշխանների (երիսթավների) տոհմային պատմությանն է վերաբերում, ըստ յերևույթին, XIII դարուցն է սկսվում և հասնում մինչ XV դարու սկզբները՝ լանգ-Թեմուրի արշավանքներին հետևող անցքերի նկարագրությամբ (Ի վ. Ջավախիշվիլի, 216)։ Այս պատճառով հեղինակը XV դարու պատմիչ կարող է համարվել։

[ԳԵՈՐԳ VII-Ի ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱԼԻՆՋԱՅԻ ՎՐԱ]

... Ապա Գեորգ (Գիորգի) թագավորն[1] արշավեց Ալինջա[յի վրա] վրաց, իմերցոց, մեսխերի և շիրվանցոց ամբողջ զորքով, հասավ Ալինջա[2] և կոտորեց սուլթանի վորդու զորքը, վորն Ալինջա (Ալիջանի) բերդումն եր կանգնեցրած, և նրան հանեց [այնտեղից], Քրիստոսի 1396 թվին, [կոտորեց] Թեմուր-ղ՝անի [հեծելազորքն] և հաղթող վերադարձավ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Այսինքն Գեորգ (Գիորգի)* VII, *1395—1407։*

2 *Այսինքն Ցերնջակը։*

ԺԱ.

ԲԱԳՐԱՏ ԹԱԳԱՎՈՐ (XVI Դ.)

«ՆԻԿՈՐԾՄԻԴԻ ՍԻԳԵԼԸ»

«Ափխազաց, վրաց, ռանաց, կախից և հայոց, շահնշահ և շարվան-շահ, արքայից արքա... Բագրատն ու կողակիցն՝ Հեղինե թագուհին» 232 քրոնիկոնին կամ 1544 թվին տված իրենց սիգելում (հրովարտակում), որը վերաբերում է Նիկործմիդի տաճարի վերանորոգման, մի առ մի թվում են այդ գյուղերն ու ճորտերին, որոնց նրանք նվիրաբերել են այդ տաճարին։ Այդ սիգելն, ուր առանձնապես մեզ համար հետաքրքիր է «նզովքներ» պարունակող վերջին մասը, հրատարակել է Ս. Կ ա կ ա բ ա ձ ե ն՝ «Կանոնադիր Բագրատ Կյուրապաղատը» (վրացերեն), Տփղիս 1912, եջ 6—8։

[ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՅԵՆԹԱԿԱ ԻՇԽԱՆԱՎՈՐՆԵՐԸ]

[Նիկործմիդի յեկեղեցվո իրավունքները խափանող ով էլ ուզում է լինի]՝ դրսի պատրիարքները, կամ Ափխազքի (Աբխազեթի) պատրիարքը, կամ Վրաց (Քարթլիի) պատրիարքը, կամ Ափխազքի (Աբխազեթի)[1] արքայից-արքան, կամ իշխանաց-իշխանները, Թեկուզ աթաբակներն ու սպասալարները, կամ Դադյանն ու Գուրիելը, կամ Շ[ի]րվանի և Հայքի (Սոմխեթի) իշխանաց-իշխաններն ու իշխաններն[2] և կամ Ռաճի իշխանը կամ բերդապետները կամ հսկիչներն և կամ տանուտերներն կամ ամիրաց-ամիրան,... [նզովյալ լինին]...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1 «Ափխազք»-ը արևմտ. Վրաստանի իմաստով է գործածված։

2 Թե այս դեպքում Հայոց վճռ իշխանաց-իշխաններին և իշխաններին ունի ի նկատի այս վավերագիրը, դժվար է ասել։

ԺԲ.

ԱՆԱՆՈՒՆ (XVI Դ.)

«ՄԵՍԽԱԿԱՆ ՍԱՂՄՈՍԻ ՄԱՏՅԱՆԸ»

«Մեսխական սաղմոսի մատյանը» (մեսխուրի դավիթնիս մատիանե) նուշնպիսի նշանակություն ունի վրաց պատմագրության համար, ինչպես մեզ արդեն ծանոթ «Հուշարձանն իշխանաց»-ը, գուցե և ավելի, քանի որ պարունակում է իր մեջ տեղեկություններ վոչ միայն Սամցխե-Սաաթաբագոյի, այլև Վրաստանի այլ շրջանների մասին։ Այս ուշագրավ գրվածքից միմիայն մի չնչին մասն է հասել մեզ, ուր պահպանվել են տվյալները զանազան անցքերի մասին սկսած 1561 թ. մինչև 1587 թ.։ «Մատյանը» հրատարակել է Ե. Թ ա ղ ա յ շ վ ի լ ի ն՝ Ցերեք պատմական քրոնիկա (վրացերեն), Տփղիս 1890 թ., եջ 81—115 (Մեսխական սաղմոսի քրոնիկան), ուսումնասիրությամբ հանդերձ, եջ CXXVII—CXLIX. նույնը ռուսերեն թարգմանությամբ՝ Е. Такайшвили. Источники грузинских летописей—Три хроники (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, в. XXVIII, 1900), стр. 183—214 (III. Хроники Месхийской Псалтири)։

Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ո ւ (Հին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., 231) ասելով, «Մխխական սաղմոսի մատյանը, իբրև ժամանակակցի և [անցքերին] մասնակցի գրած յերկասիրություն, մեծ՝ ուղղակի անգնահատելի նշանակություն ունի» վրաց պատմության համար, «քանի որ յուրաքանչյուր դեպքի մասին [խոսելիս] վորոշ թվահամար ունի ցուցադրած»։

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XVI ԴԱՐՈՒՄ]

... Քրոնիկոնի 266-ին[1]... ուրումք ավերեցին Գորին և կանգ առան Ջարիշատում...

... [Ոգոստոսի] 9-ին, շաբաթ առավոտ, Ջուրձանի և Շինծալի միջև յեկան Ա[ր]գրումի և Վանի փաշա[ները]...

...[Նուէն ոգոստոսին] Լոռի մտավ [և այնտեղից] Տփղիս հասավ [Լալա]-փաշան... Սոմխիթեցիք շատ վնասեցին [վերջինիս]...

...[Հոկտեմբերին] Լալա-փաշան կանգնած էր Քարթլիում, [վորտեղից] յեկավ Սոմխիթ, [ուր սկսեց] բանակցել [Քարթլիի Սիմեոն թագավորի հետ], վորն էլ հիվանդ էր...

...Պատրոն Ղ'վարղ'վարեչի մոտ [Լալա-փաշայից] մարդ յեկավ, [և] նրան այլևս չթողին Ուղթիքում (Ուլթիում), [այլ] տարան Ա[ր]զրում՝ ծննդյան [առնի] նախորյակին...

Քրոնիկոնի 267-ին[2], մարտի 23-ին, պատրոն Մանուչարն ուղևորվեց Ա[ր]զրում, [իսկ] Ա[ր]զրումից պատրոն Ղ'վարղ'վարեն և պատրոն Մանուչարը գնացին Կոստանդնուպոլիս. նրանք մեկնեցին ապրիլի 20-ին, յերկուշաբթի [որը]...

[Նուէն քրոնիկոնին] Լալա-փաշան յերկրորդ անգամ յեկավ և վերանորոգեց Կարսը (Կարի)...

Քրոնիկոնի 268-ին[3]... հունիսի կեսին վերադարձրին Բեքային, և յերկոքյան տերերը (Ղ'վարղ'վարեն և Բեքան) գնացին Լոռի, վորն ավերեցին. ապա հաղթող վերադարձան...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 266 + 1312 = 1578 թ.:
2 Այսինքն 267 + 1312 = 1579 թ.:
3 Այսինքն 268 + 1312 = 1580 թ.:

ԺԹ.

ԱՆԱՆՈՒՆ (XVII Դ.)

«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ»

XVII—XVIII դ. դ. անանուն բազմաթիվ ժամանակագիրներից մեկն է այն, վորը կոչված է «Վրաց պատմա-ազգագրական ն. ընկերության» հավաքածուի № 342 ձեռագիրը խորհրդատեորին («ժամե-գուլանի»-ին): Ժամանակագրությունը սկսվում է 1388 թվից և հասնում մինչև 1656 թ.: Ըստ հիշյալ ձեռագրի, վոր արտագրված է 1661 թվին, տեկստը հրատարակել է Ե. Թաղ'այշվիլին՝ «Վաղեմի Վրաստան» (վրացերեն) II, 1911—1913, եջ 77—79:

Մնացած նմանորինակ «ժամանակագրությունները», վոր կազմված են XVIII դարում կամ XIX-ի սկզբներում, մենք կզետեղենք հետևյալ հատորում:

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԱՆՑՔԵՐ XVI ԴԱՐՈՒՄ]

227[1]—այստեղ հայերը (սոմեխները) շեղվեցին[2] և Թեոդորյան կյուրակեյին ուտիս ունեցան:
323[3]—այստեղ հայերը (սոմեխները) կրկին շեղվեցին[4]:
325[5]—այստեղ խոնթքարը դուրս յեկավ և Յերևանը գրավեց, և նուէն թվին շա[հ]-Սեֆին խլեց այն նրանից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 227 + 1312 = 1539 թ.:

2 Խոսքը ծռազատկի մասին է, վորն առաջներում պատրվակ էր հանդիսացել հայ-վրացական ընդհարումների, այն է 1197 թ. (տես. Л. Меликсет-Беков, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой пасхи,— «Из. Кавк. Ист.-Арх. Инст.», т. III, Тифл. 1925, стр. 49—60), նաև 1102 թ., ինչպես և հետագայում:

3 Այսինքն 323 + 1312 = 1635 թ.:
4 Տես ծանոթ. 2:
5 Այսինքն 325 + 1312 = 1637 թ.:

Ժ. Դ.

ՓԱՐՍԱԴԱՆ ԳՈՐԳԻՋԱՆԻՁԵ (XVII Դ.)

«ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ», «ՈՍՄԱՆՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Փարսադան Գորգիջանիձեն XVII դարու վերջերի այնքի ընկնող հեղինակներից մեկն է, որի գրչին են պատկանում մի շարք պատմագրական և բանասիրական գրվածքներ, ինչպես լինքունըն, նուշնպես և թարգմանական (պարսկերենից) և սրանց թվում «Վրաստանի պատմությունը» (մի քանի մասից բաղկացած՝ ստվար հատորով), «Ոսմանցոց թագավորների պատմությունը», «Ջամի-Աբաս» (մահմեդական որենսգիրքը), «Վրաց-արաբերեն-պարսկերեն բառարանը» ևլն։*

Այս Փարսադանն իսկապես Գորեցի է, բայց թե ում էր իր տոհմական ծագումով, սրա մասին հավաստի տեղեկություններ չկան։ Հանգուցյալ Մ. Զանաշվիլուն (Փարսադան Գորգիջանիձեն և նրա յերկերը, վրացերեն, Տփղիս 1896, եջ 21—22) կարծիքով, նա ընկել վրացի պիտի լիներ, և ազգանունն՝ «Գորգիջանիձե»՝ Գորգի Զանիձե կամ Գեորգ (Գիորգի) Զանաշվիլի յե նշանակում. մինչդեռ M. Brosset (Histoire de la Géorgie, t. II, livr. 1, SPB 1849, p. 510) *ու, նրան հետևելով, Իվ. Զավախիշվիլին (Հին վրացական պատմական գրականությունը, ա. հրատ., 1916 թ., եջ 234—235) այն կարծիքի յեն, որ նա հայ պիտի լիներ։ Մանավորապես հետաքրքիր է Իվ. Զավախիշվիլու* (ibid.) *դրույթը։—Չնայած այն հանգամանքին, որ Փարսադանն իր «Ջամի Աբաս»-ի վրացերեն թարգմանության մեջ ինքն իրեն անվանում է «գորելի քարթվելի» գորեցի վրացի* (M. Brosset, op. cit., 513), *հարգելի վրացագետն, այնուամենայնիվ, համոզված*

* *Որը վրաց մեջ գրագիտություն տարածող ն. ընկերության № 174 ձեռագրում «Մուսուլման դավանություն» է կոչվում։*

է, որ նա «հայ» պետք է լինի, քանի որ իր «Վրաստանի պատմություն» յերկի մեջ պատվավոր տեղ է տալիս հայոց պատմության տվյալներին. բացի դրանից, Փարսադանի «հայ» լինելն, ըստ Իվ. Զավախիշվիլու, նկատվում է նրանում, որ նա իր այդ յերկի մեջ՝ յերևի իր վաղեմի ազգային զգացմունքից դրդված՝ ձայն է բարձրացնում ի պաշտպանություն վոմն Թումանիշվիլու, որին Բարաթաշվիլիները մեղադրում եյին Լուարսաբ արքայազնի սպանության մասնակցության մեջ։ «Քարթլիում վրացիք,—ասում է Փարսադանն իր պատմության մեջ,—բազմաթիվ են և հզոր, [իսկ] հայերը (սոմեխները) փոքրաթիվ և անզոր, և նրանցից (հայերից) այսպիսի բան դժվար է սպասել (ասել). ապա թե վոչ վրացիք ուզում եյին այս (արքայազնի) արյան [մեղքը] հայու վզին փաթաթել» (հմմ. Իվ. Զավախիշվիլի, op. cit., 235. տեկստը տես ստորև, եջ 114)։

«Ջամի Աբաս»-ի թարգմանության մեջ Փարսադանը վորոշակի տեղեկություններ է տալիս իր կենսագրության զանազան կետերի մասին։ Այսպես, որինակ, նա նշած ունի, վոր 1691 թվին, յերբ նա ավարտել է այս յերկի թարգմանությունը, 65 տարեկան է յեղել (M. Brosset, op. cit., 511, 513). *Հետևապես, պետք է յեզրակացնել, վոր նա ծնված պիտի լինի 1626 թվին։ Մյուս կողմից, իր «Վրաստանի պատմություն» յերկի մեջ Փարսադանը նշած ունի, վոր այն ավարտել է 70 տարեկան հասակում, ասել է 1696 թվին (հմմ. Իվ. Զավախիշվիլի, op. cit., 235—236)։ Նույն յերկից տեղեկանում ենք, վոր նրան մնել է՝ իբրև հարազատ վորդուն՝ վրաց Ռոստոմ թագավորը, վորը քրոնիկոնի 344 = 1656 թվին նրան Սպահան է ուղարկել, ուր և նա հաստատել է մշտական բնակություն՝ ապրելով Պարսկաստանում 40 տարի, և ծառայելով շահ Աբասին ու նրա վորդի Սուլեյմանին, ուրեմն 1656 թվից մինչև 1696 թ.։*

Ինչպես իր ժամանակին ևս M. Brosset (op. cit., p. 511) *կարծիք հայտնեց, Փարսադանը Պարսկաստանում մահմեդական ունության պիտի ընդուներ, քանի որ այս առթիվ վորոշակի խոսում և պարսից պատմիչ Իսկանդեր Մունշին։ Յերբ շահը Վրաստանի խանից (վրաց թագավորից) պահանջեց, վոր իր ներկայացուցիչը նշանակե Սպահանում, Ռոստոմն առաջարկեց Փարսադան-բեգին. սրան շահը պատասխանեց, վոր կհամաձայնվի, յեթե Փարսադան-բեգը իսլամ ընդունի. Փարսադան-բեգը համաձայնվեց և ստանձնեց պաշտոնը* (B. A. Dorn, Beiträge zür

Geschihte der Kaukasischen Länder und Völker, aus morgenländischen Quellen. III. Erster Beitrag zur Geschichte der Georgier. Hauptsächlich nach Iskander Munschi und Geschichte der Szafiden [„Mémoires de l'Académie Impériale des sciences de SPB", VII série, t. VI, livr. 4—5, 1844, p. 431], *Հմմ. Ի վ. Զ ա վ ախ իշ վ իլ ի*, op. cit., 236—237)։ *Նույն Փարսադանն, ըստ* M. Brosset-*ի* (op. cit., 514), *վախճանված պիտի լինի 1703 թվին 77 տարեկան հասակում։*

Հայաստանի և հայերի մասին տվյալները Փարսադանն ամփոփած ունի գլխավորապես «Վրաստանի պատմութիւն» յերկի մեջ, որը նրա գլուխ գործոցն է, մասամբ էլ «Ոսմանցոց թագավորների պատմութեան» մեջ։ Առաջինը դեռ ամբողջապես հրատարակված չէ. նրա միմիայն վերջին՝ չորրորդ մասը նախ հրատարակեց Դ. Զ ու բ ի ն ո վ մի փոքր կրճատված՝ «Քարթլիս Ցխովրեբա», հ. II, ՍՊԲ 1854, եջ 517—569. նույնը ֆրանսերեն թարգմանութեամբ M. Brosset-*ի՝* Histoire de la Géorgie, II partie, 1 livr., SPB 1856, p. p. 514—515. *ապա յերկրորդ անգամ հրատարակեց լրիվ՝ կցելով յերրորդի մի մասն էլ՝ ըստ Վրաց Պատմա-Ազգագրական նախկին ընկերութեան հավաքածուի № 2140 ձեռագրի՝ Ս ա ր գ ի ս Կ ա կ ա բ ա ձ ե ն. «Փարսադան Գորգիջանիձեյի պատմութիւնը»,—*„Bulletin Historique", *վրացերեն, Տփղիս 1925 թ., հ. II, եջ 198—320 (բնագիրը՝ 209—316), նաև առանձին տպատպութեամբ, Տփղիս 1926, եջ XIII + 112 (բնագիրը՝ 1—108)։ Իսկ «Ոսմանցոց խ ա զ ավորների պատմութիւնն» ի թիվս Փարսադանի մանր յերկերի և, ի միջի այլոց, «Վրացերեն-արաբերեն-պարսկերեն բառարանի», հրատարակել է Մ. Զ ան ա շ վ իլ ի ն՝ «Փարսադան Գորգիջանիձեն և նրա յերկերը», վրացերեն, Տփղիս 1896, եջ 72—78։*

Փարսադան Գորգիջանիձեյի «Վրաստանի պատմութեան» հիմնական ձեռագիրը, որ գտնվում է Լենինգրադում՝ Գիտութեանց Ճեմարանի Արևելագիտութեան Ինստիտուտի (նախկին «Ասիական Թանգարան») Georgica № 6-ում, իրոք, մի քանի մասից է բաղկացած, որոնց ընդհանուր բնութագիրը տալիս է Ի վ. Զ ա վ ախ իշ վ իլ ի ն (op. cit., 234—251)։

«Նայած թե վոր աղբյուրների վրա յե հիմնում հեղինակն իր պատմութիւնը, նրա յերկասիրութիւնը,—ասում է Ի վ. Զ ա վ ախ իշ վ իլ ի ն (ib., 240), *— կարելի յե չորս մասի բաժանել»։ I— Վրաց և Հայոց դարձից սկսած մինչ Թամարի թագավորութիւնը (IV—XIII դ. դ.), II—Թամարից սկսած մինչ Լանգ-Թեմուր (XIII—XIV դ. դ.), III—Լանգ-Թեմուրից սկսած մինչ 1636 թ., և IV—1636—1696 թ.։ Այս վերջին՝ IV մասն է, վոր հրատարակել է Դ. Զ ու բ ի ն ո վ, իսկ Ս. Կ ա կ ա բ ա ձ ե ն՝ յերրորդի մի մասը։ Ի վ. Զ ա վ ախ իշ վ իլ ի ն վաղուց պատրաստած ունի տպագրութեան III մասն ամբողջապես։*

Խոսելով Փարսադանի «Վրաստանի պատմութեան» զանազան մասերի մասին, վորոնք տարբեր արժեք ունեն՝ նայած թե ինչ աղբյուրների վրա յեն հենվում և վորպես են գրված, ի նկատի պիտի ունենալ հետևյալը։

«Առաջին մասը... գլխավորապես բանավոր և «լսած» տեղեկութիւնների վրա յե հիմնված և այս պատճառով նա հեքիաթային բնույթ է կրում, քանի վոր նրա յերկու գրական աղբյուրներն էլ, ինչպիսի յեն, որինակ, Հայոց պատմութիւնն և Խորովի ու Շիրինի զրույցն, ավանդութիւնների վրա յեն հիմնված» (Ի վ. Զ ա վ ախ իշ վ իլ ի, op. cit., 243)։ «Քանի վոր Փարսադան Գորգիջանիձեյից առաջ այս շրջանի մասին արդեն գոյութիւն ունեյին, համենայն դեպս ավելի լավ, իսկ VIII—XII դ. մասին արժեքավոր պատմական յերկասիրութիւններ, այս պատճառով Գորգիջանիձեյի գրվածքի այս առաջին մասն,—ըստ Ի վ. Զ ա վ ախ իշ վ իլ ու իրավացի գնահատման (ibid.),—*վոչ մի նշանակութիւն չունի և վոչ էլ ժամանակակից համար է ունեցել։ Անալի՝ զարմանալի ռեպետութեամբ լի այս մասը վերսից դատ ընթերցողին վոչ մի ոգուտ չեր տար։ Այն միմիայն մի բանով է ուշագրավ. յեթե այսպիսի մի բարձրաստիճան և թագավորին մերձակա ծառայողն ու պատմիչն, ինչպիսին յեր Փարսադան Գորգիջանիձեն, այսպես խառնախորտիկի նման ուներ խառնած հայրենի յերկրի անցյալն ու անցքերն, այսպես հեքիաթաբար ուներ ներկայացրած այն, իսկ վրացական լավագույն պատմական աղբյուրները վոչ միայն կարդացած, այլև նույնիսկ աչքով տեսած չուներ, ինացած ժողովուրդը, սովորական, միջակ կարողութեան և ուսման տեր՝ էլ ինչ պատկերացում պիտի ունենար։ Ի հարկե, վոչ մի... Այս բանը պարզ ապացուցում է Փարսադան Գորգիջանիձեյի աշխատութեան առաջին մասը»։*

«Յերկրորդ մասը,—նույն Ի վ. Զ ա վ ախ իշ վ իլ ու հետազոտութեան համաձայն (op. cit., 242—244),*—ամբողջապես հենված է Քարթլիս-Ցխովրեբայի վրա։ Այստեղ հեղինակն իր աղբյուրին է հետևում, և բնագրի բովանդակութիւնն յերբեմն մոտավորա-*

պես ունի առաջ բերած, յերբեմն ավելի դամկորեն»։ Իսկ «ընդհանրապես, այս՝ յերկրորդ մասն էլ պատմութեան համար վոչ մի նշանակութեյուն վոչ ունեցել է և վոչ էլ ունի, քանի վոր լավագույն արժեքի բնագիրը նրա աղբյուրի՝ հասել է մեզի»։

Համեմատաբար արժեքավոր է, ըստ Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ու, պատմութեյան յերրորդ մասը, վորը «XIV—XVII դարերին է վերաբերում», քանի վոր «հենց այս շրջանն եր, վոր չեր նկարագրված Բարթլիս-Ցխովրեբայի մեջ մինչ Վախտանգ VI-ը [և] հենց այս շրջանն եր, վոր Վախտանգ թագավորի կողմից ժողոված գիտնականների հետազոտութեյան առարկան եր կազմում։ Հետևապես Փարսադան Գորգիջանիձեն և Վախտանգյան հանճնաժողովն այս տեսակետից միևնույն նպատակն են ունեցել՝ վերականգնել Վրաստանի պատմութեյունը» (ibid., 249)։ «Ինչպե՞ս կատարեց Փարսադան Գորգիջանիձեն իր պարտականութեյունը։ Վոչ մի վրացական աղբյուր և վավերագիր, վորի գոնելը հեշտութեյամբ կարող եյին Վախտանգի գիտուն մարդիկն և իրոք ձեռին էլ ունեյին, նա (Փարսադանը) Սպահանում չուներ։ Այս պատճառով Գորգիջանիձեն այս շրջանն էս կամ համաձայն բանավոր ավանդութեյունների պիտի գրեր,—հապա նրա յերկասիրութեյան այս մասն էլ իր նշանակութեյունն կկորցներ,—կամ թե չե պարսկական պատմական աղբյուրներից պիտի քաղեր բոլոր տեղեկութեյուններն, ինչ վոր Վրաստանի վերաբերյալ այնտեղ կգտնվեր։ Բարեբաղդաբար, Գորգիջանիձեն այս յերկրորդ ճանապարհով գնաչ և գերազանցել» (249—250)։ «Նրա տեղեկութեյունները քաղված են գլխավորապես Մխրն Հուսեյնի և Իսկանդեր Մունշիի յերկասիրութեյուններից։ Ընդ սմին, նա հաճախ բառացի չե թարգմանում բնագիրը։ Նրա ժողոված տեղեկութեյուններն ընդարձակ և նոր նյութեր են տալիս Վրաստանի պատմութեյան այնպիսի՝ մթութեյամբ պատած շրջանի մասին, ինչպիսին կեն XIV—XVII դարերը» (եջ 250)։

Յեվս առավել արժեքավոր է Փարսադան Գորգիջանիձեյի վերջին՝ չորրորդ մասը, վորը պարունակում է 1636—1696 թ. թ. անցքերի նկարագրութեյունը, վորը նա գրի չե առել իբրև ժամանակակից և ականատես, քանի վոր հենց ինքն այս առթիվ ասում է. «Ցես, Փարսադանս, ասում եմ այս. ճշմարիտ ասողածն վկա. տաս տարեկան հասակից սկսած մինչ յոթանասունն տարին ինչ վոր ինձ պատահել է և արժանի չե գրոց մեջ գրելու համար, ճըշմարիտն այս է» (հմմ. Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի լ ի, op. cit., 235)։

Ջնայած այն հանգամանքին, վոր Փարսադան Գորգիջանիձեյի

«Վրաստանի պատմութեյան» ա. մասը լուրջ պատմական յերկասիրութեյան տպավորութեյուն չի թողնում, այլ առասպելի բնույթ է կրում, այնուամենայնիվ այն առանձնապես հետաքրքիր է հայագիտական տեսակետով, քանի վոր պարունակում է, ի միջի այլոց, Հայոց դարձի պատմութեյունն ու Խոսրովի և Շիրինի զրույցն ամենայն մանրամասնութեյամբ, վորը հեղինակը գրի չե առել գըլխավորապես բանավոր ավանդութեյունների հիման վրա, մասամբ ոգտագործելով (Հայոց դարձի վերաբերմամբ), ինչպես մենք պարզած ունինք, և գրավոր աղբյուրները, բայց այլանդակ ձևով (Ագաթանգեղոս, Խորենացի, Դաշանց Թուղթ, Վարագա Խաչի պատմութեյունն ըստ «Յայսմաւուրք»-ի և այլն)։ Այս նյութից Հայոց դարձի պատմութեյունը մենք ամբողջական թարգմանութեյամբ դնում ենք ստորև, իսկ Խոսրովի և Շիրինի զրույցը, վորն ավելի գեղարվեստական քան պատմական յերկի նշանակութեյուն ունի, տանում ենք IV հատորն, ուր, ի միջի այլոց, ամփոփած կունենանք համապատասխան նյութեր վրացական գեղարվեստական գրականութեյունից ու բանահյուսութեյունից։ Բացի դրանից, ներկա հատորում մենք տալիս ենք մի կտոր՝ քաղված նույն Ա. մասից՝ Բագրատունյաց ծագման վերաբերյալ։ Իսկ նույն Ա. մասի մնացած նյութն, ինչպես և Բ. մասի ամբողջ նյութը մենք դիտմամբ բաց ենք թողնում, քանի վոր այն լոկ կրկնութեյուն է Քարթլիս-ցխորեբայի մեջ ներմուծած յերկերի հայտնի տվյալների, վոր մենք արդեն տված ունինք ներկա հատորիս սկզբնական գլխներում։ Իսկ ինչ վերաբերում է յերրորդ և չորրորդ մասերին, վորոնք նախորդ մասերի հետ համեմատած ավելի արժեքավոր են, այն մենք ոգտագործած ունինք ինչպես հարկն է։

Քաղվածքների թարգմանութեյունը «Վրաստանի պատմութեյան» Ա. անտիպ մասից մենք կատարած ունինք անմիջապես Լենինգրադի Գիտութեյանց Ճեմարանի Արևելագիտական Ինստիտուտի (նախկին Ասիական Թանգարանի) Georgica № 6 ձեռագրից (in folio՝ շքեղ կազմով, վորը հետևյալ վոսկեզոծ մակագրութեյունն ունի. „Исторія Грузіи собранній Фарсадана Георги Джанизева“), նաև Գ. և Դ. մասերից՝ համաձայն Ս. Կակաբաձեյի հրատարակութեյան՝ «Փարսադան Գորգիջանիձեյի պատմութեյունը», Տիֆլիս 1926, եջ 93—106 և 1—92։ Իսկ քաղվածք-

ները «Ոսմանցոց թագավորների պատմութ յունից» համաձայն Մ. Զ ան ա շ վ ի լ ու հրատարակութ յան՝ «Փարսադան Գորգիջանիձեն և նրա յերկերը», եջ 72—78*.

Ի վերջո, անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, որ Փարսադան Գորգիջանիձեյի Պատմութ յան Ա. մասից քաղած [1—9] գլուխները, որ վերաբերում են «Հայոց դարձի» պատմութ յանն և հատկապես Տրդատին, Հռիփսիմեյին, Գրիգորին ևն, բացի նրանից, որ տենդեցիոզ են, նաև ըստ եյութ յան ամբողջապես ա ռ ա ս պ ե լ ի բ ն ո ւ յ թ ե ն կ ր ո ւ մ։

* Փարսադան Գորգիջանիձեյի մասին տես, ի միջի այլոց. Լ. Մելիխեթ-Բեկ, Հայերը վրաց հին գրականութ եան մէջ,—«Գեղարուեստ» VII, Տփղ. 1922, եջ 44—45։

Զարմանալի զուգադիպութ յամբ վոճն Փարսադան-բեգ վորոշ դեր է խաղում Վրաստանի պատմութ յան մեջ XVIII դարու սկզբներին։ Բայց այդ Փարսադանը Տփխիսեցի չե՝ ազգանունով Ղուլանենց, վորին ռուս պատմաբան Ս. Սոլովյեվը «Форседан-бек» է անվանում. Տես. С. Соловьев, История России с древнейших времен, т. XVIII, М. 1868, стр. 31. Մեսրոպ եպիսկոպոս [Ցէր-Մովսիսեան], Զաքարիա նկարչի ձեռագիրը և Դավիթ-բեկի մասին յիշատակարան,—«Բանբեր էջմիածնի Գիտական Ինստիտուտի», I—II, 1922, եջ 135. Լեո, Ժողովրդական կալիտաւ, Ցերեվան 1934, եջ 265։ Հետևապես, այդ յերկու Փարսադաններին չպետք է շփոթել իրար հետ։

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա. ՄԱՍԻ[1]

[1.] ԱՅՍՏԵՂ ՓՐԱՆԳՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՍՏՐ ՀՌԻՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՈՒ ՆՐԱ ՆԱԶԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

Հռիփսիմեն (Հոռոմ-սիմեն) թողեց աշխարհիս հաճույքներն ու թագավորութ յունն և քառասուն անբիծ կանանց հետ հանդերձյալ աշխարհն վորոնելու յեկավ (յեկան) Հայոց յերկիրը (սոմեխների թագավորութ յունը)։ Նրանք յեկան Վաղարշապատ (Վաղարշափեթ) քաղաքն՝ Տրդատ (Տրդատ) թագավորի հողը (յերկիրը), այնտեղ, ուր այժմ Եչմիածնի (Եչմիածին) յեկեղեցին է գտնվում (կանգուն է), և ուր հայոց (սոմեխների) պատրիարքի [աթոռա]նիստն է։ Յեվ այս կանանց պատմութ յունը** ստորև կգրվի, թե ինչպես անարդարացի կերպով նահատակվեցան իրենց ուղեկիցների հանդերձ։ Այն կինը, վորը վիրապի (հորի) մեջ Գրիգորին հաց ու ջուր (ջուր ու հաց) եր հասցնում՝ հապաղելով՝ ժամկետն անց յեկավ և յերկար սպասելուց հետո նույնպես հաց ու ջուր (ջուր ու հաց) բերեց և վիրապի (հորի) մեջն իջավ. իսկ Գրիգորը վիրապից (հորից) ձայն տվեց. «Մեզ ինչո՞ւ մոռացար»։ Նա այսպես ղեկուցեց. «Անիծյալ է Տրդատ թագավորը, վորն այսպիսի անարդար և անիրավ գործ կատարեց, վոր ամբողջ այս յերկիրն այն ամենից, ինչ վոր կատարվեց, գթութ յունից և կարեկցութ յունից զրկեց և (են) լինում»։ Այն կանանց գործն ամբողջապես Գրիգորին ղեկուցեց։ Նա ևս հույժ վշտացավ և այն կնոջը ձայն տվեց. «տակավին կենդանի յե՞ այն խողը»։ Բավական եր, վոր նա այս ասեր, յերեք որ անց Տրդատը խոզ դարձավ և գահընկեց յեղավ (գահից վայր ընկավ) և նրա ծառաներն (հպատակներն) ու իշ-

* Բնագրում՝ ամբավի (համմ. հայերեն «համբավ» բառը)։

** Նույնը։

պատմում [և] քարոզում։ [Ցեվ] բոլորը փառաբանեցին աստծուն՝ իբրև ստեղծողին, ու նրա սրբերին։ Այն որը բոլորը սուրբ Գրիգորի ձեռոք մկրտվեցան։ Ցեվ ջրից դուրս գալով՝ բոլորը հարյուր քսան հազար էյին, և բոլորը սպիտակ շորեր հագան։ Սրանից հետո սուրբ Գրիգորը սկսեց յերկրներ շրջել, ամեն տեղ շինել տվեց յեկեղեցիներ և քարոզությամբ [նոր] կրոնը ներմուծեց, մեռոն տվեց [հայերին][2]։

[2.] ՀՌՈՄԻ ԿՈՆՍՏԱՆԴԻՆ (ԿՈՍՏԱՆՏԻԼԵ) ԹԱԳԱՎՈՐԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԱԼՈՒ ՈՒ ՆՐԱ (ՆՐԱՆՑ) ԳՈՐԾԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

Տրդատի (Տրդադի) թագավորության տասնվյոթ տարին լրանալուն պես լուր (ամբավի) հասավ, վոր Հռոմի Կոնստանդին (Կոստանտիլե) թագավորը քրիստոնյացավ։ Այս լուրը շատ դուր յեկավ Տրդատին (Տրդադին) ու Գրիգոր Աստվածաբանին (sic)**։ Ցեվ Յերեվանի յերկրից (sic) վաթսուն հազար մարդ յերեք տարվա պաշարով ու ռոճիկով, ձիով, զենքով ու շորով ապահովված՝ իրենց հետն տարան Տրդատ (Տրդադ) թագավորն ու Գրիգորը մեծ ընծաներով հանդերձ՝ բազում գանձերով, ձիր ու պարգևներով (փեշքաշով), և գնացին Հռոմ (Ոհռոմ?) Կոնստանդին (Կոստանտիլե) թագավորի տեսության։ Հենց վոր վերջինիս զեկուցին, վոր հայոց (սոմեխների) թագավորը ձեր տեսության է (են?) յեկել վաթսուն հազար մարդով և Գրիգոր Աստվածաբանն (sic)*** ել առաջնորդում է նրանց, հրաման յեղավ Կոնստանդին (Կոստանտիլե) թագավորից և Պետրոս (Պետրե) պապից՝ իրենք իրենց զորքով ընդառաջ գնան նրանց։ Յերբ [յերկոքյան թագավորներն ու հայրապետներն] իրար տեսան, հույժ հավանեցին (սիրեցին) Տրդատի (Տրդադի) ու Գրիգորի հեղությունը և սրանց քրիստոնյանալով ուրախ էյին, քանի վոր վաթսուն հազար մարդով յերեք տարի ժամանակով այսպես ոքնել էյին մի տեսության համար. և ինչ աշխարհս հիմնավորվել է, այսպիսի գործ ուրիշ վոչոք չի կատարել, վոր Հայքից (Սոմխիթից) վաթսուն հազար մարդով Հռոմ գան քրիստոնեությունն ուժեղացնելու նպատակով։ Ցեվ

* Բնագրում՝ ամբավի, հմմ. սույն հատորի էջ 89, ծանոթ.։
** Ուզում է ասել՝ Լուսավորչին։
*** Տես նախորդ ծանոթ.։

խնամիյաբար և յեղբայրաբար յերդվեցին և բազում թանկարժեք պարգևներ նրանց (հայերին) ել մատուցին։ Վաթսուն հազար մարդկանց վեց ամիս հյուրասիրեցին։ Ինչ վոր [հայերն] ուզում էյին, [յերբեք] մերժում չէյին ստանում. [ամեն ինչ] տալիս էյին նրանց (հայերին) անհաշիվ։ Բազում գանձեր մատուցին Տրդատ [Տրդադ] թագավորին, և նմանապես սուրբ Գրիգորին մատուցին պատրիարքական զգեստն և գլխին դրին ականակուռ թագը, և ականակուռ խաչն ու գավազանն ել տվին ձեռին։ Ցեվ Կոստանդնուպոլսից (Կոստանտիլ-պավլեյից) հայկույս [բոլոր կողմերում] պապը նրան իրեն փոխանորդ-պատրիարք ձեռնադրեց և շնորհեց նրան իրավունք ապաշխարանքի ու նզովքի, այնպես վոր ում թողություն տա, կապաշխարվի, և ումն [ել] ճշմարիտ դատաստանով նզովե, անիծյալ կլինի։ Այսպես հարստացյալ՝ ճանապարհ գցեցին նրանց։ Խաղաղ և ուրախ վերադարձան իրենց պետությունն, և ուրախություն ընկավ [նրանց] յերկրում։ Բազմեցին իրենց գահի վրա [և] սկսեցին ճշմարիտ կերպով [կառավարել], յերկիրը [վերա]շինեցին. և հենց վոր յերկիրը խաղաղվեց, Տրդատը (Տրդադը) զորքն ու թագավորական տունը կարգավորեց. ապա ցանկացավ իր հոր արյան վրեժն հանել Արտաշրի (Արտաշելի) փոխարեն Շապուհ (Շափր?) թագավորից[3]։

[3.] ԱՅՍՏԵՂ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱԴ) ԹԱԳԱՎՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆ [ԻՐ] ՀՈՐ ԱՐՅԱՆ ՎՐԵԺՆ ՀԱՆԵԼՈՒ* ԱՐՏԱՇՐԻ (ԱՐԴԱՇԵՐԻ) ՎՈՐԴԻ ՇԱՊՈՒՀԻ (ՇԱՓՈՒՐԻ) ՎՐԱ

Այս ժամանակ Արտաշիրը (Արդաշերը) վախճանված եր։ Նրա վորդի Շապուհին (Շահփուրին) թագավոր կացուցին։ Տրդատը (Տրդադը) մեծ զորք ժողովեց, Շապուհի (Շահփուրի) դեմ յելավ և ավերեց նրա յերկիրն՝ ամայի դարձնելով քաղաքներն ու գյուղերը։ Այս լուրը կուսակալները շտապով ծանուցին թագավորին, [այն ե]՝ վոր Տրդատը (Տրդադը) մեծ զորքով հարձակվել և ու ավերել յերկիրը։ [Շապուհը] շտապեց, ամեն տեղից զորք ժողովեց և գնաց ընդդեմ [Տրդատի]։ Ցեվ հանեցին զորք յերկու կողմից և կազմեցին ռազմեր, նշանակելով աջակողմյան ու ձախակողմյան և առաջապահ ու վերջապահ [գնդեր]։ Ցեվ սկսվեց պայքար... Շապուհը (Շահփուրը) [ստիպված յեղավ] փախչել, իսկ

* Բնագրում՝ վորոնելու։

Տրդատին (Տրդադին) իրավամբ տրվեց [իր] հոր արյան [վրեժն] հանելն [ու] հաղթելը։ Ցեվ փախավ Շապուհն (Շահփուրն) և նրա զորքը. և հայոց (սոմեխների) զորքը հետամուտ յեղավ՝ ամենուրեք գրավելով բերդեր ու քաղաքներ։ Ցեվ Տրդատը (Տրդադը) հետամուտ յեղավ մինչ Հնդկաստան նահանջող Շապուհին (Շափուրին)։ Յետևից ընկան, և Իրանի յերկրում ել վոչ մի տեղ չըմնաց, վոր նա չգրավեր. և ամեն տեղ իր մարդկանց նշանակեց թագավոր ու իշխան, և ինքն իր աթոռանիստն (թախտն) վերադարձավ։ Ապա նրա (Տրդատի) մոտ դեսպաններ յեկան Շապուհից (Շափուրից) աղաչանքով, բայց նա ունկնդիր չեղավ, և դեսպանները հուսահատ վերադարձան։ Շապուհը (Շափուրը) հույսը կըտրեց և այլ ճանապարհով, Կոնստանդին (Կոստանտիլ) արքային դեսպան ուղարկեց աղաչելու և շատ ձիր (նվերներ) ուղարկեց և նամակ գրեց, վոր մինչևորդ հանդիսանա [նրա ու] Տրդատի (Տըրդադի) միջև և հաշտեցնի նրանց, վորպեսզի [Տրդատը] սրանից ել ավել չավերի նրա (Շապուհի) յերկիրը։ Կոնստանդին (Կոստանտիլե?) արքան այսպես գրեց Շապուհին (Շահփուրին). «Յեթե դուք հաշտվել եք ուզում, պահ ավ՛ք ինձ Դավիթ մարգարեյի թագը, վորը ձեր գանձարանումն է պահվում, վորպեսզի նրա տեսակ մի թագ շինել տամ ինձ համար, և ձեր թագն ելի ձեզ կվերադարձնեմ։ Յես իմ թագը նրա հորինվածքով պիտի շինեմ։ Այս՝ Դավիթ թագավորի թագն՝ առաջներում, յերբ Նաբուքոդոնոսոր (Նովոքաինե?) Բաբելոնի* արքան Յերուսաղեմն ավերեց, այնտեղ գտավ և նրանից հետո այն ժառանգությամբ Իրանի արքաները ունեյին»։ Յերբ կայսեր պատասխանն ու թագ խնդրելը Շապուհին (Շափուրին) զեկուցին, վերջինիս այս դուր յեկավ, և նա վստահելի մարդու ձեռքով ուղարկեց այն թագը կայսեր։ Կայսրը՝ տեսնելով թագը՝ չափազանց հավանեց այն. և հրավիրեց լավ վարպետներ, վորոնց ձեռը գցեց թագը և հրամայեց նրանց մի այսպիսի թագ շինել, այնպես վոր վոչոք չկարողանա ասել վոնն է նոր և վոնը՝ հին։ Վարպետները սկսեցին շինել և այնպես ընորհքով շինեցին, վոր հին և նոր թագերը բերողի առաջն դրին և ասացին. «Քո բերածն ելի յետ տար»։ Սա նորը վերցրեց և հինը թողեց։ Ցեվ Կոնստանդինն (Կոստանտիլեն) ել այս եր ուզում։ Ապա [Կոնստանդինը] դեսպան ուղարկեց և Տրդատ (Տրդադ) արքային ու Շապուհին (Շահփուրին) հաշտեցրեց։

* Բնագրում՝ Բաղդադի։ XVII—XVIII դ. դ. վրաց աղբյուրներում Բաբելոնի փոխարեն սովորաբար Բաղդադ է գործածվում։

[4.] ԱՅՍՏԵՂ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱԴ) ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀՆ ՑԵՎ ՆՐԱ ՎՈՐԴՈՒ՝ ԽՈՍՐՈՎԻ՝ ԹԱԳԱՎՈՐԱՆԱԼԸ

Տրդատը (Տրդադը) վաթսուն վեց տարեկան վախճանվեց։ Նրա վորդին Հռոմի (Հոռոմի) արքայի աջակցությամբ դարձավ թագավոր. [ինը տարի թագավորեց։ Շաբդիզը (sic) սրա ձին եր և Շիրինն ել սրա աղջիկն եր. զավակները փոքր ճնացին. և Խոսրովը վախճանվեց և թագավորում եր նրա քույր Մահրանուշն (Մհրանուշն) (sic)։ Շաբդիզի և Մահրանուշի ու Շիրինի պատմությունն ու գործերը, [նաև] Իրանի Խոսրով թագավորի Շիրինի վրա սիրահարվելը տես ներքև[4]։ Իրանի թագավորների [ցանկ]ում դասված է (գրվում է). Մահրանուշն (Մահ բանուշն) Տրդատի (Տրդադի) աղջիկն է և Խոսրով յերկրորդ թագավորի քույրը։ Ցեվ Խոսրովից հետո նրա վորդի Տիրանը (Տերանը) թագավորեց։ Սա ևս յերկու վորդի թողեց. մեկի անունն եր Արշավիր (Արշվիեր) և մյուսինը Վաղարշակ (Վաղար շափաթ)։ Արշավիրն (Արշվիերն) [իր] հորից հետո թագավորեց. իշխեց քսան տարի։ Սրանից հետո սրա վորդի Պապին Ներսես հայրապետը* թագավորեցրեց, [և Պապը թագավոր դարձավ] նրա (Ներսեսի) վկայությամբ։ [Իսկ Պապը] սպանեց մեծն Ներսեսին՝ սուրբ Գրիգորի ազգականին։ Սա (Պապը) վատաբարո յեր։ [Ներսեսը] սրան արգելում եր [վատ բաներ անել], և նա չեր հրաժարվում այդ անելուց։ Ցեվ լավ բաներ վորեցնելու համար [Պապը] Ներսես պատրիարքին թունդով մահացրեց։ Հենց վոր Հռոմի մեծ արքա Թեոդոսը (Թեվաթորսը) լսեց այս լուրը՝ պատրիարքին թունդով մահացումը, ձերբակալել տվեց հայոց (սոմեխների) արքային և նրան ել սպանել տվեց և արքայությունն Արշակունյաց շառավիղ Վարազդատին (Վարազային) տվեց։ Սա (այսուհետ) Վարազդատը (Վարազան) յոթը տարի իշխեց հայոց (սոմեխների) յերկրում և զնաց կայսեր մոտ ու Իրանի արքա Շապուհի (Շափուրի) հետ սկսեց բանակցել՝ այսպես ասելով. «Յեթե ձեր քրոջն ինձ կտաք [ի կնություն], յես ել [ձերը կլինեմ] և իմ յերկիրն ել ձերը կլինի։ Վոմանք ծառանեբից (հպատակներից)՝ յերկմիտ լինելով՝ այս լուրը ծանուցին կայսեր։ Վերջինս զորք կանչեց, և խաբուսիկ կերպով տարան Վա-

* Բնագրում՝ «հաերապետ» բառն է, վորը հայերենի վրացերեն տրանսկրիպցիան է Տփղիսի հայերի արտասանությամբ։

բազդատին (Վարազային) և սպանեցին։ Սրա սերունդն էլին յերեք յեղբայրներ. սրանց իշխեցրեց. մեկի անունն եր Պապ, մյուսինը Արշակ, յերրորդինը Վաղարշակ (Վաղարշաբաթ)։ Այս պահին Հռոմի արքա Թեոդոսը (Թեվաթորսը) վախճանվեց։ [Յեվ] մինչ այս հայոց (սոմեխների) արքաներն ու կաթողիկոսները Տրդատից (Տըրդադից) և Գրիգորից հետո Հռոմի արքային ու պապին հնազանդ էլին։ [Իսկ] նրանից հետո, ինչ Թեոդոս (Թեվաթորս) կայսրը վախճանվեց, Իրանի արքայի հրամանով իշխեցին [Արշակունիք]։ Թեոդոսից (Թեվաթորսից) հետո հայոց (սոմեխների) յերկրում իշխեց Շապուհը (Շափուրը)՝ Արշակունյաց շառավիղը։

[5.] ՅԵՐՐՈՐԴ ԽՈՍՐՈՎԻՆ ԻՇԽԵՑՐԻՆ

[Այս Շապուհը] կարճ ժամանակ տիրեց և սա ել սխալմունք գործեց, և սրան ձերբակալել տվեցին ու գերի տարան։ Յերբ Շապուհին (Շամփուրին) իշխեցրին, այն ժամանակ Իրանի արքա յերրորդ Շապուհը (Շամփուրը) վախճանվեց, և նրա յեղբայր Զաքիրին (sic) թագավորեցրին. և սա ել իր վորդի Շապուհին (Շահփուրին) թագավորեցրեց հայոց (սոմեխների) յերկրում. վեց տարի կացավ Զաքիրն՝ Իրանի արքան, ապա մեռավ։ Նրա վորդին՝ հայոց (սոմեխների) արքան՝ հենց վոր լսեց իր հոր մահվան մասին, թողեց հայոց (սոմեխների) թագավորությունն և գնաց՝ [իր] հոր գահի (թախտի) վրա բազմելու (թագավորելու). և հայոց (սոմեխների) տերությունն յերեք տարի անտեր եր։ Յեվ Սահ[ա]կ պատրիարքն Իրանի արքայից խնդրեց հայերի (սոմեխների) համար թագավոր [նշանակել]։ Շապուհը (Շափուրն) իր վորդի Վահրամին (Վարամին) հայոց (սոմեխների) տեր նշանակեց (տվեց), սակայն հայոց (սոմեխների) իշխանները՝ չընտելանալով նրա հետ՝ չուզեցին նրան ու վռնդեցին։ Կրկին մնաց հայոց (սոմեխների) տերությունն անտեր՝ յերեսուն տարի։ Արշակունյաց հարստությունը (տոհմը) բնաջինջ յեղավ, [նաև] նրանց թագավորությունը։ Մինչ այս հայերի (սոմեխների) և վրացիների (քարթվելների) վրա թագավորում էլին Արշակունյաց շառավիղները, և այդ ժամանակ հայոց (սոմեխների) քրոնիկոնն եր համարվում (գրվում) յերեք հարյուր յերեսուն և վեցն[5] Արշակունիներից հետո։ Արշակունիներից հետո [ամբողջ յերկիրն] այս ծովից մինչ այն ծովը Բագրատունիները գրավեցին։ Են գլխից Աշոտը (Աշոթանը) տիրեց, հինգ տարի լավ տիրեց և վախճանվեց։ Ապա տիրեց Աշոտի (Աշոթանի) վորդի Սմբատը (Սունբատը). սա քսան և չորս տարի տիրեց, և սա ել վախճանվեց։ Յեվ սրա յեղբորորդի Աշոտը (Աշոթան) տիրեց. սա յոթը տարի տիրեց, և սա ել վախճանվեց։ Ապա տիրեց Աշոտի (Աշոթանի) յեղբայր Աբասը (Աբազը), և սա քսան և չորս տարի տիրեց։ Յեվ սրա տերությանն [որոք] շենացավ հայոց (սոմեխների) տերությունը։ Յեվ սա շինեց Սանահնի ամենասրբուհու տաճարն և այլ շատ բարություն և վողորմություն արավ։ Յեվ սրանից հետո սրա վորդի Աշոտը (Աշոթանը) տիրեց, և սա ել բարվոք տիրեց քսան և հինգ տարի, ապա վախճանվեց։ Յեվ սրա վորդի Սմբատը (Սունբատը) տիրեց, և տիրեց տասն և յերեք տարի ու վախճանվեց։ Յեվ սրանից հետո սրա քեռորդի Մուշեղը (Մուշեղը) տիրեց, տասը տարի տիրեց և մեռավ։ Սրա վորդի Աբասը (Աբազը) տիրեց, տասնումեկ տարի տիրեց, և վախճանվեց։ [Յեվ տիրեց]... և ապա վախճանվեց։ Յեվ տիրեց Սմբատի յեղբայր Գագիկը (Գոգին). սա տիրեց տասնվեց[6] տարի և վախճանվեց։ Յեվ սրա վորդի Սմբատը (Սունբատը) տիրեց հայոց (սոմեխների) քրոնիկոնի չորս հարյուր վաթսուն և չորսին[6]։ Մինչ այս վերոհիշյալ տերերը հայեր (սոմեխներ) էլին։ Ամենից առաջ Քարթլիի տեր (sic) Իվանեն վրացի դարձավ, և տիրեց յոթը տարի, և վախճանվեց. և վրացիք իրենց կրոնի ծիսակատարությամբ հանձնեցին նրան հողին։ Յեվ սրա վորդի Գեորգին (Գիորգին) տեր դարձրին, և սա լավ կառավարեց յերկիրը Վրաստանի և իրենն ել։ Սա իր կենդանության որոք իր վորդի Դավթին տվեց [յերկիրն] և սա շինեց շատ տաճարներ և վանքեր, և կոչվեց Դավիթ Շինող. քսան և հինգ տարի թագավորեց, և վախճանվեց և իրեն խակ [ձեռա]կերտ Խախուլի [աստվածածնա] Գելաթում թաղվեց։ Յեվ սրա վորդի Գեորգը (Գիորգին) թագավորեց, և ուր ել սրա հայրը շենք եր սկսել կառուցել և անավարտ թողել՝ տաճարներ թե վանքեր, սա վերջացրեց և նշանակեց յերեցներ-վարդապետներ... և վախճանվեց։ Յեվ սրա վորդի Դեմետրը (Դեմետրեն) տիրեց, և սա շինեց Մետեխի տաճարը... Յեվ սրա վորդի Դավիթը տիրեց՝ հայոց (սոմեխների) քրոնիկոնի յոթը հարյուր քառասուն չորսին[7]։ Մինչ այս ժամանակ հայերից (սոմեխներից) հետո տիրում էլին վրացիները (sic). յերբեմն ուժեղ թշնամուց շատ անգամ (sic) անտեր են մնացել և ցիր ու ցան յեղել՝ կազմելով յոթին [իշխանություն] (?)։ Վերոհիշյալ թագավորներն յերեք հարյուր քսան տարի յեն տիրել։ Մինչ հայոց (սոմեխների) քրոնիկոնի յոթը հարյուր քառասուն յերկու թվա-

կանը[8] վերոհիշյալ տերերն են տիրել։ Սակայն սրանցից հետո բաժանման առաջ և հետո էլ շատ Բագրատունիներն են տիրել, վորոնց բոլորի գործերն ու անուններն և ծագումն (հայր և վորդիությունն) և նրանց ժամանակն և նրանց հայրերի անուններըը մասամբ չեմ գտել և մասամբ էլ, ինչ գտել եմ, ստորև կգրվի աստուծով[9]։

[6.] ՓՐԱՆԳՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՍՏՐ ՀՌԻՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՈՒՐԲ ՆՈՒՆԵՅԻ (ՆԻՆՈՅԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

*Ավելի վերևն և [այս] պատմությունը**, բայց այստեղ էլ վոչինչ չի խանգարի [գրել], այն պատճառով, վոր նախ մեծն արքա-կայսեր դստեր Վաղերիա (Վեղեթո) թագուհուն ենք հիշում, նրա բարիքներն ու աստված[ասիր]ությունը ... [վորը] Պետրոս առաքյալի քարոզչությամբ քրիստոնեացավ, յեկավ Յերուսաղեմ աղոթելու.... Սուրբ Հակոբի յեղբորից ստացած ուներ կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանը, [վորը] հասցրեց Հռոմ (Հռոմ), և այնտեղ մնաց, ուր նրա վորդիք ու սերունդը հասան մինչ սուրբ Հռիփսիմեն (Հռոմ-սիմեն)։ Այս Վաղերիա (Վեղեթո) թագուհին քրիստոնյաներից եր ծնված։ Սա թողեց հարստությունն և յերկրիս բարիքներն, ու սկեմ հագավ և խոովեց անցողական [կյանքիս բարիքներն, ու սկեմ հագավ և խոովեց անցողական կյանքից], և նրա վոգին դիմեց կանանց ու կուսանց, նամանավանդ ամենասրբուհի Մարիամին ու նրա յեկեղեցուն։ Յեվ այնտեղ նրան հանդիպեց, իբրև ծնող մայր, Գայանեն՝ աստվածային գործոց ուսուցանող կինը։... Այս ժամանակ Հռոմում (Հռոմոմում) նստած եր Դիոկղետիանոս (Դեվա-կլիտիանե) կայսրը, [վորը] կռապաշտ եր։ Սա ամուսնանալ (կին ուզել) ցանկացավ։ Կանչեց նկարիչներին, վորոնց իր թագավորության [զանազան կողմերն] ուղարկեց. և ամեն տեղ այսպիսի հրաման գրեցին. «Ով վոր անուղարկեց. և ամեն տեղ այսպիսի հրաման գրեցին. «Ով վոր անբիծ աղջիկ ունենա, ցույց տվեք, վորպեսզի այս նկարիչներն այսպես նրանց տեսքն ու ամբողջ կազմվածքը պատկերագրեն [և] վորպեսզի իբրև կենդանի յերևա, վորին հարմանցու յենք ուղում»։ Ուր էլ գնացին, թագավորի հրամանը կատարեցին, և ամբողջ յերկիրն ու քաղաքները շրջեցին, յեկեղեցում, տանը և դաշտի

* Բնագրում՝ ամբավի։ Հմմ. եվ 89, ծանոթ.*։

** Նույնը։

վրանումը նստածներին դիտեցին. և ով վոր աղջիկ ուներ, բոլորին կենդանի պատկերագրեցին և վորոնք՝ անբիծներն՝ անցողական կյանքն ընդունեցին և աշխարհից հեռացան՝ աղերսելու ամենասրբուհու տաճարին, սրանց յեվս պատկերագրեցին. և վոր տաճարումն էլ սուրբ Հռիփսիմեն (Հռոմ-սիմեն) մտած եր, նույն տաճարի դուռն կոտրեցին։ Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) ամբողջ կազմվածքով և գեղեցկությամբ իբրև կենդանի պատկերագրեցին և ուղարկեցին թագավորին։ Թագավորը հենց վոր տեսավ Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին), վորը աշխույժ և գեղեցիկ եր, չափազանց դուր յեկավ։ Հրաման արձակվեց թագուհու կայարանը բերել Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) և թագավորի հարսանիքն անել։ Այս լուրը ծանուցին Հռիփսիմեյին, և նա կանչեց՝ իբր իր ծնողին՝ իր դայակ Գայանեյին և նրա դաստիարակներին (վարդապետներին) ու կից գանվողներին[10]։

[7.] ԱՅՍՏԵՂ ՀՌԻՓՍԻՄԵՅԻՆ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻՆ) ԽՐԱՏ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԱԼԸ

[Հռիփսիմեն] դայակով ու դաստիարակով և ուղեկիցներով հանդերձ այնտեղից փախավ (փախան) և հասավ (հասան) Յերուսաղեմ։ Յեվ կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանը նա կախած ուներ վզից և կանգ առավ այնտեղ, ուր [Քրիստոսի] սուրբ գերեզմանն եր։ Սրանք ևս գնացին համբուրելու այն և աղոթելու. շատ զոհեր ընծայեցին և աղաչում եյին իրենց վոգիների փրկության մասին, վորպեսզի սատանայի վորոգայթից պահպանվեն և ծածկած մնան։ Գնացին Գեթսեմանի (Գեսամանիա), դայակ Գայանեն սուրբ Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) ձեռից բռնեց և յերկրպագեց, և հողի վրա ընկավ, և զոհաբերեց, և սկսեց աղոթել-աղերսել կանանց մեջ գոված ամենասրբուհի Մարիամին, [և] արտասվալից աչքերով ու ծնկաչոք աղաչեց նրան (Մարիամին). «Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) պահիր քեզ ծառա, և վոչոքի չդիջես՝ վոչ հզոր արքաներին և վոչ էլ գայթակղիչ սատանային. այս՝ մեծ արքայի դուստրն՝ անբծությամբ քո հարսն ու ծառան դարձրու»։ Նույն գիշերն ամենասրբուհի Մարիամն յերազում յերևաց և այսպես հրամայեց. «Այստեղից գնացեք Միջագետք յերկիրն՝ Ասորիք (Ասորիստան), այնտեղ քաղաք Ուռհայում (Հռռապարում?) կտավի վրա պատկերագրած և Հիսուս Քրոստոսի յերեսն, [այն ժամանակ], յերբ հայոց (սոմեխների) արքա Արգա-

բը (Աքբարը) սուրկուԹյան եր կարոտ և այն կտավի վրա յերեսը նկարել տվեց»։ Հենց վոր այս յերազը տեսան, գնացին Ասորիք (Ասորիստան), տեսան կտավի վրա անձեռագործ պատկերը, հայտնապես յերկրպագեցին, շատ զոհաբերուԹյուն արին և այնտեղ էլ ամենասըբուհուն տեսան յերազում։ [Ամենասըբուհին] հրամայեց. «Այստեղից գնացեք հայոց (սոմեխների) պետուԹյունն, ուր սուրբ Թադեոսն (Թաթեոսն)՝ Հիսուս Քրիստոսի աշակերտն՝ և Թաղած»։ Այնտեղից (Ուռհայից) յեկան և հասան Վարագա (Վաբաքի) բարձր սարը. դեպի արևելք այն սուրբ սարից տեսան (տեսավ) կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանը[11]. [ամենասըբուհին] դարձյալ յերևաց յերազում և հրամայեց. «Ձես ցանկացա կանգ առնել այստեղ. դուք գնացեք. աստված ձեզ կառաջնորդե»։ Սրանցից ծերերն ու տկարներն այնտեղ կենարար խաչի (ճշմարիտ փայտի) նշանին ապավինեցին։ [Իսկ] Հռիփսիմեն (Հռոմ-սիմեն) ու Գայանեն յերեսուն և վեց քահանաներով ու վարդապետներով և անբիծներով ու ուղեկիցներով հանդերձ հասան Վաղարշապատ (Վաղարշաբաթ) քաղաքն, ուր այժմ Եջմիածնի (Իէչմիածինի) տաճարն է կանգուն Յերևանյան յերկրում. այնտեղ մի այգու հնձանին [կից] տանն իջան. սրանցից վոմանք մի քիչ ուշունք ու մանրուք ունեյին հետն, հաց առնելու գնացին, առան և բերին ու կերան, քաղցից ազատվեցին։ Այսպես Թե այնպես, առաջվա պատմուԹյանը հասանք, նույն տեղը հասանք։ Դիոկղետիանոս (Դեվակլիտե) արքան իր ամուսնուԹյան գործը կարգադրեց, և Թագավորներին ու իշխաններին մեծապես զարդարելով ուղարկեց, վորպեսզի Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) հարսնացու բերեն։ Յերբ գնացին այնտեղ, այլևս չհանդիպեցին նրան։ Տեղացիները զեկուցին. «Վաղուց և, ինչ այստեղից գնացին»։ Այս լուրը ծանուցին Դիոկղետիանոս (Դեվակլիտիանե) արքային, [վորը] չափազանց ցավեց և բարկացավ, և ամեն տեղ գիր ու մարդիկ Թըռցրեց նրան վորոնելու, և այլ Թագավորներին ու արքաներին յեվս նամակներ գրեցին այսպես. «Այս կանայք մեզանից գնացին. ուսմ գավառն (Թեմն) էլ մնանն, մեզ մոտ ուղարկեցեք»։ Յեվ մի նամակ [էլ] Տրդատ (Տրդադ) արքային գրեցին։ Սրանք (հայերն) էս կազմակերպեցին վորոնում ու հարցուփորձ։ Յեվ քաղաք Վաղարշապատի (Վաղարշաբաթի) ծայրի մի այգու հնձանին [կից] տանն եյին իջել։ Վորոնողները տեսան Հռիփսիմեյի (Հռոմ-սիմեյի) գեղեցկուԹյունն ու սքանչելուԹյունը, զարմացան և նրա մեծ գովասանքը Տրդատ (Տրդադ) արքային զեկուցին։ [Տրդատն] ուրախացավ և սա յեվս նրան իրեն հարսնացու [ունենալ] ցանկացավ։ Այստեղ Տրդատ (Տրդադ) արքան հարսանիքի պատրաստվեց [և] հրամայեց իր նախարարներին ու գործակալներին (վեզիր-վեքիլներին) ու արքունականներին գնալ Հռիփսիմեյի (Հռոմ-սիմեյի) մոտ։*

* Բնագրում՝ ամբավի։ Հմմ. եջ 89, ծանոթ.*։

[8.] ԱՅՍՏԵՂ ՓՐԱՆԳՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՍՏՐ՝ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵՅԻ (ՀՈՌՈՄ-ՍԻՄԵՅԻ) ՅԵՎ ՏՐԴԱՏ (ՏՐԴԱԴ) ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

Յերբ Հռիփսիմեյի (Հռոմ-սիմեյի) չքնաղուԹյունն ու գեղեցկուԹյունը Տրդատին (Տրդադին) զեկուցին, սա հրամայեց, վոր Թագավորներն ու իշխանները գան և հարսնացուի զարդարանքը մատուցեն և մեծամեծների մայրերն ու կանայք առջևից ընթանան, մեծ պատվով հարսնացուին տունը բերեն։ Սրանք այսպես եյին կարծում, վոր որբորդին դուր կգա, ավետաբեր ուղարկեցին [հայտնելու], վոր՝ «Թագավորն իր յերկրի ԹագուհուԹյունը ձեզ մատուցեց, այդ հնձանից դուրս արի և Թագավորի տունը գնա՝ գահի (տախտի) վրա նստիր ու Թագ դիր գլխիդ»։ Հռիփսիմեն (Հռոմ-սիմեն)՝ լսելով այս խոսքերը՝ լաց յեղավ և սկսեց աստծուն աղաչել. «Դու ստեղծեցիր ինձ. ուրիշներին մի տար ինձ. այսքան իմ աշխատանքն ու հոգսերն ապարդյուն մի համարիր»։ Այս աղերսանքի և աղոթքի մեջն եր [Հռիփսիմեն], յերբ Թագավորից ուղարկած բազում այլ և այլ Թանկարժեք գործվածքներ, վոսկի, արծաթ, ակներ և մարգարիտներ մատուցին մի մասն որբորդին և մի մասն՝ ուղեկիցներին։ Առավել լաց յեղավ Հռիփսիմեն (Հռոմ-սիմեն), սկսեց գլխին վայ տալ և դիմեց աստծուն լացուկոծով ու աղերսանքով։ Ձայն լսեց յերկնքից. «Մի վախիր, յես քոնն եմ և դու իմն ես, զորացիր»։ Յերկնքի այս ձայնը Թագավորն էլ լսեց և զորքն էլ և բոլորն յերեսի վրա վայր ընկան և վոմանք փախան, գնացին ու Թագավորին զեկուցին. «Վոչ ձեր ուղարկածը հագավ, և վոչ էլ յեկավ ձեզ մոտ»։ Թագավորը բարկացավ և հրամայեց. «Գնացեք Թրևելով բերեք, քանի վոր հոժարակամ չի գալիս»։ Գնացին և ուժով բերին։ Յեվ նրա ուղեկիցները լացու-

* Բնագրում՝ ամբավի։ Հմմ. եջ 89, ծանոթ.*։

կոծ բարձրացրին ու սկսեցին գլխին վայ տալ, հողի վրա ընկան և աղաչեցին աստծուն ու ողնություն խնդրեցին Հիսուս Քրիստոսից. «Ազատիր Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին), թագավորությունն և բարիքները չցանկացողին, վորը քեզ ծառայելու յեկավ այս ոտար և անհայտ՝ աղքատ յերկիրը. հզոր և անորեն արքայից արքային: Տրդատն (Տրդաղն) որիորդի մոտ մտավ սենյակը: [Իսկ] ովքեր ել մեջն եյին, դուրս վռնդվեցին: Յեվ հարսանյաց ձայները բարձրացրին, սկսվեց գոռում-գոչում և յերգեցողություն ու յերաժշտական գործիքների ձայնակցություն, ուրախություն և խաղ: Յեվ արքան գգվելու փաթաթվեց որիորդին, ուզում եր համբուրել: Որիորդն յետ քաշվեց: [Թագավորը] նրան բռնեց, դժվարացավ, ինն ժամ մարանչում եյին: Ողնականությամբ աստծո թագավորը հոգնեց: Իսկ որիորդը նրան անձնատուր չեղավ: Ամպիսի ուժեղ և անվեհեր մարդն, ինչպիսինն եր, վորպես ամենքը գիտեն, Տրդատը (Տրդաղը), վորից վորքան քաջարի և անվեհեր հզոր մարդիկ են ծնվել, այժմ Հռիփսիմեյից (Հռոմ-սիմեյից) նեղվեց աստծո ուժով: Արքան դուրս յելավ և կանչեց որիորդի դայակ Գայանեյին, վորպեսզի սա հանգստացնե որիորդին, վոր ամուսնանա արքայի հետ: Գայանեն գնաց և արքայական ննջարանի դրանը նստեց [և] ֆրանկերեն լեզվով սկսեց խոսել որիորդի հետ: Տրդատն (Տրդաղն) այնպես եր կարծում, իբր թե հանգստացնում է իր հետ ամուսնացնելու համար: Իսկ Գայանեն ասում եր նրան (Հռիփսիմեյին). «Յերանի՛ քեզ, վորդյակ Հռիփսիմե (Հռոմ-սիմե), վոր Հիսուսի վորդի յես հիշվում և ամենասրբուհի Մարիամին հյուր ես լինում: Յերանի՛ քեզ, վորդյակ, վոր սրբությամբ սընվեցիր: Յերանի՛ քեզ, վորդյակ, վոր անցողական արքայությունը գիջեցիր և մեծ համբերությամբ թողիր գահ (տախտ) [և] պսակը, հեռացար մերձավորներից ու ազգականներից և չցանկացար այս աշխարհի բարիքները՝ Հիսուս Քրիստոսի համար: Զորացի՛ր, դրախտում Հիսուսից կորնվես»: Այսպես ել [աստված նրա] լայն սիրտըն ամրացրեց: Թագավորը մի մարդ ուներ, վորը ֆրանկերեն լեզուն գիտեր. ինչ վոր Գայանեն Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) ասում եր, բոլորը լսում եր [և] ամեն ինչ թագավորին զեկուցեց. «Դուք այս կնոջը (Գայանեյին) բերիք, վորպեսզի որիորդին խաղաղացնե. սա ավելի յեվս ամրացրեց նրան»: Թագավորը բարկացավ և դուրս թրևել ու առաձները փշրել տվեց Գայանեյին, վորին ուրիշ տեղ տարան. իսկ թագավորը նորից որիորդի մոտ մտավ և ձեռները ձգեց գգվելու: Բայց որիորդն ինչպես առաջ,

այժմ ել ե՛լ ավելի ընդդիմադրում եր. յերեկվա ինն ժամն անցնելուց հետո մինչև գիշերվա ժամի յերեքը [նրանք] մարանչում եյին, թագավորի շորերն ամբողջ պատառոտեց, մերկացրեց: Ապա որիորդն անցավ դռնով և գնաց այն այգին, ուր կանգ եր առել, բարձր ձայնով իր ուղեկիցներին կանչեց. «Ուրախացե՛ք, սուրբ մայրեր, աստծո ուժով հաղթահարեցինք կարող և հզոր թագավորին»: Նաև շատ ուրիշ սրտառուչ խոսքեր ասաց, և հեռանալով նրանցից՝ մի բարձր ժայռի վրա բարձրացավ և լացուկոծով ու ծնկաչոք սկսեց աստծուն աղաչել: Ինչ վոր նա աստծուն գանգատվեց և խոստովանեց, բոլորի գրի առնելն անհնարին է: Նա աղաչում եր իր հոգու համար և տակավին ծնկաչոք եր, յերբ թագավորի դահիճներն յեկան և անվայել վերաբերվեցին դեպի Հռիփսիմեն (Հռոմ-սիմեն), շատ ծեծեցին և քնքուշ ձեռներն ու վոտները մազե պարանով կապեցին և նախ և առաջ լեզուն կտրեցին և մարմնից սքեմը պատառոտեցին և յերեսով հողին զարկեցին, չորս տեղ ցից դրին և նրաց վրա ձեռներն ու վոտները կապեցին, շուրջը կրակ վառեցին՝ նրան, ով իր որում վարդի տերևին անդամ չի դիպել, և [մարմնի] արտաքո մասերն այրեցին: Սրանից ավել ել վոչինչ չեր ասում. «Մարիամի վորդի՛, ողնի՛ր այս ծանր տանջանքներում կարեկցությամբ առ իմ յերիտասարդությունը: Հոգիս պարգևի՛ր ամենասբրուհուն՝ ձեր մորը: [Ահեղ] դատաստանի որը կատարվելիք տանջանքը հատուցի՛ր այստեղ»: Այսպիսի բաներ ասաց և վախճանվեց: Մինչ նա հոգին կավանդեր, փորը ճղեցին և աչքերը հանեցին: Հենց վոր հոգին իր տիրոջը հանձնեց, մարմինը պատառ-պատառ արին: Լացով և գլխին վայ տալով յեկան նրա ուղեկիցները: Ուզում եյին սուրբ և նահատակ Հռիփսիմեյի (Հռոմ-սիմեյի) մասունքը մի տեղ հավաքեյին և գերեզմանին հանձնեյին. յերեսուն յերկու սուրբ կանայք և անբիծ որիորդներ եյին նրանք: Յեվ սրանց ել զարկեցին: Յեվ մեծ ուրախությամբ նահատակվեցին: Սրանց [ևս] կոտորեցին և սրանց միսը շներին շպրտեցին: Յեվ շները վոռնոց սկսեցին ու չմոտեցան, և փախան ու այն քաղաքից հեռացան: Նահատակուհիներն իրենց սքեմով յերեսները հողին ընկած եյին: Մյուս որը գայակ սուրբ Գայանեյին իր յերկու ընկերներով դուրս հանեցին ձախ կողմն [և] ընկերների հետ միասին բազում տանջանքով սրանց ևս նահատակեցին: Սրանցից յերեք քահանա [և] մեկ կին՝ սուրբ Նունեն (Նինոն) վախճանի դիմեցին: Նունեն (Նինոն) գնաց Քարթլի, [ուր] և տարածեց քրիստոնեությունն և Միհրան (Միրյան) թա-

գավորի յերեք որվա ննջեցյալ վորդուն կենդանացրեց։ Նմանապես Նունեչից (Նինոյից) Գորգասալությամբ մկրտվեց Վախտանգը (sic)։ ... [Յեվ] այս[պիսի] հրաշագործությամբ քրիստոնեյացան Գիլանի ծովից սկսած մինչ Ափխազք (Ափխազեթ). չհավատացին [միմիայն] դիդոները, [վորոնք] տեղահան յեղան Արմազից (sic) և դեպի Յալբուղի բարձր սարը գնացին և ամուր տեղում բնակվեցին։ Յեվ յերբ Տրդատ (Տրդադ) թագավորը խոզ դարձավ՝ սուրբ Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) նահատակելու պատճառով, Գրիգոր Աստվածաբանն (sic)* Արաքսի (Արազի) ափին [Խոր]-Վիրապի վանքումն եր։ Իբրև գերի՝ նրան այնտեղից Տրդատի (Տրդադի) ոգնության վաղարշապատ (Վաղարշաբատ) քաղաքը բերին։ [Գրիգորը] ձայն տվեց թագավորին, [վորը] խոզ եր դարձած ու ասաց և հինգ որ մնում եր իբրև խոզ։ Զղջաց իր գործերը։ [Իսկ] Գրիգորը նրան որհնեց, [և] նա (Տրդատը) մարդ դարձավ՝ առաջվանից ավելի լավ, և քրիստոնեյացավ՝ [ինչպես] ինքն, [նույնպես] և նրա [ամբողջ] յերկիրն ու զորքը։ [Գրիգորը] վեր յելավ և զեկուցեց թագավորին. «Քանի վոր այսպիսի անարդարացի կերպով կոտորեցիր [այն]՝ ասածուն ծառայելու համար իշխանությունն ու յերկրի բարիքները ղիլող՝ անբիծ սրբերին ու նրանց ուղեկիցներին, պարտ է քեզ, վոր դու նահատակության ծիսակատարությամբ նրանց հանձնես գերեզմանին և վկայից տաճար կառուցես»։ Թագավորին [այս] դուր յեկավ և Հռիփսիմեյին (Հռոմ-սիմեյին) իր զայակով և ուղեկիցներով հանդերձ իրենց հին սքեմով [հրապարակ հանեցին] ու նրանց թաղման կարգն կատարեցին և նուշն հնձանում թաղեցին ու վրայից մենաստան շինեցին, [վորն] այժմ էլ կա. [և] յեպիսկոպոսներ և այլ աստիճանավորներ ու ծառաներ նշանակեցին այնտեղ, և շատ գյուղեր ընորհեցին։ Յեվ պարտ է քրիստոնյաներին, ով վոր կարողություն ունենա, նրա (Հռիփսիմեյի) նահատակության որը նրանց (Հռիփսիմյանց) գերեզմանի մոտ գնա աղոթելու, համբուրե այն և զոհաբերություն անի և վորմություն տա։ Սակայն [այն որվանից], ինչ մահմեդականները (մուսուրմանները) քրիստոնյաներից իշխանությունը խլեցին, պարգևած գյուղերը խլեցին։ Բայց և այնպես, սրանց գերեզմանի վրա քրիստոնյանները գալիս են աղոթելու, և զոհաբերություն են անում, և մոմի ու խնկի գին մուծում, այնտեղ ապրող վանականներին ու աշխարհականներին, սքեմավորներին և ծառաներին ապրուստ տալիս՝ ով ինչի տեր էլ է...։

* Ուզում է ասել՝ Լուսավորիչը։ Համ. վերև՝ եջ 92, ծան.**։

[9.] ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ (ԲԱԳՐԱՏՈՆՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*, ՎՈՐ ՀԱՅՈՑ (ՍՈՄԵԽՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ե ԳՐՎԱԾ. ՆՐԱՆՑ ԳԱԼԸ ՎՐԱՍՏԱՆ

... Յոթն յեղբայրներ Հրեյից սերնդից, վոր յեկան Փիլիստիմացվոց (Փիլիստան) յերկրից Ռաքիելի (Արաքիելի) հետ միասին, փոխեցին իրենց անունները. մեկն անվանեցավ Մուշեղ (Մուշիեղ), յերկրորդը՝ Բագրատ, վորը Բագրատունյաց (Բագրատունաց) [նախ]հայրն է, յերրորդը կոչվեց Աբգար (Ափքար)։ [Այս Ռաքիելը] մեկին տարավ տան փեսան իրեն մոտ. [իսկ] սրանցից յերկուսին փեսայացրեց հայոց (սոմեխների) թագավորին։ Յեվ չորս յեղբայրները գնացին Քարթլի... Գուրամին նշանակեցին իշխան (երիսթավ) և կուրապալատ. սա Մցխեթում [սուրբ] խաչ յեկեղեցու հիմքը դրեց։ [Իսկ] մնացած յերեք յեղբայրները գնացին փեսայացան Ներսեսի վորդի Բակուրին[12]...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Փարպադան Գորգիջանիձեյի նկարագրած Հայոց զարձի պատմությունը տարբերվում է վրացերեն լեզվով վաղուց գոյություն ունեցող համապատասխան աղբյուրներից, վորոնք են՝ «Գրիգոր Պարթևի վկայաբանությունն» ու «Հռիփսիմյանց վկայաբանությունը» (սրանց մասին տես այս մեր աշխատության Ա. հատորի Գ. գլխի 3-րդ ծանոթությունը, եջ 20—23)։ Սա փայլուն ապացույց է նրան, վոր հեղինակը բավականին անտեղյակ է յեղել վրաց հին գրականության ու նրա առանձին նշանարներին, իրեն հետաքրքրող մասնավոր հարցերում անգամ։*

2 *Վորքան էլ առասպելական լինի այն վոճը, վորով Փարպադան Գորգիջանիձեն նկարագրում է Հայոց զարձի պատմությունը, մի բան վոր սկզբից և յեթ աչքի յե ընկնում ընթերցողին, այդ՝ այն է, վոր նա անմիջապես թե միջնորդաբար (հավանական է յերկրորդը) գոնվում է, բացի Ագաթանգեղոսից և Խորենացուց, այսպես կոչված «Դաշանց Թղթի» ազդեցության ներքո։ Համ. Կարապետ վ. Շահնազարեան, Դաշանց թուղթ. Քննութիւն և հերքումը, Պարիս 1862։*

3 *Տես նախորդ ծանոթ.։*

4 *Խոսրով և Շիրինի զրույցը տես այս աշխատության IV հատորում։*

5 *Այսինքն 336 + 551 = 887 թ. (?)։*

6 *Այսինքն 464 + 551 = 1015 թ. (?)։*

* *Բնագրում՝ ամբավի։ Համ. եջ 89, ծան.*։*

7 *Այսինքն 744 + 551 = 1295 թ. (?)։*

8 *Այսինքն 742 + 551 = 1293 թ. (?)։*

9 *Այս գլուխն ևս, առավել քան նախորդ և հետագա գլուխներն, առաս-պելի բնույթ է կրում։*

10 *Այս գլխում նկատվում է Դիոկղետիանոսի կնոջ Պրիսկայի և դստեր Վաղերիայի անցքի նկարագրության ազդեցությունը* (Dictionnaire universel et complet des conciles, par l'abbé Ad. Ch. Peltier, Paris 1847, t. II, p. 514), *«որոնք հալածուեցան քրիստոնէութիւնը չուրանալու համար, սակայն անոնք ըստ ոմանց տկարացան և կուռքերու զոհեցին»* (Մաղաքիա ա. ե. Օրմանեան, *Ազգապատում*, I, *81)։*

11 *Այս գլխում նկատվում է «Ցայսմաւուրք» գրքում «մեհեկի ի և փետր-վարի ԻԶ» ներքո մուծած հատվածի՝ «Ցօն երևման Վարագայ սուրբ նշանին և սքանչելեաց նորին»՝ ազդեցությունը։ Տես՝ Ցայսմաւուրք, Կ. Պոլիս 1834.* J. Bayan, Le Synaxaire Arménienne, Paris 1930, pp. 94—95 (1138—1139)։

12 *Այս տեղեկությունները կրկնություն են Սմբատ՝ վորդու Դավթի «Բա-գրատունյաց պատմության» համապատասխան տվյալների, վորոնք կրկնվում են և Քարթլիս-ցխորեբայում (տես այս աշխատության Ա. հատորի յերկրորդ պրակի Ա. գլուխը, եջ 135)։*

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գ. *ՄԱՍԻ*

[ԼԱՆԳ-ԹԵՄՈՒՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]

... Թավրիզում նստած Թեմուրին լուր հասավ. «Վրացիք մո-տեցան Նախիջևանին (Նախչավանին). սուլթան Մահմադի վորդի սուլթան Թահրից Ալինջի բերդը խլեցին և Արաքսի (Արազի) հայ-կույս [գտնվող յերկրները] գրավեցին»...

... [Ապա] Թեմուրը գնաց Ղարաբաղ ու ձմեռն այնտեղ անց-կացրեց. և գարնանը նրան լուր հասավ, վոր Բագրատ [Վրաց] Թագավորը[1] Տփղիսումն է գտնվում առանց զորքի. աննկատելի կերպով Թեմուր արքան Ղարաբաղից գնաց... [Գրավելով Տփղիսը՝ Թեմուրը] հանվեց քաղաքից, և Բագրատ Թագավորին հետ վեր-ցնելով՝ գնաց Ղարաբաղ... [իսկ] Բագրատ Թագավորը Թեմուրի (Թեյմուրի) դրդմամբ (հրավերով) մահմեդականացավ (թաթարա-ցավ) Ղարաբաղում...

... Թեմուր արքան իր վորդի Մի[հ]րան-շա[հ]ի հետ խոովեց այն պատճառով, վոր վրացիք սուլթան Թահրից Ալինջի բերդը խլեցին...

... Թեմուր արքան գրավեց Թուրքստանը, Հնդկաստանը, Ռու-սաստանը, Ղիչախի դաշտը (դաշտի Ղիչախի), Խորասանը, Զա-բուլստանը, Խորասանը, Գիլ[ա]ն-Մազանդարանը, Իրան (Երան)-Աբաղը, Փարսն ու Արաբստանը, Լորստան-Քյուրդստանը, Շիրազն ու Քիրմանն, Ադրբեջանն ու Հայաստանը (Սոմխիթը), Դաղստանն ու Գուրջստանը, Մալաթիայից հայկույս [գտնվող] Անատոլիայի յերկիրը... [և] յերբ Մալաթիայից հայկույս [գտնվող յերկիրը] գրավեց՝ Դիարբեքիրով իջավ...

... [Յերբ Թեմուրը գտնվում եր] Բաղդադ քաղաքում, ...Ադըր-բեջանից լուր ստացավ. «Տասը տարի յե կռվում ենք և Ալինջի բերդը չենք կարողացել գրավել. դարձյալ վրացոց ձեռին է այն»։ Զայրացավ Թեմուր արքան և Բաղդադից Թավրիզ յեկավ և չորս

ամսվա հանգիստ տվեց զորքերին Վրաստանի վրա յերթևելու համար...

...[Յերբ Թեմուրն] յեկավ Թավրիզ, նրան ղեկուցին. «Արդեն տասը տարի յե, վոր [Թաթարաց] զորքն Ալինջի բերդի համար պատերազմ ե մղում և չի կարողանում այն վերցնել. դարձյալ վրացիք ունեն այն գրաված»: Այս լուրն արքայի վիշտ պատճառեց, և Վրաստանի վրա արշավեց: Յերբ [Թեմուր] արքայի արշավանքի մասին Ալինջայում գտնվող վրացիք իմացան, հոժարակամ դատարկեցին բերդը, նաև դատարկեցին Գեղարքունյաց (Գեղաքունի) ծովի շրջակայքն ու Անի քաղաքն շրջակա բերդերով, հանվեցին տեղից և գնացին Վրաստան...

Այստեղից մեծ զորք կանչեցին Յերզնկայի (Երզնգի) յերկրի վրա: Այս կողմերում, ուր քրիստոնյաները եյին բնակվում, վոմանց կոտորեցին, վոմանց գերի տարան և ավերեցին, և յեկեղեցիներն ու վանքերը քանդեցին, մեներն այրեցին, ծառերն ու այգիները կտրատեցին, քաղաքներն ու բերդերն և գյուղերը քանդեցին ու ավերեցին, և ուր ել տղամարդ ընկավ նրանց ձեռը, կոտորեցին և կանանց ու յերեխաներին գերի տարան: Այս այն պատճառով յեղավ, վոր Ալինջի բերդում գտնվող վրացիք նրանց յերկիրն եյին յեկել, արքան խնդրեց [հանձնել այն իրեն] և նրանք մերժեցին ասելով, թե նրանք մեր յերկրում չեն գտնվում...

Թեմուր արքան Հովհան (Իվանե) աթաբակին և [վրաց] թագավորի յեղբայր Կոնստանդնին զորագլուխ նշանակեց և Սամցխեյից (sic) Ախալգք (Աբխազեթ) կանչեց... Լաշա-Գեորգի (Գիորգիի) վորդի Դավիթը... լեռն[աստան]ից հայկուհյա [գտնվող] յերկրին մինչ Արաքս (Արազ) գետն ինքը տիրեց...

...[Թեմուրը] Քարթլիով անցավ, Տփղիս քաղաքում հյուրասիրվեց Բագրատ թագավորի կողմից և ձիաներին ու զորքին հանգստացրեց, Ղարայազում վորսի յելավ... և այստեղից հանվեց ու վորսով Ղարաբաղ գնաց...

...Արաքս (Արազ) գետից մեծ առու անցկացրին, յերկայնությամբ վեց աղաջ, լայնությամբ տասն հինգ աղլի[2], խորությամբ տեղ-տեղ յերեք աղլի, տեղտեղ հինգ աղլի և տեղտեղ վեց և ութ աղլի փորեցին, ակունքը պինդ կապեցին, այնպես վոր ծանծաղուտի ժամանակ Արազի ջրի յերրորդ մասին կհավասարվեր: Քառասուն որվա ընթացքում փորեցին...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Այսինքն Բագրատ V, 1360—1395:*

2 *Յերկարության չափ եր հին Վրաստանում, հավասար 10,160 մետրին (Իվ. Ջավախիշվիլի, Վրացական նումիզմատիկա-մետրոլոգիան, վրացերեն, Տըփղիս 1925, եջ 134—135):*

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Գ. և Դ. ՄԱՍԻՑ

[XVI—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Գասկրի տեր և Աստարայի տեր Մուրադ սուլթանը թալիշի զորքով... Աստարայից Շիրվա[ն]ի վրա գնացին և հեշտությամբ վերցրին Բագվի բերդը, նաև գրավեցին Շ[ի]րվան-Շամախիան. այստեղից անցան Ղարաբաղ, ուր նրանց առանց պատերազմի ներկայացան ամրտեղի իշխանները ու զորապետները. այստեղից [եւ] Նախիջևան (Նախչվան) հասան և՝ ամրտեղի զորքն էլ հետը վերցնելով՝ գնաց[ին] Թավրիզ...

Շահ-Իսմայելի որդի Շահ-Թամազն իր հորից հետո թագավոր նստեց քրոնիկոնի 190-ին[1]: [Այս] Շահ-Թամազ ղ՝աենը գնաց Ղարաբաղ, ուր տերերից վոմանց փոխեց և վոմանց էլ բեգար և խարաջա դրեց, իր անվամբ փող կտրել տվեց վրացիներին, մեսխերին, կախերին և շամախեցոց...

...Լուարսաբ (Լվարսաբ) Քարթլիի թագավորը[2] չհանգստացավ, և վոչ էլ ընծաներ մատուցեց [Շահ-Թամազին], և ավերում եր Գանձակը (Գանջան), Յերեվանն (Երև[ա]ն) ու Շիրվանը...

Շահ-Թամազ ղ՝աենն արշավեց Քարթլիի Լուարսաբ (Լվարսաբ) թագավորի վրա քրոնիկոնի հարյուր ութսուն ութին[3]. Շահ-Թամազ ղ՝աենը գնաց Ղարաբաղ... տան և յերկու հազար ընտիր ձիով... և ... առանց զգուշացնելու Լուարսաբին (Լվարսաբին) մութ գիշերը կանչեց... Մանելով Տփղիս քաղաքն և՝ [այն տեղ] բերդապան ու բերդապահներ նշանակելով՝ Ղարաբաղ վերադարձավ...

[Շահ-Թամազն] Անիի ճանապարհով գնաց Շորագյալ (Շորեկալ), վորտեղից անցավ Սամցխե...

...Արզրումի բեգլարբեգ Սկանդար-փաշան [քրոնիկոնի 235-ին][4] յեկել եր... ու Արտանուջի բերդը պատել...

...Շերմազանը, վոր Լուարսաբ (Լվարսաբ) թագավորից եր

[կարգված] Լոռի-Փամբակի (Լորի-Փանբագի) տեր, Շահ-Թամազը սպանել տվեց, [և] նրա տեղը՝ Լոռի-Փամբակն (Լորի-Փանբագն) ու Աղջա-ղալան՝ ղ՝աենը տվեց Ղ՝վարղ՝վարեյի (Ղ՝որղ՝որեյի) վորդի աթաբակ Քայխոսրովին... ապա [ղզլբաշները] Ղարաբաղ վերադարձան, ուր թագավորը ձմեռը [ք]իշլաղ (եշլաղ) եր սարքել...

...Յերը Լուարսաբ (Լվարսաբ) թագավորն Աչաբեթի ամրոցում եր կանգնած, ղ՝աենը Գորուց հանվեց և գնաց դեպի Ղարաբաղ...

...Շա[հ]վերդ սուլթանը՝ Գանձակի (Գանջայի) տերը՝ վորը ղ՝աենից կուսակալ եր նշանակված ... [քրոնիկոնի 240-ին][5]... Արաքսի (Արազի) հայկուչա [գանվող] զորքերը ժողովեց և յեկավ [Լուարսաբ] թագավորի դեմ...

[Յերը Լուարսաբի (Լվարսաբի) վորդի Սիմեոն (Սվիմոն) թագավորը[6] մտադրվեց Տփղիսը գրավել], այս լուրը Ղարաբաղի սերոջը հասավ. [և] նա էլ Արաքսի (Արազի) հայկուչա [գտնվող] զորքերը ժողովեց և ոգնության յեկավ քաղաքին...

... Քրոնիկոնի յերկու հարյուր քառասունին[7]... [Տփղիս] քաղաքի ու Սոմխիթ-Սաբարաթիանոյի թագավորությունը [ղ՝աենը Սիմեոնի յեղբայր Դավթին] շնորհեց... իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը հանգիստ չեր թողնում նրան և... Սոմխիթ-Սաբարաթիանոն ավերում եր և ջանում եր քաղաքը գրավել, սակայն չվերցրեց: Քրոնիկոնի 250-ին[8] Սիմեոն (Սվիմոն) թագավորը զորք ժողովեց՝ Վրաստանի հեծելազորն և հետևակ զորքը, և քաղաքի վրա յեկավ. և այս լուրը Դավիթ թագավորին զեկուցին, և նա էլ զորք ժողովեց՝ Սոմխիթ-Բարաթյաններին, քաղաքացիներին և թաթարներին, և իր յեղբոր դեմ գնաց պատերազմելու...

... Մեծ զորքով յեկավ Լալա-փաշան և գրավեց Ադրբեջանը, Քյուրդստանն և Յերեվանը (Երվանը), և Նախիջևանը (Նախչևանը), և Ղարաբաղը, և Շիրվանը (Շրվանը), [Տփղիս] քաղաքն ու Գորին, Լոռին (Լորեն) և Աղջա-ղալան, և Ախալցիխեն, և մեսխեբի յերկիրը, և բոլոր բերդերում պահապան[ներ] նշանակեց...

...[Ապա] յետ կանչվեց Լալա-փաշան, վորը գրաված ուներ Կախքը (Կախեթը), Շիրվանը (Շրվանը), Դաղստանը, Գանձակը (Գանջան) և Ադրբեջանը, Քյուրդստանը, Վանն ու Նախիջևանը (Նախչվանը), Սամցխեն ու Յերեվանը...

... Շահ-Աբաս արքան այն ձմեռը Թավրիզում մնաց, գարնանը Յերեվանի (Երեվանի) բերդը պատեց, Գեորգ (Գիորգի) թա-

գավորը[9] Քարթլիի զորքով և կախքի (կախեթի) տեր Աղեքսանդրը (Ալեքսանդրեն) զորքով նրան ոգնության հասան։

Գեորգ (Գիորգի) թագավորի և Աղեքսանդր (Ալեքսանդրե) տիրոջ Ցերեվանին (Երևանին) ոգնության հասնելը զորքով։ Գեորգ (Գիորգի) թագավորը Քարթլիի զորքով և կախքի (կախեթի) տեր Աղեքսանդրը (Ալեքսանդրեն) զորքով ոգնության գնացին Ցերեվանին (Երևանին) և բերդը գրավեցին. և ղ՝աենը վրացիներին և կախերին շատ բաներ ընծայեց։...

... Մեծ զայրույթով և բազում զորքով [Շահ-Աբաս] ղ՝աենը յեկավ Ղարաբաղ...

... Ուխտուն հազար ծուխ վրացիներից, հայերից և հրեաներից, նաև իշխաններին և ազնվականներին տեղահան արին և Մազանդարանում տեղավորեցին և վոմանց այլ յերկրները ցրեցին...

... Ցերեվանի խանի մի յերամակ (թաբուն) սուլթանը խլնդրել եր ղ՝աենից...

... Ղարաբաղի բեգլարբեգն անմիտ և հպարտ մարդ եր...

... Վրացիք, իմերներն (իմերեներն) և կախերը Գանձակը (Գանջան), Պարտավն (Բարդան) ու Ղարաբաղն ավերեցին...

Թեյմուրազ տերը Գանձակ (Գանջա)-Ղարաբաղն ավերեց. Թեյմուրազ տերը ցանկացավ Ղարաբաղն ավերել. Լևոն (Լեվան) Դադյանը (Դադիանը) Ոդիշի զորքով, Աղեքսանդր (Ալեքսանդրե) թագավորն Իմերքի (Իմերեթի) զորքով, մեսխերի իշխաններն ու ազնվականները, վրացիք և կախերը՝ բոլորը ժողովեցան և ավերեցին Գանձակ (Գանջա)-Ղարաբաղը մինչ Արաքս (Արազ)։ Թեյմուրազ-տերը Պարտավումն (Բարդայումն) եր նստած և Գանձասարի հայոց կաթողիկոսը[10] մեծ զորքով և պարգևով Թեյմուրազ տիրոջ մոտ յեկավ և այսպես զեկուցեց. «Խոնթքարն ու ղ՝աենը վոտքի յեն յելել. սրանից լավ ժամանակ այլևս չէ կարող լինել. յոթնեքյան Վրաստանի զորքերը հետդ ունիս, քառասուն հազար թվանքչի յես կտամ քեզ, սուր զորքով Թավրիզ գնա և յոթն որում Թավրիզն ավերիր... և մինչ վորտեղ էլ ղ՝աենը զորք ժողովի, Ադրբեջանի տերերին փոխեցեք, ամեն տեղ ձեզ հլուներին նստացրեք և ինձ էլ խոնթքարի մոտ ուղարկեցեք, վորպեսզի նրանից զորք հասցնեմ ձեզ ոգնության։ Յեթե ղ՝աենը վոտքի յելնի, կռիվ սկսենք և նրանք վրացիների հետ չեն կարողանա պատերազմել, այն պատճառով, վոր վրացիք փախչելու ճանապարհը հեռու ունեն. իսկ յեթե փախչեն, գիտեն, վոր չեն փրկվի.

նրանց ճանապարհին կկոտորեն. ուրեմն փախչելու միտք վոչոք չի ունենա. նրանք հարկադրված կլինեն պատերազմ սկսել և պայքարել, և հաղթանակը ձեզ կմնա, և իշխանավոր արքաներիդ էլ կորհնենք և քրիստոնեական աշխարհն էլ քեզնով կազատվի ու կուժեղանա»։

[Թեյմուրազ]-տերն այս՝ հեռու [տանող խոսքերն] ըմբռնեց և այսպես պատասխանեց. «Դեռ Ղարաբաղն ունիմ գրաված և Շիրվանում իմ հպատակի վորդին ե տիրում. այս ձմեռը կգնամ Քարթլի, խոնթքարին ընծա կուղարկեմ, զորքս կհանգստացնեմ և գարնանն ավելի մեծ զորքով կգամ»։ Կաթողիկոսն հասկացավ այս և իր լեզվով ասաց. «Կոկի գուղեռ» (sic)։ Տերը նկատեց, թե ինչ ասաց, ժպտաց և այսպես պատասխանեց. «Քեզ էլ և Դաուդխանին էլ հետս կտանեմ, Գորի կհանանեմ։ Զորքն ընչավետ կհանանի տունն»։ Վանականը նորից բացահայտ զեկուցեց. «Տավար-վոչխարի համար Դադյանին (Դադիանին) և իմերցոց թագավորին վոր հետդ չբերեյիր, Քարթլիում և Կախքումն (Կախեթումն) էլ կգըտնեյիր այդ. և Իրանի (Երանի) արքան մի՛թե այդքան քեզ թույլ կտա, վոր դու այսպիսի զորք կրկին ժողովես։ Այսոր-վաղը զորքիդ կձնասեն և տավար-վոչխարի փոխարեն քեզ գերի կտանեն»։ Չեղավ, [Թեյմուրազը] վանականին չլսեց, Գանձակից (Գանջայից) տեղահան յեղավ, և Դաուդխանին ընտանիքով և նրա ամբողջ իրերով ու կայքով, նաև հայոց կաթողիկոսին էլ իր աթոռի զարդով Գորի տարավ[11]... Դաուդխանի յերկմտությունը, Ղալարների բնակչին անելը, Թեյմուրազ-տիրոջ կողմից Գանձակ (Գանջա)-Ղարաբաղի ավերումը, Դաուդխանին Քարթլի տանելը՝ այս բոլորը Շահ-Սեֆի-ղ՝աենին զեկուցին։

... Դաուդխանն Իման-ղ՝ուլի-խանի յեղբայրն եր, ղ՝աենին դավաճանեց, Ղարաբաղն ավերել տվեց և ինքն Ուրում գնաց...

... Ղ՝աենի մոտ եյին... մելիք Սադաթը, Սոմխիթի մելիք Աթաբեգն իր յեղբայրներով.... Սոմխիթի մելիքին նամակ գրել տվեցին Վրաստանի իշխանների հասցեյին...

... Հրաման ստացվեց ղ՝աենից, վոր սարդարն իր զորքով գնա Վանի բերդի վրա և Շիրվանի բեգլարբեգը Ղարաբաղի զորքով Ռոստոմ թագավորի[12] պահապան կանգնի...

... Զխարտամ բնակվում եյին հայ վաճառականները...

[Ռոստոմ] թագավորը ժողովեց Սոմխիթի ու Սաբարաթիանոյի զորքերն, և գնաց Գորի...

Սուլթան Մուրադ խոնթքարի գալը և Ցերե-

վանի (Երևանի) բերդի գրավումը քրոնիկոնի 325-ին[13]: Նոնթք[ա]րը գրավեց Յերեվանը (Երևանը), հասավ Թավրիզ, ավերեց Ադրբեջանն, և Քյուրդստանի ճանապարհով վերադարձավ. ութերորդ ամսին Շահ-Սեփի-ղ՝աենն յեկավ և բազում զորքով ու պայքարով Յերեվանը (Երևանը) կրկին գրավեց, և շատ մարդ կոտորվեց...

... [Ռոստոմ] թագավորը հրամայեց [Տփղիս] քաղաքի մոուբրավին. «Զորքի մեջ կանչիր, ով վոր պատրաստ լինի՝ թաթարներին, վրացոց և հայերին (սոմեխներին)...»:...

... Դիասամիձե կաթողիկոսն և Ռեվազ Բարաթաշվիլին ու Սոմխիթի մելիք Ղորխմազ-բեգը բազում սպառնալիքների տակ խաբվեցին...

... Սոմխիթի մելիքը ղ՝աենից վախեցավ և նրա ցանկացածն ու գրած նամակները [Ռոստոմ] թագավորին մատուցեց...

...[Մարիամ] թագուհին... Սոմխիթի Դարբազ գյուղը [Մցխեթի] Սվետի-ցխովելի [տաճարին] նվիրեց...

Այս պահին Բարաթաշվիլի Սիաոշն ու Թումանիսշվիլի Բայանդուրը (Բախնդուրը) իրավացի իրար կպան: Բոլոր որենսդրությանց մեջ ճշմարտապես ընդունված է, վոր թագավորներին չպետք է վիրավորել և պետք է խուսափել նրանց դատելուց, նամանավանդ չպետք է համարձակվել նրանց անվայել բան ասել և նրանց արյան մեջ խառնվել: Քարթլիում վրացիք բազմաթիվ են և հզոր, [իսկ] հայերը (սոմեխները) փոքրաթիվ և անզոր. և նրանցից (հայերից) այսպիսի բան դժվար է սպասել (ասել). ապա թե վոչ վրացիք ուզում էլին այս (արքայազնի) արյան [մեղքը] հայու վզին փաթաթել: Այս պատճառով ի վիճակի չէլին հայերը (սոմեխները), վոր այլապես՝ յերդումով և հավաստիացումով կլուծվեր [հարցը], և Սիաոշ Բարաթաշվիլին հայտնեց, վոր Թումանիշվիլի Բայանդուրը (Բախնդուրը) հրացանով զարկեց արքայազնին[14]: Նա ասաց՝ հեռացիր: Այս պատճառով դատի կանչեցին Բայանդուրին, և աստծո հրամանով յեղավ դատաստան: Յերկու կողմերն յեվս ըստ իրենց կրոնի ծիսակատարություն արին: Թագավորն ու թաթարները հայերի (սոմեխների) կողմը կանգնեցին և թագուհին ու վրացիները Սիաոշի կողմը կանգնեցին... [Յերը] Բայանդուրը (Բախնդուրը) սուրը վերցրեց և... Սիաոշի քթին զարկեց..., թաթարներն ու հայերը բարձրաձայն սկսեցին աղաղակել՝ ալահ, ալահ[15]...

Քրոնիկոնի 344-ին[16]... Ռոստոմ թագավորը Սպահանի (Իսպահանի) մոուբրավությունն լինձ՝ Փարսադանիս՝ տվեց...

[Ապա] Ադրբեջանի վեզիրից չափաբ յեկավ [հաղորդելու, վոր] Ռոստոմ թագավորը վախճանվել է Գորում և Ադրբեջանի վաչկատունները գլուխ են բարձրացրել ու Արաքսի (Արազի) ջուրն անցել...

... Սոմխիթի մելիքի յեղբայր Մահմադ-սուլթանին հյուրընկալ (մեհմանդար) կարգեցին և ուղարկեցին իբրև չափար, վոր Թեյմուրազ-տիրոջն առաջնորդե և մեծ պատիվներով ղ՝աենի մոտ դա...

...[Աղեքսանդր (Ալեքսանդրե) արքայազնի] քույրը Լոռիի տեր՝ Շա[հ]վե[ր]դ-խանի հետ ամուսնացավ...

... Գուրիելը հասցրեց Բագրատին Արզրում... Արզրումի փաշան Շիխալի-խանն [եր]...

... Իրանի (Երանի) սարդարը Ղարաբաղում եր կանգնած [իր] զորքով...

... Մինչ դեսպանը Յերեվան (Երևան) կհասներ, սուլթան Սուլեյման խոնթքարը վախճանվեց...

... Գանձակի (Գանջայի) խան Աբաս-Ղուլի-խանը յերբ իշխում եր Կախքում (Կախեթում), նրան հրամայեցին. «Նազարալի-խանի մոտ գնա Տփղիս»: Յերեկոյան Տփղիսում հավաքվեցին. և Գուրգե-խանն յերբեմն Քարթլիում եր լինում և յերբեմն Սոմխիթ-Սարարաթիանո յեր գնում...

... Ղ՝աենի մայրը... Հեղինե (Ելենե) թագուհուն այսպես եր հրամայել... «Այժմ արքան վողորմած է [դեպի քո վորդին], վորին Քարթլիի թագավորությունը շնորհեց, և Կախքը (Կախեթը), և Թուշերին. և Գանձակի (Գանջայի) խանն ու Արաքսի (Արազի) հայկույս [գտնվող] զորքը ոգնության հասավ»...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 190 + 1312 = 1502 թ.:
2 Այսինքն Լուարսաբ I, 1534—1558:
3 Այսինքն 188 + 1312 = 1500 թ. (sic):
4 Այսինքն 235 + 1312 = 1547 թ.:
5 Այսինքն 240 + 1312 = 1552 թ.:
6 Այսինքն Սիմեոն I, 1558—1600:
7 Այսինքն 240 + 1312 = 1552 թ.:
8 Այսինքն 250 + 1312 = 1562 թ.:
9 Այսինքն Գեորգ X, 1600—1605:
10 Նույնը:
11 Հիշատակելով այս դեպքը համաձայն Քարթլիս-ցխորեբայի ֆրանսերեն

թարգմանության, Լեոն իր վերջին աշխատություններից մեկում (տես յուման հրատարակությունը. Լեո. «Մոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ», Երևան 1934, էջ 150) կցում է հետևյալ մեկնաբանությունը. «Հետաքրքրականն, իհարկե, այդ մերժումը չէ, այլ այն, որ Դանձասարի կաթողիկոսն իր հոգևոր պաշտոնին միացրել էր աշխարհական իշխանության գահերեցությունը։ Ուրեմն, պահպանվել էր այդ հին հիմնարկությունը (Դանձասարի կաթողիկոսությունը. Լ. Մ.-Բ.), թեև այլափոխված, կարկատնած ձևի տակ։ Ցավ չեթե սկսենք վորոնել այդ վեզարակիր գահերեց իշխանի սորտադրված «վասսալներին», այստեղ կգտնենք ավելի բազմակողմանի ձևափոխություններ, կարկատաններ։ Այս բոլորը թելադրում էր միջավայրի այն կերպարանավորումը, վոր սեղծվել էր անկման և ավերման խուլ շրջանում»։

12 *1634—1658 թ. թ.։*

13 *Այսինքն 325 + 1312 = 1637 թ.։*

14 *Այսինքն Քարթլիի Լուարսաբ արքայազնին՝ 1656 թվին։*

15 *Այս դեպքի մասին համառոտ տես.* С. Какабадзе, Крестьянский вопрос и крестьянские движения в восточной Грузии в XVIII веке, («История классовой борьбы в Закавказьи». Сборник статей. Книга первая, Изд. ЗКУ, 1930, стр. 157)։

16 *Այսինքն 344 + 1312 = 1656 թ.։*

ՈՍՄԱՆՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Տասներկուերրորդ թագավոր նստեց [ոսմանցոց յերկրում] յերրորդ սուլթան Մուրադը[1]։ Սրա զորքը գրավեց Նախիջևանը (Նախչվանը), Ապրեջանը, Շիրվանը, Ղարաբաղն և Տփղիսի ու Գորու բերդերը...

Տասնևյոթերորդ թագավոր նստեց նրա (սուլթան-Ահմադի) յեղբայր սուլթան Մուրադը[2]։ Սա գրավեց Յերևանն ու Բաղդադը...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *1574—1595 թ. թ.։*

2 *1623—1635 թ. թ.։*

ԺԵ.

ՍՈՒԼԽԱՆ-ՍԱԲԱ ՈՐԲԵԼՅԱՆ (XVII—XVIII Դ.)

„ԲԱՌԱՐԱՆ“, „ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՅԵՎՐՈՊԱ“, „ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԵՂՏԻՔԻ“

Սուլխան Որբելյանը, վորը՝ կուսակրոնություն ընդունելով՝ Սաբա կոչվեցավ և, այդ պատճառով, Սուլխան-Սաբա Որբելյան (Սուլխան-Սաբա Որբելիանի) անունով է հայտնի, վերածնության շրջանի վրաց հին գրականության ամենանշանավոր դեմքերից մեկն է։ Հայտնի չե բազմակողմանի բեղմնավոր գործունեությամբ գրականության զանազան բնագավառներում։

Ծագումով վրաց իշխանական Որբելյան տոհմից լինելով (նրա ծննդաբանությունը տես. Գ. Ջ ի տ ա ի ա. Պիտարեթի և Գուդարեխի տապանաքարերը, վրացերեն,—Bulletin du Musée de Géorgie, III, 1927, եջ 126. Գ. Լ ե ո ն ի ձ ե, Սուլխան-Սաբա Որբելյան, Գիրք իմաստության կեղծիքի, վրացերեն, Տըփղիս 1928, հավելված), Սուլխան Որբելյանը ծնվել է 1658 թ. և վախճանվել 1725-ին, ուրեմն 67 տարեկան հասակում։ Անհավասիկ և նրա ինքնակենսագրությունն յերրորդ դեմքով գրված, վորը կըցված է նրա «Բառարան»-ին, համաձայն Վրաց Պատմա-Ազգագրական ն. ընկերության հավաքածուի № 1658 և Վրաց մեջ գրագիտության տարածող ն. ընկերության № 1510 ձեռագիրների (տես Սուլխան-Սաբա Որբելյան. Վրացերեն բառարան, պրոֆ. Հ ո վ ս ե փ Ղ’ ի փ շ ի ձ ե յ ի և պրոֆ. Ա կ ա կ Շ ա ն ի ձ ե յ ի խմբագրությամբ, Տփղիս 1928, եջ 477—478, curriculum vitae*).*

«Գրքիս աշխատասիրողին Սուլխան-Սաբա Որբելյանուն հիշեցեք աղոթքով՝ Արչիլ թագավորի և Գեորգ (Գիորգի) թագավորի ու արքայազն Լևոնի (Լեոնի) մորեղբոր վորդուն, Վրաստանի դատավոր, պատրոն Որբելու վորդուն։ Այս թագավորների հրամանով գրվեց այս գիրքը բազում աշխատանքով և հոգսերով, քանի վոր Վրաց (Քարթլիի) յերկրում բառարան այլևս չեր գտնվում և յերեսուն տարում հազիվ կազմեց՝ մեկնաբանությամբ, քանի վոր աշխարհական եր և աղնվատոհմ և աշխարհիկ գործերից ազատ։ Այն պահին քրոնիկոնի 1658 եր։ Սրանից հետո կուսակրոն (մոնազոն) դարձավ և Գարեջլի բազմալերանց սուրբ [Հովհաննու] Մկրտչի վանքը մտավ, քրոնիկոնի 1698 մարտի 18-ին յեղավ կուսակրոն (մոնազոն)։ Քրոնիկոնի 1710 դեկտեմբերի 1-ին գնաց Խորասան (Խվարասան) Քայխոսրո թագավորի հրավերով, և փետրվարի 20-ին յետ ճանապարհ գցեցին բազում ընծաներով, մայիսի 11-ին յեկավ Քարթլի։ Քրոնիկոնի 1712 ապրիլի 23-ին վախտանգ թագավորի հետ միասին Սպահան գնաց, նոյեմբերի 2-ին յետ ուղարկեց, դեկտեմբերի 20-ին յեկավ Քարթլի։ Քրոնիկոնի 1713 ոգոստոսի 17-ին վախավ Փրանգստան, տեսավ Ֆրանսիա, Ճենովա, Սիկիլիա. Ֆրանսիական թագավորը, Հռոմի պապն և մեծ դուքսը (գրանդուկան) շատ լավ ընդունեցին. բոլոր մարդիկ զարմացան։ Ինչ վոր նրանց յերկրներում հազվագյուտ և թանկագին բան կար տեսնելու, բոլորը ցույց տվին։ Սրբազան (սուրբ) պապը սուրբ խաչի մասը, սուրբ նահատակ Կղեմեսի (Կլեմենտոզի) գլուխն և շատ ուրիշ մասունքներ ընծայեց, ոգոստոսի 18-ին ճանապարհ գցեց։ Ճանապարհին սուրբ տանն ու շատ սուրբ տեղերին ուխտ յեղավ։ Հոկտեմբերի 20-ին հասավ Մալթա։ Դեկտեմբերի 8-ին ֆրանսիական թագավորի նավը յեկավ, ճանապարհ ընկավ։ Քրոնիկոնի 1715 հունվարի 19-ին յեկավ Կոստանդնուպոլիս։ Մի տարով այնտեղ ուշացավ. ֆրանսիական դեսպանատանն եր իջել ամենայն ազնվությամբ։*

«Այնտեղ սկսեց [արտա]գրել բառարանն ոգոստոսի տասին և քրոնիկոնի 1716 հունվարի քսանին ավարտեց»։

*Այլ ձեռագիրներում կան, ի միջի այլոց, և հետևյալ լրացուցիչ տվյալները (*ibid., 478*).*

«Ծնվել է Սուլխան-Սաբա Որբելյանը վրաց 348 քրոնիկոնին [=1658] հոկտեմբերի 24-ին, յերբ լուսինացվոց չորս նոյեմբերին ե[ր], կիրակի որը, կես գիշերվա պահին»։

«Սաբան վախճանվեց Քրիստոսի 1725 [թվի] հունվարի 26-ին մեծն Մոսկվայում, Սեսենցկայում, Արչիլ թագավորի պալատում և նույն [պալատի] յեկեղեցում թաղվեց Դարեջլան արքայադստեր հրամանով և շատ ծախքերով և հուղարկավորությամբ և մեծ պատվով»։

---

* Այստեղ և ստորև քրոնիկոնը պետք է հասկանալ իբրև թվական Ք. Ծ.-ից հաշված։

Որբելյանի կենսագրությունից առանձնապես հետաքրքիր են նաև տեղեկություններ, վորոնք սփռած են ուրիշ հիշատակարաններում. 1. վոր նա կուսակրոնություն է ընդունել կրկնակի ամուսնությունից հետո. 2. վոր նա կաթոլիկություն է ընդունել Ցեվրոպա յեղած ժամանակ, իսկ ըստ Մ. Թամարաշվիլու (Histoire du catholicisme en Géorgie etc., վրացերեն, Տփղիս 1902, եջ 311—347), նոյնիսկ մինչ Ցեվրոպա գնալը. 3. վոր նրա ճանապարհորդությունը դեպի Ցեվրոպա վոչ թե փախուստ է յեղել, այլ դեսպանություն քաղաքական նպատակով պապական մի-սիոներների ուղեկցությամբ, յերբ նա քանիցս ներկայացել է Հռոմի պապին, Լյուդովիկոս XIV-ին՝ Վերսալում (1714 թ. մայիսին), յերբ առիթ ունեցավ ծանոթանալու հռչակավոր առակախոս Լաֆոնտենի հետ, եվն։

Որբելյանի գրեթե բոլոր յերկերում մենք այսպես թե այնպես տվյալներ ենք գտնում Հայաստանի և հայերի մասին։

Այս յերկերն են.

1. «Վրացերեն բառարան». ա. հրատ. Ռ. Ե բ ի ս թ ա վ ի խմբ., Տփղիս 1884. բ. հրատ. Հ. Ղ՚ի փ շ ի ձ ե յ ի և Ա. Շ ա ն ի ձ ե յ ի խմբ., Տփղ. 1928։

2. «Ճանապարհորդություն դեպի Ցեվրոպա», հրատ. «Ցիսկարի» հանդիսի 1852 թ., հունվար (№ 1), եջ 1—16, փետրվար (№ 2), եջ 17—31, մարտ (№ 3), եջ 32—65, ապրիլ (№ 4), եջ 45—81 (թերի)։ Բացի դրանից, մեր տրամադրության տակ եր Տփղիսի պետ. համալսարանի գնած նորագյուտ ձեռագիրն, ուր, ի միջի այլոց, զետեղված է այս «Ճանապարհորդության» տեկստն ավելի ընդարձակ, քան 1852 թվին հրատարակածը, հետևյալ վերնագրով. «Հանուն հոր և վորդվո և հոգուն սրբո. Սաբա-Որբելյանի վերադարձը Ֆրանսիայից և մուտքն Իտալիա 1711 (sic.) թվի հունիսի տասնևհինգին»։

3. «Գիրք իմաստության կեղծիքի», ա. հրատ. ՍՊՌ 1857. բ. հրատ. Պ. Ո ւ մ ի կ ա շ վ ի լ ո ւ խմբ., Տփղ. 1871. գ. հրատ. (ընտիր առակներ), Մ ա. Զ ա ր ա փ ո վ ի, Տփղ. 1874. դ. հրատ. Գ. Զ ա ր կ վ ի ա ն ի և ընկ., Տփղ. 1881. ե. հրատ. Ն. Մ թ վ ա ր ե լ ի շ վ ի լ ո ւ խմբ., Տփղ. 1892. զ. հրատ. Գ. Լ ե ո ն ի ձ ե յ ի խմբ., Տփղ. 1928։ Բացի դրանից, կան թարգմանություններ. ռուսերեն՝* Книга мудрости и лжи (Грузинские басни и сказки XVII—XVIII стол.) Саввы-Сулхана Орбелиани. Перевод и об'яснения Ал. Цагарели. Спб. 1878. *անգլերեն՝* The Book of Wisdom and Lies, a Georgian Handbook of the Eighteenth Century, by Sulkhan-Saba Orbeliani, translated with notes by Oliver Wardrop. Printed by Wil. Morris at the Kelmscott Press, 14, 1895. *գերմաներեն՝* Die Weisheit der Lüge. Gesprochen von Sulchan-Saba Orbeliani. Übersetzt aus dem Georgischen von Prof. Dr. M. von Tseretheli. Einleitung von Dr. Surab Awalischwili.

Առաջինում մեզ համար հատկապես հետաքրքիր է «կտակագրությունը» (անդերձնամակի), այսինքն առաջաբանը, ուր հեղինակը խոսում է ոգտագործած աղբյուրների մասին, ապա՝ բուն բառարանում մի շարք բառեր, վորոնք Հայաստանին և հայերին են վերաբերում։ Իսկ յերկրորդում ուշագրավ է հեղինակի տպավորություններն Ցեվրոպայում (Հալիկոռնիայում, Հռոմում, Կ. Պոլսում) գտնվող հայերի մասին։ «Բառարան»-ից քաղած տեղեկություններն առաջ ենք բերում համաձայն 1928 թ. հրատարակության, իսկ «Ճանապարհորդություն»-ից քաղածը՝ համաձայն 1852 թ. հրատարակության և վերոհիշյալ նորագյուտ ձեռագրի։ Ինչ վերաբերում է «Իմաստություն կեղծիքի» գրքից հանած առակին (№ 99. Գլխատապակները), այդպիսին մենք տանում ենք այս աշխատության IV հատորը, գեղարվեստական գրականության բաժինը։*

Ա. ԲԱՌԱՐԱՆԻՑ

[ԲԱՌԱՐԱՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ]

Յես, Սուլխան-Սաբա Որբելյանս, պատանեկության և ջահելության պահին, շատ աշխատանք թափեցի այս գրքի վրա, քանի վոր վրացերեն լեզվով բառարան այլևս չկար [և] քանի վոր

* *Յես վոչ թե «Իմաստության և կեղծիքի», ռուս.* мудрости и лжи։

* *Որբելյանի բազմաթիվ յերկերից հիշատակելի յե նաև Քիլիլա և Դամանայի չափածո թարգմանությունը, վորը մինչ այդ սկսել եր կախքի թագավոր Դավիթը (վախճ. 1604 թ.) և ապա շարունակել, Վախտանգ VI թագավորի հրամանով, վոմն պարսիկ և ավարտել վոմն հայ՝ Սպահանում։ Որբելյանի թարգմանությունը 1839 թ. կրճատել և վոմն Մելիքզադ Աշխարհբեգի Բեբութովը* (Е. Такайшвили, Описание рукописей «Общества распространения грамотности среди грузинского населения», т. I, стр. 347).

այն, վորին Վախտանգ հինգերորդ թագավորը վրացերեն բառա-
փունջ (սիտղ'վիս-կոնա) կոչեց, ժամանակի ընթացքում անհետա-
ցել եր: Քանի վոր այս պատվական գիրքը կորել եր, վրացերեն
լեզուն [էլ] ըստ իրենց քմահաճույքի այլանդակել էին. [ապա]
Վախտանգ թագավորի քեռին՝ Գեորգ (Գիորգի) թագավորը հրա-
մայեց ինձ ձեռնարկել սրան. և յես մի փոքրիկ բառարան տեսա,
վորը նրանց (հայերեն) լեզվով բառգիրք է կոչվում[1], և յես էլ
նրանց որինակով ձեռնարկեցի [սրան] և կազմեցի, վորքան էլ
ուժս ներում եր...

...Աշխատեցի, վորքան էլ ուժս ներում եր, [ոգովել] հելլեն,
լաթին, հայերեն (սոմխուրի), ռուսերեն և արաբերեն գրքերից և
քաղվածքներ անել այնտեղից...

[ԶԱՆԱԶԱՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ]

Ազրում—կարնո-քաղաք (կարնու-քալաքի):

Արազ գետի ակունքը—(°):*

Արմենիա (ոտար)—յերբայերեն Արարատ:

*Բարթուղիմեոս (Բարթլոմե)—առաքյալ Գալիլեվեցի. Հնդկաս-
տանումն եր, Քրիստոս քարոզեց. յեկավ Հայք (Սոմխիթ), և
այնտեղ հայերը (սոմեխները) նրանից՝ կենդանուց՝ կաշին
պլոկեցին[2]. նրա մարմինը Ջերլիփա կղզումն եր և ապա Բե-
նեվենթոս քաղաքում, իսկ հետո յերրորդ անգամ Ռոմն (sic)
կայսրը Հռոմ տարավ:*

Բիթլիս—(°):

Եփրատ (Եվփրատ) գետը—(°):

Յերզնկա (Երզինգանի)—(°):

*Թո[ն]դրակեցի (Թոդրակելի)—առանց քաշվելու չարութիւն
անող. «սիրում են Թո[ն]դրակեցութիւնը (Թոդրակելոբա)
առավել քան լավութիւնը». «Թո[ն]դրակեցի (Թոդրակելի)
լինի թէ աղանդավոր»—կանոնագիրք:*

կարնո-քաղաք (կարնու-քալաքի)—Ազրում:

*Նվիրակ (նիվիրակի ‖ նիորակի) յերկուսն էլ հայերեն (սոմ-
խուրի) են, նվիրակ կոչվում է գործակալը (+ ֆրանկե-
րեն նու[ն]ցա)*:*

*Նվիրակ**-վարդապետ (նիորակմոճղուարի)—(°)[3]:*

Սոմեխ (սոմեխի)—հայկազն (հաոսիանի) (3,38 Յեսայա):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Ի նկատի ունի XVII դարու վերջերում գոյություն ունեցող մի ինչ
վոր «բառգիրք» հայերեն լեզվով՝ հավանական է ձեռագիր որինակներից մեկը,
կամ Յերեմիա վարդապետի «Բառգիրք Հայոց»-ը (տպ. Ցալկիօռնայ 1698): Հա-
մաձայն դոց. Իլիա Աբուլաձեի անտիպ հետազոտության, Ս. Որբելյանն, ի միջի
այլոց, ոգտագործել է նաև 1666 թ. Ամստերդամում հրատարակած Աստվածա-
շնչին կցված «Ճանգ մատենական»-ը (եջ 774—829):*

2 *Իպպոլիտ Հռոմի պապը (II—III դ.) իր հատուկ գրվածքում* Περὶ τῶν ιβ ἀποστόλων (Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. X, col. 952), *գրում է. «Բարթուղիմեոս առաքյալը՝ քարոզելով հնդկաց մեջ և
տալով նրանց Մատթեոսի ավետարանը՝ գլխիվայր խաչեցավ և թաղվեց
Ալանում, վորը մեծ Հայքումն է»: Նույնը կրկնվում է Իպպոլիտի գրության
վրացական վերսիայում (տես Տփղիսի ն. Ցեկեղեցական Թանգարանի հավա-
քածուի № 445 ձեռագիրը, եջ 316 V—317 r). «Բարթուղիմեոսը (Բարթլոմեն)
հնդկաց քարոզեց, վորոնց տվեց Մատթեոսի ավետարանը, և գնաց Հայքի
(Սոմխիթի) և Ալանաց (Ալանեթի) կողմերն ու խաչեցավ գլխիվայր և թաղվեց
Հայքի (Սոմխիթի) Ալվանում»: Հետագա հեղինակները, որ. Դիոնոսիոս Տյուրա-
ցին (VI դ.), Սոփրոնիոս Յերուսաղեմացին (VII դ.) և Նիկիտա Պաֆլագոնեցին
(IX դ.) համապատասխան գրվածքներում նույն հարցի շուրջը կրկնում են
Իպպոլիտոսի խոսքերը միմիայն այն տարբերությամբ, վոր Բարթուղիմեոսի
թաղման տեղն անվանում են «Ռոբրոնոպոլիս» (Κορβονόπολις), «Ալբանոպոլիս»
(Ἀλβανόπολις), «Ուրբանոպոլիս» (Οὐρβανόπολις), ևլն: Մասնավորապես, Դիո-
նոսիոսի գրության վրացական վերսիայում (տես Տփղիսի ն. Ցեկեղեցական
Թանգարանի հավաքածուի № 95 ձեռագիրը, եջ 162) կարդում ենք. «Բար-
թուղիմեոս (Բարթլոմե) առաքյալը Հնդկաստանում ընտրյալներին առատ քա-
րոզեց Քրիստոս և տվեց նրանց Մատթեոսի ավետարանը և ննջեց մեծ Հայքի
(Սոմխիթի) Ուրբանա քաղաքում»: Հայ մատենագրության մեջ տես. Մ. Խորե-
նացվո Պատմությունն (Տփղ. 1913, եջ 31) և պատասխանը Սահակ Արծրու-
նացվո Պատմությանն (Տփղ. 1913, եջ 31) և պատասխանը Սահակ Արծրու-
նու Քերթին (Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վեն. 1865, եջ 295),
Նու Քերթին (Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վեն. 1865, եջ 295),
Հայսմավուրքը (Մ. Վ. Աւգերեան, Լիակատար վարք և վկայաբանութիւնք
Հայսմավուրքը (Մ. Վ. Աւգերեան, Լիակատար վարք և վկայաբանութիւնք
սրբոց, հատ. Թ. Վեն. 1813, եջ 441. Ղ. Ալիշան, Սոփերք Հայկականք, հ. ԺԹ,
սրբոց, հատ. Թ. Վեն. 1813, եջ 441. Ղ. Ալիշան, Սոփերք Հայկականք, հ. ԺԹ,
Վեն. 1854, եջ 26). Նաև՝ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ
Վեն. 1854, եջ 26). Նաև՝ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ
1871, եջ 101=Մանրամասնություններ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, I,
1871, եջ 101=Մանրամասնություններ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, I,
Վեն. 1785, եջ 298, 586. Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց,*

* *Հարցական նշան ենք դնում այստեղ և ստորև, յերբ բառին կից չկա
նրա մեկնությունը:*

* *Բնագրում՝ նուչա (sic.).*

** *Բնագրում՝ նվիրակաց:*

Վեն. 1822, եջ 509—510. Գ. Սուրմանյեան, Համով-Հատով, 1904, եջ 95—96. Մ. Օրմանեան, Ազգապատում, I, կ. Պոլիս 1912, եջ 29, § 10։

3 Խոսքը ԵՋմիածնական նվիրականության և վերաբերում, որի մասին հետագայում գրում է և Անտոն Ա. Կաթողիկոսն իր «Հակաճառության» մեջ (տես «Մշամեաղ՝վէրեբա, վրացերեն, Պ. Կարբելովի խմբ., Տփղ. 1892, եջ 596)։

Բ. ՇԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ

[ՀԱՅԵՐԸ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ]

[1.] ՀԱԼԻԿՈՒՆԻԱ

...[Այստեղ] տեսա՝ կապանքներում ձգած չորսի չափ վրացի (քարթվելի) քաղաքացիներ էին, մեկ տերտեր (տերտերա), [և] յերեք ուրիշներ. ինձ գովեցին մի հայոց (սոմեխի) յեկեղեցի, որը սակայն] չտեսա ...

[2.] ՀՌՈՄ

[1714 թ.] հուլիս ամսվա 30-ին նրանց (լաթինացվոց) տոմարով ոգոստոսի տասն եր, սուրբ Լավրենտիոս (Լավրենտի) սարկավագի տոնը. նախ ինձ տարան ցույց տալու [նրա վանքը], և նրա տներն ու յեկեղեցին տեսանք, պատարագն այնտեղ լսեցինք. այնտեղ դասախարակվում են հուլիների (բերձենների) և հայերի (սոմեխների) վորդիք՝ պապի հաշվին, վորոնք փախչելով էին յեկել կամ նեղն ընկած լինելով. յերիտասարդ տղաները մեր այցելության պահին քառասունի [չափ] էին։ ...

Ոգոստոս ամսվա 4-ին ... գնացինք Մարիամ Յեգիպտացվո յեկեղեցին. ասում էին փոքր է, սակայն հին եր և լավ կառուցված. հայերից (սոմեխներից) ովքեր վոր գալիս են [Հռոմ], այնտեղ են իջնում, այնտեղ են մնում տասնում (խմում և ուտում), ովքեր մեռնում են, այնտեղ են թաղվում։ [Այնտեղ] նկարած է Գրիգոր Պարթևն ու նրա տանջանքները։ ...

Ոգոստոս ամսվա 8-ին ... Ճաշից հետո գնացինք այնտեղ, ուր պապի հաշվին դաստիարակվում են հուլն (բերձեն), հայ (սոմեխ) և արաբ տղաները, նաև ուրիշները՝ [եթիովպացի], լաթին (*), ռուս, յեգիպտացի, գերմանացի (նեմսա), բոսնացի (բոշնաղ), պարսիկ, յերբայեցի, թուրք, ասորի ևն ...։

Ոգոստոս ամսվա 9-ին գնացինք մի տեղ, ուր կարդինալներից մեկը վանք եր կառուցել. յեկեղեցին փոքր եր, ուր յերկու

քահանա կար. քանի աղքատ և վռնդված լութերան կար, կամ հայ (սոմեխ), թե ասորի, վորքան էլ աղանդավոր կգար, [բոլորին] այստեղ էլին պահում, ուտեցնում-խմեցնում (խմեցնում-ուտեցնում), հագցնում, կրոն սովորեցնում ու արձակում[3]։ *Քառասուն մեկ տարի յե, ինչ վինել էլին, յերեք հազար չորս հարյուր լինըսուն և ութ հոգի յեն [կաթոլիկ] դարձրել և Քրիստոսին նվիրել. իմ այցելության պահին վաթսունի չափ էլին, բայց բոլորին չտեսա, վոմանք դրսումն էլին...*

[3.] Կ. ՊՈԼԻՍ

Հարկատու յեն տասնևհինգ տարեկանից մինչ վաթսուն տարեկանը.—

Հուլն (բերձեն)՝ քառասուն յերեք հազար.
Հայ (սոմեխ)՝ տասն և յոթ հազար.
Հրեայ՝ տասն և յերկու հազար.
Ֆրանկ ամբողջն՝ յերկու հազար.
Քրիստոնյա յեկվորները՝ չորս հազար.
Գնչի տաժանակիր և այլ՝ յերկու հազար.*
Թուրք (թաթար) [ամբողջը]՝ չորս հարյուր յոթանասուն և հինգ հազար.
Ֆրանկերն և թուրքերը (թաթարները) հարկ չեն վճարում...

---

* Բնագրում՝ «կատարղի»-ն, այսինքն каторга.

ԺԶ.

ՎԱԽՏԱՆԳ VI (XVII—XVIII Դ. Դ.)

ՈՐԵՆՍԳԻՐՔԸ

Լևոն (Լեվան) Վրաց (Քարթլիի) թագավորի վորդի՝ Վախտանգ արքայազնը պատվավոր տեղ ունի գրված վրաց գրականության մեջ իբրև բանաստեղծ. բայց համեմատաբար ավելի մեծ է նրա հռչակն իբրև «մեկենասի», վորի ձեռնհասությամբ 1709 թ. կազմակերպվեց առաջին տպարանը Վրաստանում և ամբողջ Անդրկովկասում (ուրեմն 67 տարով առաջ քան Սիմեոն կաթողիկոսի հիմնածն Եջմիածնում)՝ Տփղիսում, ուր, ի թիվս բազմաթիվ գրքերի (մեծ մասամբ եկեղեցական), 1712 թվին արտադրվեց Շոթա Ռուսթավելցու (Ռուսթավելու) «Ընձեռնավոր»-ի կամ, ուղիղ, «Վագրենավոր»-ի անդրանիկ հրատարակությունն իր իսկ խմբագրությամբ, վորը մինչ որս չի կորցրել գիտական նշանակությունը: Նրա պատվերով թարգմանվեց պարսկերենից «Քելիլա և Դամանա»-ն (վորն ի վերջո գլուխ բերեց Սուլխան-Սաբա Որբելյանն), և մի շարք այլ եկրկեր ու բառարաններ. խմբագրվեց հսկայական՝ «Քարթլիս-ցխորեբա» կոչված վրաց տարեգրությունն և, վերջապես, կազմվեց 7 զանազան որենսգրքերից ժողոված «Վրաց Որենսգիրք»-ը:

Ծնված լինելով 1675 թվին, Վախտանգ արքայազնն իր հոր՝ Լևոն (Լեվան) թագավորի Պարսկաստան լինելու պատճառով 1703—1712 կառավարում եր Վրաստանը. և հենց այս ժամանակաշրջանին է պատկանում ամբողջ այն շինարարական գործունեությունը, վորը՝ նրա անվան հետ կապելով՝ ամենայն մանրամասնությամբ նկարագրած ունեն հետագա վրաց պատմիչները՝ Վախուշտի (Քարթլիս-Ցխովրեբա, II, 70—73 = M. Brosset, Histoire de la Gèorgie, II, p. p. 99—104) ու Սեխնիա Ջաբաձեն (Ռ. Ց., II, 323), վորոնք, ի միջի այլոց, շեշտում են և նրա «հոգսերը» Քարթլիում չրաբաշխությունը զարգացնելու նկատմամբ (Առբելոյի և Ղ՝արայազի շրջաններում շինած առուները նրա անունով կոչվում եյին «Վախտանգի առուներ»)*: 1712—1719 թ. թ. մի ջոգին նա ապրում եր Պարսկաստանում (Սպահան, Քիրման)՝ ստանձնելով 1716 թվից Իրանի սպասալարի պաշտոնը, վորին միաժամանակ շնորհված եր Թավրիզն ու Պարտավը: 1719—1724 թ. թ. նա կրկին կառավարում եր Քարթլին իբրև Վախտանգ VI թագավոր, 1724-ին ամբողջ ընտանիքով և բազմաթիվ շքախմբով ու ուղեկիցներով քաշվեց Ռուսաստան, ուր բնակվում եր յերբեմն Մոսկվայում և յերբեմն Պետերբուրգում, իսկ վերջերն Աստրախանում, ուր և վախճանվեց 1737 թվին. թաղված ե նույն քաղաքում՝ ռուսաց մայր յեկեղեցում:

Վախտանգ VI-ի գրական ժառանգությունից առայժմ հրատարակված են, բացի «Վագրենավոր»-ի խմբագրությունից, «Քարթլիս-Ցխորեբա»-ն (հրատ. Մ. Բրոսե, ՍՊԲ. 1849 = ֆրանսերեն թարգմ. M. Brosset, Histoire de la Géorgie, t. I, SPB, 1849—1850), «Վախտանգ արքայազնի որենսգրություն» կոչվածը (Դ. Զուբենով «Վրացերեն Քրեստոմատիա», ա. հրատ. ՍՊԲ 1846, եջ 394—455)** և Պարսկերեն-վրացերեն բառարանային նյութերը (տես Յուբի Մառի և Կ. Դոնդուայի հոդվածները ժողովածուում. Etudes persanes-géorgiennes. I. Publication du Comissariat de l'Instruction Publique de la République Géorgienne de l'Union Soviétique. Leningrad 1926):

Վախտանգ VI-ի ձեռներեցությամբ թարգմանած գործերից մեզ համար հատկապես հետաքրքիր և այսպես կոչված «Հայոց որենսդրությունը», վորն իսկապես 2 մասից ե բաղկացած, ընդամենը 451 հոդվածով, վորոնցից առաջինը՝ 1—150 հոդվածները՝ «Ասորա-Հռոմեական Դատաստանագրքի» թարգմանությունն ե հայերենից (Ներսես-Համբրոնյան խմբագրությամբ), իսկ յերկրորդը՝ 151—451 հոդվածները՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի:

Այս գործն ե, վոր մենք հրատարակեցինք 1927 թվին հետևյալ ընդարձակ վերնագրով. Corpus juris armeniaci. Versio Georgica jussu regis Wachtangi VI facta. Edidit Leo Meliksset-

---

* Համ. մեր այս աշխատության I հատորի ա. գլխի 6-րդ ծանոթությունը (եջ 14):

** Տես այս «Որենսդրության» նոր լույս տեսած ֆրանսերեն թարգմանությունը՝ Joseph Karst, Code Géorgien du roi Vakhtang VI [«Corpus juris Ibero-Caucasici I, 1, 2], Strasbourg 1934, 1935:

Bek [«Monumenta georgica». Leges. № 2], sumptibus universitatis Tphilisiensis, Tphilisis 1927=I. *Օրէնք [յաղթող] թագաւորաց քրիստոնէից Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի՝ թագաւորաց Հռովմայեցւոց [եջք 3—41]. II. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց [եջք 42—156]. Ի հայերէն բնագրաց համահաւաքեալ և ի բարբառ վրաց հանդերձ այլայլութեամբք վերածեալ յաւուրս արքայորդւոյն Վրաց Վախթանգայ և հրամանաւ նորին ի միջոցի 1703 և 1711 ամաց տն. ի լոյս էած Լևոն Մելիքսեթ-Բէկ։* Արդեամբք Համալսարանին Հանրապետականի Վրաց որ ի Տփղիս ի թուին Հայոց ՌՃՀԶ և ի Ծ. Ք. 1927 (տես եջ XIV)։

Համաձայն Ե. Թաղ՝այշվիլու (Описание рукописей, т. II, стр. 615) և մեր հետազոտութեան, «Հայոց Որենսդրութիւնը» թարգմանված պիտի լինի հայերենից վրացերեն 1703—1711 թ. թ.։ Այս դրույթի հետ համաձայն ե և Իվ. Ջավախիշվիլին (Վրաց իրավունքի պատմութիւնը, վրացերեն, գ. I, Տփղ. 1928, եջ 121). մինչդեռ Ս. Կակաբաձեն մեր վերոհիշյալ աշխատութեան մասին գրած գրախոսականում (տես նրա ժողովածուն. Recuel historique, վրացերեն, II, Տփղ. 1928 եջ 131—132, հատկապես 132, ծան. 1) ջանում է ճշտել հիշյալ թվերը, վերագրելով այդ աշխատանքը 1706-ի մոտերքին։

Վախտանգյան «Որենսգրք»-ից և մանավորապես «Հայոց որենսդրութիւն»-ից քաղած տեղեկութիւնները մենք ստորև առաջ ենք բերում համաձայն Վրաց մեջ գրագիտութիւն տարածող ն. ընկերութեան հավաքածուի № 3683 ձեռագրի, վորը հիմք է ծառայել 1927 թվի մեր հրատարակութեան, մասամբ նաև № 107 բ. ձեռագրի (տես մեր հրատարակութեան IX—X և 3, 100 եջերը)։

---

* Այս աշխատութեան առաջաբանում տրված է, ի միջի այլոց, մանրամասն բիբլիոգրաֆիա Վախտանգ VI-ի «Վրաց Որենսգրքի» առանձին հատվածների հրատարակութեան, վոր կատարվել է զանազան ժամանակ զանազան անձանց ձեռքով, այն է՝ այսպես կոչված «Գեորգ Պայծառի», «Բեքա և Աղբուղայի», «Կաթողիկոսական» և «Վախտանգ VI-ի», ներառյալ և մեր հրատարակած «Հայոց»-ը (ուրեմն ընդամենը 5), մինչդեռ մնացած յերկուսն, այն է՝ այսպես կոչված «Մովսիսական» և «Հունականը»-ը, դեռ հրատարակված չեն։ Ամբողջական «Որենսգրքի» ռուսական թարգմանութիւնը հրատարակվել է յերկու անգամ. Сборник законов грузинского царя Вахтанга VI, ա. հրատ. Կառավարիչ Սենատի, ՍՊԲ 1828 թ., բ. հրատ. Ս. Փրենկելի և Դ. Բախրախելի խմբագրութեամբ, Տփղիս 1870 թ.։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

«[Վախտանգին] միաք հղացավ և նա ջանաց ի մի ժողովել որինաց բոլոր գրքերը, վորոնք ժամանակի ընթացքում ցրված եյին այլ թագավորութիւններում կամ Քարթլիում։ Յեվ այսպես նա փնտռեց, գտավ և ձեռք բերեց՝ շատերին հարկադրելով այն և բազում աշխատանքով ստացավ [պատվիրածը] ... Յերրորդ [հերթին] [1] Մեծ Հայքի (Սոմխիթի) հովվ[ապետ]՝ Գրիգոր Լուսավորչի դամբան եջմիածնից բերել տվեց[2] հայոց (սոմեխների) թագավորների դատաստանագրքերն, և այնտեղից թարգմանել տվեց լրիվ և առանց հապավման» (որենսգրքի ներածութիւնը)։

«Հայոց (սոմեխների) որենսգրութիւնը փոխադրված է հենց այն լեզվից Վախտանգ վեցերորդ վրաց (քարթվելների) թագավորի որոք և տրված է նրանից վրաց (քարթվել) ժողովրդին նրա՝ արքայազն և Քարթլիի կառավարիչ յեղած ժամանակ, 1703 և 1711 թվականների միջոցին» (հայոց որենսդրութեան վերնագիրն, ըստ № 107 բ. ձեռագրի)։

«Ցանկացանք դատաստանաց գիրք գրել. նախ աստվածաշնչից Մովսեսի սահմանած որենքներն, ապա հունաց (բերձենների) և հայոց (սոմեխների) գրքերից թարգմանածը, նույնպես և կաթողիկոսի և Գեորգ (Գեորգի) թագավորի ու Բեքայի սահմանած որենսդրութիւնները ժողովեցինք...» (Վախտանգ արքայազնի որենսդրութեան ներածականը)։

ՀԱՅՈՑ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ 291 ՀՈԴՎԱԾԸ

Յեթե տիրոջն ուխտ անե վանականը կամ քահանան կամ սարկավագը, պետք է վոր այն պահե և հեռու մնա մսակերութիւնից։ Յեթե առանց ուխտիել պահե, լավ է։ Իսկ յեթե իրենց կամքով չկարողանան պահել, պետք է բացահայտ կերպով ուտեն, և յեթե ուզում են, պահեն։ Ով փարիսեցիութեամբ պիղծ ընդունի թե հացին կամ պասվան կերակուրին մխս է դիսել, այսպիսիներին որենքը չի ցանկանա։ Յեկեղեցուն ուխտ տվողը հայտնի է։ Յեվ յեթե մեկը՝ կնոջից բաժանված կամ ամուսնացած՝ միանգամ յեկեղեցու անունը մեծարե, առավել յեկեղեցականն կդառնա, վանականները՝ սուրբ և անարատ։ Սակայն հույները (բերձենները) և անօրեն ու վատազգի հայերը

(սոմեխները)* իրար վոր բամբասում են, յերկուան էլ հա-վատալի չե։ Ըստ կանոնաց մին չուտելն ուտելուց լավ է, բայց չբամբասեն։ Հայէ (սոմեխ) մեջ** էլ շատ կգտնվի որինա-պահ, դրսում յեթե վոք իրար ասեն՝ դու ուտում ես և յես վոչ[4]։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Առաջինը՝ Մովսիսական, յերկրորդը՝ Հունաց. ապա չորրորդը՝ կոթողի-կոսի որենագիրքը, հինգերորդը՝ Գեորգ (Գիորգի) թագավորի որենագիրքը, վե-ցերորդը՝ Աղբուղայի որենագիրքն և, վերջապես, յոթերորդը՝ Վախտանգ ար-քայազնի որենագիրքը (տես. Е. Такайшвили, Описание рукописей, II, 614—616)։

2 Հավանական է հայրապետանոցից, քանի վոր ձեռագրատուն այն ժամա-նակ չկար։

3 Թե վորքան «լրիվ և առանց հապավման» է կատարած հայոց թագավոր-ների, ասել է՝ «Ասորա-Հռոմեական Դատաստանագրքի» և Մխիթար Գոշի «Դա-տաստանագիրք Հայոց»-ի թարգմանությունը հայերենից վրացերեն, ցույց է տալիս մեր կազմած համեմատական աղյուսակը (տես մեր վերոհիշյալ աշխա-տության 238—245 եջերը)։

4 Այս հոդվածը համապատասխանում է Մխիթար Գոշի Դատաստանա-գրքի ա. մասի 52 հոդվածին, վորը կարդացվում է այսպես. «Ցաղագս դատաս-տանաց մսակերութեան ուխտականաց. Որք յուխտի անդ իցեն երիցունք կամ սարկաւագունք և կամ այլոք ի պաշտօնէիցն եւ հեռի իցեն ի մսոյ և միաք իւր յօժարեսցին ի ճաշակել, համարձակ կերիցէ եւ մի գաղտաբար. ապա թէ կամեսցին՝ պահեսցեն. ընդունին կանոնք զերկոսին։ Ապա թէ ոք պիղծ հա-մարեսցի կամ զբանջար և զնաց որ մսոտ իցէ, ոչ ընդունի զնա կարդ եկե-ղեցւոյ։ Ուխտական՝ յայտ է, զի զամուսնացեալս և զկուսանս եւ որք միանգամ յեկեղեցի են՝ անուանէ. ապա ուրեմն վայրապար է ազգացն Ցունաց եւ մեր զմիմիանս բամբասել, զի զերկոսին ասէ ընդունիլ կանոնաց։ Արդ՝ բարիոք է չուտելն, քան ուտելն, թէպէտեւ ոչ բամբասի, որպէս ի մեզ գտանին բազում պահողք. այլ արտաքոյ դատաստանի է զմիմիանս դատելն» (հրատ. Վահան վ. Բաստամեանցի, եջ 151—152)։

---

* Ընդգծած բառերը համապատասխանում են Մխիթար Գոշի «մեր» բառին։

** Ընդգծած բառերը համապատասխանում են Մ. Գոշի «ի մեզ» բառե-րին։

ԺԲ.

ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ (XVII—XVIII Դ. Դ.)

„ՔԱՐԹԼԻՍ-ՑԽՈՐԵԲԱ"-ՅԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XIV դարու անանուն հեղինակի «Ժամանակագրության» մա-սին խոսելիս (է. գլուխ) մենք նշել էինք, վոր այն՝ սկսվելով Գեորգ (Գիորգի) Լաշայի թագավորությունից՝ հասնում է մինչ Գեորգ (Գիորգի) Պայծառի թագավորությունը։ Գեորգ (Գիորգի) Պայծառի ժամանակվա անցքերի նկարագրությամբ վերջանում է վոչ միայն հիշյալ «Ժամանակագրությունն», այլև այսպես կոչ-ված «Քարթլիս-ցխորեբա»-յի հին խմբագրությունն, ինչպես այն հասել է մեզ, որինակ, Մարիամ թագուհու վարիանտում (հրատ. Ե. Թ ա ղ՝ա յ ղ վ ի լ ո ւ, Տփղիս 1906, եջ 1—785)։ XIV—XVII դա-րերի Վրաստանի պատմությունը գրի առնելու համար XVIII դա-րու սկզբներին Վախտանգ VI թագավորի ձեռներեցությամբ «գի-տուն մարդկանցից» գումարված հանձնաժողովը սկսել եր ի մի հավաքել բոլոր այն տեղեկությունները, վորոնք հիմք պետք և ծառայելին նուն «Քարթլիս-ցխորեբա»-յի լրիվ խմբագրությանը։ Այդ նպատակով կազմվեցին «Քարթլիս-ցխորեբա»-յի շարունա-կությունները, վորոնցից առ այժմ, ինչպես Ի վ. Ջ ա վ ա խ ի շ վ ի-լին (Հին վրացական պատմական գրականությունը, ա. տպ., եջ 273) իրավացիորեն նկատում է, հայտնի յե չորսը.—

1. Առաջին շարունակությունն առանց վերնագրի, վորը սկսվում է 1220 թվից և հասնում է մինչ 1453 թ., հրատարակել է Ե. Թ ա ղ՝ա յ ղ վ ի լ ի ն «Քարթլիս-ցխորեբա»-յի Մարիամ թա-գուհու վարիանտի հավելվածների բաժնում՝ հավելված II, եջ 850—891։

2. Յ ե ր կ ր ո ր դ շարունակությունը, վորն «Բագրատունյաց թագավորության պատմությունը» վերնագիրն է կրում, սկսվում է 1452 թվից և հասնում մինչ 1605 թ., հրատարակել է նուն Ե. Թ ա ղ՝ա յ ղ վ ի լ ի ն նուն հավելվածների բաժնում՝ ibid., 892—

973. տես նաև Ք. Ց. I, Բրոսեյի հրատ., 476—477 և (շարունակությունը) Ք. Ց., II, Զուբինովի հրատ., 259—306. ֆրանսերեն թարգմանությունը՝ M. Brosset, Hist. de la Géorgie, II, 1856, p. p. 322—376 (Suite des Annales).

3. Յերրորդ շարունակությունը՝ «Վրաստանի պատմությունը» վերնագրով՝ սկսվում է 1373 թվից և հասնում մինչ 1703 թ.։ Առաջին անգամ հրատարակեց Մ. Բրոսեն միաժամանակ վրացերեն (վիմատիպ) և ֆրանսերեն թարգմանությամբ՝ Chronique Géorgienne, par M. Brosset, Paris 1829, 1830, p. p. 1—150 (վրացերենը), LV + 106 (ֆրանսերենը)։ Նույնի վրացերեն տեկստն յերկրորդ անգամ հրատարակեց (իբրև արտատպություն առաջինից) Զ. Ճիճինաձեն հետևյալ վերնագրով՝ «Վրաստանի պատմությունը Մեծն Մոուրավի ավյաններով», Տփղիս 1910, եջ 1—77։ Այս «Պատմությունը» հայտնի է գրականության մեջ առանձնապես «Պարիզի Քրոնիկա» (Պարիզիս Խրոնիկա) անվամբ։

4. Չորրորդ շարունակությունն այն է, որ՝ պարունակելով իր մեջ այսպես կոչված «Բագրատի թագավորության պատմությունն» և սկսվելով XIV դարուց՝ հասնում է մինչև Գեորգ (Գիորգի) XI թագավորի Սպահան գնալը 1696 թվին. հրատարակել է Մ. Ջանաշվիլին, «Նոր Քարթլիս Ցխովրեբա» վերնագրով, գրքույկում՝ «Նաշրոմի», I, Տփղիս 1907, եջ 1—54 («Բագրատի թագավորության պատմությունը», 36—54)։

I

[XIII—XIV ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

...Լանգ-Թեմուրի ընդարձակ պատմությունը գրի է առնված մեկնաբանություններով հանդերձ պարսից մատյաններում[1], և հայերն էլ այլ կերպ ունին նկարագրած այն[2]...

...Լանգ-Թեմուրը նվաճեց արևելյան բոլոր յերկրները... և յեկավ Հայք (Սոմխիթ), ու գրավեց ամբողջ Հայքը (Սոմխիթը)՝ հրի ու սրի յենթարկելով, նաև գերելով ու իսպառ ավերելով Հայքը (Սոմխիթը), ինչպես մանրամասն (մեկնաբանություններով) գըրված է Հայոց պատմության մեջ[3]։ Նվաճելով բովանդակ Հայքն (Սոմխիթն)՝ նա (Լանգ-Թեմուրը) շատերին գերեց, շատերին հրի ու սրի յենթարկեց, և շատերին էլ տիրեց՝ գարձնելով իր իշխանության ներքո. ապա՝ այնտեղից գնալով՝ նվաճեց Կարսը (Կարի) և գրավեց նրանց բոլոր բերդերն ու ամրոցները. իսկ հակառակորդներին և անհնազանդներին ամբողջապես յենթարկեց հրի ու սրի. և ինչ այնտեղ մի ձմեռ, քանի վոր վերջինս սաստիկ եր և դաժան։ Յեվ աթաբակն էլ գնաց նրա մոտ և հնազանդվեց նրան, քանի վոր ի վիճակի չեր հակառակվել նրան. և նա շատ պատվեց աթաբակին։...

...Իսկ ձմեռն անցնելուց հետո [Լանգ-Թեմուրը] շարժվեց Քարթլիի վրա,... անցավ Աշոցքը (Աբոցը)՝ գերելով և իսպառ ավերելով բոլոր շրջակայքն, [ապա]՝ կանգ չառնելով այնտեղ՝ յեկավ և անցավ Թռեղքն (Թրիալեթն) ու Սարաբաթիանոն... Քրիստոսից 1393 թվին։...

...[Ղարայա[զ]ում (Ղ'արաիայում) վորսորդություն անելուց հետո Լանգ-Թեմուրը] մտադրվեց գնալ Ղարաբաղ, յելավ ու գնաց և հետն տարավ ձերբակալված Բագրատ [Վրաց] թագավորին, և՝ հասնելով Ղարաբաղ՝ մի առ ժամանակ բնակվեց այնտեղ...

...[Յերկրորդ անգամ արշավելով Վրաստանի վրա՝] Լանգ-Թեմուրը գնաց Ղարաբաղ, ուր և ձնաց մի առ ժամանակ... [Լանգ-Թեմուրն] յեկավ Ղարաբաղ ահ ու յերկյուղ գցելով և բազմաթիվ զորքով, և նրա զինվորները չեյին տեղավորվում վոչ քաղաքներում և վոչ գյուղերում. և զինվորներն [այնքան] շատ եյին, վոր անհնարին եր համրել։...

...Յերբ Լանգ-Թեմուրն յեկավ Ղարաբաղ, նրան շատ ընդդիմադրեց Թիր-սուլթանը և շատ չարիքներ արավ անձամբ Լանգ-Թեմուրին ու նրա զորքին...

Ապա Վրաստանը գրավեց Գեորգ (Գիորգի) թագավորը։ Լանգ-Թեմուրը՝ լսելով այս՝... անհամար զորք պատրաստեց և իր վորդվոց հետ միասին ...ուղարկեց այն այստեղ։... Նրանք յեկան Յերնջակ (Երնջագ) և շրջապատեցին Յերնջակի (Երնջագի) բերդը, վորն այն պահին Վրաց (Քարթլիի) թագավորի ձեռքին եր, և սաստիկ պատերազմ սկսեցին բերդապահների դեմ։ Սկզբում նրանք չկարողացան գրավել բերդը, և մի առ ժամանակ ձնացին այնտեղ, բայց հետո գրավեցին, քանի վոր բերդապաններին վոչնչացնությամբ չհասավ և նրանք շատ նեղն ընկան, ապա հենց իրենք թողին բերդն ու դուրս յելան, և հետևեցին Լանգ-Թեմուրին։ Իսկ Լանգ-Թեմուրի վորդիք ուղղվեցին Վրաստանի կողմը, հասան Մանգլիս, ուր և կանգ առան։...

...Յերբ Լանգ-Թեմուրը գտնվում եր Թավրիզում, յեկավ, վորպեսզի տեսնի այն բերդը, վորն առաջներում նրա վորդիքն եյին գրավել և վորն Ալինջա եր կոչվում։ Այնհամար զորքով և բազում

իրերով ու պեսպես վրաններով դուրս գալով այնտեղից՝ հասավ և տեսավ այն Ալինջա բերդը, որն առավել ամրացրեց, ապա գնաց և կանգ առավ Գեղարքունյաց (Գելաքունիի) լճի շրջանում։ Լսելով այս՝ Գեորգ (Գիորգի) թագավորն ուղարկեց իր յեղբորը բազում ընծաներով...

... Այդ պահին Հայքի (Սոմխիթի) շրջակայքի մի տեղում, որ կոչվում եր Մերդին (Մարտին), կար մի իշխան, որի անունն եր Յեսայա (Եսաիա)։...

... Ապա Աղբուղայի որդի Հովհան (Իվանե) աթաբակը բազում ընծաներով գնաց Լանգ-Թեմուրի մոտ, որը վողորմած յեղավ նրա հանդեպ, պատվեց և [իր հերթին] շատ պարգևներ շնորհեց։

Յեվ գնացին [նույն Լանգ-Թեմուրի] մոտ Հայքի (Սոմխիթի), Սամցխեյի և Կարսի բոլոր իշխանները...

... Ապա Գեորգ (Գիորգի) թագավորը Լանգ-Թեմուրի մոտ ուղարկեց Յեսայա Հայոց (Սոմխիթի) իշխանին, որպեսզի նա (Լանգ-Թեմուրը) չարշավի Քարթլիի վրա, քանի որ հնձի և բերքահավաքի ժամանակն եր...

... Բայազիթն Ոսմանի սեռից եր։ Իսկ Լանգ-Թեմուրը պատերազմ սկսեց նրա հետ և հաղթեց՝ ձերբակալելով Բայազիթ-խոնթքարին։...

Իսկ բռնակալ Լանգ-Թեմուրի մահից հետո [թաթարները] նորից նվաճեցին Արաբատանը [և] Անատոլիան, [որոնք Բայազիթ-խոնթքարի որդոց ձեռին եյին]...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ի նկատի ունի Շերեփադինի պատմությունը։

2 Հեղինակն ուզում է ասել, որ Լանգ-Թեմուրի պատմությունը գրելիս ոգտագործած ունի պարսկական և հայկական աղբյուրները. իսկ հայկական աղբյուրներից, Ս. Կակաբաձեյի կարծիքով, ոգտագործած պիտի ունենա Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց»-ը (տես. Կարապետ վ. Շահնազարեանի հրատ., Պարիզ 1860) որը, սակայն, վիճելի յե։

3 Նույնը։

II

[XV—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Բագրատ թագավորը հզոր եր և հռչակավոր։ Սա տիրում եր Քարթլիին և Սոմխիթին. և [սրան] հնազանդ եյին Լոռիի բդեշխները (պատիախշները), Կախքի (Կախեթի), Շիրվանի (Շարվանի) և Սամցխեյի [տերերը]...

Քրոնիկոնի 164-րդ[1] ղ՝աեն Ուզուն-Հասանը զորք ժողովեց և յեկավ Սոմխիթ՝ մոտենալով Բարաթյանների և Որբեթի սահմաններին...

... [Ապա] թաթարները թողին Տփղիսն ու Սոմխիթը, որը գրավեց Բագրատ թագավորը...

Քրոնիկոնի 173-րդ[2]... [թաթարները] յեկան և մոտեցան Տաշիրին...

... Քրոնիկոնի 174-րդ[3] յեկավ ղ՝աեն Յաղուբը,... [որը] հրամայեց, որ Սոմխիթն ավերեն...

... [Ապա] Խալիբեգ [կոչվածը՝ ղ՝աենի իշխաններից մեկը]... յեկավ Սոմխիթի և Որբեթի սահմանները...

Լուսաբաց թագավորը գրավեց Տփղիսն և՝ իր ձեռքն գցելով Տփղիսի բերդն՝ ամրացրեց այն։ Այս պահին Շահ-Թամազը գտնվում եր Ղարաբաղում, և՝ լսելով Տփղիսի առման մասին՝ ընտիր զորք հավաքեց և գաղտագողի շարժվեց Տփղիսի վրա... Գրավելով և ամրացնելով այն բերդը՝ Շահ-Թամազը վերադարձավ Ղարաբաղ։ Ապա սրա (Շահ-Թամազի) հետ հաշտվեց Կախքի (Կախեթի) տեր Լեվոն (Լևան) բատրոնը, և Շահ-Թամազը գնաց Հայոց (Սոմխիթի) յերկրի Նախիջևանը (Նախչևանը), և հնազանդեցրեց բոլոր անհնազանդներին, որոնց իր իշխանությանն յենթարկեց...

Քրոնիկոնի 223-րդ[4]... Բագրատ Իմերքի (Իմերեթի) տերը Սամցխեյումն եր և՝ լսելով Սոմխիթի գրավումը՝ նա յեկավ Շահ-Թամազի մոտ...

Քրոնիկոնի 231-րդ[5] խոնթքարի փաշաներն յեկան...

Սրանից հետո [խոնթքարը] նորից ուղարկեց Արզրումի փաշային, և Դիարբեքիրի և ուրիշ շատերին...

Իսկ բազմաթիվ ոսմաններ յեկան քրոնիկոնի 233-րդ[6] Բասեն (Բասիան) և հասան այնտեղ, ուր կանգ եյին առել ոսմանները...

Քրոնիկոնի 241-րդ[7]... Ղ՝աենը (Շահ-Թամազը) գնաց և իջավ Սոմխիթ...։

... Խոնթքարը տվեց [Ստամբոլ փախած Դադյանին] բազմաթիվ զորքեր Արզրումեցվոց և Տրապիզոնեցվոց, վորոնք յեկան Սատղ՝եպելա...

... Ապա Շահ-Թամազը ժողովեց բազմաթիվ զորք և յեկավ Ղարաբաղ,... [վորտեղից] անցավ Շիրվան...

Ապա Շահ-Թամազը գնաց Ղարաբաղ և մի քիչ ժամանակից հետո նորից շարժվեց Տփղիսի վրա...

... Այդ պահին [Քայխոսրո] աթաբակի դեմ թշնամաբար յեկել եր Արզրումի փաշա Իսկանդարը... քրոնիկոնի 244-ին[8]:

Սրանից հետո խոնթքար Սուլթան Սուլեյմանը դուրս յելավ և [սկսեց] ղ՝ահնի վոխը հանել, շինեց կարսը (Կարի) ու վերադարձավ, և յեկավ* Բասեն (Բասիան): Ապա Շահ-Թամազ-ղ՝ահնը բազմաթիվ զորք ժողովեց և յեկավ Արտահան (Արտան): Ապա Շահ-Թամազն իր վորդի Մերզա-Իսմայելին (Իսմայիլին) ուղարկեց կարս (Կարի), և նա նվաճեց Կարսը (Կարի), գրավեց բերդեր ու ամրոցներ, և [բոլոր] նրանց, վորոնք խոնթքարի հպատակներն (ճորտերն) եյին, հրի ու սրի յենթարկեց և ցիր ու ցան արավ, իսկ ինքը նվաճեց Կարսը (Կարի)**:...

Քրոնիկոնի 244-ին[9]... ղ՝ահնը հանվեց տեղից և գնաց Ղարաբաղ՝ տանելով հետը [Վրաստանից վերցրած] բազմաթիվ գերիներ: ... Յեվ չգնաց Շահ-Թամազն Յերեվան:...

... Յեվ նշանակեց [Շահ-Թամազը] խաներ Ղազախում, Շամշադինում (Շամշադիլում), և սուլթան նշանակեց Գանձակում (Գանջայում):...

Շահվերդ սուլթանը՝ Գանձակի (Գանջայի) խանը՝ ղ՝ահնից այս վայրերի պահապան եր նշանակվել. ևս լսելով, վոր Լուարսաբ թագավորը զորք է ժողովել, նա ևս Արաքսի (Արաղի) հայկական [գանվող կողմերից] զորք ժողովեց և յեկավ թագավորի դեմ...

Քրոնիկոնի 248-ին[10] թաթարները կալանավորեցին Մուխրանի տեր Բագրատի վորդի Արչիլին. Սիմեոն (Սվիմոն) թագավորն յելավ ղզըլաշներին վրեժն հանելու, և սկսեց իր զորքերը ժողովել, վորպեսզի Տփղիսի բերդը վերցնի: Լսելով այս՝ Ղարաբաղի տեր կուսակալը ժողովեց Արաքսի (Արեղի) գետի հայկական [գտնվող յերկրների] զորքերն և [Տփղիս] քաղաքին ոգնության յեկավ:

* Var. հասավ:

** Var. և խոնթքարը գնաց:

... [Սիմեոն (Սվիմոն) թագավորի յեղբայր Դավթին թաթարները] քաղաքի (Տփղիսի) և Սոմխիթ-Սաբարաթիանոյի թագավորությունը ընորհեցին...

Իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը չեր հանգստանում, և ամեն րում եր Սոմխիթ-Սաբարաթիանոն և աշխատում եր գրավել [Տփղիս] քաղաքը... 1568 թվին Քրիստոսի:... Տեղեկանալով Սիմեոնի (Սվիմոնի) գալու մասին [Տփղիս] քաղաքի վրա՝ Դաուդխանն ևս ժողովեց սոմխիթ-բարաթյաններին, թաթարներին և քաղաքացիներին...

Իսկ Դաուդխանը հաղորդեց սրա (Սիմեոնից՝ Տփղիսի գրավման) մասին Շահ-Թամազին,... իսկ Շահ-Թամազը հաղորդեց Շամխալին, վորին կոչում եյին Զերքեզ, և Շաքիի սուլթանին ու ղարաղյոզլուն...

Ապա խոնթքարին բաժին ինաց Իմերքն (Իմերեթին), Ոդիշը, Գուրիան և Սաաթաբագոն մինչ Բարթլիի սահմանները, ինաց Կարսը (Կարի) մինչ Ախոցքի (Աբոցի) և Յերեվանի սահմաններն և Հայքը (Սոմխիթը) մինչ այն սահմանը, վորին այժմ Թուրքաստան են կոչում, մինչ Բաղդադ:

Իսկ Շահ-Թամազը նվաճեց Բարթլին, Կախքն (Կախեթին), Յերեվանը, Քյուրդստանի (Քուրդիստանի) հայկական մասը. և այսուհետև միմյանց (խոնթքարի և շահի) միջև միություն եր և խաղաղություն...

Քրոնիկոնի 266-ին[11]... խոնթքարի զորքն յելավ և նվաճեց Թավրիզն, Յերեվանը, Գանձակը (Գանջան), Ղարաբաղը մինչ Սուրմանիա և Ատրպատականի բոլոր տեղերը:...

Սուչն քրոնիկոնին (266-ին)[12]... Արզրումի և Վանի փաշաներն [եկան] և սուլթանին ու Ղարախան Բազուքյունն...

... Դաուդխանն անցավ Լոռի և Տփղիս մտավ, ուր փաշա նստացրին, իսկ Գորում սանջաղ...

Յերբ Տփղիսում փաշա նստացրին և Գորում սանջաղ,... Լաշա-փաշան... սոմխիթցիներին շատ նեղացրեց...

... Սիմեոն (Սվիմոն) թագավորը վերադարձավ..., [յերբ] Լաշա-փաշան Բարթլիումն եր գտնվում. և յեկան Սոմխիթ՝ բանակցելու...

... Պատրոն Ղ՝վարղ՝վարեյի մոտ մարդ յեկավ, Ուղթիքում (Ուլթիսում) չպահեցին, տարան Արզրում՝ Ծննդյան տոնի նախըշյակին...

Քրոնիկոնի 267-ին[13] պատրոն Ղ՝վարղ՝վարին և պատրոն Մա-

նուչարն Արզրումից Կոստանդնուպոլիս գնացին... Յերկրորդ անգամ յեկավ Լալա-փաշան և նորոգեց կարսը (կարի)...

Քրոնիկոնի 268-ին[14]... իրենք՝ յերկոքյան տերերը՝ գնացին Լոռի, վորն ավերեցին և հաղթող վերադարձան...

Քրոնիկոնի 272-ին[15]... սարդար Վարադ-փաշան յեկավ Ախալցիխեն շինելու, բայց չդիմացավ, գնաց և Թեմը մեզ (վրացոց) ձնաց...

Մի վոքը ժամանակից հետո [սարդարն] իր զորքերը ժողովեց և գնաց Լոռի, քանի վոր այն ոսմանցոց ձեռին եր:... Յեվ ասացված նորից հաջողություն չնորհեց Սիմեոն (Սվիմոն) թագավորին և կոտորեց շատ ոսմանցիներին՝ թվով չորս հարյուր յոթանասուն յերեք, Քրիստոսի 1586-ին, քրոնիկոնի 274-ին. և վերցրեց Լոռու ամրոցներն ու այրերը թվով լինն, վորոնք ոսմանցոց ձեռին եյին: [Ամեն լինչ] գրավել եր լինքը՝ բացի միմիայն այն բերդից (Լոռուց), վորն ոսմանցոց ձեռին եր: Ապա [Լուարսաբը] մոտեցավ Լոռու բերդին՝ ապրիլի 1-ին, և գրավեց [այն]՝ հունիսի 10-ին:

... Լսելով այս բանը՝ խոնթքարը շատ տխրեց և ուղարկեց մեծ զորք, վորին ամիրսպասալար նշանակեց յերևելիներից մեկին, վորն և յեկավ Լոռի. սա գրավեց Լոռու բերդն և նվաճեց Լոռին: Ապա կանգ առավ Խաոխ-սուփելիի ծայրին:...

... Շահ-Աբաս յեկավ և գրավեց Թավրիզն ու ամբողջ Ատրպատականը (Ադրբադագանը), բացի Յերևանից և Բաղդադից...

Իսկ Լոռու բերդում յեղողները լսեցին Սիմեոն (Սվիմոն) թագավորի պարտությունը: Ապա դուրս յեկան և ավերեցին Վրաստանի մի քանի մասերն և տիրեցին Տաշիրին: Յեվ մեծ ուրախություն եր ոսմանցոց մեջ: Իսկ Սիմեոն (Սվիմոն) թագավորը նորից ժողովեց Քարթլիի սակավաթիվ զորքը, վորքան եվ ճնացել եր, և ոսմանցոց համար աննկատելի գնաց Լոռի: Յեվ [ոսմանցիք ու վրացիք] իրար կպան, և տեղի ունեցավ մեծ պատերազմ. և թագավորը հաղթող հանդիսացավ, և [վրացիք] վերցրին Լոռու բերդը, և հրի ու սրի յենթարկեցին նրանց (ոսմանցոց): Յեվ [թագավորը] գրավեց Լոռին և հաղթող տուն վերադարձավ:

... Քրիստոսի 1600-ին... [վրացիք՝] իմանալով [Սիմեոն] թագավորի հաջողության մասին՝ հուժ ուրախացան... և գնացին Լոռի: Ապա վրացիք՝ լսելով նրա մասին, վոր Սիմեոն (Սվիմոն) թագավորի վորդի Գեորգը (Գիորգին) այնտեղ եր վրացոց մեջ, ոսմանցոց յեռևից ընկան և հետամուտ յեղան նրանց, սակայն

չհասան: Ապա ոսմանցիք գրավեցին Լոռու բերդն, ուր և մոցրին իրենց պահապաններին, և գնացին՝ տանելով հետն Սիմեոն (Սվիմոն) թագավորին, վորին և հանցրին Ստամբոլ:...

Իսկ Գեորգը (Գիորգին) նվաճեց Քարթլին և թագավորում եր բարվոք, վորն ապա ժողովեց վրացիներին և գնաց Լոռու վրա, և Գեորգ (Գիորգի) թագավորը վերցրեց բերդն ու գրավեց Լոռին...

Այս ժամանակներին ղ'աեն Շահ-Աբաս յեկավ Յերեվանը գրավելու համար: Ապա ղ'աենը կանչեց [այնտեղ] Գեորգ (Գիորգի) թագավորին և կախից տեր Աղեքսանդրին իրենց զորքով, վորոնք և գնացին: Յերբ նրանք հասան այնտեղ, Շահ-Աբասը շատ հավանեց վրաց և կախից զորքերն, և ամբողջ իր զորքին հրամայեց գրոհ տալ Յերեվանի բերդին: Այդ ժամանակ վրացիք ղզըլաշներից առավել քաջություն ցույց տվին և գնացին իրրև առաջընթաց [դունդ] և վերցրին Յերեվանի բերդը: Յեվ գրավեց Շահ-Աբաս Յերեվանն և իր զորքը մոցրեց բերդը: Սակայն Շահ-Աբասը Գեորգ (Գիորգի) թագավորից խնդրեց Լոռին և Լոռու բերդը: Յեվ [Գեորգը] զիջեց այն, քանի վոր չեր կարող մերժել Շահ-Աբասին: Յեվ [Գեորգը] թողեց Լոռին, և Լոռու բերդը գրավեց Շահ-Աբասը, վորն և մոցրեց այնտեղ իր զորքը. ապա տուն վերադարձավ...

... Շահ-Աբասը [Վրաստան] ուղարկեց [կախից տեր Աղեքսանդրի վորդի] Կոնստանդնին, և հետն առաքեց Շիրվանի և Ղարաբաղի զորքերը...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 164 + 1312 = 1476 թ.:
2 Այսինքն 173 + 1312 = 1485 թ.:
3 Այսինքն 174 + 1312 = 1486 թ.:
4 Այսինքն 223 + 1312 = 1535 թ.:
5 Այսինքն 231 + 1312 = 1543 թ.:
6 Այսինքն 233 + 1312 = 1545 թ.:
7 Այսինքն 241 + 1312 = 1553 թ.:
8 Այսինքն 244 + 1312 = 1556 թ.:
9 Նույնը:
10 Այսինքն 248 + 1312 = 1560 թ.:
11 Այսինքն 266 + 1312 = 1578 թ.:
12 Նույնը:
13 Այսինքն 267 + 1312 = 1579 թ.:
14 Այսինքն 268 + 1312 = 1580 թ.:
15 Այսինքն 272 + 1312 = 1584 թ.:

III

[XIV—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

... Քրոնիկոնի 82-ին[1] Սամարղան[դ]ցի Թեմուրը գերեց Սմբ-
խեթն ու Քարթլին և ավերեց բոլոր բերդերը...

Քրոնիկոնի 119-ին[2] Աղեքսանդր Թագավորը գրավեց Լոռին...

Քրոնիկոնի 233-ին[3] Բասենի (Բասիանի) Սախոյի վրա երբ
հետ կռվեցին իմերցի Բագրատ Թագավորն և Քարթլիի Լուար-
սաբ Թագավորն, և աթաբակ տեր Քայխոսրոն...

Քրոնիկոնի 243-ին[4] խոնթքար սուլթան Սուլեյմանը դուրս
յելավ ղ՝աենի դեմ, կառուցեց կարսը (Կարի), և վերադարձին
հենց վոր հասավ Բասեն (Բասիան)՝ հանդես յեկավ Շահ-Թամազ
ղ՝աենը, վորն յեկավ Արտահան (Արտան), իսկ ղ՝աենի վորդի Իս-
մայել-միրզան կարսը (Կարի) քանդեց, խոնթքարը գնաց...

[Քրոնիկոնի 266-ըն][5]... փետրվարի 26-ին, չորեքշաբթի որը,...
ուրուսները Գորին այրեցին, և կանգ առան Զարիշատում...

[Նույն քրոնիկոնի][6]... ոգոստոսի 17-ին Դաուդխանն այրեց
[Ցիղիս-քաղաքն] և հեռացավ՝ անցնելով Լոռի... սոմխեթցիներին
շատ նեղեցին...

[Նույն քրոնիկոնի][7]... հունիսի 15-ին Լալա-փաշան յեկավ
Քարթլի և Սոմխեթ, ուր, ինչպես ասում են, [արդեն[հիվանդ
եր... [և] հոկտեմբերի 1-ին հեռացավ իր զորքով...

[Նույն քրոնիկոնին][8]... մարդ յեկավ պատրոն Ղ՝վարդ՝վարեյի
մոտ, [վորին] Ուղթիքում (Ուլթիում) այլևս չթողին, [այլ] տարան
Ա[ր]զրում, ծննդյան [տոնի] նախորյակին...

Քրոնիկոնի 267-ին[9], մարտի 23-ին, պատրոն Ղ՝վարդ՝վարեն
և պատրոն Մանուչարն Ա[ր]զրումից գնաց[ին] Կոստանդնուպո-
լիս,... [իսկ] հունիսին... նորից յեկավ Լալա-փաշան և վերանորո-
գեց կարսը (Կարի)...

Քրոնիկոնի 265-ին[10]... հունիսի 15-ին Բեքային վերադարձ-
րին և իրենք՝ յերկոքյան տերերը (Ղ՝վարդ՝վարեն և Բեքան)՝ գնա-
ցին Լոռի...

Քրոնիկոնի 273-ին[11] Սիմեոն [Քարթլիի] Թագավորն և [սար-
դար Վարադ]-փաշան կռվեցին Լոռում, և Թագավորը հաղթեց,
վորը կոտորեց [հակառակորդի զորքը]՝ անթիվ՝ իբր չորս հարյուր
յոթանասուն և յերեք [հոգի]. Նույն քրոնիկոնին[12] Թագավորը
գրավեց Լոռու քարայրը 9 [հարյուր հոգով]։...

Քրոնիկոնի 287-ին[13]... պարսիկները (Թաթարները) գրավեցին
Սոմխեթն ու Լոռին...

Քրոնիկոնի 291-ին[14] ղ՝աեն Շահ-Աբաս յեկավ կռվելու նրանց
(ոսմանների) հետ, վերցրեց Թավրիզն ու Նախիջևանն (Նախչևա-
նը) և մոտեցավ Յերևանին. ոսմանները սաստիկ կռվում եյին
բերդից դուրս, և [պարսիկները] չկարողացան վերցնել բերդը։
Ղ՝աենը՝ մեկը մյուսի յետևից դեսպաններ և գրություններ ու-
ղարկելով՝ [վրացիներին] դիմեց [խնդրելով ոգնություն] Յերևա-
նին. և Գեորգ Քարթլիի Թագավորը զորքով, հետն ունենալով
իր խոստովանահայր՝ Զերեդե արքեպիսկոպոսին, և Աղեքսանդր
Կախից Թագավորը Կախեթի զորքով, գնացին դաժան և սառնա-
մանիք ձմրան պահին, և հասան ոգնության Պարսից Թագավոր
ղ՝աենին և վերցրին ուռուսներից Յերևանի բերդը...

...Քրոնիկոնի 297-ին[15]... Մահմուդ-խանն յեկավ յոթը հա-
զարյուր զինված մարդով. [վրացիք] սրտալի տեղահան յեղան գնա-
լու Ղ՝արաղյից, և մուրավը զեկուցեց [Լուարսաբ] Թագավորին.
«... մի տերտեր (տերտերա) Գորուց գալիս եր, վոչինչ չգիտեր,
զորքը նրա առաջն յերևաց, նա վերադարձավ դեպի Դուեսի դաշ-
տը. իսկույն և յեթ Գորու կամուրջը քանդեց և անցավ Գորին,
հաղորդեց վերին Քարթլիի յերկրին, զորք ճարեց, բոլորը տեղա-
հան յեղան և գնացին Թաքնվելու. յեթե տերտերն առաջ չընկներ,
անմտաբար կանցնեյին գետն, և յերկիրը կկիչանար...»։

... Քրոնիկոնի 303-ին[16]... Փեյքնի-խանն իր գերդաստանով
Ճոյեթի բերդից Ղարաբաղ անցավ...

Քրոնիկոնի 323-ին[17]... [ղ՝աենը շնորհեց Ռոստոմ Քարթլիի Թա-
գավորին հետևյալ թավաղներին և ազնվատոհմներին, վորոնք են՝]...
Սասանբեգ, և Մելիքսեթ (Մելքիսադեգ) Սոմխեթի մելիքն, Աթա-
բեգն ու նրա յեղբայրները... Պարսից (Թաթարաց) զորքը հասել
եր Աղջաղ՝ալա, և բարաթյաններ-սոմխեթցիք գնացել եյին նրանց
մոտ...

...[Ռոստոմ Թագավորը] ղ՝աենից հրաման ստացավ, վոր սար-
դարը Վան գնա...

Քրոնիկոնի 324-ին[18] խոնթքար սուլթան Մուրադն յեկավ,
Յերևանը գրավեց և վերադարձավ, իսկ ութ ամսից հետո ղ՝աեն
Շահ-Սեֆին յերևաց, վորն Յերևանը [նրանից] խլեց...

Քրոնիկոնի 346-ին[19]... ղ՝աենը հրամայեց... Ալահվերդի-խանը
գնա Ղարաբաղ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 82 + 1312 = 1394 թ.։
2 Այսինքն 119 + 1312 = 1431 թ.։
3 Այսինքն 233 + 1312 = 1545 թ.։
4 Այսինքն 243 + 1312 = 1555 թ.։
5 Այսինքն 266 + 1312 = 1578 թ.։
6 Նույնը։
7 Նույնը։
8 Նույնը։
9 Այսինքն 267 + 1312 = 1579 թ.։
10 Այսինքն 265 + 1312 = 1577 թ.։
11 Այսինքն 273 + 1312 = 1585 թ.։
12 Նույնը։
13 Այսինքն 287 + 1312 = 1599 թ.։
14 Այսինքն 291 + 1312 = 1603 թ.։
15 Այսինքն 297 + 1312 = 1609 թ.։
16 Այսինքն 303 + 1312 = 1615 թ.։
17 Այսինքն 323 + 1312 = 1635 թ.։
18 Այսինքն 324 + 1312 = 1636 թ.։
19 Այսինքն 346 + 1312 = 1658 թ.։

IV

[XIV—XVII ԴԱՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԸ]

